

ՄԱՐԻԱՄ ՆՈՎՍԵՓՅԱՆ

ՆՅԴ. Կ. ՊՈԼՍԻ  
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ  
(1909 -1924 Թ-Թ.)

ԵՐԵՎԱՆ 2009



070 (479.75)1091

V

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐԻԱՄ ՀՈԿՍԵԹՅԱՆ

ՀՅՐ Կ. ՊՈԼՍԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԸ  
(1909 - 1924 ԹԹ.)

A 94769



ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԵՆԱՆ  
ՄԱՏԵՆԱԸՆՐ  
48



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES  
48

*Spiny*

ԵՐԵՎԱՆ  
«ԳԱՄ պատմ. ինստ. հրատ.  
2009

ՀՏԴ 070 (091) (479. 25) : 941 (479.25)

ԳՍԴ 76.1 (2Հ) + 63.3 (2Հ)

Հ 872

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական  
խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պ. գ. դ., պրոֆեսոր Ա. Ա. Խառատյան

Հ 872 Հովսեփյան Մարիամ

ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլը 1909 -1924 թթ. - Եր.: ՀՀ ԳԱԱ  
պատմ. ինստ., 2009. – 194 էջ:

Գրքում ներկայացված են ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլի  
օրգանները, տրված է 20-րդ դարի սկզբի արևմտահայ իրականության  
առավել հանգուցային խնդիրների վերլուծությունը՝ ելնելով ՀՅԴ Կ. Պոլսի  
պարբերական մամուլում դրանց նկատմամբ դրսևորված դիրքորոշումից:

Գիրքը նախատեսված է ժուռնալիստիկայի ֆակուլտետների դասա-  
խոսների, ուսանողների և ընթերցող լայն շրջանների համար:

ԳՍԴ 76.1 (2Հ) + 63.3 (2Հ)

ISBN 978-99941-73-33-4

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2009 թ.

# ԱՌԱՋԱԲԱՆ

19-րդ դարի վերջին հիմնվել և 20-րդ դարի սկզբին բուռն ծաղկում է ապրել Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության (այսուհետև՝ ՀՅԴ) պարբերական մամուլը: ՀՅԴ-ն կարևորել է վերջինիս դերը քաղաքական պայքարում և գիտակցել, որ հայ ժողովրդի գոյատևմանը նպաստելու, ազգակիցների կյանքը բարվոքելու, նրանց համախմբելու ազգապահպան գործընթացում գաղափարաքարոզչական օժանդակող ազդակներից մեկը կուսակցական մամուլն է:

Կ. Պոլսի ՀՅԴ պարբերական մամուլի օրգանները 1909-1924 թթ. հրատարակվել են երկու փուլով. 1909-1915 թթ. և 1918-1924 թթ.: 1909-1915 թթ. հրատարակվել են՝ «Ազատամարտ» օրաթերթը (1909-1915 թթ.), «Ուսանող» (1909-1914 թթ.) և «Երկունք» (1909-1914 թթ.) ամսաթերթերը, գրական-հասարակագիտական ուղղվածությամբ «Ազդակ» շաբաթաթերթը (1908-1909 թթ.), «Շանթ» (1911-1915 թթ.) և «Մեհյան» հանդեսները (1914 թ.), «Նավասարդ» տարեգիրքը (1914 թ.), «Ամենուն տարեցույցը» (1909-1914 թթ.), իսկ 1918-1924 թթ.՝ «Ճակատամարտ» օրաթերթը (1918-1924 թթ.), «Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա (1919-1920 թթ.) և «Ճակատամարտ» մանկավարժական ամսօրյա (1918-1920 թթ.) հավելվածները, «Շանթ» գրական-քաղաքական (1918-1919 թթ.) և «Հայ սկաուտ» մարզական (1919-1922 թթ.) հանդեսները: Հրատարակության առաջին փուլում ՀՅԴ Կ. Պոլսի պարբերականների առաջնահերթ նպատակները կուսակցության ծրագիրն ու գաղափարները, հասարակական-քաղաքական, գրական-մշակութային տարաբնույթ հիմնահարցերի նկատմամբ ունեցած տեսակետները և մոտեցումներն ընթերցողներին ներկայացնելն էին: Երկրորդ փուլում դրանց ուշադրության կենտրոնում կուսակցական և քաղաքական խնդիրները չէին, այլ՝ հայապահպանությունը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման համար սկսված գործընթացը, Հայաստանի առաջին հանրապետության հետ կապերի հաստատումը և հնարավորության սահմաններում հայրենիքին օժանդակելը:

Կ. Պոլսում 1909-1915 թթ. և 1918-1924 թթ. հրատարակված ՀՅԴ վերը նշված պարբերականներն առ այսօր չեն ուսումնասիրվել, ուստի այս աշխատության շրջանակներում փորձ է արվել ընդհանուր պատկե-

րացում տալ դրանց հիմնադրման, նպատակների և ուղղվածության մասին: Ուսումնասիրությունները կատարվել են այդ պարբերականների՝ Հայաստանում գտնվող հավաքածուների հիման վրա: Դրանք, սակայն, ոչ ամբողջությամբ, ոչ բոլոր համարներով (թվերով) են մեզ հասել ու պահպանվել՝ ամենքին հայտնի պատճառներով, պետականության բացակայություն, անկայուն քաղաքական իրադրություն, աննպաստ պատմական հանգամանքներ, Ցեղասպանություն: Այնուամենայնիվ դրանց մեծ մասը ժառանգվել է մեզ, և հնարավորություն է ընծեռել ընդհանուր առմամբ կարծիք կազմել ՀՅԴ Կ.Պուլսի պարբերական մամուլի մասին, որն առավել կհարստանա և կամբողջականանա, եթե հետագայում մնացած համարները կարողանանք ձեռք բերել և ուսումնասիրել:<sup>1</sup>

Աշխատության նպատակներն իրականացնելու համար իբրև սկզբնաղբյուր օգտագործվել են արխիվային նյութեր, ժամանակակիցների, առավելապես դաշնակցական ակնառու գործիչներից, մտավորականներից և «Ազատամարտ» օրաթերթի աշխատակիցներից շատերի հուշագրություններն ու աշխատությունները, նաև՝ ՀՅԴ-ի գործելակերպը քննադատող հոդվածներ, գրքեր: Պետք է նկատել, որ խնդրո առարկա ժամանակաշրջանի դեպքերի և իրադարձությունների խորը վերլուծությունը և լուսաբանումն արված են այլոց կողմից: Սակայն եթե ՀՅԴ-ի ու նրա գործունեության վերաբերյալ կա բավականաչափ հարուստ գիտական գրականություն, գրված են բազմաթիվ ուսումնասիրություններ, գրքեր ու հոդվածներ, ապա նույնը չի կարելի ասել ՀՅԴ մամուլի մասին: «Մեր պայմաններն ու մեզ անհնար է ճշտորոշել ու լրիւ կերպով ներկայացնել ՀՅԴ պարբերական ու ոչ-պարբերական հրատարակութիւններու ցանկը: Քաղաքական պայմաններու հետևանքով լոյս տեսած են թերթեր անկուսակցական անուան տակ, մինչդեռ իրապէս դաշնակցական հրատարակութիւններ են եղած», - կարդում ենք 1950 թ. հրատարակված «Հուշապատման» մեջ:<sup>2</sup>

Մինչև օրս հստակ պատկերացում չկա Դաշնակցության պարբերականների մատենագիտության հարցում: ՀՅԴ մամուլը համակարգելու փորձ է Ա. Տեր-Խաչատրյանի աշխատությունը: Այն հրատարակել է ՀՅԴ

<sup>1</sup> «Հուշապատմում ՀՅԴ- (1890-1950 թթ.)», Բոստոն, 1950: Ա. Տեր-Խաչատրյան. «ՀՅԴ 100-ամեայ մամուլը (1890-1990)», Պէյրուս, 1990:

<sup>2</sup> «Հուշապատմում ՀՅԴ- (1890-1950 թթ.)», նշվ. աշխ., էջ 562-579:

Լիբանանի Կենտրոնական կոմիտեն: Այս գրքում առաջին անգամ ամփոփ կերպով բնութագրված է ՀՅԴ մամուլը 1890-1990 թթ. կտրվածքով: Ա. Տեր-Խաչատուրյանը, սակայն, հաճախ թույլ է տվել անճշտություններ, հատկապես պարբերականների՝ կուսակցական պատկանելության առումով:<sup>3</sup> ՀՅԴ մամուլը բավականաչափ պատշաճ է ներկայացված Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» մատենագիտական աշխատության մեջ, թեև այստեղ կան անճշտություններ, բացթողումներ:<sup>4</sup> Իր որակով ու գիտական արժեքով Գ. Լևոնյանի մատենագիտությանը զիջում է Հովի. Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» աշխատությունը:<sup>5</sup> Նա, բնականաբար, տուրք է տվել զուտ քաղաքական և գաղափարական թելադրանքներին՝ ՀՅԴ մամուլը գնահատելով բացառապես թշնամական դիրքերից: Հովի. Պետրոսյանն իր հերթին շարունակել է նախորդ մատենագիտություններում թույլ տրված սխալներն ու վրիպումները: Դաշնակցության մամուլը ներկայացված է նաև Ա. Կիրակոսյանի աշխատության մեջ:<sup>6</sup> Հեղինակը կրկնել է նախորդ մատենագիտությունների թերությունները (հիմնականում՝ խմբագիրների, հրատարակության թվականների հարցում), սակայն կատարել է դրական աշխատանք՝ մտցնելով իր ճշտումները: Հետազոտական անաչառությունն արդեն զգացնել է տալիս Մ. Բաբլոյանի գրքում: Մ. Բաբլոյանը որոշ չափով ուղղել է հրապարակի վրա եղած մատենագիտական թերությունները՝ մասամբ կրկնելով դրանք:<sup>7</sup>

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի դաշնակցական մամուլին խորհրդային շրջանի պատմագրության մեջ գրեթե չեն անդրադարձել, թեև վերաբերմունքը, բնականաբար, պիտի դրսևորվեր նույն բացասական միտումով, ինչը կուսակցության պատմագրության հանդեպ էր: Օրինակ՝ ՀՍՍՀ ԳԱ հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» 6-րդ հատորում ՀՅԴ-ն և նրա մամուլը շատ համառոտ գնահատվել են պրոլե-

<sup>3</sup> Ա. Տեր-Խաչատուրեան, նշվ. աշխ., էջ 10-18:

<sup>4</sup> «Հայոց պարբերական մամուլը», կազմեց՝ Գ. Լևոնյանը, Երևան, 1934:

<sup>5</sup> Հովի. Պետրոսյան, «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա (1794-1900 թթ.)», Երևան, 1956:

<sup>6</sup> «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967 թթ.)», համահավաք ցանկ, կազմեց՝ Ա. Կիրակոսյանը, Երևան, 1970:

<sup>7</sup> «Հայ պարբերական մամուլ (1794-1980 թթ.)», մատենագիտական համահավաք ցուցակ, կազմեց՝ Մ. Բաբլոյանը, Երևան, 1986:

տարական հեղափոխության դիրքերից: ՀՅԴ-ն և մյուս ազգային կուսակցություններն այստեղ հորջորջվել են «բուրժուանացիոնալիստական» ու «մանր բուրժուական»: Դաշնակցական մամուլը մեղադրվել է այն բանում, որ նշված ժամանակաշրջանում «ազգայնական դիրքերից ջանացել է հայ ժողովրդի ազատագրական պայքարը շեղել հեղափոխական ճանապարհից, խանգարել է աշխատավոր զանգվածների դասակարգային ինքնագիտակցության գալուն»:<sup>8</sup>

Այս նույն ոգով են բնութագրվել ՀՅԴ-ն ու նրա մամուլը խորհրդրդային շրջանի բոլոր պատմաբանների աշխատություններում:<sup>9</sup> Խորհրդրդային շրջանի հրապարակումներից պետք է առանձնացնենք Լ. Խուրշուդյանի՝ «Դաշնակցություն կուսակցության սոցիալական էության լեւնինյան գնահատականի հարցի շուրջ» հոդվածը (ռուսերեն), որը պատմագիտական նորովի հայեցվածք էր ՀՅԴ-ն գնահատելու տեսակետից:<sup>10</sup> Պատմաբանի պնդմամբ՝ ՀՅԴ-ն ոչ թե հետադիմական, այլ մանր-բուրժուական, ձախ-նարողնիկական կուսակցություն է: Խուրշուդյանն այս գաղափարն անցկացնում է՝ ելելով ժամանակի հնարավորությունից իբրև լեւնինյան տեսակետի վերականգնում, որը խեղաթյուրվել էր խորհրդային հետագա շրջանի պատմության մեջ:

Վերջին տասնամյակին ՀՅԴ պատմությանն անդրադարձել են այս կուսակցության նշանավոր գործիչներ Հ. Տասնապետյանը, Էդ. Հովհաննիսյանը, ինչպես նաև՝ Գ. Խուրինյանը, Գ. Վարդանյանը, Ա. Հակոբյանը, Ն. Մարտիրոսյանը և այլք: Հ. Տասնապետյանի՝ անգլերեն լույս տեսած աշխատության մեջ ՀՅԴ մամուլը դիտարկվել է միայն կուսակցության գաղափարական քարոզչության կտրվածքով: Նա նշել է, որ 1909 թ. օգոստոս-սեպտեմբերին Վառնայում զումարված ՀՅԴ 5-րդ համաժողովը ուշադրության կենտրոնում պահելով տարածաշրջաններ-

---

<sup>8</sup> «Հայ ժողովրդի պատմություն», (ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն), Երևան, 1981, Խ. 6-րդ, էջ 869-870:

<sup>9</sup> Բ. Անանիկյան, «Հոգեբանական պատերազմը և Դաշնակցությունը», Երևան, 1986, էջ 6, 63-66, 95, 152: Հ. Միմոնյան, «Դաշնակցությունը հակակոմունիզմի ծառայության մեջ», Երևան, 1966, էջ 12, 30-38: Ա. Համբարյան, «Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին», Երևան, 1990, էջ 210-240:

<sup>10</sup> Л. Хуршудян. "К вопросу о ленинской оценке социальной сущности партии Дашнакцутюн" («Լեւնինի հասարակական գիտությունների»), Երևան, 1988, թիվ 7, էջ 12-31):

րում կատարվող աշխատանքը, որոշել է թերթեր հրատարակել ինչպես երկրում, այնպես էլ՝ Կ. Պոլսում: Այս կերպ Կարինի «Հառաջի» և Թիֆլիսի «Հորիզոնի» հետ 1909 թ. Կ. Պոլսում սկսել է հրատարակվել «Ազատամարտը»՝ Ռ. Ջարդարյանի խմբագրությամբ:<sup>11</sup> Այս հեղինակը չի անդրադարձել բուն «Ազատամարտի» գործունեությանը: \*Էդ. Հովհաննիսյանը ևս ամբողջովին անդրադարձել է ՀՅԴ կուսակցության պատմությանը՝ քննարկման առարկա չդարձնելով նրա մամուլը:<sup>12</sup> Գ. Խուդինյանի աշխատության մեջ ՀՅԴ ձևավորման գործընթացը քննության է ենթարկվել ներազգային ու միջազգային կացության հենքի վրա՝ ընդգրկելով կուսակցության ակունքներից մինչև 1895 թ. վերջերն ընկած հատվածը: Գրքում Դաշնակցության գաղափարախոսության հանգամանալից քննության միջոցով բացահայտվում է ՀՅԴ խաղացած դերը հայ քաղաքական ու փիլիսոփայական մտքի պատմության մեջ: Գ. Խուդինյանը չի անդրադարձել ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլի օրգաններին:<sup>13</sup> Գ. Վարդանյանի մենագրությունը նվիրված է Հայաստանի առաջին հանրապետության մշակույթի պատմությանը: Հեղինակը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին հրատարակված Դաշնակցության պարբերականները քննարկել է մշակույթին երևույթի կտրվածքով:<sup>14</sup> Ա. Հակոբյանի աշխատության մեջ առաջին անգամ գիտականորեն համակարգված և համառոտ բնութագրված են Հայաստանի առաջին հանրապետության տարածքում լույս տեսած ավելի քան 60 անուն պարբերականներ՝ ըստ իրենց բնույթի ու բովանդակության, ըստ ունեցած գաղափարաքաղաքական ուղղվածության և կուսակցական պատկանելության: Ա. Հակոբյանը ներկայացրել է Հայաստանի առաջին հանրապետության շրջանի նաև Դաշնակցության պարբերականների պատմությունը:<sup>15</sup> Ն. Մարտիրոսյանն անդրադարձել է հիմնականում Բոստոնում հրատարակված ՀՅԴ «Հայրենիք» ամսագրի հրապարակախոսությանը

<sup>11</sup> H. Dasnabedian, "History of the Armenian Revolutionary Federation Dashnaksutium (1890-1924)", Milan, 1989, էջ 91:

<sup>12</sup> Э. Оганисян, "Век борьбы". Мюнхен-Москва, 1991, в двух томах.

<sup>13</sup> Գ. Խուդինյան, «ՀՅԴ քննական պատմություն. ակունքներից մինչև 1895 թ. վերջերքը», Երևան, 2006:

<sup>14</sup> Գ. Վարդանյան, «Մշակույթը Հայաստանի առաջին հանրապետությունում (1918-1920 թթ.)», Երևան, 2003, էջ 119-126:

<sup>15</sup> Ա. Հակոբյան, «ՀՀ պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.)», Երևան, 2005, էջ 27-43:

1920-1930-ական թվականների կտրվածքով:<sup>16</sup> Բացի նշված հեղինակներից, ՀՅԴ մամուլի վերաբերյալ կան միայն ցաք ու ցրիվ գնահատականներ և կարծիքներ կուսակցության անվանի դեմքերի գրքերում, հուշերում ու հոդվածներում, սակայն դրանք հավաքելու, համադրելու և գիտականոթեն վերլուծելու ուղղությամբ քիչ բան է ձեռնարկվել: ՀՅԴ տեսաբան Մ. Վարանդյանը փաստել է, որ արդեն 20-րդ դարի սկզբին դաշնակցական մամուլը տիրել էր հրապարակին և խեղդել մամուլի հինավուրց օրգաններին: «Մեր օրաթերթերը յաճախ կը փակվեին կառավարութեան կողմէ, բայց միշտ ալ կը վերսկսէին իրենց հրատարակութիւնը տարբեր անուններով»:<sup>17</sup>

«Ազատամարտը», «Ճակատամարտը», «Շանթը», «Ուսանողը» և «Երկունքը» ՀՅԴ պարբերական մամուլի ուրույն և արժանավոր հրատարակություններ էին: Հատկապես «Ազատամարտից» շատ բան ունեն յուրացնելու և սովորելու մեր օրերում հրատարակվող գրեթե բոլոր պարբերականները: «Ազատամարտը» կարելի է համարել իր ժամանակի համար հասուն, լրագրողական վարպետության հասած մամուլի օրգան: Լրագրության բոլոր ժանրերն անխտիր կիրառվել են այս թերթում: «Ազատամարտը» մշտապես խուսափել է դառնալ միջկուսակցական պայքարի միջոց:<sup>18</sup> Հայ իրականության մեջ «Ազատամարտի» խաղացած դերին անդրադարձել են Մ. Վարանդյանը, Հ. Սիրունին, Գ. Լազյանը, Ռ. Դարբինյանը, Ռ. Զարդարյանը: «Թերթն ստացաւ իրեն արժանի դիրքն ու կշիռը նաև պետական կեանքի մէջ: Կառավարութիւնը միշտ ուշադիր էր անոր ձայնին, հաշուի կ'առնէր անոր կարծիքները պետական կարեւորութիւն ունեցող այլ և այլ խնդիրներու շուրջ: «Ազատամարտը» կգրավել մտավորական բազմությունը իր անկախ ու անկողմնակալ խոսքով, քննադատական շիտակ կեցվածքով և իր ժողովրդավար-ազատական ուղղությամբ», - գրում էր Մ. Վարանդյանը:<sup>19</sup> Գ. Լազյանն «Ազատամարտը» համարում էր «թրքահայ լրագրութեան ամենափայլուն օրկան», որը պոլսահայ մամուլի պատմության մեջ նոր շրջանի սկիզբը դրեց:<sup>20</sup> 1912 թ.

<sup>16</sup> Ն. Մարտիրոսյան, ««Հայրենիք» ամսագրի հրապարակախոսությունը (1920- 1930-ական թթ.)», Երևան, 2001:

<sup>17</sup> Մ. Վարանդեան, «ՀՅԴ պատմություն», Երևան, 1992, էջ 396-397:

<sup>18</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 63, 71, 75, 81, 86, 93, 98, 142, 151:

<sup>19</sup> Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 439:

<sup>20</sup> Գ. Լազյան, «Յեղափոխական դեմքեր», Գահիրե, 1945, էջ 214:

Ռ. Զարդարյանը Ս. Վրացյանին գրած նամակում հայտնում էր, որ թերթը Պոլսում անօրինակ և աննախընթաց հաջողություն է գտել՝ տպաքանակը 1600-ից հասցնելով 6000-ի:<sup>21</sup> «Ազատամարտի» և ընդհանրապես ՀՅԴ Կ. Պոլսի մամուլի մասին դրվատանքով, նույնիսկ չափազանցությամբ է արտահայտվել դաշնակցական ճանաչված գործիչ և ուսումնասիրող Հ. Սիրունին: Նա իրավամբ նշել է, որ ՀՅԴ մամուլը նոր ու թարմ շունչ է բերել իր աշխարհում, բայց ծայրահեղության գիրկն է ընկել՝ մերժելով մինչ այդ հրատարակված պարբերականների դրական արժանիքները: Որպես ասվածի ապացույց վկայակոչենք միայն հետևյալ պարբերությունը նրա հոդվածից. «1895-1896թ.- էն յետոյ Պոլսէն մէկիկ-մէկիկ արտասահման հեռացեր էին թրքահայ լաւագոյն մտաւորականները: Ասպարէզը մնացեր էր հացկատակներուն և անոնց, որ լրագրութիւնը ապրուստի միջոց մը ըրած էին: 1908 յուլիսին, երբ Համիտ մարդոց լեզուները բացաւ, կը փակուէր հայ մամուլի տարեգրութեանց ամենէն տխուր մէկ օրը: Շատ քիչ թերթեր, մանաւանդ վերջին քառորդ դարուն, այնքան ազդած են ապրող սերունդին վրայ, որքան «Ազատամարտը»՝ իր գոյութեան վեց տարիներուն մէջ»:<sup>22</sup> Սիրունին այսպես էր բնորոշում «Ազատամարտի» դերը. «Երիտասարդութեան համար տեսակ մը սրբավայր էր «Ազատամարտի» շէնքը: Հոն էր, կերպով մը, հայ կեանքին բազկերակը... ճիշդ է, գիտեմ մարդիկ ալ, որ մատներով քէին բռներ մեր թերթը... Ան Իթաքիատի և Դաշնակցութեան բարեկամութեան օրերուն անգամ հացկատակի մը դիրքը չառաւ, ընդհակառակը, իր խօսքն աւելի կծու, աւելի հատու եղաւ»:<sup>23</sup> Իսկ Ռ. Դարբինյանը, փորձելով արժևորել ՀՅԴ մասնավորապես Կ. Պոլսի մամուլը, թվարկում էր դրանցում նկատվող որոշ թերություններ, մեկը մյուսին կրկնօրինակելու միտումներ՝ միայն «Ազատամարտը» համարելով նոր սերնդի խոսակող և նոր գաղափարներ ու ծրագրեր հնչեցնելու միջոց:<sup>24</sup> Ի տարբերություն դաշնակցական վերոհիշյալ գործիչների այս գնահատականների, նշված ժամանակահատվածում լույս տեսած ոչ դաշնակցական պարբերականները գրեթե թշնամական ու բա-

<sup>21</sup> Գ. Լազեան, «Յեղափոխական դէմքեր», Դահլիճ, էջ 213-214:

<sup>22</sup> «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 6, էջ 65-72, 80-81 (Յ. Սիրունի, «Ազատամարտի» սերունդը):

<sup>23</sup> Նույն տեղում, 1924, թիվ 11, էջ 104-115, թիվ 12, էջ 115-137:

<sup>24</sup> «Ազատամարտ», 1912, թիվ 946:

ցասական կարծիք ունեին ՀՅԴ մամուլի մասին:<sup>25</sup> Բավական է թերթել ասենք՝ «Մուրճ», «Մշակ», «Հնչակ», «Ժամանակ», «Հայրենիք», «Բյուզանդիոն», «Օրագիր», «Ծիածան» թերթերի հավաքածուները, որպեսզի համոզվենք ասվածի ճշմարտության մեջ: Մեծ մասամբ այս լրագրային կուսակցական պայքարը վերածվում էր անձնական հարաբերությունները ձգարտելու և նեղ-անձնային վեճ ու կռիվների, որոնք, կարծում ենք, պատիվ չէին բերում կողմերից և ոչ մեկին:

Եթե ընդհանրացնենք, պետք է եզրակացնենք, որ ինչպես ՀՅԴ մամուլն առհասարակ, այնպես էլ ՀՅԴ Կ.Պոլսի պարբերականները (1909-1915 թթ. և 1918-1924 թթ.) չեն արժանացել գիտական ուսումնասիրության: ՀՅԴ մամուլի, մասնավորապես՝ Կ. Պոլսի պարբերականների մասին կան կցկտուր գնահատականներ, կարծիքներ, բայց՝ ոչ գիտական ուսումնասիրություններ: Այդ տեսակետները հիմնականում արտահայտված են դաշնակցական և ոչ դաշնակցական թերթերում, ամսագրերում, որոշ գրքերում: Թերևս կարող ենք հավաստիաբար պնդել, որ ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլն առ այսօր չի արժանացել բազմակողմանի և խոր գիտական վերլուծության: Իսկ դա կնպաստեր այն բանին, որ գիտականորեն կվերլուծվեին ծայրահեղության հասնող երկուստեք կարծիքները: Սխալ է՝ անվերապահորեն ճշմարտացի համարել ՀՅԴ մամուլը և մերժել մինչ այդ ու նաև նույն ժամանակահատվածում հրատարակված ոչ դաշնակցական թերթերն ու ամսագրերը: Սխալ է միայն վատը, մերժելին փնտրել ու մատնանշել ՀՅԴ մամուլում, ինչն անում են նրա հակառակորդ գործիչները: Ընդ որում, դաշնակցական մամուլի վերաբերյալ տեսակետները ՀՅԴ հակառակորդ հրատարակություններում ունեն բացառապես բանավիճային, դեպքից դեպք հանդիպող և պատահական բնույթ, որը չի կարող համարվել օբյեկտիվ գնահատական: Այդ պատճառով էլ այստեղ ձեռնպահ ենք մնում այս բովանդակության նյութերից, որոնց ուղղվածությունը բացառապես կուսակցական և քաղաքական նկարագիր ունի: (Օրինակ՝ ռամկավարների վեճը ՀՅԴ մամուլի, նաև՝ հնչակյանների բանավեճը դաշնակցական լրագրողների, գործիչների հետ և այլն): Այսօր կարիք է զգացվում այս ոլորտում կատարել օբյեկտիվ վերլուծություն:

<sup>25</sup> Մ. Վարսանդեան, նշվ. աշխ., էջ 397:

## ՀՅՂԿ. ՊՈԼՍԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ (1909-1915 ԹԹ.) Ի ԲՐԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍ

Յուրաքանչյուր կուսակցություն ստեղծվում է սեփական պատկերացումների ու մտածելակերպի հիման վրա իր ժողովրդի գոյատևմանը սպառնացող ցանկացած տեսակի վտանգներից նրան անվնաս դուրս բերելու, նրա ներկայի կյանքը բարվոքելու և դեպի բարեկեցիկ ապագան առաջնորդելու նպատակով: Դա, անշուշտ, կոնկրետանում է որոշակի ծրագրում, որով էլ կուսակցությունը, ստանձնելով ղեկավարի դեր, պիտի կարողանա համախմբել, կազմակերպել ազգակիցներին՝ միավորված ջանքերով նախագծված դրոյթները կենսագործելու համար: Պարզ է, որ այդ գործընթացում գաղափարաքարոզչական լավագույն օժանդակող ազդակը կուսակցական մամուլն է: Ինչ վերաբերում է ՀՅԴ-ին, ապա նա բավական տքնաշան աշխատանք է կատարել դավանած գաղափարները հայությանը հասցնելու ուղղությամբ: Կոնկրետ 1900-ական թվականներին իրար են հաջորդել դաշնակցական մեկ տասնյակից ավել թերթեր, ամսագրեր, ընդ որում՝ հաճախ միևնույն լրագիրը տպագրվել է տարբեր խորագրերով, քանի որ կառավարական համապատասխան մարմիններն արգելել են դրանցից շատերի հրատարակումը: Թվարկենք մինչև 1914 թ. տպագրված դաշնակցական թերթերից մի քանիսը: Մեկը մյուսին փոխարինելով՝ թիֆլիսում լույս են տեսել «Հառաջը» (1905 թ.), «Ալիքը» (1906 թ.), «Երկիրը» (1906 թ.), «Զանգը» (1906 թ.), «Ժամանակը» (1906-1907 թթ.), իսկ 1907 թվականին՝ «Փայլակը», «Խարիսխը», «Ժայռը», «Արորը», «Կովկասի առավոտը», «Նոր ալիքը», «Վտակը» (1907-1908 թթ.), «Զանգակը» (1908 թ.), «Գործը» (1908-1909 թթ.), «Հորիզոնը» (1909-1918 թթ.), «Նոր ուժը» (1914 թ.): «Գրոհ» (1906-1907 թթ.) և «Թռուցիկ» (1906 թ.) թերթերը հրատարակվել են Բաքվում, «Ժայռը» (1909-1911 թթ.) Ալեքսանդրապոլում, «Ռազմիկը» (1905-1910 թթ.) Ֆիլիպետում (այժմ՝ Պլովդիվ), «Հառաջը» (1909-1914 թթ.), «Ալիքը» (1914 թ.) և «Երկիրը» (1914 թ.) Կարինում, «Արորը» (1910-1911 թթ.) Երզնկայում, «Պիծակը» (1911-1912 թթ.) Տրապիզոնում, «Այգը» (1912-1922 թթ.) Թավրիզում:

Շարունակելով դաշնակցական մամուլի ավանդույթները՝ Թուրքիայի մայրաքաղաք Կ.Պոլսում 1909-1915 թթ. լույս են տեսել «Ազատամարտ» օրաթերթը և «Ռասանոլ», «Երկունք» ամսաթերթերը: Գաղափարական հիմքի վրա ստեղծված այս պարբերականները նեղ-կուսակցական չեն եղել: Դրանց արձարժած հիմնախնդիրներն այնքան բազմազան էին ու բազմաբնույթ, որ ընդգրկում էին հրատարակման ժամանակաշրջանում հայ ժողովրդին հետաքրքրող հարցադրումներ, իրադարձություններ գրեթե բոլոր բնագավառներում՝ քաղաքականությունից մինչև մշակույթ: Առհասարակ, ազգային քաղաքականության և մշակույթի հիմնահարցերն՝ այս հասկացությունների արդիական իմաստով, կազմում են այդ պարբերականների բովանդակությունը և անժխտելի արժանիքը: Ստորև կփորձենք կոնկրետացնել վերև ասվածը յուրաքանչյուր պարբերականի համար:

**«ԱԶԱՏԱՄԱՐՏԸ»՝ ՀՅԴ ԱՐԵՎԱՏՅԱՆ  
ԲՅՈՒՐՈՅԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ**

ՀՅԴ Արևմտյան բյուրոյի «Ազատամարտ» պաշտոնաթերթի աշխատակազմը ներկայացնելը, որոշ առումով, բարդ է: Բարդ է այն պատճառով, որ աշխատակիցների (հաստիքային և արտահաստիքային) թիվը բավական մեծ է եղել ու պարբերաբար փոփոխվել է:<sup>26</sup> Սակայն «Ազատամարտն» ունեցել է աշխատակիցներ, որոնք իրենց պարտականությունները կատարել են աշխատավայրում մինչև օրաթերթի վերջին համարի լույս ընծայման օրը՝ 1915 թ. ապրիլի 24-ը:<sup>27</sup> «Ազատամարտի» արտոնատերը, պատասխանատու տնօրենն ու խմբագիրն էր արևմտահայ անվանի հասարակական-քաղաքական գործիչ, արձակագիր Ռուբեն Ջարդարյանը: Այդ տարիներին ՀՅԴ Արևմտյան բյուրոն, արդարև, խոհեմաբար է վարվել՝ «Ազատամարտի» խմբագիր ընտրելով Ռ. Ջարդարյանին, քանզի հիմնականում նրա շնորհիվ այն չի վերածվել նեղ-կուսակցական թերթի: «Թերթը իր շնորհիւ կուսակցութեան մը օռկանը չէղաւ միայն, այլ՝ հայ ժողովուրդի առողջ բնազդներուն ամբողջական արտա-

<sup>26</sup> «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 9, էջ 112-120, 1925, թիվ 3, էջ 28-44:

<sup>27</sup> Նույն տեղում, 1924, թիվ 12, էջ 115-137:

յայտութիւնը, հայ մտքին ճիգերուն ասպարէզը», - կարդում ենք «Հայրենիք» ամսագրում:<sup>28</sup>

Ռուբեն Ջարդարյանը ծնվել է 1874 թ. Խարբերդում: Ավարտել է տեղի Ազգային վարժարանը: 1892-1903 թթ. աշխատել է Խարբերդի կենտրոնական վարժարանում որպէս ավագ ուսուցիչ դասավանդելով հայոց լեզու, հայ գրականություն և հայ ժողովրդի պատմություն: 1904 թ. տեղափոխվել է Իզմիր, որտեղ շուրջ մեկ տարի եղել է Մանիսայի Ազգային վարժարանի տեսուչ: Բազմակողմանիորեն կրթված, մի քանի լեզվի տիրապետող, 17 տարեկանից գրասեր հասարակայնությանը հայտնի Ռ. Ջարդարյանը գրել է դպրոցական դասագրքեր, զբաղվել թարգմանությամբ: Նրա հրապարակախոսական հոդվածները և գրական ստեղծագործությունները (հեքիաթներ, նովելներ, արձակ բանաստեղծություններ) 1890 թվականից տպագրվել են արևմտահայ մամուլում: 1910 թ. Կ. Պոլսում հրատարակվում է նրա անդրանիկ և միակ ժողավածուն՝ «Յայգալույսը», որը 1912 թ. լույս է տեսնում Փարիզում Արշակ Չոպանյանի, Էդվարդ Գոլանձյանի, Գրիգոր Եսայանի՝ ֆրանսերեն թարգմանությամբ:<sup>29</sup>

Ռ. Ջարդարյանը բազմիցս ենթարկվել է ոստիկանության հետապնդումներին, բանտարկվել է և ազատ արձակվելով՝ մեկ այլ ձերբակալությունից խուսափելու նպատակով 1905 թ. Իզմիրից փախել է Բուդապեշտ: Պոլվդիվ քաղաքում 1905-1908 թթ. հրատարակել ու հայրենիքում տարածել է «Ռազմիկ» թերթը: Նա հմուտ խմբագիր էր և քաղաքական պայքարի բովով անցած գործիչ: Հիշյալ արժանիքները նպաստում են այն բանին, որ 1908 թ. վերադառնալով Կ. Պոլիս՝ Ռ. Ջարդարյանն ստանձնում է «Ազատամարտի» խմբագրի պաշտոնը: Նա երբեմն տպագրվել է Աջ Եհովայի և Էժտահար ծածկանուններով: Ռ. Ջարդարյանը «Ազատամարտ» օրաթերթում հրատարակվելու հնարավորություն է ստեղծել ոչ միայն հայ մտավորականության հանրաճանաչ ներկայացուցիչների, այլև՝ շնորհալի երտասարդ ստեղծագործողների համար՝ պնդելով. «Յաճախ չսպասւած ժայռէն ջուր կը ցայտէ»:<sup>30</sup>

«Ազատամարտի» վարչական հոգսերով զբաղվել են Կարապետ Փաշայանը, Սարգիս Օհանջանյանը (Ֆարիատը) և Հայկ Թիրյաքյանը

<sup>28</sup> Նույն տեղում, 1924, թիվ 3, էջ 67-71, թիվ 5, էջ 93-97:

<sup>29</sup> «Սովետական գրականություն» ամսագիր, Նրևան, 1966, թիվ 11, էջ 129-142:

<sup>30</sup> «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1925, թիվ 3, էջ 29-32, 40-43, 1924, թիվ 11, էջ 107-115:

(Հրաչը): Վերջինս թերթի մատակարարությունը վարել է մինչև նրա փակման օրը:

«Ազատամարտի» խմբագրական քարտուղարությունը փոխելփոխ ստանձնել են Գեղամ Բարսեղյանը, Շավարշ Մխաթյանը, Հակոբ Միրունին: Թերթի հիմնական աշխատակիցներն էին Խաչատուր Մալումյանը (Է. Ակնունին), Հարություն Շահրիկյանը (Ատոմը), Գեղամ Բարսեղյանը, Բարսեղ Շահբազը, Գասպար Իփեքյանը, Ներսես Փափազյանը: Սակայն «Ազատամարտի» աշխատակազմը պարբերաբար փոխվել է: Աշխատանքներին մասնակցել են Ս. Զավարյանը, Հ. Համբարձումյանը, Ռ. Դարբինյանը, Ռ. Լեռնյանը, Ա. Խաչատրյանը, Ս. Մինասյանը, Հ. Մանուկյանը, Լ. Մոզյանը, Ս. Սրենցը և այլք: Իսկ ընդհանուր առմամբ թերթն ունեցել է 6 անդամից բաղկացած խմբագրական մարմին, որոնք «Ազատամարտի» վարչության 3 անդամների հետ ղեկավարել են պաշտոնաթերթը: Այն ունեցել է թարգմանիչներ, լրագրողներ ու թղթակիցներ (այդ թվում՝ արտահաստիքային) Թուրքիայի, Արևմտյան Հայաստանի և աշխարհի տարբեր մասերում: Նշենք խորհրդանիշ արտահաստիքային լրագրող Տիգրան Զավենին և լրագրող-թղթակիցներ Սեպուհ Ակնունուն ու Փայլակ Գոլանձյանին: Նրանք գրեթե բոլոր համարներում ապահովել են լրատվություն և տեղեկատվություն: 1909 թ. թերթն ունեցել է սեփական թղթակիցներ հետևյալ վայրերում՝ Պլովդիվում, Ատաբազարում՝ Զարեհ Կենձյանը, Պարտիզակում՝ Օննիկ Պ. Յագոյանը, Օրդուում՝ Խորեն Կլորիկյանը, Քյոթահիայում՝ Մարտիրոս Առաքելյանը, Իզմիրում՝ Կարապետ Մալեճանյանը և Շավարշ Մխաթյանը, Ռոդոսթոյում՝ Թյությունջի Արմենակը, Սամսոնում՝ Հարություն Դիվանյանը, Արմաշում՝ Մելիտոս Մելիտոսյանը և այլք:<sup>31</sup> «Ազատամարտում» հրապարակումներով հանդես է եկել հայ մտավորականության սերունդը. Գ. Զոհրապը, Կարոլժանը, Սիամանթոն, Ավ. Իսահակյանը, Ռ. Սևակը, Ա. Ահարոնյանը, Զ. Եսայանը, Գ. Տեր-Կարապետյանը (Մշո Գեղամը), Գ. Խաժակը, Ա. Կռամյանը, Ս. Կյուրճյանը, Մ. Կարանդյանը, Լ. Շանթը և այլք:

ՀՅ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթն Ազատամարտ է անվանվել Է. Ակնունու առաջարկով: «Ի՞նչ կը նշանակէ ան, եթէ ոչ ազատ կռիւ, շատ-շատ ազատի, ազնուականի կռիւ, բայց ոչ երբեք ազատու-

<sup>31</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 7:

թեան կռիւ, ազատութեան համար կռիւ», - կարդում ենք Հ. Սիրունու հուշերում:<sup>32</sup> Այստեղ թերևս սքողվել է բառի բուն նշանակությունը:

«Ազատամարտը» տպագրվել է Բերայի Ենի Չարքը փողոցում, թիվ 32 հասցեում այդ նպատակով կառուցված Ատոմ Շահենի տպարանում: Նույն շենքում է եղել ՀՅԴ պաշտոնատեղին: Հետագայում 1910 թ., երբ կուսակցությունը բացել է սեփական տպարանը (տնօրեն՝ Հայկ Թիրյաքյան) Համալ Պաշը փողոցի թիվ 74 շենքում, այնտեղ են փոխադրվել ՀՅԴ Արևմտյան բյուրոյի գրասենյակը, «Ազատամարտի» խմբագրությունը և տպարանը (խմբագրության գետնահարկ-նկուղում):<sup>33</sup> Խմբագրության շենքից են 1915 թ. ապրիլի 24-ի կեսգիշերին ձերբակալվել և բանտարկել «Ազատամարտի» վերջին՝ (թիվ 1815) այդպես էլ լույս չտեսած համարի վրա աշխատող հերթապահ խմբագրին, գրաշարին, մեքենավարին, բեռնակրին ու դռնապանին: Թերթի մնացած աշխատակիցներին (գրեթե բոլորին) ձերբակալել են իրենց բնակարաններում: Նրանց ճակատագիրն արդեն կանխորոշված էր. նահատակություն մնացյալի հետ: Իսկ խմբագրության շենքը բռնագրավել ու թալանել են հենց կեսգիշերին (այդ թվում՝ դրամարկդում գտնված 400 ոսկին, «Ազատության մատենադարան»-ի գրքերի պահեստը):<sup>34</sup> Ապրիլի 24-ին ձերբակալվածների ու նահատակվածների թվում էր նաև Ռ. Ջարդարյանը: 1915 թ. մարտին նա հրաժարվել էր հեռանալ Կ. Պոլսից արտերկիր՝ փրկելով կյանքը: Նա այսպես էր պատասխանել Թուրքիայից հեռանալու առաջարկով իրեն դիմած գործընկերոջը. «Հրաչն ու ես չենք կրնար Պոլիսը թողուլ: Հրաչը պէ տք է մնայ իրեն վստահուած պարտականութեան գլուխը, իսկ ես «Ազատամարտի» գլուխը պէ տք է ըլլամ մինչև իր վերջին օրը»:<sup>35</sup>

Ռ. Ջարդարյանի խմբագրած ՀՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթն արտահայտում էր իր կուսակցության ծրագրային դրույթները, նրա դիրքորոշումն օսմանյան կայսրությունում և աշխարհում կատարվող իրողությունների նկատմամբ, տարածում էր հեղափոխական ազատամարտի կայծերը: Հենց այսպես էր բնորոշում իր գործունեությունն «Ազատամարտը»: Նա գրում էր նաև, որ ինքը, որպես քաղաքական կուսակցութեան

<sup>32</sup> «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 9, էջ 112-120:

<sup>33</sup> Նույն տեղում:

<sup>34</sup> Նույն տեղում, 1924, թիվ 12, էջ 115-137:

<sup>35</sup> Նույն տեղում, 1925, թիվ 3, էջ 28-44:

յան պաշտոնաթերթ, օժտված էր առաքելությամբ. նպաստել արդարության, ժողովրդավարության և սահմանադրական կարգերի հաստատմանը Թուրքիայում:<sup>36</sup> 1909 թ. հունիսի 10-ի անդրանիկ համարի խմբագրականում կարդում ենք, որ օրաթերթը, իբրև գաղափարական, շիտակ ու ժողովրդանվեր մամուլի ներկայացուցիչ, ղեկավարվելով «Ամեն ինչ ժողովրդի համար և ժողովրդի միջոցով» նշանաբանով, ձգտելու էր օսմանահպատակ ազգերի իրավահավասար գործակցությանը, պետության արմատական բարենորոգմանը, արևմտահայության կենսամակարդակի բարձրացմանը:<sup>37</sup> «Ազատամարտն», այս ամենին զուգահեռ, լինելու էր հայ մտավորականության ժամադրավայրն ու նրանց հուզող խնդիրների արտահայտիչը:<sup>38</sup>

«Ազատամարտի» վեցամյա գործունեությունը մեզ համոզում է, թե այն որքա՛ն հավատարիմ է մնացել իր սկզբունքներին:<sup>39</sup> ՀՀՂ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթի տեսադաշտից չի վրիպել որևէ հրատապ հարց, որի վերաբերյալ խմբագրակազմը հստակորեն դրսևորել է համապատասխան վերաբերմունք: «Ազատամարտն» ընթացել է ճշմարտության և ազգային համերաշխության ճանապարհով:<sup>40</sup> Այս հատկանիշների շնորհիվ օրաթերթը վաստակել էր ընթերցողների համակրանքը: Այն եղել է սիրված ու գնահատված թերթ՝ ուրույն դիմագծով: Դրանում, անշուշտ, դեր է խաղացել ՀՀՂ-ի գործելակերպը: Այդ տարիներին Դաշնակցությունը ուներ պատգամավորներ օսմանյան խորհրդարանում, ներկայացուցիչներ Ազգային ժողովում: Բնական է, որ իբրև ՀՀՂ-ի պաշտոնաթերթ «Ազատամարտը» գտնվում էր կառավարական շրջանների ուշադրության կենտրոնում, որոնք հաշվի էին առնում նրա կարծիքը պետական կարևորության հիմնախնդիրներով զբաղվելիս:<sup>41</sup> Թուրքական թերթերը հաճախ էին թարգմանաբար արտատպում «Ազատամարտի» խմբագրականները: Իսկ թուրք հասարակությանը Դաշնակցության տեսակետերին ծանոթացնելու միտումով 1911 թվականի թիվ 525-ից թերթում անգամ բացվում է թուրքերեն լեզվով բաժին: Այդտեղ տպագրվում էին «Ազա-

<sup>36</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 7:

<sup>37</sup> Նույն տեղում, թիվ 1:

<sup>38</sup> Նույն տեղում, թիվ 3:

<sup>39</sup> Նույն տեղում, 1909, թիվ 7, թիվ 8:

<sup>40</sup> Նույն տեղում, 1909, թիվ 1:

<sup>41</sup> Մ. Վարանդյան, «ՀՀՂ պատմություն», Գահիրե, 1950, և. 2-րդ, էջ 22:

տամարտի» նախորդող օրվա խմբագրականները, կարևոր հրապարակումներից մեկն ու մեկը, թուրքերին հետաքրքրող լուրեր և այլն: Օրաթերթին բաժանորդագրվել են բազմաթիվ այլազգիներ, հատկապես թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, պալատական ապարատի անդամներ, որոնց ուղարկված օրինակները տպագրվում էին ավելի որակյալ թղթի վրա:<sup>42</sup>

«Ազատամարտը» հրատարակվել է այլ անուններով՝ «Առաջամարտ» (1912 թ.), «Բյուրանիա» (1912-1913 թթ.), «Ազդակ» (1912-1913 թթ.), «Բազին» (1912 թ.), «Մեղու» (1913 թ.), «Շանթ» (1913-1914 թթ.) և «Ճակատամարտ» (1914 թ.):<sup>43</sup>

Հրատարակման տարիներին «Ազատամարտն» ընթերցողների մեջ արթնացրել ու ամրապնդել է ազգային ինքնագիտակցության և ազատ կյանքի համար ծավալվող պայքարի ոգին, հանուն արդարության հաղթանակի շի երկնչել կառավարության հալածանքներից, պատժիչ տուգանքներից և նույնաբնույթ, հանիրավի դատական գործընթացներից: Օրաթերթը զարկ է տվել հայրենի գրականության բարգավաճմանն ու հայ գիրը հասցրել է Հայկական գավառի կամ Արևմտյան Հայաստանի ամենախուլ անկյունները երբեմն որպես դասագիրք օգտագործվելով հեռավոր գյուղերում:<sup>44</sup>


*ՀԱՍՏՈՒԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐՆ  
«ԱԶԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ*

Երբ ծանոթանում ենք ՀՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթ «Ազատամարտի» ծրագրային հոդվածներին, խմբագրականներին, գավառներից ուղարկված թղթակցություններին, տեսնում ենք, որ այն երբեք

<sup>42</sup> «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 12, էջ 116-121:

<sup>43</sup> «Հայոց պարբերական մամուլը», Երևան, 1934, էջ 57, «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն», Երևան, 1970, էջ 34: Սեր կազմած մատենագիտական ցանկն աչապիսին է. 1909թ. հունիսի 10-ից մինչև 1912թ. նոյեմբերի 5-ն՝ «Ազատամարտ», 1912թ. նոյեմբերի 5-ից թիվ 1, 2, 3, 4 (թիվ 1051)՝ «Առաջամարտ», 1912թ. թիվ 1052-1062՝ «Բյուրանիա», 1912թ. նոյեմբերի 18-ից (թիվ 1063) մինչև դեկտեմբերի 23-ը (թիվ 1093)՝ «Առաջամարտ», 1912թ. դեկտեմբերի 24-ին (թիվ 1094)՝ «Ազդակ», 1912թ. դեկտեմբերի 25-ից (թիվ 1095) մինչև 1913թ. հունվարի 12-ը՝ «Բյուրանիա», 1913թ. հունվարի 12-15-ը՝ «Ազդակ», 1913թ. հունվարի 15-ից՝ «Ազատամարտ»:

<sup>44</sup> «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 9, էջ 118:



A94769

չի շեղվել կուսակցության հասարակական-քաղաքական հիմնական ուղեգծից: Օրաթերթի կարծիքով՝ Թուրքիայի առաջընթացի միակ երաշխիքը Սահմանադրություն ընդունելն էր. «Սահմանադրական ռեժիմը պէտք է ըլլայ ազդակ բոլորին համար. այժմ չի կրնար և պէտք չէ ըլլայ տիրող և տիրուող... Հաւասար քաղաքացիներ, հաւասար արդարութիւն»:<sup>45</sup>

«Ազատամարտը» կարծում էր, որ ժողովրդավարական պետություն ստեղծելու համար պարտադիր էին հինգ գործոն. քաղաքական կուսակցություններ, էապես փոխված ժողովուրդ, խորհրդարան, կառավարություն, բանակ: Ըստ թերթի՝ դրանցից վերջին չորսը օսմանյան Թուրքիայում չէին փոխվել բնույթով, այսինքն՝ ներարկված էին բռնապետական ոգով: Դրանք անկարող էին ծառայել իրենց կոչմանը, եթե չդառնային սահմանադրական: Թվարկված հինգ գործոնից միայն քաղաքական կուսակցություններն էին, որոնք ունակ էին վերափոխել մնացած չորսին՝ հանդիսանալով ժողովրդապետության միակ կայուն հիմքը:<sup>46</sup>

Թերթի կարծիքով՝ օսմանյան ժողովրդական ներկայացուցչությունն անգույն, ապիկար, անհետևողական էր:<sup>47</sup> Այն բաղկացած էր քաղաքականապես տհաս, վարչական գործին բացարձակապես անծանոթ, թույլ անհատներից, որոնք անընդունակ էին ստեղծագործ արարումների, ուստի պաշտպանում էին կառավարության ներկայացրած հակաժողովրդական օրինագծերը:<sup>48</sup> Խորհրդարանում լռեցվում էին քննադատությունները, մերժվում առաջադիմական որոշումների նախագծերը: Այսպես շարունակվելու պարագայում, «Ազատամարտի» համոզմամբ, ժողովրդական ներկայացուցչության մարմինը քայլ առ քայլ վերածվելու էր փոքրաթիվ ըմբոստներին ճնշող զորագնդի:<sup>49</sup> Մի շարք հողվածներում «Ազատամարտը» պատգամավորներին անվանում էր «կենդանի մեռելներ»:<sup>50</sup>

«Ազատամարտի» հավաքածուներում կար կայուն խորագիր. «Օսմանյան խորհրդարանի նիստերի դահլիճից հաղորդում են...»: Այն-

---

<sup>45</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 170:

<sup>46</sup> Նույն տեղում, թիվ 6:

<sup>47</sup> Նույն տեղում, թիվ 7:

<sup>48</sup> Նույն տեղում, թիվ 6:

<sup>49</sup> Նույն տեղում, թիվ 10:

<sup>50</sup> Նույն տեղում, 1910, թիվ 188, 278:

տեղ ներկայացվում, վերլուծվում էր յուրաքանչյուր նստաշրջան: Գրեթե բոլոր նիստերում ակտիվորեն մասնակցում էին հայ պատգամավորներից Վարդգեսը (Հովհաննես Սերենկյույան), Գրիգոր Զոհրապն ու Համբարձում Պոյաճյանը (Մուրադ): Առաջարկներով, հարցադրումներով և հարկ եղած դեպքում՝ սուր ելույթներով նրանք «խանգարում» էին մնացած պատգամավորների հանգիստը, ստիպում գործել, մանավանդ երբ խոսքը վերաբերում էր Ադանայի ջարդերի մեղավորներին գտնելուն և պատժելուն: Հատկապես վիճաբանությունների մեջ էր ներքաշվում Վարդգեսն իր հախուռն ու մարտական խառնվածքի մղումով: Բերենք մեկ-երկու օրինակ: 1909 թ. հունիսին կառավարող շրջանները փորձում էին աշխարհին հավատացնել, թե Ադանայի եղեռնի մեղավորները հայերն ու հայ կոմիտեներն էին: Ասենք՝ Իթթիհատ վե թերագզը կուսակցության անդամ, պատգամավոր Իսմայիլ Հազզը հարցազրույցներում Վիեննայի ու Փարիզի թերթերում այդպես էր մեկնաբանում կատարվածը: Սակայն ՀՅԴ Կ.Պոլսի պատասխանատու մարմինը երբ հարցումով դիմում էր երիտթուրքերին, թե համաձայն են կուսակցի արտահայտած կարծիքին, Իթթիհատի Սալոնիկի Ընդհանուր կենտրոնը ժխտում էր մասնակցությունն այդ քաղաքական խարդավանքին և ավելացնում, թե հարցում անողներն թող ընդունեն իրենց համակրանաց հավաստիքը:<sup>51</sup> Նման երկակի վերաբերմունքից զայրացած Վարդգեսը խորհրդարանում վեճի մեջ է մտնում Իսմայիլ Հազզի հետ այն օրը, երբ քննարկվում էին Ադանայի կոտորածի պատճառները: Նա զայրույթով « կը պօռայ, որ հերի՛ք է ալ իրենց լռութիւնն ու համբերութիւնը»: Խորհրդարանի նախագահը նկատողություն է անում Վարդգեսին, թե «էրզրումի պատգամավորը բուռն շեշտով» է խոսում և թե նա «կը յուզէ երեսփոխաններուն»:<sup>52</sup> Մեկ այլ նիստում նախագահողը Սերենկյույանի ելույթը բնորոշում է՝ «խիստ լեզուով ասուած»: Վարդգեսն այս անգամ դժգոհել էր Թալեաթ փաշայի առաջարկից, թե ճիշտ կլիներ լսելին Հակոբ Պապիկյանի ու Յուսուֆ Քեմալի տեղեկագրերն և հուլիսի 10-ին ընդհանուր ներում շնորհեին Ադանայի եղեռնի մեղավորներին: Վարդգեսն ելույթում նշում էր, որ նման ձևով հաշտություն չէր կայանա, որ հաշտությունը ծագում է ոչ թե ընդհանուր ներումով, այլ՝ հանցավորներին պատժելով և վնասները հատուցե-

<sup>51</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 1:

<sup>52</sup> Նույն տեղում, 1909, թիվ 29:

լով: Իսկ այս դեպքերի համար հանցավոր էր կառավարությունը.<sup>53</sup> Հիշատակենք նաև 1911 թ. մայիսի 3-ին օսմանյան խորհրդարանում Վարդգեսի մեկ այլ ելույթը.<sup>54</sup> Դրանում նա խստորեն քննադատում էր կառավարության անտարբերությունն Արևելյան նահանգներում կատարված ոճիրների հանդեպ. «Ասկի 30 տարի առաջ, երբ հայկական գավառներում մեջ թալան, սպանություն, առևանգություն և այլն կ' ըլլար, դիմումներ եղան, բայց ոչ ոք ատոնց ականջ կախեց: Յետոյ, երբ ատոնց համար ասդին-անդին ցոյցեր եղան, ըսին, թէ՛ հայերը թագավորութիւն կ'ուզեն, և կառավարութիւնն սկսաւ հայերը կոտորել»: Պատգամավոր Ֆեյզի էֆենդին փորձում է հակաճառել՝ ասելով, թե թուրքերը վայրենի չեն: Վարդգեսը դիպուկ պատասխանում է. «Հօրս գլուխը կտրողը ես եմ որ տեսած եմ, ոչ թէ՛ դուն»:<sup>55</sup>

Հովհ. Սերենկյուլյանն իր խորհրդարանական ելույթներում անվախորեն մերկացնում էր Թուրքիայում կատարվող երևույթները: «Մեր երեսփոխաններէն Վարդգէսն էր ամենէն աւելի, որ շեշտուած դիմագծութիւն մը եղաւ Երեսփոխանական ժողովին մէջ: Ու այդ ոչ թէ անոր համար, որ ամէնէն պատրաստուածն էր, այլ որովհետև լեզուն մյուսներէն քիչ մը աւելի թուրքերէնի կը դառնար, և համարձակութիւն ունէր այդքանով ալ բեմ բարձրանալու»,- 1925 թ. «Հայրենիք» ամսագրում գրում էր «Ազատամարտի» խմբագրակազմի անդամներից մեկը՝ Հ. Սիրունին:<sup>56</sup> Այնքան խիստ էին Վարդգեսի քննադատությունները, որ թուրք պատգամավորները նրան կատակով Տեյի Օղլան (խենթ տղա) էին անվանում: «Վարդէս իր համարձակութեամբ և աշխուժութեամբ շարունակ փոթորիկներ կը ստեղծէր՝ պաշտպանելով հայ գյուղացիի խլուած իրավունքներն՝ ընդդէմ թուրք և քուրդ աւատապետներուն»:<sup>57</sup> Վարդգեսը Գ. Զոհրապի, Հ. Պոյաճյանի հետ ելույթներ էր ունենում և առաջարկներով հանդես էր գալիս տարաբնույթ հարցերի, օրենքների նախագծերի քննարկումների ժամանակ՝ ընդդիմադիր դիրքում գտնվելով այն օրենքներին և որոշումներին, որոնք խոչընդոտում էին ժողովրդի իրավունքները և ոտ-

<sup>53</sup> Նույն տեղում:

<sup>54</sup> Նույն տեղում, 1911, քիվ 11:

<sup>55</sup> Նույն տեղում:

<sup>56</sup> «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1925, քիվ 3, էջ 34-41: Գ. Լազյան, նշվ. աշխ., էջ 180:

<sup>57</sup> Գ. Լազյան, նշվ. աշխ., էջ 173-180:

նահարում էին նրա շահերը: Նրանք չէին սահմանափակվում միայն հայկական խնդիրների վերհանմամբ, այլ շահագրգռված էին ընդհանուր պետական բարեփոխումներով: Գ. Ջոհրայան իր «Ջանգալի մը տպավորությունները» հոդվածաշարում արտացոլել է օսմանյան խորհրդարանի թուրք երեսփոխանների վերաբերմունքն իրենց պահվածքի նկատմամբ: Երգիծական այդ նովել-հոդվածի հեղուկն՝ Ահմեդ Ռիզայի խորհրդարանական աշխատանքները կարգավորող գանգակը, դիմում է Գ. Ջոհրայանին. «Վարդգեսն ու Ռուք ծեր պահանջներով կը վրդովվէ ք մեր ժողովին մթնոլորտը: Մեր երկրին արդի վիճակը չի հանդուրժեր այդ տեսակ խիզախումներու»: Հետո առաջարկում է, թե դադարեցրէք պայքարը Սիուսյուն և առաջադիմություն կուսակցության դեմ:<sup>58</sup> Իհարկե, Վարդգեսը, Գ. Ջոհրայան ու Հ. Պոյաձյանը շարունակում էին խորհրդարանի աշխատանքներին մասնակցել այնպես, ինչպես իրենք ճիշտ էին համարում: Օրինակ՝ Գ. Ջոհրայանը հաճախ ասում էր. «Սահմանադրութեան փաստաբա՛նն են և ուզածիս պէս պիտի խօսիմ»:<sup>59</sup> Վարդգեսն ու Ջոհրայանը կապեր էին հաստատել խորհրդարանական և կառավարական բարձրաստիճան պաշտոնյաների, երիտթուրքերի պարագլուխների հետ՝ հավատալով, թե հնարավոր էր համերաշխորեն գործակցել հանուն երկրի բարեկեցության: Բայց այդ անձնական «մտերմիկ» հարաբերությունները նրանց չեն կարողանում փրկել Եղեռնից: Վ. Սերենկյուլյանն ու Գ. Ջոհրայանը ձերբակալվում են 1915 թ. մայիսի 20-ին և կառախմբով ուղարկվում են Դիարբեքիր: Աքսորի ընթացքում նրանք չեն ցանկանում իրարից բաժանվել: Երբ ընկերները կազմակերպում են նրանց փախուստը, և երբ Ջոհրայանը հակառակվում ու մերժում է օգտվել ազատվելու հնարավորությունից, Վարդգեսը նախընտրում է անբաժան մնալ Ջոհրայանից և չփրկել միայն իր կյանքը: Միևնույն ժամանակ կնոջն ուղարկած նամակում Ջոհրայանը խնդրում էր. «Թէ և շատ տկար է յոյսս, թէ որ յաջողիք արդիւնք մը ձեռք բերել, չըլլայ որ միմիայն իմ փրկութեան համար ըլլայ. առանց Վարդգեսի դառնալս այլապէս մահ մը կ' ըլլայ»: Վարդգեսն ու Ջոհրայանը նահատակվում են միասին:<sup>60</sup>

<sup>58</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 6, 25:

<sup>59</sup> Նույն տեղում, 1909, թիվ 10:

<sup>60</sup> Գ. Լազյան, նշվ. աշխ., էջ 175-180:

Օսմանյան խորհրդարանի աշխատանքները բնութագրելու տեսանկյունից կարևոր է Վահրամ Փափագյանի՝ 15 առանձին հրապարակումից բաղկացած «Օսմանյան պառլամենտը» հոդվածաշարը:<sup>61</sup> Քննարկելով տվյալ խորհրդարանի կազմն ու որակը հեղինակն այն համարում էր թերի և անկատար: Նա նշում էր, որ դրանում մեղքի բաժին ունեին հապճեպ, աննպաստ պայմաններում ընթացած ընտրությունները: Այդ գործընթացը ղեկավարել էր մեկ կուսակցություն: Ազգությունները խորհրդարանում հարցը քննելիս Վ. Փափագյանը փաստում էր, որ ոչ մահմեդական պատգամավորները գիտական պատրաստվածության ու կրթվածության մակարդակով իրենց թվի համեմատ գերադասություն ունեին մահմեդականների նկատմամբ: Օրինակ՝ ինը հայ երեսփոխանից հինգը բարձրագույն կրթությամբ էին: Սակայն քրիստոնյա պատգամավորների մեծամասնությունը չգիտեր պետական լեզուն թուրքերենը, և չէր կարողանում գիտելիքները հարկ եղած ձևով ծառայեցնել օրինաստեղծ աշխատանքին: Ընդ որում, օրինագծերը հիմնականում առաջարկվում էին կառավարության կողմից, թեև պատգամավորները նույնպես իրավասու էին ներկայացնել օրինագծեր, բայց տվյալ նստաշրջանում նրանք չէին ցանկացել կամ չէին կարողացել օգտվել այդ իրավունքից: Օրինագծերն ուղարկվում էին համապատասխան հանձնաժողով, որը դրանք քննելուց և մշակելուց հետո դիտողություններով հանդերձ բաժանում էր երեսփոխաններին, ապա դրանք անմիջապես հանձնվում էին ընդհանուր ժողովի քննությանն ու վավերացմանը: Օրենքների նախագծերը խմբագրելու համար անհրաժեշտ էր ունենալ մասնագետներ հրավիրված երկրից ու արտերկրից: Վ. Փափագյանը ցավում էր, որ այս խորհրդարանում մասնագետները բավական քիչ էին, օտարերկրյա մասնագետներ էլ չկային: Հոդվածագիրը բնութագրել էր նաև հայ պատգամավորների գործունեությունը, որոնք, ըստ նրա, ավելին, քան մնացած երեսփոխանները, օրենսդիր մարմին էին եկել իրենց առաքելության խոր գիտակցությամբ: Սահմանադրական վարչաձևն ամրապնդելու և հայ ժողովրդի ինքնուրույնությունն ու իրավունքները պաշտպանելու նպատակներով նրանք անդամակցում էին ոչ թե մեկ, այլ տարբեր մասնաժողովների չնայած հակում էր նկատվում հայերին ու մնացած փոքրաթիվ

<sup>61</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 55-91:

ազգերի ներկայացուցիչներին չնդգրկել ամենակարևոր մասնաժողովներում:

Վ. Փափազյանի կարծիքով՝ բուլղար և հայ պատգամավորներն ամենասիրվածն ու հարգվածն էին: Նրանք հեղինակություն էին վայելում շնորհիվ քննարկումների ժամանակ դրսևորած քաղաքացիական քաջության, համարձակության և անկեղծության: Հայ պատգամավորները ցանկանում էին օրենսդիր մարմնում ստեղծել ձախ թև՝ պաշտպանելու համար աշխատավորների շահերն ու հակակշիռ լինելու համար պահպանողական որոշումներին: Նրանք ամենաեռանդուն և համառ պաշտպաններն էին մամուլի, գործադուլների, գումարումների (հանրահավաքների), ընկերակցությունների ազատություններին: Թե՛ հայ պատգամավորների, թե՛ օսմանյան խորհրդարանի այդ շրջանի աշխատանքների վերլուծումները Վ. Փափազյանն ամփոփել է հետևյալով. երեսփոխանների մեծ մասն անծանոթ էր օրենսդրական գործունեությանն ու անգիտակ էր սահմանադրական, ժողովրդավարական պետություն հիմնելու միջոցներին: Այս առումով հասկանալի է ՀՅԴ պաշտոնաթերթի գործելակերպը: Այնտեղ պարբերաբար վերլուծվում էին օսմանյան խորհրդարանի աշխատանքները, քննարկման ներկայացված օրենսդրական նախագծերը, նաև ուշադրության կենտրոնում էին պահվում խորհրդարանական ընտրությունները: «Ազատամարտը» գտնում էր, որ որպես բազմացեղ երկիր, Թուրքիան իբրև պետական գործունեության նշանաբան պիտի ընդուներ համեմատական ներկայացուցչության սկզբունքը:<sup>62</sup> Բացի այդ, 1912 թ. առաջին եռամսյակում հրատարակած հոդվածներում անդրադառնալով խորհրդարանական նոր ընտրություններին՝ օրաթերթը դրանց հետ ամենահին նոր հույսեր չէր կապում: Օրինակ խմբագրականներից մեկում ասվում էր, որ նոր ընտրությունների արդյունքում օրենսդիր մարմին էր գալու «մեծամասնութիւն մը՝ անգոյն» ու պատեհապաշտ, որը նախ՝ կթեքվեր կառավարական ուժերի կողմը, ապա՝ կենթարկվեր տարաբնույթ շերտավորումների:<sup>63</sup> Այսպես էր ենթադրում «Ազատամարտը»՝ գրելով, թե իր կարծիքը հիմնավորվում էր այն պատճառաբանությամբ, որ Թուրքիայում ո՛չ հիմնական կանոնագիրքն էր կրել հիմնարար փոփոխություններ, ո՛չ էլ քաղաքական կուսակցություն-

<sup>62</sup> «Ազատամարտ», 1911, թիվ 512:

<sup>63</sup> Նույն տեղում, 1912, թիվ 787:

ներն էին կարողացել հող գտնել ժողովրդական զանգվածների մեջ: Վերջինները գտնվում էին սանդուղքի վերնամասում, իսկ ժողովուրդը՝ ոտնամասում՝ մնալով մեկը մյուսից անջատված ու միմյանց անհաղորդ: Խորհրդարանական վարչաձևով երկրում նման կացությունը հակաբնական էր:<sup>64</sup>

Գործադիր իշխանության վերաբերյալ ՀՅԴ պաշտոնաթերթի դիրքորոշումն այսպիսին էր. հարկավոր էր ոչ միայն աշխատավայրերից հեռացնել ապաշնորհ, անվճռական, սահմանադրապետության լծակներին անտեղյակ առանձին պաշտոնյաներին, այլև մտափղանալ ներքին քաղաքականության էապես ուրիշ՝ ժամանակի քաղաքակրթության աստիճանահարթակին, պետության ընկերային, տնտեսական կենսապայմաններին համապատասխանող ծրագիր և կառավարության կազմում ընդգրկել այն իրագործելու ունակ նախարարների:<sup>65</sup>

«Ազատամարտը» գրում էր, որ ինքն իբրև քաղաքական կուսակցության պաշտոնաթերթ, ուներ կարևոր առաքելություն. ստանձնելով բազմացեղ կայսրության ժողովուրդներին ուսուցանող-դաստիարակողի, առաջնորդողի ազնվագույն կոչումը, ղեկավարվելով «Ամեն ինչ ժողովուրդին համար և ժողովուրդին միջոցով» նշանաբանով՝ զարկ էր տալու պետության արմատական բարենորոգմանը, ձգտելու էր օսմանյան ազգերի արդար, իրավահավասար գործակցությանը, հայ ժողովրդի մտավոր, քաղաքակրթական մակարդակի բարձրացմանը: Հարկ եղած դեպքում բողոքելու էր կառավարության խոտոր գործելակերպի դեմ, որովհետև պետության մեջ «ուրոյն շահեր» չէր ճանաչում և ընդունում էր, որ պետական շահերը «ուրոյն անձնական շահերի համախմբումով» ընդհանուրի բաղադրությունն էին:<sup>66</sup>

Առաջին համարներից սկսած՝ «Ազատամարտը» հողվածներում ներկայացնում էր սահմանադրական երկրի մասին իր պատկերացումները: Կարծում ենք՝ հետաքրքիր է իմանալ, թե թերթն, օրինակ, ինչպե՞ս էր գնահատում 1908 թ. թուրքական հեղափոխությունը: Այստեղ, անշուշտ, պետք է արժարծվի այն հարցը, թե թերթն արևմտահայերի անվտանգությունն ապահովող ի՞նչ միջոցներ էր առաջ քաշում: «Ազատամարտը»

<sup>64</sup> «Ազատամարտ», 1912, քիվ 787:

<sup>65</sup> Նույն տեղում, 1909, քիվ 3, 6, 10, 154:

<sup>66</sup> Նույն տեղում, 1909, քիվ 1, 7:

դժգոհ էր իրերի տիրող դրվածքից. «Այսօր համարե՞նք...վտանգը անցած և երկիրը ազատութեան ճշմարիտ ճանապարհի վրայ»:<sup>67</sup> Թերթի վկայությամբ օսմանյան պետությունը շատ աննշան փոփոխություն էր կրել՝ չհաշված առատ խոստումներն ու «ինշալլահները»:<sup>68</sup> Կառավարությունը բորբոքում էր ազգամիջյան ընդհարումներ, կազմակերպում ջարդեր, կոտորածներ, ավեր ու թալան, զենքի միջոցով «խելոքացնում» էր ապստամբներին: Խորհրդարանն ընդունում էր մեկը մյուսից հակասահմանադրական օրենքներ, որոնցով սահմանափակում էր քաղաքական կուսակցությունների, հասարակական միությունների, կազմակերպությունների իրավասությունները, ոտնահարում խոսքի, մամուլի, խղճի ազատությունը, նաև 1909 թ. ընդունած որոշմամբ միապետին հնարավորություն էր տալիս ըստ կամեցողության հրաժարականի միջոցով լուծարել խորհրդարանը:<sup>69</sup>

1909 թ. թիվ 104-ի «Այսօր» բաժնում տպագրված հոդվածը կրում էր «Գրաքննությունը վերահաստատված» անվանումը: Տեղեկացվում էր, որ Ռոդոսթյուն և գավառներում մաքսային պաշտոնյաները սկսել էին կատարել գրաքննություն: Նրանք ամիսներ առաջ բռնագրավել էին տեղի հայ վարժարանների աշակերտների համար ուղարկված դասագրքերն՝ իբր ստուգելու նպատակով և դեռևս չէին վերադարձրել հասցեատերերին: Դրա հետևանքով Ռոդոսթյոյի հայ վարժարանի սաները մնացել էին առանց դասագրքերի: Փաստորեն սկսվել էր հին խաղը՝ «ալա Համիդ»: Թերթը ուզում էր իմանալ, թե նախ՝ ո՞ր օրենքով, ի՞նչ իրավասությամբ էր կատարվել այդ արարքը, ապա՝ մի՞թե նորից հաստատվել էր գրաքննությունը: Ուտնձգություններ էին ձեռնարկվում մամուլի ազատության դեմ, իսկ ըստ թերթի՝ առանց մամուլի ազատության չկար հասարակական կարծիք ու առաջադիմություն:<sup>70</sup> «Ազատամարտը» չէր ընդունում նախարարների խորհրդի այն որոշումն, որի համաձայն անձինք, ովքեր ուզում էին նոր թերթ հրատարակելու արտոնություն խնդրել, կամ ովքեր ունեին այդ արտոնությունը, բայց դեռևս չէին սկսել հրատարակությունը, կամ ովքեր ցանկանում էին վերահրատարակել որոշ ժա-

<sup>67</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 5:

<sup>68</sup> Նույն տեղում, 1909, թիվ 7:

<sup>69</sup> Նույն տեղում, 1909, թիվ 5, 9:

<sup>70</sup> Նույն տեղում, 1911, թիվ 730:

մանակով չտպագրված իրենց թերթը, պետք է 500 ոսկի մուծեին կառավարության գանձանակ որպես ավանդ: Օրաթերթն այս դրոշումն որակում էր իբրև մամուլի սահմանափակում և մենաշնորհ ունևորների համար:<sup>71</sup> «Ազատամարտը» տեղեկացնում էր Բ. դեան նոր հրահանգների մասին, որոնք ջնջում էին ոչ-թուրքերի ազգային իրավունքները: Օրինակ քրիստոնյաների տարիքը ճշտելիս այլևս չէին ընդունվելու մկրտության տոմարները:<sup>72</sup> Մամուլի ազատության սահմանափակումն ու գրաքննությունն առավել խստացել էին 1913 թ. վերջերից: 1914 թ. թիվ 1508-ի «Հայ գրքերի դեմ հալածանք» հոդվածում ասվում էր, որ Կ.Պոլսում և գավառներում ոստիկանությունը վերադարձել էր համիդյան օրերի աշխատակերպին:<sup>73</sup> Պատմվում էր, որ Սկյուտարի հայկական սրճարաններից մեկի պատից ոստիկանը ցած էր իջեցրել «Մայր Հայաստան» նկարը: Իսկ Բեյրութի մաքսատանը գրաքննիչն սկսել էր ստուգել Կ.Պոլսից ուղարկված յուրաքանչյուր հայերեն գիրք կամ նկար՝ բռնագրավելով այն ամենը, ինչը վնասակար էր համարում: Նույնը կատարվում էր Հալեպում: «Ազատամարտը» նշում էր, որ կատարվածի մասին իրենք տեղյակ էին պահել Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային, սակայն այդ դեպքերը շարունակվում էին կրկնվել: «Նշանակում է, որ կայ մեզ համար գաղտնի կարգադրություն: Եթէ այդպէս է, մենք պահանջում ենք, որ այն հրապարակաւ յայտարարուի: Պահանջում ենք, որ գիտնանք, թէ հայ ժողովուրդը դուրս է ձգուել սահմանադրական ազատութիւններից: Պէտք է վերջ տալ կառավարութեան երկդիմի ընթացքին», - գրում էր օրաթերթը:<sup>74</sup>

Արդեն 1910 թ. հուլիսի 10-ի խմբագրականում վերլուծելով այդ համապետական տոնը՝ արվում էր հետևություն. ծայր էին առել հիասթափություններ, մոռացության էին մատնվել իշխող և հպատակ ազգերի համագործակցության խոստումները: «Ազատամարտը» հանդգնած էր, որ ելքը երկրի Սահմանադրությունը կիրառելն էր, քանզի այն միայն թղթի վրա գրված օրենքների հավաքածու չէր: Սահմանադրության բերած հավասարություն և շատ ուրիշ գեղեցիկ բառերը մեռած տառերի կվերած-

<sup>71</sup> «Ազատամարտ», 1912, թիվ 838:

<sup>72</sup> Նույն տեղում, 1912, թիվ 839, 1094:

<sup>73</sup> Նույն տեղում, 1913, թիվ 1159:

<sup>74</sup> Նույն տեղում:

վեին, եթե չօգտագործվեին կյանքում, եթե պետական պաշտոնավարության բոլոր ճյուղերում, կառավարության բոլոր բնագավառներում օսմանյան կայսրության ժողովուրդներն իրենց թվին համեմատ ներկայացուցիչներ չունենային:<sup>75</sup> Սակայն օրաթերթի նման պահանջ-առաջարկները, պարզ է, որ անտեսվել են, իսկ հետագա տարիներին, հատկապես 1912 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներից սկսած՝ ամկա դժգոհությունները գնալով խորացել են: «Ազատամարտի» այդ տարիների հավաքածուներում չկա մի համար, որտեղ չի ներկայացվում բազմաթիվ լուրեր արևմտահայերի տարրական իրավունքների ոտնահարումների, նաև կոտորածների մասին: 1911 թ. թիվ 679-ի «Հայոց ազգային ժողովը և կառավարությունը» հոդվածում, օրինակ՝ տեղեկացվում էր, որ շուտով հայոց Ազգային ժողովի վարչությունը կառավարությանը ներկայացնելու էր բողոք-հիշատակագիր, որը պարունակում էր այսպիսի հարցեր. հայկական գավառների ընդհանուր ապահովություն, հողային վեճ, վարչական բարենորոգումներ, ապօրինի հարկեր, բռնի առևանգում և նմանօրինակ այլ հակասահմանադրական անիրավություններ: 1911թ. թիվ 680-ի «Հայկական կյանք» բաժնում բերված են տասնյակից շատ օրինակներ գանազան գավառներից ստացված լուրեր սպանությունների, թալանի, հարստահարությունների մասին: Մեղավորն, ըստ թերթի, կառավարությունն ու նրա վարած քաղաքականությունն էին. «Վա՛յ տկարին, քանի որ իրաւունքը նրանն է, ով ուժեղ է»:<sup>76</sup> Այս դրությունը մտահոգում էր թերթին: 1912 թ. կեսերին «Ազատամարտը» գրում էր, որ Ադանայի ջարդերից հետո հայ ժողովրդի քաղաքական ապահովությունը երբեք այսքան լուրջ վտանգի և սպառնալիքի տակ չէր գտնվել: Այլևս կասկած չկար, որ Թուրքիայում գործում էր հայահալած ու հայասպան համակարգ: Արևմտահայն արդեն մագաչափ անգամ չէր հավատում պաշտոնական խոստումներին: Նա իր Պատրիարքարանի ու քաղաքական կուսակցությունների միջնորդությամբ սպառել էր օրենսդրական բոլոր միջոցները՝ կառավարությունից խնդրելով արդարություն: Բայց իրականությունը նրան համոզել էր, թե հայկական գավառները դուրս էին ձգված օրենքի և իշխանության պաշտպանությունից:<sup>77</sup>

<sup>75</sup> «Ազատամարտ», 1910, թիվ 330:

<sup>76</sup> Նույն տեղում, 1911, թիվ 682:

<sup>77</sup> Նույն տեղում, 1912, թիվ 981:

«Ազատամարտն» առանց վերապահության, առանց վախենալու, բացեիքաց, խստորեն և անաչառ դատապարտել է պետության բռնարարքներն ու պնդել. «Օսմանեան արիւնոտ երկիրը ամէնէն առաջ կը պահանջէ Սահմանադրութիւն՝ որ կայ անունով, բայց իրօք գոյութիւն չունի»:<sup>78</sup> Առանձնապէս հայերի նկատմամբ իրագործվող ոճրագործությունները, մեղավորներին չդատապարտելն ու անտարբերությունն էին շատացնում արևմտահայերի տրտունջները: Թուրքը, հույնը, հայը, բուլղարը տրտնջում էին, թե «րէպքսիօնը նորէն» մտնում էր ասպարեզ. «Մի՛ հաւատաք, եղբայր, մի՛, դուք չէք ճանչնար այս մարդիկը...Ի՛նչ ազատութիւն, ի՛նչ բան, պօշ խոսքեր են»:<sup>79</sup>

1909 թ. հավաքածուի գրեթե բոլոր համարներում «Ազատամարտն» անդրադարձել է Ադանայի կոտորածին, քննիչ հանձնաժողովների գործունեությանը, նրանց կազմած զեկուցագրերին և ընդհանրապէս ՀՅԴ-ի դիրքորոշմանն այս խնդրում: Թեև ՀՅԴ-ն շահագրգռված էր Ադանայի եղեռնի մեղավորներին պատժելու հարցում, բայց շարունակում էր համագործակցել այդ կոտորածն իրագործած և երկիրը կառավարող Իթթիհատ վեթերագգ կուսակցության հետ: «Ազատամարտը» խուսափել է նեղ-կուսակցական թերթերին բնորոշ պահվածքից: ՀՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթն անգամ շատ դեպքերում հեռու է մնացել այդ համագործակցությունը գնահատելուց և Դաշնակցության այդ քաղաքական քայլից դժգոհ պոլսահայ որոշ պարբերականների («Բյուզանդիոն», «Արևելք», «Ժամանակ» և այլն ) հետ բանավեճի մեջ մտնելուց:<sup>80</sup> «Ազատամարտը» նախ՝ մշտապէս պատկերացում էր տալիս Ադանայում կատարվածի, կոտորածից հետո քաղաքում ստեղծված վիճակի (աղքատություն, որբեր, արտագաղթ, հուսալքություն), հետաքննության արդյունքների մասին, ապա՝ կառավարության և երիտթուրքերի Սալոնիկի մասնաճյուղի մոտեցումն էր փորձում ճշգրտել ջարդի կազմակերպիչներին գտնելու գործում, աշխատում էր հստակեցնել ՀՅԴ-Իթթիհատ համագործակցության եզրերը՝ արձանագրելով նաև մյուս կուսակցությունների մոտեցումներն այդ խնդրում: Կարելի է փաստել, որ ՀՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթն Ադանայի կոտորածից հետո ի

<sup>78</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 3:

<sup>79</sup> Նույն տեղում, 1909, թիվ 131:

<sup>80</sup> Նույն տեղում, 1909, թիվ 63, 71, 75, 81, 83, 86, 93, 98, 151 և այլն:

պաշտոնն է ընդունել Ղաշնակցության դիրքորոշումն երկտնորքերի հանդեպ և հնարավորինս զուսպ է եղել գնահատականների ու լուսաբանումների մեջ: Ի դեպ, «Ազատամարտը» 1909 թ. թիվ 4-ից սկսած՝ տպագրել է Սիամանթոյի «Կարմիր լուրեր բարեկամիս» շարքը:<sup>81</sup> «Ազատամարտը» հատուկ խորագրեր էր հատկացրել Ադանայի ջարդերի վերլուծություններին (ասենք՝ «Նոր տեղեկություններ Կիլիկիայեն»): Տպագրվում էին լուրեր Ադանայից: «Ազատամարտը» տպագրում էր նաև Ադանա, Թարսուս, Մերսին, Ղյորթյուլ քաղաքներում ՀՅԴ բժշկական և փաստաբանական մասնախմբերի զեկուցագրերը:<sup>82</sup> Դրանք ահազանգում էին կատարված ոճիրների, եղեռնից փրկվածների անմխիթար կացության մասին: Թերթը քննադատում էր Ադանայի զինվորական ատյանի աշխատանքը. «Անոնք ևս, ինչպէս եղած է մինչև միշտ, կը քննեն գործերն ու անձերն ո՛չ թէ արդարութեան, այլ՝ քաղաքական պարագաներու տեսանկիւնից: Ծանր ու ցավալի է այս իրողութիւնը»:<sup>83</sup> «Ազատամարտի» թղթակիցը Կիլիկիայից ուղարկված լուրում տեղեկացնում է քննիչ մարմնի ապօրինի ձեռնարկներից մեկի մասին: Ջինվորական ատյանի հարցաքննիչ մարմինը Չոզակ գյուղի ջարդից ազատված մի հայ տղամարդու ստիպել էր ծանուցագիր տալ, թե իրենց գյուղում ոչինչ չէր պատահել: Թերթը հարցնում էր. «35 ընտանիքէ բաղկացած հայ գիւղ մը այսօր մոխրակոյտ դարձած է, և բան մը չէ՞ եղած»:<sup>84</sup> Ջինվորական ատյանի գործելակերպից դժգոհելու պատճառն այն էր, որ Ադանա էին ուղարկվել օսմանյան խորհրդարանի և կառավարության հանձնաժողովները: «Ազատամարտը» հայտնում էր, որ խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Հակոբ Պապիկյանը «կարգ մը պատճառներով, որոնց մէջ նաև՝ առողջական, թողուցած է Ատանան և ճամբայ ընկած» դեպի Կ.Պոլիս:<sup>85</sup> Մեկ-երկու օրից «Ազատամարտը» թարգմանաբար արտատպում է «Իթթիհատի» թղթակցի հարցազրույցը Հ. Պապիկյանի հետ: Հայ պատգամավորը նրան ասում է, որ հանձնաժողովն այլևս անելիք չուներ. «Ըստ իմ քննուելիք բան չմնաց»: Լրագրողի հարցին, թե կոտորածի կազմակերպիչն ո՞վ է, նա պատասխանում է. «Բռնապետութեան կուսակիցները:

<sup>81</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 4, 8, 16, 27, 45 և այլն:

<sup>82</sup> Նույն տեղում, 1909, թիվ 9, 10, 38, 83:

<sup>83</sup> Նույն տեղում, 1909, թիվ 8:

<sup>84</sup> Նույն տեղում, 1909, թիվ 42:

<sup>85</sup> Նույն տեղում, թիվ 11:

Թեև կառավարութիւնը մասնակցութիւն չունի, սակայն ինք պատճառ տուած է: Ամէն պարագայի մէջ տեղական կառավարութիւնը մասնակցութիւն ունի»: Թվարկում է նաև կոնկրետ անուններ՝ նշելով. «Քրիստոնեայ ցեղերը պատճառ տուած չեն»:<sup>86</sup> Նույն օրերին տարածվում է Ադանայի կոտորածի հետաքննության գինվորական ատյանի կազմած տեղեկագիրը: «Ազատամարտն» այն որակում էր որպէս զրպարտություն հայերի դեմ. «Մեղաւորը հայերն են: Այսպէս կ'ըսէ գինուորական ատեանը: Բայց այդպէս չեն ըսեր փաստերը»:<sup>87</sup> Թերթը թիվ 25-ի «Անարդար վճիռներ» խմբագրականում կառավարությունից պահանջում էր պաշտոնական զեկուցագրով հերքել գինվորական ատյանի տեղեկագիրը և սկսել դատական գործընթաց՝ մեղավորներին պատժելու նպատակով, քանի որ արդեն կային քննիչ հանձնաժողովների կատարած քննությունների արդյունքների ամփոփումները:<sup>88</sup> Եվ հենց այստեղ է, որ երիտթուրքերն, ասես, քաղաքական խաղի մեջ են ներքաշել Դաշնակցությանը: Իթի-հատն առերես հրապարակավ հատուկ շրջաբերականով հայտարարում էր, որ հայերն անմեղ էին, և Ադանայի կոտորածի մեղքն ընկնում էր հակասահմանադրական տարրերի ու տեղի կառավարող մարմինների վրա:<sup>89</sup> Արդեն 1909 թ. օգոստոսի 24-ին «Ազատամարտը» տպագրում է ՀՅԴ-ի թիփհատ համագործակցության շրջաբերականի հայերեն բնագիրը:<sup>90</sup> «Ազատամարտը» նույն համարում հրատարակում է ՀՅԴ Կ. Պոլսի պատասխանատու մարմնի շրջաբերականը, որում նշվում էր պոլսահայ թերթերի («Բյուզանդիոն», «Հայրենիք», «Ժամանակ», «Արևելք», «Ծիածան») քննադատական վերաբերմունքը ՀՅԴ-ի թիփհատ համագործակցության նկատմամբ: 1909 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին թերթը շարունակ բանավիճել է պոլսահայ պարբերականների հետ՝ հերքելով նրանց տպագրած և իր համոզմամբ սխալ տեղեկությունները նշված համագործակցության մասին:<sup>91</sup> «Ազատամարտը» չի վերածվել միջկուսակցական փոխհարաբերությունների ճշգրտման ասպարեզի: Թերթը, սակայն, ջանացել է պարզաբանել Ադանայի կոտորածի և դրա մեղավորներ-

<sup>86</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 13, 48:

<sup>87</sup> Նույն տեղում, 1909, թիվ 22:

<sup>88</sup> Նույն տեղում, 1909, թիվ 18, 25:

<sup>89</sup> Նույն տեղում, 1909, թիվ 29, 42:

<sup>90</sup> Նույն տեղում, 1909, թիվ 63:

<sup>91</sup> Նույն տեղում, 1909, թիվ 63, 71, 75, 81-83, 86, 93, 142:

րին պատժելու հարցում ՀՅԴ բռնած դիրքը համագործակցությունից հետո: Հողվածներից մեկում Հ. Մամիկոնյանը բացատրում էր, որ շատ օգտակար կլինեք, եթե երկու կողմերն իրենց խոստումները հարգեին: ՀՅԴ-ն «այս միութիւնն ազգի անունով չէ կնքած: Ան Ատանայի կոտորածներուն դեմ ամենէն անելի բողոքած է».- գրում էր հողվածագիրը:<sup>92</sup> Չնայած համագործակցության պայմանագրին՝ ՀՅԴ-ն և մասնավորապես՝ «Ազատամարտն» ընդգծել են, որ հարկ եղած դեպքում պիտի քննադատեն Իթթիհատին: 1909 թ. հոկտեմբերի 6-ին «Ազատամարտը» տպագրում է ՀՅԴ 5-րդ Ընդհանուր ժողովի շրջաբերականը Կիլիկիայի դեպքերի վերաբերյալ: Դրանով մեկ անգամ ևս Ադանայի կոտորածի պատասխանատվությունը դրվում էր տեղական կառավարող պաշտոնյաների վրա: ՀՅԴ-ն պահանջում էր պատժել նրանց և կոտորածի ու թալանի ղեկավարներին, նաև՝ հատուցել հայերին հասցված վնասները: «Մենք դժգոհ ենք վարչապետին քաղաքականութենէն և ամբողջ Դահլիճին դիրքէն Ատանայի խնդրին մէջ»,- այսպես է եզրակակել թերթն իր քննարկումները:<sup>93</sup>

Ադանայի դեպքերից հետո ընթերցողների համար, բնականաբար, այլևս սովորական էին հայկական զավառներից ստացվող սարսռալի ողբերգությունների մասին պատմող տեղեկատվությունները, որոնցում խմբագրությունը մշտապես մեղադրում էր կառավարող մարմիններին թողտվության և խտրականության համար:<sup>94</sup> Առանձնացվել էին «Խապրիկներ երկրեն», «Բռնապետական արարք» հատուկ խորագրերը: Բերենք մեկ օրինակ: «Ոճիրը Սասունի սահմաններուն մեջ» հողվածում նկարագրվում էր հայ դիակների վրա դիրք, համբավ ձեռք բերած քուրդ Կենճոյի ձեռնարկը: Ցեղակիցների հետ նա զավթել էր Նորգեղը, քչել տեղաբնակներին, ապա՝ սպանել սասունցի Գամմոյին՝ գրավելով նրա տունուտեղը: Կենճոյի դեմ բողոքել էին, սակայն՝ ապարդյուն: «Ազատամարտի» եզրակացությունն ակնառու էր. սխալ էր մեղավոր ճանաչել բարբարոս խուճանին, քանզի կարծես կառավարությունն էր քաջալերել «զայն իր անտարբերութեամբ»: Ահա թե ինչու՝ չէին պատժվում «Կէնճօի եւ իր զաւակներու պէս արիւնարբու աւագակները» ու ի կատար չէին

<sup>92</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 81:

<sup>93</sup> Նույն տեղում, 1909, թիվ 153:

<sup>94</sup> Նույն տեղում, 1909, թիվ 26:

ածվում արևմտահայերի հույսերը Սահմանադրության վերաբերյալ, «որոն շնորհիւ թշուառ հայը կը յուսար» ունենալ գոնե կյանքի ապահովություն ու տիրանալ «ասկէ առաջ» անարդարորեն «իրմէ խլուած» հողերին:<sup>95</sup>

Բավականին ուշագրավ է «Ազատամարտի» մոտեցման կերպը. որքան մեծացել են հայակործան բռնաճնշումները, այնքան թերթը, ի հակակշիռ դրանց, հոգածության կենտրոնում է պահել արևմտահայերի ներքին փոխհարաբերությունները և հրատարակել է առաջարկներ՝ ազգային կառույցները գործուն ու բարվոք տեսնելու մղումով: Դրանով խմբագրությունն, ասես, ցույց է տվել պետական վարիչներին, թե արևմտահայերն ամենևին չէին սարսափում տեսածներից և ապրում էին առօրյա բուռն ազգային-հասարակական կյանքով: «Ազատամարտը» խորհուրդ է տվել հրաժարվել ներքին երկպառակություններից, միայն անձնական փառքի և օգուտի մասին խորհելուց: Թերթին հուզել է ազգի միասնությունը սասանող նաև այն փաստը, որ «Պոլիսը կը մոռնայ գավառը»: Մայրաքաղաքում կենտրոնացած հայոց սերուցքը զգալիորեն կտրվել էր բնիկ հայրենիքից Գավառից կամ Արևմտահայաստանից, տարվել անհատական մանր-մունր, ինչ-որ տեղ համազգային հնչեղությունը կորցրած գործերով:<sup>96</sup> Թերթը համախմբման է հրավիրել արևմտահայերին:<sup>97</sup> «Ազատամարտը» չի դրել արևմտահայերի անկախանալու խնդիրը: Ընդհակառակը, հիմք ընդունելով սկզբնական հայեցակետն (ըստ որի՝ Թուրքիայում ծլարծակվում են Սահմանադրության սածիլները, և այն «վերջ ի վերջոյ պիտի ուռք դնի արդարութեան և ճշմարտութեան շաւիղի վրայ»), ասում էր, թե տաճկահայն արդեն ուներ պետականություն՝ օսմանյան վերանվանված կայսրությունը:<sup>98</sup> Տաճկահայն այդ պետական ամբողջության «հավասարակից» տերն էր մյուսների հետ և լիովին իրավագոր ու պարտավոր էր աշխատելու նրա բարեշրջման համար:<sup>99</sup> «Ազատամարտի» այս դիրքորոշումը բացատրվում է հետևյալ պատճառներով: Առաջին՝ օրաթերթը, որպես ՀՅԴ-ի օրգան-պաշտոնաթերթ, ոչ թե չի երազել և չի ցանկացել Արևմտյան Հայաստանի անկախությունը (այդ

<sup>95</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 2, 58:

<sup>96</sup> Նույն տեղում, 1909, թիվ 104:

<sup>97</sup> Նույն տեղում, 1909, թիվ 126:

<sup>98</sup> Նույն տեղում, 1909, թիվ 33:

<sup>99</sup> Նույն տեղում, 1909, թիվ 81:

առունով բավական է վերհիշել ՀՅԴ-ի սկզբնավորման տարիների ծրագրային դրույթները, օրինակ՝ ապստամբության միջոցով ազատագրել Թուրքաց Հայաստանը), այլ ելնելով օրվա հրամայականից, քաղաքական իրավիճակից, ուժերի զուգահեռումից՝ որպես նվազագույն պահանջ է առաջադրել «Թուրքաց Հայաստանի» ներքին ինքնավարությունը օսմանյան պետության կազմում: «Ազատամարտը» բռնապետական Թուրքիայում առայժմ դժվարալույծ կամ գրեթե անլուծելի է համարել հայության նվիրական տենչի իրականացումը, հետևաբար հանուն անկախանալու մղվող պայքարով չի կամեցել առավել մեծացնել թուրքերի հայաջինջ միտումները: Եվ քանի որ 1908 թ. երիտթուրքերը թեկուզ արտաքուստ կայսրությունը հռչակել էին սահմանադրական և ենթակա ժողովուրդների հետ վարում էին բարի, դրացիական հարաբերություններ՝ ի լուր աշխարհի տարփողելով, թե իրենք հարգում էին միջազգային (այդ թվում Բեռլինի համաժողովի) դաշնագրերն ու պատրաստ են բարենորոգումներ անցկացնել բոլոր զավառներում, ապա հասկանալի է, որ «Ազատամարտը» թուրքական արյունոտ երկրում ուզում էր ապահովել արևմտահայերի գեթ ներքին կյանքի, կենսապայմանների կարգավորման հնարավորությունները: Ահա թե ի՞նչ ենք կարդում «Թուրքական տագնապը» հոդվածում. «Ան...կը պահանջէր ապագայի համար ոչ թէ անիրականանալի անկախութիւն մը, և կամ, ինչպէս որ յիմարօրէն կըսէին՝ հայկական թագավորութեան յարութիւնը, այլ վարչական ինքնուրոյնութիւն, ճիշտը ինչպէս որ կանխատեսուած էր Միտհաթեան Սահմանադրութեան մէջ»:<sup>100</sup> Նույն ժամանակաշրջանում ՀՅԴ վարած քաղաքականության մասին Մ. Վարանդյանը գրել է. «ՀՅԴ ռաիվիրանները իրենց հրապարակախօսութեան մեջ ոչ միայն չէին արտասաներ անկախութիւն բառը, այլ չէին ընդուներ անկախութիւնը որպէս պահանջ... ՀՅԴ-ն պարզեր էր կռի դրոշը յանուն Տաճկահայաստանի քաղաքական ու տնտեսական ազատութեան... Մերիները գուցէ և բնաւ յոյս չունէին, թէ Թուրքաց Հայաստանի աշխարհագրական և տեղագրական... այն օրերու պայմաններուն մէջ երբևիցէ կարենար ստեղծիլ անկախ Հայաստան մը»:<sup>101</sup> ՀՅԴ առաջին քաղաքագետները լավ էին ըմբռնել, թե որքան գրգռիչ ու վանող էր լինելու «հայ յեղափոխականներու ընթացքը յաչս իսլամ ազգաբնակու-

<sup>100</sup> «Ազատամարտ», 1909, քիվ 10:

<sup>101</sup> Մ. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 104-105:

թեան», եթե նրանք անկախություն պահանջեին այն վիլայեթներում, որոնցում մեծամասնություն էին կազմում մուսուլմանները: «Լավ կըմբռնեին մեր հին ընկերները, թե որքան յանդուգն ու ցնորական պիտի երևեր անկախ Հայաստանի պահանջը նման զարհուրելի պայմաններու մէջ»:<sup>102</sup>

1912 թ. նոյեմբերին «Ազատամարտի» խմբագրականներից մեկում Հայկական հարցը բնութագրվում էր որպես Արևելյան Անատոլիայի վերափոխման ու բարենորոգման խնդիր, որի մասին նույնիսկ խոսելը համարվում էր պետությանն ուղղված թշնամություն:<sup>103</sup> Այդ ժամանակահատվածից սկսած՝ «Ազատամարտը» մշտապես անդրադարձել է Հայկական հարցին և այդ անունով բաժին է բացել, որտեղ նաև տվյալ խնդրին առնչվող հոդվածների, հրապարակումների պատճառով պարբերաբար կամ դատի է տրվել, կամ փակվել իշխանությունների հրամանով, կամ փոխել է սեփական անվանումը: 1912 թ. դեկտեմբերի կեսերից ամեն համարում անդրադարձ է կատարվել Թուրքիայի ներքին գործերի նախարարության հայկական 4 նահանգների բարենորոգումների համար կազմած նախագծին: Այն գնահատվել է՝ մակերեսային: Նշվում էր, որ իրենք պաշտպանում էին հայկական նահանգների բարեկարգման անհրաժեշտությունը՝ դրա տակ հասկանալով լուրջ, արմատական ձեռնարկ, որը պիտի բարգավաճման առաջնորդեր տեղի բնակչությանը: Սակայն «Ազատամարտը» վստահ չէր, որ Թուրքիայում կիրականանար հայկական բարենորոգումների որևէ նախագիծ կամ ծրագիր՝ հիմնվելով վերջինիս անցյալի ու ներկայի պետական գործունեության վրա:<sup>104</sup> «Ազատամարտը» համագործակցությունն իթթիհատականների հետ համարել է չարյաց փոքրագույնը: 1910 թ. «Իթթիհատի և Դաշնակցության համաձայնության շուրջ» հոդվածաշարում Ռ. Դարբինյանը քննարկել է այդ համաձայնության կնքման ու գործակցության պայմանները:<sup>105</sup> Նրա կարծիքով դա կարևոր քաղաքական քայլ էր՝ արևմտահայերի ֆիզիկական գոյությունն ապահովելու համար: Հոդվածագիրը շեշտում էր, որ ՀՅԴ-ն շատ լավ է գիտակցել, թե որքա՛ն քիչ էին իր շփման կետերը իթթիհատականների հետ, և թե որքա՛ն մեծ էր այդ կուսակցությունների ընկերա-

<sup>102</sup> Մ. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 104-105:

<sup>103</sup> «Ազատամարտ», 1912, թիվ 1062:

<sup>104</sup> Նույն տեղում, 1912, թիվ 1085:

<sup>105</sup> Նույն տեղում, 1910, թիվ 383, 386, 388:

յին-քաղաքական հորիզոնների տարբերությունը: Այնուհանդերձ այդ համաձայնությունը պիտի ծավալվեր ու կենսագործվեր երկու էական կետի շուրջ.

- ներդաշնակ գործակցություն սահմանադրական վարչակարգի պահպանման և ամրապնդման համար,
- նահանգային ու գավառային ինքնավարությունների իրականացման համար:<sup>106</sup>

Թուրքիայի հասարակական-քաղաքական հանելուկային և անորոշ խարխափումներում գնահատելի է «Ազատամարտի» քաղաքական ճկունությունը, որով նա դիմել է զանազան հնարանքների՝ ի շահ հայ ժողովրդի ազատագրության և ֆիզիկական ու հոգևոր եղեռնի գործընթացի չեզոքացման:

### *ԱՐԵՎՏՏԱՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ «ԱԶԱՏԱՄԱՐՏԻ» ԷԶԵՐՈՒՄ*

«Ազատամարտն» անդրադարձել է արևմտահայերի ներքին կյանքի հիմնախնդիրներին, Ազգային խորհրդի, թաղապետարանների, Պատրիարքարանի, օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների գործունեությանը: Ընդ որում, վերլուծություններն արվել են անկողմնակալ: Սա եղել է օրաթերթի գործելակերպի անկյունաքարը: Իր հիմնադրման տարեդարձին նվիրված խմբագրականում «Ազատամարտը» հայտնում էր, թե մեկ տարվա ընթացքում երկար շարք կազմող հարցերը քննարկել է անկեղծությամբ, հետևողականորեն, սկզբունքայնությամբ: «Պաշտպանեցինք ոչ թե մարդկանց, այլ՝ սկզբունքները, այն էլ՝ իրենց կիրառութեան մեջ», - ասվում էր հոդվածում:<sup>107</sup> Թերթը պաշտպանել է հայ ժողովրդի շահերը, քննադատորեն վեր է հանել ներազգային հիմնահարցերը՝ դրանցից ձերբազատվելու նպատակով: Ասենք՝ «Մեր ազգային վարչական մեքենան» հոդվածում Հ. Շահրիկյանը գրում էր, որ ազգային վարչական մեքենայի կենտրոնական ու գավառական մարմինների անդամները սովորաբար ընտրվում էին պատահականությամբ: Նրանց մեջ

<sup>106</sup> «Ազատամարտ», 1910, թիվ 383, 386, 388:

<sup>107</sup> Նույն տեղում, 1910, թիվ 304:

չէին լինում որոշակի ծրագրեր ունեցող խմբակցությունների ներկայացուցիչներ, որոնք իրենց գործունեության ընթացքում պիտի աշխատեին իրականացնել այս կամ այն ծրագիրը: Հողվածագիրը պարսավում էր նրանց աշխատակերպը՝ նշելով, որ նրանց մեծ մասն իր առօրյա բան ու գործը գերադասում էր նիստերին ներկա գտնվելուց: Քվորումի բացակայության պատճառով շաբաթական 2-3 նիստ գումարելու փոխարեն, կայանում էր երկշաբաթյա մեկ նիստ, որը սպառվում էր գրանցման, քննարկվելիք հարցերի ընթերցման, վիճաբանությունների վրա: Նիստը փակվում էր՝ սեղանի վրա թողնելով բազմաթիվ թղթեր, խնդիրներ, որոնք ամիսներ շարունակ սպասում էին իրենց լուծմանը: Հողվածի հեղինակը կարծում էր, որ անհրաժեշտ էր ճիշտ ընթացք տալ ազգային վարչական մեքենային: Թեև դժվար, բայց անհնարին չէր գտնել նման միջոցներ:<sup>108</sup> Կյանքում այնինչ հակառակն էր կատարվում: Օրաթերթը տարիներ շարունակ դատապարտում էր Ազգային ժողովի արածները, նրա գործունեությունը զնահատում՝ անույ: Եվ դա այնպիսի ժամանակահատվածում, երբ 1911թ. վերջերից սկսած ուժեղացել էր հայահալած քաղաքականությունը և կարիք էր զգացվում ազգային ուժերը համախմբելու և միասնականորեն պայքարելու: Թերթը հարց էր տալիս ընթերցողներին. «Ասացէք, խնդրեմ, մենք իրաւունք ունե՞նք կառավարութիւնից դժգոհելու՝ մեր խնդիրների նկատմամբ անտարբերութեան համար, երբ ազգային ներկայացուցիչները ցոյց չեն տալիս անհրաժեշտ շահագրգռութիւն»:<sup>109</sup> Նույնիսկ երբ 1912 թ. «Ազգային գործունեության մեկ տարվա հաշվեկշիռը» խմբագրականում վերլուծվում էին Ազգային ժողովի աշխատանքները՝ մայիսին նոր տարեշրջանի բացման առիթով, նշվում էր, որ օրաթերթի աշխատակիցները համոզված էին, թե Ազգային ժողովի անկենդանությունը պիտի շարունակվեին մեկ տարի ևս:<sup>110</sup> Այնուհանդերձ, «Ազատամարտը» մշտապես ողջունել է դրական տեղաշարժերն այս ոլորտում: Օրինակ՝ անդրադարձ կա 1912 թ. օգոստոս-սեպտեմբերյան հայկական ջարդերը կանխելու մտահոգությամբ գումարված Ազգային ժողովի բացառիկ նիստին, դրան հաջորդած իրադարձություններին,

<sup>108</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 4:

<sup>109</sup> Նույն տեղում, 1911, թիվ 683, 684, 689:

<sup>110</sup> Նույն տեղում, 1912, թիվ 888:

Պատրիարքի ու Ազգային ժողովի վարչության հրաժարականներին:<sup>111</sup> Օրաթերթը դրական է գնահատել 1912թ. հունվարի 21-ին Ազգային ժողովի մեծամասնության ընդունած որոշումը, որով ազգային կյանքում այլևս մեծ դեր էր հատկացվում կուսակցություններին:<sup>112</sup> Խոսքն ի մասնավորի վերաբերում էր «Բաց ու գոցի» խնդրին, որին այդ տարիներին պարբերաբար անդրադարձել է թերթը: Կռվախնձորը քաղաքական թեմաներով բանախոսությունների համար եկեղեցիներից օգտվելու իրավունքն էր: Ռ. Դարբինյանը «Սոցիալ-դեմոկրատ հնչակյանները և «Բաց ու գոցի» խնդիրը» հոդվածում պարզաբանում է, որ նման վեճ երբեք չի եղել Գերմանիայում, Ֆրանսիայում, որովհետև տեղի սահմանադրական կարգերը ժողովրդի քաղաքացիական դաստիարակության համար թույլ էին տալիս հատկացնել շինություններ: Մեզանում չկային այդպիսիք: Ռ. Դարբինյանն իր մտորումներն ամփոփում է այն պնդմամբ, թե ամենքին հայտնի է, որ «բաց ու գոցի» հարցը ո՛չ եկեղեցական, ո՛չ էլ կրոնական հանգամանք ունի, այլ այն պարզապես քաղաքական խնդիր է:<sup>113</sup> Օրաթերթը գտնում էր, որ յուրաքանչյուր հաստատություն և կուսակցություններ ազգային կյանքում իր դերն ունի: Եվ եթե նրանք նույնիսկ օսմանյան կայսրության վարած քաղաքականության նկատմամբ հանդես էին բերում գաղափարական հակառակություններ, այնուամենայնիվ հանուն համազգային ընդհանուր կարիքների պիտի աջակցեին իրար»:<sup>114</sup>

«Ազատամարտն» ընթերցողների ուշադրությունը մշտապես բևեռում է առաջնահերթ հիմնահարցի վրա: Դա բնօրրանի հայաթափմանը նպաստող գաղթի այլքն էր: Թերթը թվարկում էր գաղթի դրոյապատճառները, դրանից ծնվող անցանկալի հետևանքները և հորդորում ժողովրդին՝ «մնալ իր հողին վրայ», քանզի «գաղթը սպաննիչ» էր:<sup>115</sup> Ինչքան էլ անտանելի տնտեսական, քաղաքական հանգամանքները հարկադրեին, հայը չպիտի լքեր հայրենիքը, որովհետև առանց հայի չկար Հայաստան: Հայը պիտի մնար և մտածված գործելակերպով, ինքնուրույնաբար կառավարեր ինքն իրեն:<sup>116</sup> Այսպես էր կարծում օրաթերթը:

<sup>111</sup> «Ազատամարտ», 1912, թիվ 981, 983, 1002:

<sup>112</sup> Նույն տեղում, 1912, թիվ 786:

<sup>113</sup> Նույն տեղում, 1910, թիվ 378:

<sup>114</sup> Նույն տեղում, 1912, թիվ 786:

<sup>115</sup> Նույն տեղում, 1909, թիվ 6:

<sup>116</sup> Նույն տեղում, 1909, թիվ 13:

«Ազատամարտի» համոզմամբ գաղթի դրոպատճառների հիմքում ընկած էր հողային հարցը: Չենք կարող մատնացույց անել որևիցե համար, որում «Ազատամարտը» գոնե մեկ հողված կամ լուր տպագրած չլինի այս խնդրին առնչվող: Այս հարցն այնքան էական ու կարևոր է համարվել, որ հենց հրատարակման առաջին տարում 118-143-րդ թվերում ստվարածավալ հողվածաշար է տպագրվել «Պետական վերանորոգությունն ու հողային հարցը» խորագրով: Հեղինակը Ատոմը գրում էր, որ Թուրքիայի վերածննդի ու Սահմանադրության ամրապնդումը կարող էր կայանալ ավատականության ջնջմամբ և հողային հարցի լուծմամբ: Նշվում էր, որ բռնության և հալածանքի հետևանքով հայկական շատ ու շատ գավառներ դատարկվել էին և հողերն անցել էին քուրդ ու թուրք ազգաբնակչությանը: Թվարկվում էին այդպիսի գավառներից Վանի վիլայեթում Նորդուզը, Ադբակը, Գավառը, Բիթլիսի վիլայեթում Սղեբը, Խիզանը, Մոտկանը, Խոթը, Մանազկետը, Էրզրումի վիլայեթում Խնուսը, Ալաշկերտը և այլն: Ասվում էր, որ հողային գրավումները լայն չափեր էին ստացել հատկապես համիդյան վարչակարգի օրոք: Ներկայացվում էին դրանց կատարման միջոցներն ու կերպերը: Թվարկենք մի քանիսը.

#### անհատական բռնություններ

քուրդ աղաները կամ բեկերը հաճախ կառավարական պաշտոնյաների աջակցությամբ, թույլտվությամբ բռնի ուժով արևմտահայերին քշում էին իրենց սեփական հողերից ու տիրանում դրանց, իսկ ունեզրկված հայ ընտանիքը կամ համայնքը դառնում էր գաղթական,

#### կառավարական բռնություններ

առանց փոխարժեքը վճարելու՝ կառավարությունը բռնությամբ գրավում էր արևմտահայերի ընդարձակ հողաբաժինները և դրանք տալիս դրսից Թուրքիա եկող մահմեդական մուհաձիրներին, ու արդյունքում նախկին հողատերը կամ հայ գյուղացին դառնում էր գաղթական կամ հողագուրկ վարձու մշակ,

#### պաշտպանության անհրաժեշտությունը

այլազգի հարստահարիչներից որոշ չափով պաշտպանվելու համար արևմտահայ գյուղացին ուրիշ այլազգու պաշտպանությանն էր ապավինում՝ նրան տալով իր հողերի լավագույն մասը՝ միաժամանակ դառնալով պաշտպանի հպատակն ու հարկատուն,

## Կեղծիքը

քուրդ բեկերն ու աղաները կարողանում էին փաստաթղթերի կեղծմամբ իրենց անունով դարձնել այն հողերը, որոնց տերերը բացակայել կամ գաղթել էին երկար տարիներով,

ահռելի չափերի հասնող պարտատոկոսները, որոնց դիմաց հայ գյուղացին սովորաբար վերջնահաշվում տալիս էր իր հողակտորը:

Վերը նշված պատճառներով կատարված հողագրավումների հետևանքը հողային հարցի ծագումն էր, որն, ըստ հողվածագրի, անհնար էր լուծել գործադրության մեջ գտնվող հողային օրենքով:

«Ազատամարտը» ներկայացնում էր կառավարության ձեռնարկումները՝ հողային խնդիրը լուծելու ուղղությամբ, բայց հասկացնում էր, որ դրանք՝ այդ մեկ-երկու քայլերը, պարզապես աջակապություն էին: Բերենք օրինակ: «Հողային հարցի շուրջ» խմբագրականում նշվում էր, որ կառավարությունը մի կողմից ընդունում էր հողավեճը հարթող որոշումներ, մյուս կողմից աչքը փակում, չտեսնելու էր տալիս դրանց կեղծումները:<sup>117</sup> Խոսքը վերաբերում էր Վանի և Բիթլիսի վիլայեթներին, որտեղ օրըստօրե խորանում էր ծագած հողային վեճը: Նախորդ վարչակարգի թույլտվությամբ բռնությամբ հայերից գավթել էին ընդարձակ հողատարածություններ և այժմ փորձում էին օրինականացնել այդ հափշտակումները: Ներքին գործերի նախարարությունը հրահանգել էր, որ Վանի և Բիթլիսի վիլայեթներում ամենահին փաստաթղթեր՝ «թափուսէնէտի» ունեցողները նկատվեն իրավատեր, իսկ մնացած դեպքերում հարցը պիտի լուծվեր դատարաններում: Իրականում հողահափշտակիչները համագործակցելով տեղի պաշտոնյաների հետ՝ կաշառքով, սպառնալիքով ու բռնությամբ ձեռք էին բերում հին կամ նոր «թափուսէնէտի» և դառնում վիճահարույց հողատարածքի օրինական տերերը: Նման գործարքների հետևանքով Մուշի ու Բուլանուխի շրջաններում լցվել էին 30 հազարից ավելի հայ գաղթականներ: Նրանք այս կամ այն գյուղի նախկին բնակիչներն էին, ովքեր համիդյան ջարդերից ապաստանել էին արտերկրում: Այդ ընթացքում քրդերը և թուրքերը խլել էին նրանց հողերը, տուն ու տեղը և հայթայթելով կալվածագրեր՝ վերածվել էին այդ գյուղերի տեր ու տնօրենների: Նույն վիճակում էին Սասունի

<sup>117</sup> «Ազատամարտ», 1909, քիվ 128:

Կելիկեննան և Կելիեկուզան գյուղերը: Նման վիճակում գտնվող ազգակիցներին ձգտում էր օգտակար լինել թերթը՝ ներկայացնելով ստեղծված թնջուկը, դրա պատճառները և դրությունը շտկելու համար մշակված առաջարկները:<sup>118</sup>

Թվարկված էական հիմնախնդիրներին զուգահեռ «Ազատամարտը» բարձրացնում էր հայեցի դաստիարակության ու կրթության ազգապահպան հարցերը՝ հատկապես հայկական դպրոցների բարեկարգումը համարելով արևմտահայերի ազգային գործունեության առաջնակազ նպատակը:<sup>119</sup> Օրաթերթի դիրքորոշումը հասկանալ են օգնում համարյա բոլոր համարներում (առանձնապես 1911-1912 թթ.) տպագրված հոդվածներն ու նյութերը, նաև՝ ՀՅԴ-ի ծրագրային դրույթները, որոնք յուրաքանչյուր ժողովից և համագումարից հետո հրապարակվում և լուսաբանվում էին «Ազատամարտի» էջերում: Մեջբերենք 1912 թ. ՀՅԴ ծրագրից այս հարցադրումներին նվիրված հատվածները.

1. ապահովել օսմանահպատակ ազգերի կրթական-մշակութային գործի ազատությունը և ինքնավարությունը, ինչպես նաև բոլոր ազգերի դպրոցների իրավահավասարությունը, պարտադիր, ընդհանուր, ձրի տարրական կրթությունը, դասավանդումը՝ մայրենի լեզվով, ոչթուրքական դպրոցներում պետական թուրքերեն լեզվի ուսուցումն սկսել 4-րդ դասարանից, իսկ թուրքական դպրոցներում տեղական լեզուների ուսուցումն իրականացնել կրկին 4-րդ դասարանից,

2. տեղերում (զավառներում) պաշտոնյաները թուրքերենից բացի պիտի իմանային նաև տեղական բնակչության լեզուն,

3. պետական լեզվի հետ տեղական լեզուների գործածում դատարանների, վարչական հիմնարկությունների, պաշտոնական հայտարարությունների և ազդերի մեջ,

4. մշակութային-դպրոցական նպատակներին հատկացված պետական բյուջեն բաժանել օսմանյան ազգությունների միջև՝ նրանց ներկայացրած թվի համաձայն,

5. խափանել միայն հողագործությունից զանձվող կրթական տուրքը կամ այն տրամադրել բոլոր ազգությունների ինքնավար մարմիններին՝ գործածելու ի նպաստ գյուղական դպրոցների,

<sup>118</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 128:

<sup>119</sup> Նույն տեղում, 1912, թիվ 937:

6. իրավունք տալ ազգային կրթական վարչություններին՝ պետական տուրքերի վրա ավելացնելով՝ գանձել ազգային կրթության բաժին,

7. կրթական գործի վրա հսկող պետական կենտրոնական մարմինը կազմել ազգային-կրթական մարմինների ներկայացուցիչներից, իսկ դպրոցների վրա հսկող պաշտոնյաներին նշանակել նույն ազգությանը պատկանող և մայրենի լեզվին քաջատեղյակ անձանցից:<sup>120</sup>

Գործելակերպի նման մոտեցումներ էր որդեգրել ՀՅԴ-ի Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը: Օրաթերթը հրապարակումներով պատկերացում տալով թուրքիայում կատարվող իրադարձությունների, իրականացվող պետական կրթական քաղաքականության մասին, կրթության հարցի բացթողումների համար մեղադրում էր Ազգային ժողովին, այդ բնագավառում գործելու կոչված ազգային կառույցներին և նրանց աշխատակիցներին:<sup>121</sup> Կառավարությունը ոչ միայն չէր աջակցում հայկական դպրոցների բարեկարգման գործընթացին, այլև ամեն կերպ խանգարում էր դրանց նորմալ աշխատանքներին: Օրինակ 1912 թ. դեկտեմբերի 23-ի համարում տեղեկացվում էր, որ համաձայն Բ. դեան նոր հրահանգի՝ վերացվում էին հայկական դպրոցների պետական վճարները:<sup>122</sup> 1911թ. թիվ 481-ի խմբագրականում նույնպես մտահոգություն էր հայտնվում ազգային վարժարանների նկատմամբ պետական վերաբերմունքի առնչությամբ: Գավառներից բողոքում էին, որ կրթական տեսուչները վարժարաններին հատկացված պետության կրթական վճարները վերջիններին (վարժարանների հոգաբարձուներին, առաջնորդարաններին) տալու փոխարեն պահանջում էին անձամբ վճարել ուսուցիչներին և գրաքննության էին ենթարկում հայ վարժարանների դասագրքերը: «Ազատամարտն» այս երևույթը որակում էր որպես մեր վարժարանների ներքին ինքնավարության խախտման հակապետական ուղի: Կամ «Գահավեժ քաղաքականություն» հոդվածից պարզվում էր, որ ըստ օսմանյան խորհրդարանի որոշման՝ ազգային վարժարանները զրկվում էին ներքին ինքնավարությունից: Դրանց վկայականները արժեզրկվում էին, և դրանք պարտավորվում էին կառավարության վավերացմանը ենթարկել իրենց ծրագրերը, կառավարական նախնական քննության անց-

<sup>120</sup> «Ազատամարտ», 1912, թիվ 822:

<sup>121</sup> Նույն տեղում, 1910, թիվ 362, 367, 368, 1911, թիվ 481, 482, 1913, թիվ 1103:

<sup>122</sup> Նույն տեղում, 1912, թիվ 1094:

կացնել ուսուցիչներին, որտեղ ստացած վկայականներով կվավերացվեր նրանց պաշտոնավարությունը: «Սա պետական անբաւելի յանցանք է, որն արթնացնելու է միջցեղային թշնամութիւն», - գրում էր «Ազատամարտը»: <sup>123</sup> Օրաթերթը պահանջում էր, որ վերջ տրվեր պետական այն քաղաքականությանը, որը դժվարացնում կամ անհնար էր դարձնում պետական վարժարաններում (հատկապես մասնագիտական ուղղվածություն ունեցողներում) ոչխալամների մուտքը և ընդունելությունը: <sup>124</sup>

Հույս դնել, թե պետական համապատասխան մարմինները կբարեկարգեին ազգային դպրոցները, ինքնախաբեություն էր. այս կարծիքն էր ձևավորում ընթերցողների շրջանում «Ազատամարտը»: Օրաթերթը գտնում էր, որ կրթական բարեփոխման համար պիտի շահագրգռված լինեին եթե ոչ պետական մարմինները, ապա՝ արևմտահայերը, մասնավորապես ծնողները՝ հարկադրելով թաղական խորհուրդներին շարժվել, գործ անել. «Մենք Հայերս, ի՞նչ արեցինք ազգային վարժարանների ու կրթութան վերածնութանն ի նպաստ: Բան մը չըրինք»: <sup>125</sup> 1911 թ. թիվ 661-ի խմբագրականում գրված է. «Դժգոհ ենք մեր դպրոցներէն: Երկու կարծիք չկայ այս խնդրում: Դարմա՞նը. ահա թէ ինչ կ'իմտորուի»: Դրությունը բարվոքելու նպատակով «Ազատամարտը» փորձում էր ճշտել հիմնահարցերի առաջացման պատճառները: Պատճառներից առաջինը հայկական դպրոցների բյուջեի անծուկ կացությունն էր: Թերթի կարծիքով՝ դրանից դուրս գալու համար անհրաժեշտ էր կարգավորել վանական կալվածքների մատակարարությունն ու դրանց հասույթը հատկացնել կրթական գործին: Անհրաժեշտ էր նաև դպրոցների բյուջեն միացնել շրջան առ շրջան՝ մեկ տեսչության մեջ և ըստ այդմ բաշխել նախնական, երկրորդական ու միջնակարգ-բարձրագույն վարժարանների միջև: «Ազատամարտը», դատապարտելով այս հարցում անտարբեր կեցվածք ընդունած Ազգային ժողովին, վանական կենտրոնական խորհրդին, առաջնորդարաններին, առաջարկում էր վանքերի մատակարարությունը ենթարկել համայնական հսկողության՝ այն գործածելով հոգուտ համայնքի պահանջների, ի մասնավորի՝ կրթական գործի: Ընդ որում, այս

<sup>123</sup> «Ազատամարտ», 1911, թիվ 482:

<sup>124</sup> Նույն տեղում, 1910, թիվ 362:

<sup>125</sup> Նույն տեղում, 1912, թիվ 937:

խնդիրը լուծելու համար օրաթերթն Ազգային ժողովին հուշում էր մոտեցման մի քանի ճանապարհ.

1. ընտրել Եվրոպայում կրթություն ստացած մանկավարժների հանձնախումբ՝ ուսումնասիրելու համար Կ.Պոլսի և գավառների դպրոցների ընդհանուր վիճակը՝ արվածի հիման վրա մշակելով բարեփոխումների ծրագիր,

2. ընտրել 2-րդ հանձնախումբ, որը կուսումնասիրեր կրթական գործի նոր նյութական աղբյուրները՝ հատկապես նկատի ունենալով վանապատկան ու եկեղեցապատկան եկամուտները,

3. կրթական բյուջեն բաշխել ազգային բոլոր վարժարաններին՝ ընդհանուր և համաչափ կարգով:<sup>126</sup>

Թվարկելով իր կարծիքով հիմնարար վերոնշյալ առաջարկություններն՝ «Ազատամարտ» անդրադառնում էր այլ տեսակետների ևս: Այդ առումով հատկանշական են 1909 թ. թիվ 6-ում Գասպար Իփեքյանի «Կրթական գործը գավառներում մեջ» վերլուծությունը, 1910 թ. թիվ 355-359-ում տպագրված «Դպրոցական հարցեր» և 1912 թ. թիվ 1073-ից հրատարակված «Թրքահայ կրթական գործին կազմակերպությունը» հոդվածաշարերը, ինչպես նաև՝ 1913 թ. հոկտեմբերի 24-ին Սամսոնի թեմի ազգային վարժարանի տեսուչ Արա Մամիկոնյանի հոդվածը տեղի ուսուցչական համագումարի մասին և այլն: Իսկ «Կրթական հարցը քաղաքական տեսակետից» հոդվածում խնդիրը քննարկվում էր այդ տեսանկյանը և ըմբռնվում էր իբրև մի հարց, որը լուծվում էր ոչխալամների, օրինակ՝ հայերի իրավունքների ոտնահարմամբ ու ճնշմամբ: Այնինչ, ըստ օրաթերթի, վերանորոգման ճանապարհը մտած թուրքիան պիտի առաջադիմեր ոչ թե իր կազմում ապրող տարբեր ազգերին մեկ միտք ու մեկ լեզու պարտադրելով, այլ՝ ապահովելով վերջիններիս բնականոն զարգացումը:<sup>127</sup>

### *«ԱԶԱՏԱՄԱՐՏԻ» ԳՐԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ*

«Ազատամարտ» օրաթերթը հրատարակության տարիներին (1909-1915 թթ.) գրեթե բոլոր համարներում լուսաբանել է հայկական և համաշխարհային մշակութային անցուդարձը: Թերթի էջերում իրենց

<sup>126</sup> «Ազատամարտ», 1910, թիվ 368:

<sup>127</sup> Նույն տեղում, 1909, թիվ 5:

ստեղծագործություններով հանդես են եկել ոչ միայն արևմտահայ ու արևելահայ, այլև օտարազգի գրողներն ու արվեստագետները: Օրաթերթի գրական-մշակութային ուղղվածությամբ նյութերն ու քաղաքականությունն առանձին և ամբողջական գիտական լուրջ ուսումնասիրության կարիք ունեն, ինչը մեր այս աշխատության շրջանակներից դուրս է: Միայն փաստենք մի շարք էական առանձնահատկություններ «Ազատամարտի» գրական-մշակութային մոտեցումների վերաբերյալ:

- Օրաթերթը հատկապես գրական-մշակութային ոլորտի անդրադարձներով է զերծ մնացել նեղ-կուսակցական թերթերին բնորոշ հատկանիշներից: Մշակութային ուղղվածությամբ նյութերով, վերլուծական հոդվածներով և ուսումնասիրություններով հարուստ են «Ազատամարտի» տարեմուտյան կամ Կադանդի առիթով հրատարակված բացառիկ համարները, որոնք լույս են տեսել 4-ի փոխարեն 8 էջով: Հ. Սիրունին գրում էր, որ «Ազատամարտը» ցանկանում էր դառնալ գրական օջախ. «Ան համախմբեց մեր գրականության լաագոյն դժբերը, նոյնիսկ անոնք, որ Դաշնակցության բարեկամներ չէին...Միայն ականաւորները չէին, որ մեր երիտասարդութիւնը կը ճանչնար. կովկասեան շաւտ - շաւտ երկրորդական գրողներ իսկ ծանօթ էին ամէնուն»:<sup>128</sup>

- «Ազատամարտը» փորձել է կամրջել պատմական հանգամանքների բերումով հայ ժողովրդի՝ միմյանցից զատված հատվածների գրականության և արվեստի աշխարհի ներկայացուցիչներին: Օրաթերթում տպագրվել են Ռաֆֆու, Ավ. Ահարոնյանի, Ալ. Շիրվանզադեի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Հ. Օշականի, Կ. Ջարյանի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Գ. Ջոհրապի, Ռ. Ջարդարյանի, Զ. Եսայանի, Հ. Նազարյանցի և այլոց գրական չափածո և արձակ երկերը:

- «Ազատամարտը» քաղաքական գործունին համարժեք է համարել արվեստի և մշակույթի դաստիարակիչ դերը ժողովրդի կյանքում: Այդ հանգամանքով է պատճառաբանվում մշակութային ոլորտի լուսաբանման՝ օրաթերթի որդեգրած ուղեգիծը: «Ազատամարտը» մշտապես ուշադրության կենտրոնում է պահել արվեստի բնագավառի հիմնախնդիրները, կատարվող տեղաշարժերը, գրական ու մշակութային այլ կարգի քննարկումները, բանավեճերը և ասուլիսները: Այս տեսա-

<sup>128</sup> «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 11, էջ 104-115:

կետից «Ազատամարտը» կարելի է համարել ժամանակի արևմտահայ մշակութային կյանքի յուրատեսակ հանրագիտարան: Ընդ որում, «Ազատամարտն» ապահովել է բազմակարծություն բանավիճային հարցերում և չի արտահայտել կողմնակալ տեսակետներ: Կարելի է հիշատակել 1913 թ. արևմտահայ իրականության մեջ ծավալված բուռն քննարկումները հայ գրականության զարգացման ուղիների և գրական ոճերի ընտրության առումով: Կազմակերպված գրական ասուլիսներն իրենց անդրադարձն են գտել 1913 թ. «Ազատամարտի» վերլուծական հոդվածների, լուրերի և գրախոսականների բաժիններում:

- «Ազատամարտի» կարծիքով քննադատները մեծ դեր ունեին արվեստի ու գրականության զարգացման գործում:

«Ազատամարտն» այնքան է կարևորել գրականության և արվեստի վերահիղիչ ու կրթադաստիարակչական գործառույթները, որ 1910 թ. հուլիսի 10-ից սկսել է հրատարակել *«Ազատամարտ» գրական, գիտական և գեղարվեստական շաբաթաթերթ-հավելվածը*. Այն լույս է տեսել մինչև 1913թ. սկզբները: 1911-1912 թթ. հավելվածը տպագրվել է «Բազին» և «Բամբիռ» անուններով: Լույս է տեսել «Ազատամարտի» գրական հավելվածի 73 համար: Հավելվածի խմբագրման գործը փոխելովս վարել են Ռ. Ջարդարյանը, Ռ. Դարբինյանը և Շ. Միսաքյանը: 1911 թ. դեկտեմբերի 13-ի խմբագրականում նըշվում էր, որ հավելվածի հրատարակությունից հետո անցել էր շուրջ մեկ տարի, և այդ ընթացքում անսագիրը կարողացել էր ստեղծել հաստիքային և արտահաստիքային աշխատակիցների և ընթերցողների լայն ցանց: Անսագիրը «Երոպայի գլխաւոր մտաւորական կեդրոններուն մէջ ունէր իր մասնաւոր թղթակիցները»: <sup>129</sup> Խմբագրակազմը հույս էր հայտնում, թե անսագիրը «գրական պաշտամունքի և փառաբանութեան ճշմարիտ տաճարը պիտի ըլլայ մեր մտքի ովստեալներուն»: <sup>130</sup>

1910 թ. հուլիսի 10-ին «Ազատամարտի» գրական հավելվածի առաջին խմբագրականում Ռ. Ջարդարյանը գրում էր, թե հասել էր գրական հերկի ժամանակը. «Այս Յաւելուածը ուրիշ բան չ' եթէ ոչ նախաքայլ մը դէպի գրական նոր աշխատանքը, որուն համար իրենց գործակցութիւնը պիտի բերեն արեւմտեան և արեւելեան Հայերու յայտնի

<sup>129</sup> «Ազատամարտ» շաբաթաթերթ (անսագիր), 1911, թիվ 1, էջ 1:

<sup>130</sup> Նույն տեղում:

գրողներն մեծ մաս մը, ինչպէս նաև նորահաս սերունդի բոլոր լաւագոյն ներկայացուցիչները: Ձեռնարկը... նպատակ ունի միեւնոյն ատեն արծազանքը բերել հայ կեանքին մէջ օտար իմացական շարժումներուն, ծանօթացնելով ինչ որ Արուեստն ու Գիտութիւնը կ'աւելցնեն համաշխարհային քաղաքակրթութեան և ընկերական յառաջդիմութեան ի նպաստ: Իսկ Արուեստն ու Գիտութիւնը կոչուած են դառնալու ապագայի միակ բարձրագոյն Կրօնքը»: <sup>131</sup> Գրական հավելվածի խմբագրակազմը լիովին ի կատար է ածել իր առջև դրած նպատակները: Հրատարակութեան մոտ երկուս ու կես տարիների ընթացքում ամսագրում տպագրվել են, օրինակ՝ Ավ. Իսահակյանի «Հայրենի օջախ», «Բողոք-խան», «Բուրդիան», «Շաքրո Վալիշվիլին», «Հավիտենական սեր» և այլ ստեղծագործությունները, Կրթ. Փակագյանի գրական գրույցները, Գ. Բարսեղյանի թարգմանությամբ՝ ֆրանսերեն լեզվով Կ. Ջարոյանի գրույցները, Լ. Շանթի «Կինը» վիպակը, Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Ե. Տեմիրձիբաշյանի, Հ. Նազարյանցի, Լ. Էսաճանյանի և այլոց բանաստեղծությունները, Զ. Եսայանի էսսեները, Հ. Օշականի նովելները և այլն:

Օտարագի գրողներից ամսագրի «Օտար էջեր» բաժնում զետեղված են Լ. Տոլստոյի արծակ երկերից, իտալացի բանաստեղծներ Զան Պիետրո Լուչինիի, Պաոլո Փուծիի և Էնրիկո Կարտիլի, բելգիացի բանաստեղծ Ֆրանսուա Լեոնայի, ֆրանսիացի բանաստեղծ Պիեռ Քիյառի և ուրիշների բանաստեղծությունները: «Ազատամարտ» գրական ամսագրի «էջեր թուրք նոր գրականութեն» խորագրի ներքո տպագրված են թուրք ժամանակակից գրողների ստեղծագործություններից: Ամսագրի խմբագրությունն, օրինակ՝ թուրք նոր գրականության «երէց դէմքերէն մէկն» է համարել Ռուզաֆ Զատե խալիտ Զիա բեյին՝ թարգմանաբար հրատարակելով նրա «Մեզարտան Սեսլեր» գրքից «Ձայներ գերեզմանեն» պատմվածքը: <sup>132</sup>

«Ազատամարտի» գրական հավելվածի «Միտք և արվեստ» բաժնում նորահրատարակ գրքերի ու ստեղծագործությունների մասին վերլուծական հոդվածներով հանդես են եկել թե՛ ամսագրի աշխատակիցները, թե՛ հայ և օտարագի գրողներն ու գրաքննադատները:

<sup>131</sup> «Ազատամարտ» շաբաթաթերթ (ամսագիր), 1910, թիվ 1, էջ 1:

<sup>132</sup> Նույն տեղում, 1910, թիվ 7, էջ 11:

Նրանցից շատերն անսագրի էջերում իրենց տեսակետներն ու մոտեցումներն են արտահայտել արվեստի ու գիտության տարբեր բնագավառների և ճյուղերի, այդ թվում՝ գրականության դերի և տարաբնույթ խնդիրների մասին: Ռուսական և եվրոպական գրական ամսագրերից ու թերթերից «Ազատամարտի» գրական հավելվածում թարգմանաբար տպագրել են նշված ոլորտների վերաբերյալ վերլուծականներ: Դրանք առավել հաճախ ամփոփվում էին նաև «Մտավորական շարժում» բաժնում և ամսագրի խմբագրությանն ուղարկված նամակների մեջ: Բնորոշ են «Բագինում» 1912 թ. հունվարի 12-ին Ս.Պետերբուրգի «Ռեչ» թերթից թարգմանաբար արտատպված Ն. Դուբրովսկու գրած «Ճապոնական բանաստեղծությունը» հոդվածը և Փարիզից ստացված Հ. Ա.-ի «Ռոդենական թանգարան» թղթակցությունը<sup>133</sup>, Լ. Տոլստոյի գեղարվեստական անտիպ երկերի 2-րդ հատորի հրատարակության առիթով ամսագրի անդրադարձը<sup>134</sup>, Փարիզից Հր. Ալյանաքի ուղարկած «Ռոդենը և իր գործը» վերլուծական հոդվածաշարը<sup>135</sup>, նորվեգացի բանաստեղծ Պիեռ Պիեթրոսոնի կյանքին ու գրական գործունեությանը նվիրված Ինգա Նալբանդյանի հոդվածաշարը<sup>136</sup>, «Լեհ գրականությունը» անստորագիր հոդվածը (1910, թիվ 6, էջ 12-14)<sup>137</sup> և այլն: «Մտավորական շարժում» բաժնում թարգմանաբար արտատպված նյութերից հիշատակենք „Comedia” հանդեսում տպագրված հարցազրույցը, որում ներկայացված էին Ա.Ֆրանսի հետ զրույցի մանրամասները ժամանակի ֆրանսիական թատրոնի և ֆրանսիացի թատերգուների մասին:<sup>138</sup> Հիշատակենք ևս մի հոդված՝ «Արդի թատրոնը և իր դերը» վերնագրով թարգմանված անդրադարձը բելգիական „La Societe Nouvelle” հանդեսից:<sup>139</sup> Այստեղ ամփոփված էին ամսագրի կողմից հանրահայտ մտավորականների շրջանում անցկացված հարցման արդյունքները: Այդ հարցմանը մասնակցել էր նաև Կ. Ջարյանը: Նրա կարծիքով թատրոնը «մեծապէս ետ մնացած է բաղդատմամբ

<sup>133</sup> «Բագին» ամսագիր, 1912, թիվ 4, էջ 12-15:

<sup>134</sup> «Ազատամարտ» ամսագիր, 1911, թիվ 1, էջ 24:

<sup>135</sup> «Բագին» ամսագիր, 1912, թիվ 6, էջ 13-15, 1912, թիվ 7, էջ 13-15:

<sup>136</sup> «Ազատամարտ» ամսագիր, 1910, թիվ 2-րդի 5:

<sup>137</sup> Նույն տեղում, 1910, թիվ 6, էջ 12-14:

<sup>138</sup> «Ազատամարտ» ամսագիր, 1910, թիվ 3, էջ 7-9:

<sup>139</sup> Նույն տեղում, 1910, թիվ 5, էջ 15-16:

արուեստի միւս բոլոր ճիւղերուն սրընթաց և յաղթական գնացքին: ժամանակակից թատրոնը չի համապատասխանէր այն էական նպատակներուն զորս պարտի հետապնդել: Արուեստի տեսակէտով թատրոնը յետամնաց է և պահպանողական»: <sup>140</sup> Կ. Ջարյանն առաջարկում էր թատերական գործի բարելավման ճանապարհը. «Այն օրը որ թատրոնը դրամի լուծէն ազտուած հաստատութիւն մը դառնայ, այդ օրը իր յաղթանակի օրը պիտի կազմէ և իր ընկերային դերը կատարեալ և արդիւնաւոր պիտի ըլլայ»: <sup>141</sup> Տեղին է մեջբերել արևմտահայ թատրոնի առաջընթացի մասին «Ազատամարտ» գրական ամսագրի մոտեցումը: «Մեր թատրոնը» խմբագրականում թատրոնը համարվում էր ժողովրդի գեղարվեստական դաստիարակության կարևոր միջոց, իսկ թատրոնի զարգացման նոր շրջանի սկիզբ կարող էր լինել արևմտահայ իրականության մեջ թատերական ընկերության հիմնումը: <sup>142</sup>

«Ազատամարտ» գրական ամսագրի «Միտք և արվեստ» ու «Արձագանքներ» բաժիններում տպագրում էին արտերկրի գրական-մշակութային, գիտության տարբեր ոլորտներին առնչվող ու խմբագրակազմի կարծիքով հետաքրքիր և ուսանելի լուրեր: Այդ լրահոսն, օրինակ՝ ընթերցողներին տեղեկացնում էր ֆրանսիացի բանաստեղծ, հայ դատի պաշտպան Պիեռ Քիյառի մահվան գույժը: <sup>143</sup> Կամ ամսագիրը հայտնում էր, որ 1911 թ. հունվարի 14-ին Փարիզում տեղի էր ունենալու Պոլ Վերլենի մահվան տարելիցին նվիրված միջոցառում: <sup>144</sup>

Ուշագրավ են «Ազատամարտ» ամսագրում ծավալված քննարկումները արևմտահայ գրականության ընթացիկ վիճակի, գրական խնդրումների և ուղղությունների, գրականության զարգացման ուղիների վերաբերյալ: Առանձնացնենք Արսեն Նաբաթյանի «Կյանք և գրականություն» հոդվածը: Հեղինակն արձանագրում էր արևմտահայ գրական շրջանակներում նկատվող «կարգ մը ցաւալի կողմեր»: <sup>145</sup> Նրան մտահոգում էր ընթերցողների ցածր ճաշակը, ինչի պատճառով բանաստեղծ կամ գրող համարվելու համար բավական էր «քանի մը ոտանա-

<sup>140</sup> «Ազատամարտ» ամսագիր, 1910, թիվ 5, էջ 15-16:

<sup>141</sup> Նույն տեղում:

<sup>142</sup> Նույն տեղում, 1910, թիվ 6, էջ 1:

<sup>143</sup> «Բագին» ամսագիր, 1912, թիվ 6, էջ 16:

<sup>144</sup> «Ազատամարտ» ամսագիր, 1911, թիվ 3, էջ 16:

<sup>145</sup> Նույն տեղում, 1910, թիվ 7, էջ 15-16:

տր թխել կամ յօդուածներ գրել կամ քանի մը վիպակներ կազմել»:<sup>146</sup> Առողջ գեղարվեստական ու հասարակական քննադատության բացակայությունը հանգեցրել էր նրան, որ Շեքսպիրների, Գյոթեների, Հայնեների կողքին հաճախ փառաբանվում էին գաճաճները՝ ստեղծելով ազգային «պատկառելի գրականության մը պատրանք»:<sup>147</sup> Շատերն էին համակված գրելացավով, քանի որ գրելը ոչ միայն փառքի ճանապարհ էր, այլև՝ դրամ, պաշտոն ու տաքուկ տեղեր ծեռք բերելու միջոց:<sup>148</sup> Հայ գրական անդամատանում արմատավորված այս բացասական երևույթներից ծերբազատվելու համար Ռ. Ջարդարյանը «Նորահաս բանաստեղծներ» վերլուծականում առաջարկում էր, որ «քերթողութեան Տաճարին նախագահիթը» հսկող պահապանը հարցներ ներս մտնել ցանկացողներին. «Ի՞նչ կը բերես հասարակաց բուրաստանին՝ որ ըլլայ քուկդ, բոլորովին տարբեր ուրիշներէն, իր մասնաւոր յատկանիշովն ու առանձին նկարագրովը»:<sup>149</sup> Իսկ Շ. Մխաբյանն արևմտահայ գրականության առաջընթացի համար, «որ ի լինելութեան էր», հրամայական պահաջ էր համարում անմիջական առաջադեմ հարևանների գրական մարզանքների հետազոտումը՝ առանց դրանց կրկնօրինակման փորձերի:<sup>150</sup> Ռ. Ջարդարյանը գտնում էր, որ անհրաժեշտ էր զարգացնել ազգային գրականությունը: Այն պիտի «ընդգրկէր հայ ժողովուրդին բոլոր դասակարգերը ու մանաւանդ անոր մեծագոյն զանգուածը, գիտացին, աշխատաւորը, բուն ազգը՝ իր ալեկոծումներով և իր մտերմիկ յոյզերով, իր յոյսերով ու յուսավրիպումներով, իր երկիւղած համակերպութեամբ և զարհուրելի ճակատագրապաշտութեամբ», - գրում էր նա և նշում, թե հայ գրականության վերածննդի համար անհրաժեշտ էր ուսումնասիրել այդ անկոխ գետինը՝ հայ գյուղը:<sup>151</sup>

<sup>146</sup> «Ազատամարտ» ամսագիր, 1910, թիվ 7, էջ 15-16:

<sup>147</sup> Նույն տեղում:

<sup>148</sup> Նույն տեղում:

<sup>149</sup> Նույն տեղում, 1910, թիվ 2, էջ 1:

<sup>150</sup> Նույն տեղում, 1910, թիվ 12, էջ 1-2:

<sup>151</sup> Նույն տեղում:

*«ՈՒՍԱՆՈՂ» ԵՎ «ԵՐԿՈՒՆՔ» ԱՄՍԱԹԵՐԹԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ*

«Ուսանողը» և «Երկունքը» եղել են ՀՅԴ մասնաճյուղերը հանդիսացող Եվրոպայի ու Կ.Պոլսի ուսանողական միությունների ամսաթերթերը: «Ուսանող» և «Երկունք» ամսագրերի աշխատակազմերի մասին սկզբնաղբյուրների բացակայության կամ գրեթե բացակայության պատճառով կարելի է միայն պնդել, որ դրանք ունեցել են խմբագրական մարմին և աշխատակիցների փոքրաթիվ շրջանակ (հիմնականում երիտասարդ մտավորականներ և ուսանողներ):<sup>152</sup> Նրանք նույնիսկ խուսափել են հրատարակվող նյութերի մեծ մասի վերջում կամ սկզբում գրել իրենց անուն, ազգանունը և մեծամասնությամբ (չնչին բացառություններով ) հանդես են եկել կամ կեղծանվամբ, կամ անուն-ազգանվան սկզբնատառերով: Ի դեպ, դրանց իսկությունը պարզելը դժվարանում է արդեն նշված պատճառով:

«Ուսանող» ամսագրի առաջին համարը տպագրության է նախապատրաստվել Բեռլինում Եվրոպայի ՀՅԴ ուսանողական միության Պերագույն մարմնի երեք անդամների նախաձեռնությամբ, որոնք միաժամանակ եղել են ամսագրի խմբագրական մարմնի ներկայացուցիչները: Նրանց ջանքերով է, որ 1909թ. փետրվարին և ապրիլին Փարիզում հաջորդաբար լույս են տեսել «Ուսանողի» 1-ին և 2-րդ համարները: Տպագրվել է ընդամենը 660 օրինակ: Դրանք ուղարկվել են Կ.Պոլիս (200 օրինակ), Տրապիզոն (10 օրինակ), Ջնյուռնիա (50 օրինակ), Կարին (20 օրինակ), Վան (20 օրինակ), Թավրիզ (20 օրինակ), Սալմաստ (10 օրինակ), Թեհրան (15 օրինակ), Ցյուրիխ և ժնև (80 օրինակ), Բեռլին (100 օրինակ), Լոզան (20 օրինակ), Բուլղարիա (30 օրինակ), Բոստոն (35 օրինակ), Կովկաս (50 օրինակ):<sup>153</sup>

1909թ. ապրիլի 10-15-ին Պերմանիայում տեղի է ունեցել Եվրոպայի ՀՅԴ ուսանողական միության 2-րդ համագումարը: Այնտեղ քննարկվել են նաև «Ուսանողի» հրատարակությանն առնչվող խնդիրներ: Որոշվել է,

---

<sup>152</sup> «Ուսանող», 1909, քիվ 1, էջ 1-3, 45-48, 1909, քիվ 3, էջ 129-132, 1911, քիվ 6, էջ 3-8, 1912, քիվ 7, էջ 280-288, «Երկունք», 1912, քիվ 1, էջ 30-31:

<sup>153</sup> «Ուսանող», 1909, քիվ 3, էջ 199-210:

որ ամսագրի խմբագրական մարմինը պետք է ունենա երեք կամ հինգ անդամ և երկու փոխարինող անդամ: Նրանք պիտի ընտրվեին Եվրոպայի ՀՅԴ ուսանողական միության համագումարի մասնակիցների կողմից ու պատասխանատու լինեին նրանց առաջ: Խմբագրական մարմինը աշխատելու էր Գերմանիայում, իսկ ամսագիրը հրատարակվելու էր ժնևում, Փարիզում, Կ. Պոլսում, Զմյուռնիայում: Այսինքն՝ այնտեղ, որտեղ հնարավոր էր իրականացնել «Ուսանողի» լույս ընծայումը: Նշված համագումարում գաղտնի քվեարկությամբ ընտրվել են ամսագրի խմբագրական մարմնի անդամները (Վ. Կ., Ս. Ն., Բ. Կ.) և նրանց փոխարինողները (Ա. Բ., Ս. Բ.):<sup>154</sup> Տարիների ընթացքում այդ կազմը փոփոխության է ենթարկվել: «Ուսանողին» աշխատակցել են Ե. Ֆրանկլանը, Կ. Խորենին, Ա. Շիրակունին, Մ. Վաքուրը, Վանիկը, Արմենը, Տրդատը, Արման, Ֆելիքսը և այլք:

Մեր ձեռքի տակ Հայաստանում կա «Ուսանողի» ութը թիվ՝ հրատարակված 1909-1914 թթ. Փարիզում (թիվ 1,2,5), ժնևում (թիվ 3,4,6,8) և Կ.Պոլսում (1912 թ., թիվ 7): Այն հրատարակվել է սկզբում որպես ոչ պարբերական (թիվ 1,2), իսկ 1909 թ. հետո՝ որպես պարբերական հանդես, որը պետք է տպագրվեր երկու ամիսը մեկ: Սակայն նյութական, տեխնիկական միջոցների բացակայությունն ու խմբագրական աշխատանքներին ուսանողների ցուցաբերած անպատասխանատու վերաբերմունքը խանգարել են իրականացնել մտահղացումը. «Ուսանողն» ուշ ուշ է հրատարակել հերթական համարը: Արդեն թիվ 6-ում տեղեկացվում էր, թե ամսաթերթը կհրատարակվի տարին երկու անգամ:<sup>155</sup> Թիվ 7-ում «Ուսանողն» այլևս ՀՅԴ Եվրոպայի ուսանողական միության ամսաթերթը չէր, այլ՝ նույնաբնույթ ժողովածու: Նրա խմբագրականից պարզվում է, որ «Ուսանողը» կտպագրվեր միայն այն դեպքում, երբ հնարավորությունները կներեին:<sup>156</sup>

«Երկունք» ամսագրի արտոնատերը և պատասխանատու տնօրենը Գալուստ Էյնաթյանն էր: Այն տպագրվել է ամիսը մեկ անգամ նախ՝ Օ. Արզումանի, ապա՝ Հ. Թիրյաթյանի տպարաններում: «Երկունք» նախնական խմորատիպ ամսագրի հրատարակմանը մասնակցել են Վանի

<sup>154</sup> «Ուսանող», 1909, թիվ 3, էջ 213-216, թիվ 2, էջ 65-67:

<sup>155</sup> Նույն տեղում, 1911, թիվ 6, էջ 3-8:

<sup>156</sup> Նույն տեղում, 1911, թիվ 7, էջ 3-6, 1909, թիվ 3, էջ 213-216:

Երանյան եւ Կենտրոնական վարժարանների շրջանավարտներ Գալուստ Էյնաթյանը, Մանվել և Բարունակ Կապուտիկյանները, Արամ Սաֆրաստյանը, Խոսրով Խանջյանը, Պարզև Պանիրյանը, Մանուկ Ասլանյանը, Տիգրան Ջրբաշյանը և ուրիշներ:<sup>157</sup> Ամսագրում իրենց նյութերն են հրատարակել հիմնականում հետևյալ անձինք. Ա. Վտակյանը, Խ. Աստուրյանը, Կ. Թանտրջյանը, Գ. Մխիթարյանը, Մ. Չիլյանը, Ա. Սաֆրաստյանը, Ռիվարեցը, Ասլանը, Ասաֆը, Նելլան, Շահիրիմանը, Հ. Մ.-ն, Մ. Ա.-ն, Կ. Ս.-ն, Ս.-ն, Շ.-ն, Ի քսը և այլք: «Երկունք» ամսաթերթը հրապարակ էր իջել, որ հնչեցներ ՀՅԴ կողմից ականջի հետև գցված ընկերվարական սկզբունքները, որ օժանդակեր կուսակցության կազմակերպչական, քարոզչական աշխատանքներին, կապ պահպաներ Կ.Պոլսի և Արևմտահայաստանի դաշնակցական ուսանողների միջև՝ ձգտելով թե՛ նրանց, թե՛ կուսակցության անդամներին տանել ընկերվարական ճանապարհով:<sup>158</sup> Ըստ ամսաթերթի՝ երիտասարդ սերնդի ծայրը և պահանջներն ընկերվարական էին ու քանի որ իբրև այդպիսիք հարկ և պատշաճ ձևով չէին երևացել ՀՅԴ նախընթաց մամուլում, ուստի դրանց հնչեցման համար էր ասպարեզ եկել «Երկունքը»:<sup>159</sup>

«Ռւսանողի» և «Երկունքի» ծննդյան գլխավոր պատճառը և գործունեության անկյունաքարը ՀՅԴ ծրագրերը ներկայացնելը, լուսաբանելը, տարածելը և Կ.Պոլսում ու Եվրոպայի քաղաքներում սովորող դաշնակցական ուսանողների համախմբմանը և համագործակցությանը նպաստելն էին: Ամսաթերթերն աջակցելու էին ուսանողության (լայն իմաստով՝ երիտասարդության) ինքնակրթությանն ու ինքնագարգացմանը և ազգի մտավոր սերուցքի հարատևությանը: Ըստ «Ռւսանողի» ու «Երկունքի»՝ սրանք էին ուսանողական թերթերի և ժողովածուների առջև դրված խնդիրները:<sup>160</sup> «Ռւսանողը» և «Երկունքը» միայն կուսակցական հիմնահարցերով չեն տարվել: Նրանց էջերում տեղ են գտել իմաստասիրական, գրական-գեղարվեստական, հասարակագիտական ուսումնասիրություններ, հոդվածներ: «Ռւսանողին» և «Երկունքին» բնորոշ է բանավիճային բնույթը: Ամսաթերթերը գաղափարակիցներին հնարավորութ-

<sup>157</sup> «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1981, էջ 486:

<sup>158</sup> «Երկունք», 1912, թիվ 1, էջ 30-31:

<sup>159</sup> Նույն տեղում, 1912, թիվ 2, էջ 56:

<sup>160</sup> «Ռւսանող», 1912, թիվ 7, էջ 254-260, «Երկունք», 1912, թիվ 1, էջ 30-31, թիվ 4, էջ 96-99:

յուն են ընձեռել, որպեսզի նրանք անաչառորեն անդրադառնան ՀՅԴ տեսական ու գործնական մարտավարությանը, որով պիտի ինչ-որ չափով ջրի երես հանեին կուսակցության մեջ զլուխ բարձրացրած տարածայնությունները, փորձեին հասկանալ ու հարթել դրանք: Շատ դեպքերում «Ռւսանողը» և «Երկունքը» ծայրահեղ են իրենց կարծիքներում, շատ դեպքերում՝ անհանդուրժող ու անվերապահորեն միակ ճշմարիտը երևալու հավակնող: «Ռւսանողն» ու «Երկունքը» արտահայտվել են նաև մեկը մյուսի մասին:<sup>161</sup>

Հավատարիմ մնալով իրենց հիմնարկեքի նպատակներին՝ «Ռւսանողը» և «Երկունքն» ըստ ծավալի և հրատարակման հաճախականության ընձեռած հնարավորությունների, կարող ենք ասել՝ մեր ձեռքի տակ եղած բոլոր համարներում արտացոլել, քննարկել ու պարզաբանել են ՀՅԴ հասարակական-քաղաքական հավատամքը: Երկու ամսագրերն էլ պարբերաբար, հատկապես տարեվերջին ու ՀՅԴ-ի համագումարների օրերին մանրամասն անդրադարձել են իրենց բռնելիք դիրքին թուրքիայի իշխող կուսակցության, կառավարության, խորհրդարանի նկատմամբ: Բնորոշ է «Երկու տեսակետ» հոդվածն «Ռւսանողի» համար:<sup>162</sup> Ամսագրի մեկ այլ՝ «Մեր դիրքը թուրքիայի նոր ռեժիմի հանդեպ» հոդվածում բերված որոշակի փաստերն ապացուցում են այն ճշմարտությունը, թե խեղդվող փրփուրներից է բռնվում:<sup>163</sup> Պարզ է, որ խոսքն արևմտահայերին էր վերաբերում: Եվ ընդհանրապես «Ռւսանողի» տվյալ համարը կարդացողն արդեն ամբողջական պատկերացում է ունենում և՛ թուրքիայի իրականության, և՛ ՀՅԴ-ի դիրքորոշման մասին: Հոդվածագիրը նշում է. «Այսօր մենք տարբեր իրականութեան մեջ ենք ապրում...Մեզ ասում են. «Ղուբ ազատ եք, խոսէ՛ք, գրէ՛ք, ճամփորդէ՛ք, ապրէ՛ք ինչպէս կուզէ՛ք»: Հարց է առաջանում. թուրքիայի Սահմանադրութիւնը, պառլամենտի բացումը, Համիդի գահընկեցութիւնը, վերջ տուի՞ն կարմիր օրերին, թե՞ տեսնելով Ադանայի վերջին ջարդերն ու նրա շուրջը եղած ֆարսը՝ մենք պէ՛տք է ասենք. «Ո՛չ, արիւնալի շրջանը չի վերջացել»:<sup>164</sup> Հայկական նահանգներում փոփոխություններ ցփն կատարվել: Հողը դարձ-

<sup>161</sup> «Ռւսանող», 1912, թիվ 7, էջ 254-262, 268-272, «Երկունք», 1912, թիվ 1, էջ 1-2, 1912, թիվ 2, էջ 50-53, 56, 1912, թիվ 4, էջ 96-99, 1913, թիվ 10-11, էջ 281-284:

<sup>162</sup> «Ռւսանող», 1910, թիվ 4, էջ 270-273:

<sup>163</sup> Նույն տեղում, էջ 257-269:

<sup>164</sup> Նույն տեղում:

յալ խլված էր հայից, և հայերը ենթակա էին հալածանքների: Առաջվա նման զավառներում պետական ծառայության մեջ ոչ մի հայ պաշտոնյա չկար: Ի վերջո, ո՞ւմ էին պետք բարենորոգումները, երբ թուրքերը ոչնչացնում էին հայերին: Ամսաթերթը քիչ կասկածում, որ հայերի նկատմամբ նույն քաղաքականությունն էր իրականացվում, ինչ համիդյան վարչակարգի օրոք:<sup>165</sup> Ամսաթերթը հավատում էր նաև, որ Թուրքիայի անփոփոխ մնացած քաղաքական կյանքում լուրջ վերափոխումներ կարող էին իրագործել երկրի խորհրդարանն ու կառավարությունը, որոնք, սակայն, իշխող կուսակցության կամակատարներն էին:<sup>166</sup> Իսկ Թուրքիայի խորհրդարանն, ըստ «Ուսանողի», դժվարին կացության մեջ էր հայտնվել: Այնտեղ հավասարաչափ քիչ ներկայացված պետության հասարակական-քաղաքական բոլոր հոսանքներն ու կուսակցությունները: Մեծամասնություն էին կազմում երիտթուրքերն ու նրանց կողմնակիցները: Հասկանալի է, որ որոշումներն ընդունվում էին նրա՛նց քաղաքական հավատամքին համապատասխան: Փաստորեն Միություն և առաջադիմություն կուսակցությունը խորհրդարանին ու կառավարությանը տանում էր իր ուզած ճանապարհով: «Ուսանողի» ցանկությունն էր՝ արդար ընտրություններով ներկայացուցչական մարմնում տեսնել օրինական ճանապարհով բոլոր ազգերից ընտրված պատգամավորների, ովքեր կպաշտպանեին և՛ ընտրողների, և՛ իրենց կուսակցությունների շահերը:<sup>167</sup>

Քննարկվող հարցերում «Ուսանող» ամսաթերթի հետ համակարծիք էր «Երկունք» ամսագիրը: Այն յուրաքանչյուր համարում քննարկել ու անդրադարձել է Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքի խնդիրներին: Իսկ դա բավական դժվար էր իրականացնել թուրքական բարդ և հայերի համար անկանխատեսելի հետևանքներով հղի իրականության պայմաններում:<sup>168</sup> Օսմանյան պետության վերափոխման գործընթացում կարևորելով խորհրդարանի և կառավարության դերն՝ ամսաթերթը քննադատաբար արձանագրել է, որ դրանք տիրող կուսակցու-

<sup>165</sup> «Ուսանող», 1909, թիվ 1, էջ 63-64, 1910, թիվ 4, էջ 225-269, «Երկունք», 1913, թիվ 12, էջ 304-306:

<sup>166</sup> «Ուսանող», 1909, թիվ 2, էջ 68-80, թիվ 3, էջ 133-150, 1910, թիվ 4, էջ 257-269, 1911, թիվ 6, էջ 133-139:

<sup>167</sup> Նույն տեղում, 1909, թիվ 3, էջ 133-150:

<sup>168</sup> «Երկունք», 1912, թիվ 4, էջ 90-95, 1913, թիվ 1, էջ 1, թիվ 6, էջ 141-145:

յան ձեռքում վերածվել էին գործիքի: Դրանք Թուրքիայում իրարից անկախ գործող մարմիններ չէին իրենց տարանջատված իրավասություններով: Ըստ այն ժամանակվա իրավագետների գնահատականների՝ վտանգավոր միտում էր նկատվում հետևյալ իրողության առումով. 1909-1915 թթ. օսմանյան Թուրքիայում ավելի շատ օրենքներ էին հրատարակել գործադիր և ոչ թե օրենսդիր իշխանության մարմինները, որոնց ընդունած օրենքները հետադեմ ու անսկզբունք էին եղել մեծ մասամբ:<sup>169</sup> Հպատակ ազգերի կարծիքով, վտանգավոր միտում էր նաև այն, որ պետության մեխանիզմն անփոփոխ էր մնացել, և իրենք ընտրական օրենքի անկատարության պատճառով անմասն էին մնացել երկրի կառավարման գործին:<sup>170</sup> Այնինչ, «Երկունքը» համոզված էր, որ պետության յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ու հնարավորություն ուներ սեփական ազատ կամքով մասնակցելու օրենսդիր մարմնի ձևավորմանը, հետագայում նաև աշխատանքներին:

Ո՞րը պետք է լիներ հայ ժողովրդի գործելակերպի հիմնական անկյունաքարն «Երկունք» ամսաթերթի բնութագրմամբ՝ անակնկալների և սպասումների տվյալ ժամանակաշրջանում:<sup>171</sup> Նախ և առաջ՝ հայ ժողովուրդը չպետք է կույր հավատ ունենար եվրոպական կամ ռուսական դիվանագիտության նկատմամբ, այլ հույսը պետք է դներ իր ուժերի ու հնարավորությունների վրա՝ չիրաժարվելով, սակայն, քաղաքական պայքարի դիվանագիտական հնարավորություններից: Հայի հույսի ճանապարհն, ըստ «Երկունք» ամսաթերթի, համագործակցությունն ու համերաշխությունն էր մեր ժողովրդի տարբեր դասերի, խավերի և կուսակցությունների միջև: «Վերադառնանք երկիր», «Դեպի Գավառ»՝ այս նշանաբաններն էին պարբերաբար հնչեցվում «Երկունքի» էջերում:<sup>172</sup>

Եթե ընդհանրացվի վերն ասվածը 1909-1915 թթ. Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքին առնչվող հարցադրումների մասին, ապա կարող ենք փաստել, որ «Ռուսանողը» և հատկապես «Երկունքը» գտնում էին, թե ազգային միասնությունն ու համերաշխությունը, մտավոր ներուժի կենտրոնացումը մայր երկրում անհրաժեշտ նախադրյալներ էին

<sup>169</sup> «Երկունք», 1912, թիվ 6-7, էջ 130-134, 1914, թիվ 7, էջ 174-177:

<sup>170</sup> Նույն տեղում, 1914, թիվ 9, էջ 217-218:

<sup>171</sup> Նույն տեղում, 1913, թիվ 1, էջ 1:

<sup>172</sup> Նույն տեղում, 1912, թիվ 2, էջ 33-34, 1913, թիվ 1, էջ 1, 1914, թիվ 7, էջ 161-162:

Հայկական հարցի լուծման համար, բայց՝ ոչ վերջնական: Նրանք չէին բացառում նաև այլ հանգուցալուծումներ: Օրինակ՝ «Երկունքի» «1913-1914 թթ. տարեկան տեսությունում» նշվում էր, թե Հայկական հարցը, որը կարծվում էր, թե մի շարք խնդիրների նման մոտեցել էր իր ելքին, դիվանագիտական իրավիճակների փոփոխությունների պատճառով ենթարկվեց անվերջ երկարաձգումների: «Այժմ մենք անորոշ վիճակում ենք, և, թվում է, որ Հայկական հարցի նպաստաւոր լուծման շանսերն այս անգամ էլ են պակասում: Նոր տարում հնարաւոր է լինեն անսպասելի անակնկալներ, ու մենք պէտք է պատրաստ լինենք ամէն կարգի իրադարձութիւններին»,- կարդում ենք այդ տեսության մեջ:<sup>173</sup> Ե՛վ խմբագրության (ընդհանրացնելով՝ նկատի ունենք «Ռուսանողի» ու «Ազատամարտի» խմբագրությունները ևս), և՛ ՀՅԴ-ի այս մտավայխությունները շուտով իրագործվեցին ի դեմս Եղեռնի և հայ ժողովրդի Ցեղասպանության:

#### «ՌՐԱՏԱՆՈՂԻ» և «ԵՐԿՈՒՆՔԻ» ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

«Ռուսանող» և «Երկունք» ամսագրերը հրատարակության տարիներին պարբերաբար անդրադարձել են եվրոպական և արևմտահայ մշակութային և գրական կյանքին առնչվող խնդիրներին ու նորություններին: Հայաստանում եղած այս ամսագրերի հավաքածուների նյութերի ուսումնասիրության արդյունքներից երևում է, որ այդ կարգի հրապարակումներում հիմնականում գրախոսվել են նորահրատարակ գեղարվեստական ու գիտական գրքերը և քննարկվել են գրական ասուլիսները: Ամսագրերի էջերում հանդես են եկել նաև հայ և օտարազգի գրողներն իրենց ստեղծագործություններով: «Ռուսանողը» բավական ընդմիջումներով է գրախոսականներ տպագրել: Դրանց համար առանձնացված էր «Մատենախոսություն» խորագիրը: Ի տարբերություն «Ռուսանողի»՝ «Երկունքը» գրեթե մշտապես ուշադրության կենտրոնում է պահել գրական խմորումներն ու մշակութային անցուղարձը: «Երկունքն» ունեցել է կայուն խորագրեր. «Գնահատումներ», «Գրականություն և մամուլ», «Գրա-

<sup>173</sup> «Երկունք», 1914, թիվ 7, էջ 163-166:

կան ասուլիսներ», «Նոթեր», «Գրքեր և գաղափարներ», «Կյանք և գրականություն», «Ստացված հրատարակություններ», «Գրախոսական»։ Վերլուծական առումով հետաքրքիր է «Ուսանողում» տպագրված «Հայկական գրականությունը և հայ հեղափոխությունը» հոդվածը։<sup>174</sup> Այստեղ հոդվածագիրը փորձել է պատասխանել այն հարցերին, թե ինչո՞վ է հայ գրականությունը նպաստել մեր ազգային-ազատագրական պայքարին կամ հեղափոխությանը, և, ընդհակառակը, ի՞նչ ազդակներ է ստացել հայ գրականությունը ազատագրական շարժումից։ Հեղինակը փորձել է բնութագրել և գնահատել հայ գրականության անցած ուղին։ Ըստ այդմ՝ նա այն բաժանել է երկու շրջանի. մինչ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները և դրանից հետո։ Հոդվածագիր Վ. Տ.-ն գրում էր, որ արևելահայ կամ կովկասահայ գրականության առաջին փուլն սկզբնավորվում է Խ. Աբովյանով՝ հայկական վերածնության առաջամարտիկով, ով իր «Վերք Հայաստանի» վեպով հայ նոր գրականության հիմքն է դրել։ Խ. Աբովյանը, Ռ. Պատկանյանը, Մ. Նալբանդյանը, Գ. Արծրունին, Ռաֆֆին, Ավ. Ահարոնյանը և մյուսներն իրենց երկերով նպաստում էին մատաղ սերնդին ազգային-ազատագրական ոգով դաստիարակելուն։ Հեղինակի կարծիքով, Ռաֆֆու ծրագրային-քաղաքական վեպերը հայ հեղափոխության կամ ազատագրական շարժումների պատմությունն են։ Հայ գրականության երկրորդ փուլն սկսվում է 1890-ական թվականներին։ Վ. Տ.-ն գրում էր, որ գրականությունը պիտի լիներ իրականության արձագանքը։ Այդ առումով նա արևմտահայ գրողների ստեղծագործություններից վկայակոչում էր Վրթ. Փափագյանի «Պատկերներ թրքահայոց կյանքից» երկատորյակը։ Հոդվածագիրը հայ ազատագրական պայքարի երգիչներ էր համարում Ավ. Ահարոնյանին, Սիամանթոյին և Դ. Վարուժանին։<sup>175</sup>

«Երկունք» ամսագրում հրատարակության տարիներին բազմիցս արժարծվել են հայ գրականության զարգացմանը խոչընդոտող խնդիրները և արվել են առաջարկներ դրանց վերացման համար։ Օրինակ՝ «Գնահատումներ» խորագրի ներքո Հ. Մ.-ն գրում էր, որ հայ ժողովուրդը պատմական հանգամանքների պատճառով չէր կարողացել հայ գրականության զարգացման համար ստեղծել նպաստավոր պայմաններ։ Դրա

<sup>174</sup> «Ուսանող», 1911, թիվ 6, էջ 34-75:

<sup>175</sup> Նույն տեղում:

հետևանքով քիչ կամ հազվագյուտ էին գրական արժեքավոր երկերը: Արևմտահայ գրողների մեծ մասի ստեղծագործությունները չէին արտացոլում հավաքական կյանքը, ուստի չէին հետաքրքրում ընթերցող լայն հասարակայնությանը:<sup>176</sup> «Գրական ասուլիսների առթիվ» հոդվածում Շ.-ն նշում էր, որ արևմտահայ գրականության առաջընթացին խանգարում էին երկրի ներսում առկա պատերազմական վիճակը կամ գինված բախումները:<sup>177</sup> Գրական ամսյության մեջ հեղինակը միակ մխիթարիչ երևույթը համարում էր 1913 թ. ընթացքում տեղի ունեցած գրական ասուլիսները: Դրանք օազիսներ էին եթե ոչ իրենց այն օրերի արժեքով կամ արդյունքով, ապա՝ գոնե որպես նախաքայլ հետագա ավելի ուժեղ գրական շարժումների: Գրական ասուլիսները գնահատելու համար հոդվածագիրն ինքնին բավական էր համարում հասարակության մեջ դրանց առաջացրած մեծ հետաքրքրությունն իբրև նորություն: Գրական ասուլիսների թերությունների վերացման և դրանք առավել արդյունավետ դարձնելու մպատակով Շ.-ն առաջարկում էր հեղինակների ընտրության այս կամ այն ցիանակարգված սկզբունքի փոխարեն կազմել մանրակրկիտ ձևով մշակված ծրագիր: Դրա հիմքում պիտի դրվեին ոչ թե առանձին գրողների ստեղծագործությունների, այլ՝ թրքահայ գրականության գլխավոր ուղղությունների և դրանց ներկայացուցիչների գրական երկերի քննարկումներն ըստ ժամանակագրական կարգի: Շ.-ն առաջարկում էր նաև բանիմաց, գործին քաջատեղյակ անձանց կողմից անցկացնել գրաքննադատական դասընթացներ, քանի որ, ինչպես ցույց էին տվել Լ. Շանթի, Գ. Զոհրապի և Դ. Վարուժանի ստեղծագործություններին նվիրված գրական ասուլիսները, արևմտահայ իրականության մեջ զգացվում էր արհեստավարժ գրաքննադատների պակաս կամ բացակայություն: Շ.-ի կարծիքով, այդ գրական ասուլիսներում հիմնականում ներկայացվում էին ոչ թե գրախոսականներ ու վերլուծական բնույթի ուսումնասիրություններ, այլ՝ տվյալ գրողի երկից ստացած տպավորություններ: Իսկ արևմտահայ գրական շրջանակը կարիք ուներ այնպիսի գրաքննադատների, ովքեր կկարողանային թե՛ զգալ և ըմբռնել արվեստագետին ու նրա ստեղծած արվեստի արժեքները, թե՛ կկարողանային դրանք ներկայացնել հասարակությանը: Շ.-ն իր հոդվածն ավարտել է «Ասուլիս»

<sup>176</sup> «Երկունք», 1912, թիվ 4, էջ 100-103:

<sup>177</sup> Նույն տեղում, 1913, թիվ 10-11, էջ 280-281:

անունով սկսված գրական-վերլուծական շարժմանը տված այն գնահատականով, որ գրական ասուլիսները գրականության զարգացման առումով քաջալերիչ են, նաև՝ հուսադրող են իրենց կրթիչ հանգամանքով:<sup>178</sup> «Երկունքի» էջերում Շ.-ի հնչեցրած տեսակետների հետ համաձայն էր X-ը: Գրական ասուլիսները ձանձրալի ու միօրինակ միջոցառումների չվերածվելու համար նա իր հերթին առաջարկում էր դրանք անցկացնել ոչ թե մի խումբ գրողների ու մտավորականների, այլ՝ ողջ ժողովրդի համար:<sup>179</sup>

«Երկունք» ամսագրում գետեղված գրախոսականներից կարելի է առանձնացնել «Գրքեր և գաղափարներ» բաժնում տպագրված Հ. Տեռնյանի հոդվածը Հ. Երեմյանի «Պատկերներ» բանաստեղծական ժողովածուի մասին: Գրաքննադատի կարծիքով, Հ. Երեմյանի լեզուն ճապաղ էր և անտեղի պսպղուն: Նրա արծակ բանաստեղծությունները չէին գրվել ինքնաբուխ զգացմունքով: Գրքում առկա գեղարվեստական պատկերներն անարժեք էին երևակայության և արտահայտչաձևերի տեսանկյունից:<sup>180</sup> Հիշատակության արժանի է Մ. Գասպարյանի «Հայերը Նիկոմեդիայի գավառում» գիտական ուսումնասիրության մասին \*\*\*-ի գրած գրախոսականը:<sup>181</sup> Գրախոսը լուրջ գիտական աշխատություն էր համարում հիշյալ գրքույկը: Այն աչքի էր ընկնում իր պարունակած վիճակագրական ցուցանիշներ ամփոփող տվյալներով: Գրախոսության մեջ ներկայացված էր Ատոմի կարծիքից մի հատված «Հայերը Նիկոմեդիայի գավառում» գրքույկի մասին: Ատոմն արևմտահայ իրականության մեջ հազվագյուտ գիտական ուսումնասիրությունների շարքին էր դասում նշված աշխատությունը, որը ներկայացնում էր Նիկոմեդիայի շրջանի հայ համայնքի ծագումը, տեղի անգիր ժողովրդական ավանդությունները, գավառի ժամանակակից վիճակը և լուծման կարիք ունեցող խնդիրները:<sup>182</sup>

Ինքնատիպ է Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր» ժողովածուի մասին «Երկունք» ամսագրում տպագրված Գ. Մխիթարյանի գրախոսությունը: Այն գրված է Վարուժանի բանաստեղծական աշխարհի նուրբ

<sup>178</sup> «Երկունք», 1913, թիվ 10-11, էջ 280-281:

<sup>179</sup> Նույն տեղում, 1913, թիվ 1, էջ 20-21:

<sup>180</sup> Նույն տեղում, 1913, թիվ 1, էջ 15-17:

<sup>181</sup> Նույն տեղում, 1913, թիվ 4-5, էջ 126-128:

<sup>182</sup> Նույն տեղում:

զգացողությամբ ու գնահատմամբ: Գ. Մխիթարյանը Դ. Վարուժանին անվանում է հաճույքի, երազի ու տառապանքի երգիչ, հաղթանակի ու պարտության մեծ բանաստեղծ, երգում է կյանքի երգը՝ մերթ ուրախ, մերթ՝ թախծոտ:<sup>183</sup> «Երկունքի» մեկ այլ հրապարակման մեջ տաղանդավոր և բեղուն ստեղծագործական ապագա ունեցող արծակագիր էր համարվում Տիգրան Զյուկյուրյանը, որի «Վանքը» վիպակը թեև բնութագրվում էր մի շարք թերություններով, բայց նաև նշվում էր, որ անժխտելի էր վեպի գրական-գեղարվեստական արժեքը:<sup>184</sup>

«Երկունքը» հայ գրերի գյուտի 1500-ամյակի և հայ տպագրական գործի 400-ամյա հոբելյանների կապակցությամբ հրատարակել է բացառիկ միացյալ համար: Ամսագրի խմբագրակազմը հանդգնած էր, որ այդ երկու իրադարձություններն ազգային մեծ տոների շարքում գրավում էին իրենց ուրույն տեղը: Դրանք հայ մտքի և ազգային մշակույթի վերագարթոնքի տոներն էին: Հայ գրերի գյուտն ու տպագրությունը հայի մտածողությանն ու զգացումին տվել էին ձև և կերպարանք, իսկ հայի հոգուն՝ մարմին՝ դրանք դարձնելով սերունդների սեփականությունը: Հայ գրերն ու տպագրությունը հնարավոր էին դարձրել հաղորդակցվել համաշխարհային քաղաքակրթության նվաճումներին և ձեռքբերումներին՝ այդպիսով նպաստելով հայ ժողովրդի զարգացմանն ու առաջընթացին:<sup>185</sup>

<sup>183</sup> «Երկունք», 1914, թիվ 12, էջ 278-283:

<sup>184</sup> Նույն տեղում, 1914, թիվ 9, էջ 233-235:

<sup>185</sup> Նույն տեղում, 1913, թիվ 4-5, էջ 74:

# ՀՅՂ Կ. ՊՈԼՍԻ ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ 1918-1924 ԹԹ.

## «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹԸ (1918-1924 ԹԹ.)

1918-1924 թթ. Կ.Պոլսում, որպես «Ազատամարտի» իրավահաջորդ, բայց ոչ որպես ՀՅՂ պաշտոնաթերթ, հրատարակվել է «Ճակատամարտ» օրաթերթը զրեթե այլ խմբագրակազմով և նոր բաժիններով ու թեմաներով: Օրաթերթի խմբագիրը Հակոբ Ճուլյանն էր: Պատասխանատու տնօրեններն էին Մանուկ Ասլանյանը և Շավարշ Մխաթյանը, իսկ արտոնատերը՝ Վրթանես Մարտիկյանը:

Հակոբ Սիրունին (Ճուլյանը) ծնվել է 1890 թ. ապրիլի 19-ին Ատաբազար գյուղաքաղաքում: Նախնական կրթությունն ստացել է Հրեշտակապետաց թաղի դպրոցում: Սովորել է Եսայան (1901- 1904 թթ.) և Կենտրոնական (1905- 1909 թթ.) վարժարաններում, ապա՝ Կ. Պոլսի համալսարանի իրավաբանական բաժնում (1909-1913 թթ.): 1908 և 1913 թվականներին Հ. Սիրունին բանտարկվել է որպես թուրքական պետության համար քաղաքականապես անվստահելի տարր: 1914 թ. նա զորակոչվել է օսմանյան բանակ, որտեղից փախել է՝ խուսափելով գինվորական ծառայությունից: Նա 1914-1918 թթ. ապրել է Կ. Պոլսի տարբեր թաքստարան - բնակարաններում: 1918-1920 թթ. Սիրունին ակտիվորեն մասնակցել է Կ. Պոլսում այդ տարիներին ծավալված ազգային-հասարակական կյանքին: 1922 թ. Հ. Սիրունին մշտական բնակություն է հաստատել Ռումինիայում: 1944 թ. նա իր քաղաքական հայացքների համար աքսորվել է Սիբիր և տասը տարի անցկացրել աքսորավայրում: 1965-1971 թթ. Հ. Սիրունին ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հրավերով հինգ անգամ այցելել է Հայաստան: Նա վախճանվել է 1973 թ. ապրիլի 7-ին Բուխարեստում:

Հ. Սիրունին գրական և գիտական ասպարեզում երևացել է 1905-1907 թթ.՝ հանդես գալով որպես բանաստեղծ, արձակագիր, թատերագիր, թարգմանիչ, բանասեր, պատմաբան, արևելագետ: Նա նպաստել է հայ - ռումինական գրական ու գիտական կապերի զարգացմանը: Հ. Սիրունին խմբագրել է տասնյակ պարբերականներ: Նա թղթակցել է

ավելի քան 100 անուն հայերեն, ֆրանսերեն և ռումիներեն թերթերի և հանդեսների: Արժեքավոր են Սիրունու՝ «Պոլիս և իր դերը» բազմահատոր գիրքը, հայ ազգային ու մշակութային մի շարք գործիչներին, ինչպես նաև ռումինացի հայագետ Նիկոլա Եորգային նվիրված աշխատությունները, «Ինքնակենսագրական նոթերը», «Հուշերու գիրքը»:

1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի հաշտության դաշնագրի ստորագրումից հետո Հ. Սիրունու և նրա մի շարք ընկերների ջանքերով լույս է տեսնել «Ճակատամարտ» օրաթերթը: Սիրունին այդ նախին վկայել է իր հուշերում. «Առաջին հերթին մեր մտահոգությունն եղաւ «Ազատամարտը» վերսկսիլը՝ դաշնակից մարտնաւերուն Պոլիս մտած օրն իսկ: Իմ մօտս կանչեցի կարգ մը բարեկամներ... և հրաւիեցի զանոնք հիմնադրամ մը կազմել իսկոյն՝ որպէսզի կարենանք թերթը վերսկսիլ: «Ճակատամարտ» կոչեցինք զայն՝ ի նմանութիւն «Ազատամարտին»: Բայց, ավա՜ղ, ուժեր չունէինք զոնէ կարենալ քիչ մը նմանելու համար «Ազատամարտին»: Մանաւանդ որ Շաւարշն ալ դեռ արծակուած չէր բանտէն: Բոլորովին սկսնակ ուժեր շուրջս ժողվեցի,- Գուրգէն Մխիթարեանը, Մանուկ Ասլանեանը, Արտաշէս Վանարեանը և այլք, որոնք պիտի հասուննային յետոյ: Առաջին թիւը լոյս տեսաւ 1918 յոյնմբեր 20-ին: Քիչ յետոյ Շաւարշն ալ ելավ բանտէն ու միասին վարեցինք այլևս թերթը: Խմբագրականները կը գրէինք փոխն ի փոխ»:<sup>186</sup> Նորաբաց թերթն ունեցել է 3 անվանում՝ «Արդարամարտ» (1918 թ. թիվ 1-12), «Արիամարտ» (1918 թ. թիվ 13-32), «Ճակատամարտ» (1918 թ. թիվ 33-ից մինչև 1924 թ.): Օրաթերթի անվանափոխությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ «թուրք իշխանությունները երկիցս փակեցին թերթը»:<sup>187</sup>

Օրաթերթի աշխատակիցները Մեծ եղեռնից մազապուրծ եղած արևմտահայ ճանաչված և հայտնի գրողները, հրապարակախոսները և մտավորականներն էին: «Ճակատամարտի» էջերում հանդես են եկել Շավարշ Մխաթյանը, Երվանդ Օտյանը, Թեոդիկը (Թեոդորոս Լաբձինձյանը), Արամ Չարգը (Վտարանդին), Սարգիս Գլգճյանը (Ծերուկը), Մկրտիչ Պարսամյանը, Գևորգ Մեսրոպը, Ենովք Արմենը, Վահան Շահրիմանը և ուրիշներ: «Ճակատամարտում» պահպանվել էին «Ազատամար-

<sup>186</sup> Յ. Սիրունի, «Ինքնակենսագրական նոթեր», Երևան, 2006, էջ 204-205:

<sup>187</sup> Նույն տեղում:

տի» ավանդություններն ու բաժինները: Վերջիններին ավելացել էին նորերը՝ «Մեր խոսքը» խորագրով ամենօրյա խմբագրականները, «Առտվան տոմսերը», «Եղեռնապատումը», «Վերապրողները», «Հայաջինջ սարսափները», «Հայկական դատը գաղութներու մեջ», «Շարժումը հայ գաղութներու մեջ», «Մեր գաղութները և անոնց կյանքը», «Կփնտրվինը», «Կյանքը Հայաստանի մեջ», «Հայաստանի խորհրդարանի նիստերը» և այլն: Ազգային-մշակութային կյանքի խաթարման պստճառով օրաթերթում մինչև 1919 թ. նոյեմբեր ամիսը չկան մշակութային ուղղվածությամբ նյութեր: «Ճակատամարտի» համար առաջնահերթ էին Հայ դատի պաշտպանության, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին և իրագործողներին միջազգային դատարանի կողմից պատժի ենթարկելու, հայ ժողովրդի կրած մարդկային, նյութական և բարոյական կորուստների փոխհատուցման, հայ տարագիրների ներգաղթի կազմակերպման, անկախ և միացյալ Հայաստան հիմնելու նպատակները: «Ճակատամարտում» մեծ տեղ են գրավել Հայաստանի Առաջին Հանրապետության կյանքի համարյա բոլոր ոլորտների լուսաբանումները: «Հայաստանը կազմելու համար» խմբագրականում «Ճակատամարտը» պարզաբանել է իր ընտրած ուղեգիծը. «Տնորք մը ց' այլեւս Անկախ Հայաստանը: Բայց՝ զգոյշ, արբենալու ծամը ց' այս: Երբ որ մեզ հրաւինն Հայաստանը կազմելու, կարենանք ասել առանց շիկնելու.

Ահա մեր բաժինը Հայաստանի համար,- պահեցինք ինչ որ մնացած էր. ահա որբեր - վաղուան ցուլքերը, ահա տարագիրները անդրանիկ ուխտաւորները, և ահա մենք՝ բախտաւորներս, որ կուզենք մեր Հայրենիքին հիմերը դնել»:<sup>188</sup>

1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Ճատատամարտում» հրատարակված նյութերը նվիրված են այդ շրջանում հայությանը հուզող առավել էական խնդիրներին: Թվարկենք մի քանիսը.

1. Հայոց ցեղասպանությունն ապացուցող վավերագրերի, գաղտնի փաստաթղթերի, ականատեսների վկայությունների հրապարակում,

2. Թուրքիայում 1918 թ. ստեղծված՝ Հայկական ջարդերի և տարագրության քննիչ մարմնի գործունեության ներկայացում,

<sup>188</sup> «Արիսմարտ», 1918, քիվ 28:

3. հայոց Եղեռնի կազմակերպիչների ու պատասխանատուների փնտրտուք,

4. Հայ դատի և Եղեռնը վերապրածների իրավունքների և շահերի պաշտպանություն,

5. հայ համայնքի կամ կոտորածից հետո իրենց բնակավայրերը վերադարձող հայերի հիմնահարցերի և թուրքական կառավարության կողմից դրանց «լուծման» ուղղությամբ տարվող աշխատանքների վերլուծություն,

6. անդրադարձ թուրքիայի քաղաքական կյանքին,

7. Հայաստանի առաջին հանրապետության ներքին ու արտաքին քաղաքական կյանքի լուսաբանում:

Մուդրոսի գինադարարից հետո Կ.Պոլսում համեմատաբար «նպաստավոր» պայմաններ էին ստեղծվել մամուլում Եղեռնը վերապրողների խնդիրների արծարծման համար: Այդ տարիները կարծես նմանվում էին 1908 թ. հուլիսյան հեղաշրջմանը հաջորդած ժամանակահատվածին: «Գինովութեան նոր շրջան բացուեր էր: Ճիշտ ինչպէս որ եղեր էր 1908 յուլիսին... Հիմա ալ ազատութիւնը եկեր էր, բայց ի՛նչ սպանդէ մը յետոյ : Մեր գինովութեան մէջ, անգամ մը ևս կուրցեր էինք մենք: Մեզի այնպէս կը թուէր թէ պիտի կարենանք աղկաղկ մեր ուժերով նոր կեանք մը կառուցանել: Մէկ կողմէ մեզ կ'ոգևորէր Հայաստանը գոր դէպքերը ստեղծեր էին Արարատի շուքին տակ, և միւս կողմէ կը հաւատայինք դեռ Եվրոպայի մեղրածորան խօսքերուն, որոնք լրիւ Հայաստան մը կը խոստանային մեզ՝ ի վարձ մեր այնքան զոհաբերութեանց», - գրում էր Հ. Սիրունին:<sup>189</sup>

«Արդարամարտը» 1918 թ. նոյեմբերի 22-ի՝ «Ալ կախաղան չկա, ինչու՞ էք կեցեր» խմբագրականում անդրադառնում էր թուրքիայի քաղաքական կացությանը. «Չորս տարի շարունակ պապանձեցաւ ամէն լեզու: Ինչու՞: Որովհետեւ հալածանք ու բանտ, աքսոր ու կախաղան կար: Անցաւ տառապանքի շրջանը: Համաձայնութեան ջախջախիչ յաղթանակը բացաւ լեզուները, որոնք պապանձած էին. բոլորը սկսան խօսիլ»:<sup>190</sup> Օրաթերթն առաջին համարներից սկսած՝ նույնպես օգտվել է ընձեռված խոսքի ազատության իրավունքից: Այն ոչ միայն ներկայացրել է հայ ժո-

<sup>189</sup> Յ.Սիրունի, նշվ.աշխ., էջ 205:

<sup>190</sup> «Արդարամարտ», 1918, թիվ 3:

ղովրդի նկատմամբ թուրքական պետության կողմից մշակված և իրագործված ցեղասպանությունն ապացուցող փաստեր, այլև պատասխանատվության է կանչել մեղավորներին: «Լուր տվեք մեզ անոնց մասին» խմբագրականում նշվում էր, թե չորս տարի էր, ինչ լուր չունեին հայ ազգի փառավոր գավալկներից. «Ու՞ր տարիք զանոնք, դուք, որ ձեր ցեղին տխուր արգանդն չկրցաք մէկ հիւլէն իսկ ստեղծել այն անմահներուն զորս երամ-երամ իրենց օճախէն և մեր սրտերէն ժողվեցիք ու զրկեցիք հեռաւոր անապատներուն ու հեռաւոր գեհեներուն: Ու դուք, որ մեծ ճիւղներուն յաջորդեցիք ու բազմեցաք անոնց սեւ-ւ աթոռներուն վրայ, ձեզի՛ ենք: Հաշի՛ւ տուէք մեզ՝ մեր մեծ եղբայրներուն մասին»: <sup>191</sup> «Մեր դատը» խորագրի ներքո օրաթերթում տպագրվել են նյութեր, որոնցում պատկերացում են տվել արևմտահայության կրած քաղաքական, տնտեսական, նյութական, ֆիզիկական և բարոյական վնասների մասին: Օրինակ՝ «Հայուն վնասները» վերլուծական հոդվածում այդ ամենը երևում է խոսուն թվերի ձևով: <sup>192</sup> Հոդվածում ամփոփված են հանրաճանաչ իրավաբան Հմայակ Խոսրովյանի այն դասախոսության հիմնական դրույթները, որով նա հանդես էր եկել Կ.Պոլսի իրավաբանական վարժարանի հիսունից ավել հայ շրջանավարտների առջև: Հ. Խոսրովյանը օգտվել էր «Կապույտ գրքում» Ջեյմս Բրայսի կողմից ներկայացված փաստերից: Այդ փաստերը ոչ միայն «անժխտելի էին ու պաշտօնական», այլև բավական արժեքավոր էին, որովհետև հավաքվել էին Մեծ եղեռնից անմիջապես հետո, երբ մարդկանց հիշողությունները թարմ էին, իսկ «թափուած արիւնը տակաւին չորցած ցէր»: Փաստերի արժեքը մեծ էր նրանով, որ դրանք հավաքվել էին տարբեր վայրերում ու տարբեր աղբյուրներից, որոնք երբեք իրար հետ կապ չէին ունեցել, բայց բոլոր վկաները նույն բանն էին ասել: Հոդվածագրի կարծիքով, որպեսզի Հայաստանը վերականգնվեր և վերանորոգվեր, անհրաժեշտ էր ճշտել, թե «Մեծ եղեռնին մէջ Հայութեան կրած վնասները ո՞րչափ են և ի՞նչ կերպով պէտք է դարմանել»: Այս հարցադրումների հետ անմիջականորեն կապված էին վնասների հատուցման և պատասխանատուների ճշգրտման խնդիրները: Հ. Խոսրովյանը ցի ընդունում այն տեսակետը, թե միայն իթթիհատական կառավարության ներկայացուցիչները պետք է կրեին Հայոց եղեռնի

<sup>191</sup> «Արդարամարտ», 1918, թիվ 8:

<sup>192</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 48:

պատասխանատվությունը, իսկ թուրքական պետությունը՝ ոչ: Օգտվելով քաղաքակիրթ պետությունների օրենքներից՝ նա պնդում էր, որ «թուրք պետութիւնը իր հաւաքական մարմիններու ներկայացուցիչներուն գործած շահատակութեանց, ապօրինութեանց և վայրագութեանց պատասխանատուն է. այս բանը կ'ըսենք հիմնուելով այն վերջին օրէնքին վրայ զոր հաստատած է Փարիզի Օրէնագիտական Կաճառը և որով պետութիւնը պատասխանատու կը նկատուի իր կառավարական ներկայացուցիչներու գործունէութեանց համար»:<sup>193</sup>

Եղեռնի պատասխանատուների պատասխանատվության հարցը քննարկելուց հետո իրավաբան Հ. Խոսրովյանը բարձրացնում էր մի քանի հարց. արևմտահայերն իբրև փոխհատուցում ի՞նչ և որքա՞ն պիտի պահանջեին ու ի՞նչ դատարանի միջոցով նրանք պիտի պաշտպանեին իրենց դատը: Կնասների չափը պարզելու համար հողվածագիրը հանդես էր գալիս թվային տվյալներով: «Հայերու կորսնցուցած կարասին, զգեստեղէնն ու զարդերը միայն, ամէնէն համետտ հաշիւով 385 միլիոն ոսկիէն անելի պիտի ըլլան: Կորսուողները առնուազն մէկ միլիոն ենթադրելով ու զանոնք առնուազն 200000 տուն հաշուելով և իւրաքանչիւր տունի համար 300 մետաղ ոսկի կարասիի արժէք դնելով, կ'ունենանք 60 միլիոն ոսկիի գումար մը, թղթադրամի հաշուով՝ 300 միլիոն: Եթէ իւրաքանչիւր մարդու ունեցած զգեստեղէնը 5 ոսկի գնահատենք, կ'ունենանք 5 միլիոն ոսկի (ներկայ հաշուով՝ 25 միլիոն): Ենթադրելով որ կորսուողներուն 600 հազարը կին ըլլան և ատոնց իւրաքանչիւրը զոնէ 20 ոսկիի զարդեղէն ունեցած ըլլայ, կ'ունենանք 12 միլիոնի գումար մը, որ ներկայ հաշուով պիտի արժէ 60 միլիոն թղթադրամ»: Այս ամենին Հ. Խոսրովյանն առաջարկում էր ավելացնել հայ վաճառականների խանութների, հայ արհեստավորների արհեստանոցների, հայկական վանքերի, եկեղեցիների և հայկական կրթօջախների գույքային հարստության արժէքը, որը մոտավորապես հասնում էր 250 միլիոնի: Այս տվյալների մասին պատկերացում տալուց հետո Հ. Խոսրովյանն անդրադառնում էր այն պահանջներին, որոնք հայ ժողովուրդը պիտի ներկայացներ ոչ թե թուրքական, այլ միջազգային վստահություն ու հեղինակություն վայելող դատարանին, որի բոլոր անդամները «գործին պահանջած բարոյական և իրաւա-

<sup>193</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 48:

գիտական պայմանները պէ տք է լրացնելին»: Այդ դատարանում հայ ժողովուրդը պիտի հանդես գար հետևյալ հիմնական պահանջներով.

- տարագրության պատրվակով ջարդված կամ հոգնությունից ու չարչարանքներից, սովից և հիվանդություններից բոլոր մահացածների կյանքի արժեքի կամ գնի հատուցում,
- բոլոր անշարժ գույքի վերահաստատում կամ հատուցում,
- բոլոր շարժական գույքի վերահաստատում կամ հատուցում,
- տարագրության և բանտարկության հետևանքով «ամսականի, առետուրի և աշխատութեան բոլոր կորսուած շահերուն հատուցումը»:<sup>194</sup>

«Արդարամարտը» հաշիվ է պահանջել թուրքական կառավարությունից: Վահան Շահրիմանի «Դժոխային ծրագիրը» վերլուծական հոդվածում այդ մասին գրված է. «1915-ի սեւ եղեռնը՝ անհատական վատություն մը ք: Անիկա՝ կատարելագործեալ շարունակութիւնն է պետական հայահալած ծրագրին: Այդ ծրագրին գոյութիւնը ուրացած են միշտ թուրքերը: Բայց անիկա ծանօթ է ամբողջ քաղաքակիրթ աշխարհին: Օսմանեան դահլիճները՝ իբր նուիրական ժառանգութիւն մը՝ իրարու փոխանցած են այդ գաղտնի ծրագիրը, որ հայոց եղերական կործանումը կը պատրաստէր... Հայերը բնաջինջ ընելու ծրագր'ը մը կայ, առաջուց պատրաստուած: 1915-ին, այդ ծրագրին տէր կեցան դարձեալ թուրք վարիչները իրենց բոլոր շրջապատով հաւաքաբար, մինչեւ 1918, մինչեւ Մէհմէտ Թալէաթ դահլիճին խայտառակ տապալումը: Եւ ուրեմն, անո՛նք, անհատաբար թէ հաւաքաբար, պատասխանատու են բոլոր հայասպան չարիքներուն, զորս ի զուր պարտկել կը ջանան»:<sup>195</sup> Ժամանակի հրամայականով է, ասես, թուրքական «Սապահ» թերթն իր խմբագրականում ընդունել Հայոց ցեղասպանությունը: Այն թվարկել է դրա կազմակերպիչների անունները: Այդ խմբագրականը տպագրված է «Արդարամարտի» նոյեմբերի 28-ի «Մամուլը» բաժնում: Մեջբերենք հատված. «Այսօր արեւի պէս պարզ իրողութիւն մը կայ մէջտեղ որ կարելի ք ուրանալ: Սայիտ Հալիմ և Թալէաթ փաշաներու կառավարութիւնները, իրենց անի-

<sup>194</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 48:

<sup>195</sup> «Արդարամարտ», 1918, թիվ 3:

ծեալ սիրտերէն սոսկալի գաղափար մը ծնած են,- պատեարագմը պատրուակ ընելով քրիստոնեաները՝ մանաւանդ հայերը քել մէկ նահանգէն միւսը, մինչեւ արաբական անապատները, և այդ տարագրութեան ընթացքին գազանաբար, մարդկային ըմբռնողութենէն դուրս, միջին և ներկայ դարերու մէջ մնանը չտեսնուած ձեւերով սպաննել, ո՛չ միայն այրերն ու երիտասարդները, այլ նաեւ ծծկեր երեխաները, կիները, անկար ծերերը, վերջապէս հայ ազգը իր արմատէն չորցնել և քանդել»։<sup>196</sup>

«Արիամարտի» 1918 թ. դեկտեմբերի 13-ի՝ «Ընթացիկ կյանք» բաժնում տպագրված են վավերագիր 2 փաստաթուղթ։<sup>197</sup> Դրանք գտնվել էին Իթթիհատի կենտրոնական գրասենյակում կատարված խուզարկության ժամանակ։ Այդ փաստաթղթերը կամ ծածկագիր հեռագրերը «կապացուցանէին նոյն կուսակցութեան հայկական ջարդերուն մէջ կատարած դէրը... Յայտնի է թէ ջարդերը կազմակերպելու համար Իթթիհատի կեդրոնէն մարդիկ դրկուած և չէթաներ կազմակերպած են։ Կարգ մը նահանգներու մէջ Իթթիհատի ներկայացուցիչներն ալ մասնակից են այս գործին»։<sup>198</sup> Նշվում էր նաև, թե «Թալէաթ փաշա հետեւեալ հեռագիրը քաշած է Մալաթիոյ Իթթիհատի ակումբին.- «Ոչնցացուցէ՛ք այն բոլոր հայերը որոնք հող հաւաքուած են և պիտի հաւաքուին, բոլոր նիւթական եւ բարոյական պատասխանատուութիւնը իմ վրայ ըլլալու պայմանաւ»։ Ինչպէս յայտնի է, հայկական ջարդերը կազմակերպելու համար, պատերազմի սկիզբէն իսկ, Տօքտ. Պէհաէ տտին և Տօքտ. Նազըմ Արեւելեան Նահանգները կը պտըտէին։ Տօքտ. Նազըմ՝ Պէհաէ տտին Շաքիրի հետեւեալ ծածկագիր հեռագիրը դրկած է. «Կը պահանջուի հայերը տարագրել և վտանգաւոր նկատուածները ոչնչացնել։ Արդեօք այսպէս կ'ըլլա՞յ եղբայրս»։<sup>199</sup> Եվս մեկ վավերագիր-փաստաթուղթ է տպագրված իր թուրքերէն բնագրի հետ «Ճակատամարտում» 1919 թ. մարտի 24-ին «Կերջին լուր» բաժնում։ Այդ փաստաթուղթը կամ հայաջինջ ծրագիրը մշակել էին «Թալէաթ և ընկերները, Թուրքիոյ Հայ ժողովուրդը ոչնչացնելու համար»։<sup>200</sup> Փաստաթուղթը բաղկացած էր 10 հոդվածից։ Համաձայն հոդված առաջինի, հրամայվում էր «խափանել բոլոր Հայ ընկերակցու-

<sup>196</sup> «Արդարամարտ», թիվ 8:

<sup>197</sup> «Արիամարտ», 1918, թիվ 19:

<sup>198</sup> Նոյն տեղում:

<sup>199</sup> Նոյն տեղում:

<sup>200</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 112:

թինները ու անոնց վարչական մարմիններուն և անոնց մէջ, ի վաղուց, Իթթիհատի կառավարութեան հակառակ աշխատողները ամբողջովին ձերբակալելով Մուսուլի, Պաղտատի պէս նահանգները ղրկել և ճամբան կան այն տեղերը փձացնել»:<sup>201</sup>

Այս վավերագիրն ունի պատմական կարևոր արժեք, ուստի ստորև այն ներկայացնում ենք այնպէս, ինչպէս տպագրւած է «Ճակատամարտ» օրաթերթում:

«Յօդ.2.- Բոլոր Հայոց ամէն տեսակ գէնքերը հաւաքել:

Յօդ.3.- Մասնաւոր պատշաճ միջոցներով իսլամական կարծիքը պատրաստել: Վանի, Էրզրումի և Ատանայի պէս տեղեր, ուր Հայերը արդէն իսկ իրենց ընթացքովը իսլամներուն պժգանքը շահած են, կազմակերպեալ դէպքեր ստեղծել, ինչպէս Ռուսիա ըրաւ Պաքուի մէջ:

Յօդ.4.- Վանի, Էրզրումի, Մամիւրէթ-իւ-Ազիզի և Պիթիսի պէս նահանգներու մէջ գործադրութիւնը բոլորովին ժողովուրդին թողլով, զօրքերն ու կարգապահական ուժերը արտաքուստ ջարդերը արգիլելու գործածել: Իսկ Ատանայի, Սվազի, Պրուսայի, Նիկոմեդիոյ և Իզմիրի պէս տեղերը ընդհակառակը իսլամներուն օգնել զինուորական ուժով:

Յօդ.5.- Բնաջնջումը գործադրել մասնաւորաբար 50-էն վար այրերու և դպրոցի ուսուցիչներու վրայ: Աղջիկներն ու մանուկները թողուլ՝ իսլամացնելու համար:

Յօդ.6.- Փախչելու յաջողածներուն ընտանիքը մէջտեղէն վերցնել և միջոցներ ձեռք առնել՝ երկրին հետ անոնց կապը բոլորովին խզելու համար:

Յօդ.7.- Հայ կառավարական պաշտօնեաները, պատճառաբանելով թէ լրտեսութիւն ըրած են, վտարել բոլոր պաշտօնատուներէն:

Յօդ.8.- Բանակին մէջ գտնուողներուն պատշաճ ձեւով զինուորական իշխանութեանց կողմէ բնաջնջել:

Յօդ.9.- Գործողութիւնը ամէն կողմ միաժամանակ սկսիլ և այսպէս ինքնապաշտպանութեան ժամանակ ջթողուլ:

Յօդ.10.- Այս հրահանգին գաղտնի և միայն մէկ երկու հոգիի միջեւ մնալուն վերջին ծայր հոգ տանիլ»:<sup>202</sup>

<sup>201</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 112:

<sup>202</sup> Նույն տեղում:

Վավերագիր-փաստաթղթերին զուգահեռ՝ «Ճակատամարտ» օրաթերթը տպագրել է նահատակ հայ մտավորականների ցուցակները: Օրինակ՝ նահատակ հայ գիտնականների ցուցակները տպագրված են «Ճակատամարտի» 1919 թ. 218 և 233 համարներում: Այդ մեծարժեք կրուստների ցանկի վերջում ցուցակագիր Սեպուհ Ստեփանյանը հակադարձում էր թուրքերի այն մեղադրանքներին, թե հայերն էին սպանել թուրք գիտնականներին: Նմաններին նա դիմում էր հարցով. «Խոնարհաբար կը հարցնենք, թե Հայերը քանի՞ թուրք գիտուն սպաննած են: Պիտի կրնա՞ն ցուցնել մեզի օրինակ մը միայն»:<sup>203</sup>

1918 թ. Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում կատարված տեղաշարժերը հնարավորություն են տվել Ցեղասպանությունը վերապրողներին ստեղծել տարաբնույթ մարմիններ, կազմակերպություններ, հանձնաժողովներ, որոնց միջոցով նրանք փորձել են նպաստել ոչ միայն Եղեռնի կազմակերպիչների հայտնաբերմանը և դատապարտմանը, այլև՝ հայապահպանությանը, հայ տարագիրների վերադարձին ու ազգային ներքին խնդիրների լուծմանը: Այս առումով հասկանալի են օրաթերթի կողմից թեմաների և արժարժվող հարցերի շրջանակի ընտրության չափորոշիչները: Օրինակ՝ «Արդարամարտն» ընթերցողներին տեղեկացրել է հայ մարտիրոսագրության մասին փաստաթղթերի, վավերագրերի, ականատեսների վկայությունների հավաքմամբ զբաղվող հանձնախմբի ստեղծման մասին: Այդ հանձնախումբը հայկական թերթերի միջոցով կոչով դիմում էր բոլոր «անոնց որ ականատես վկաներն եղան հայ տիեզերասասան եղեռնին»:<sup>204</sup> Նրանց խնդրվում էր պատասխանել հետևյալ հարցերին.

\* տեղահանությունից առաջ ձեր քաղաքում կամ գյուղում ի՞նչ դեպքեր են պատահել, ի՞նչ հայտարարություններ են եղել, որոնք ձեր կարծիքով կարելի է համարել ջարդի կամ աքսորի նախանշաններ,

\* տեղահանությունից առաջ կամ դրա ընթացքում քանի՞ հայ մտավորական կամ ականառու անձինք են ձերբևկավել, գիտե՞ք նրանց անունները, ի՞նչ եղան նրանք հետո,

<sup>203</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 233:

<sup>204</sup> «Արդարամարտ», 1918, թիվ 3:

\* տեղահանությունը ո՞ր թվականին է տեղի ունեցել, ովքե՞ր էին այն ժամանակ ձեր բնակավայրի կառավարիչը կամ մյուսորդը և պաշտոնական գլխավոր անձինք, այժմ նրանք որտե՞ր են գտնվում,

\* ներկայացրեք տեղահանության կամ ջլարդի պատմությունը, քանի՞ հոգով եք ճամփա ընկել, որտե՞ղ եք համսխմբվել, յուրաքանչյուր հանգրվանում քանի՞ հոգի եք մնացել,

\* ձեր կարծիքով, ովքե՞ր են հանցավոր, նշե՞ք նրանց անունները և այսօրվա հասցեները,

\* թուրք ժողովուրդը, գյուղացիները ի՞նչ մասնակցություն են ունեցել ջարդերին,

\* ի՞նչ փաստաթղթեր կան ձեզ մոտ, ունե՞ք լուսանկարներ,

\* կա՞ն վկաներ, եթե՝ այո, ապա՝ հայտնեք նրանց՝ անուններն ու հասցեները,

\* ձեր ծանոթների մեջ որքա՞ն են բռնի տեղահանվածները, ինչպիսի՞ն է վերաբերմունքը նրանց նկատմամբ,

\* ինչպիսի՞ն է տարւսգրված հայերի նյութական ու բարոյական ներկայիս վիճակը,

\* ճանաչու՞մ եք հայանպաստ գործունեությամբ աչքի ընկած անձանց, ովքե՞ր են և այժմ որտե՞ղ են գտնվում, ի՞նչ հայանպաստ գործ են նրանք արել և այդ ընթացքում ի՞նչ հաջողությունների են հանդիպել և ու՞մ կողմից,

\* դուք անձամբ ի՞նչ չափով, ո՞ւմ միջոցով և ի՞նչ աղբյուրներից եք նյութական օժանդակություն ստացել:<sup>205</sup>

Վերոհիշյալ հանձնախմբին օգնելու նպատակով՝ «Ճակատամարտը» տպագրել է իր աշխատակիցների կուրմից իրականացված լրագրողական հետաքննության արդյունքները: Համսձայն «Ճակատամարտի» 1922 թ. հրապարակումների՝ «զինադադարի վերջին երեք տարիներու ընթացքին, զրեթէ անկարելի եղած է լուր ստանալ արևելեան նահանգներին»:<sup>206</sup> Այնտեղ բնակվող 1922 թ. արդեն սակավաթիվ հայերը «տեսակ մը բանտային կեանք է որ կը վարեն...Անոնք – մեծ լճատով կիներ և մանուկներ – ամէն ժամ կը դողան իրենց կեանքին վրայ: Շատերը կրօնափոխ են, միւսները՝ ըայաներ, բառիս միջնադարեան ինստտով: Անոնք

<sup>205</sup> «Արդարամարտ», 1918, թիվ 3:

<sup>206</sup> «Ճակատամարտ», 1922, թիվ 1141:

լուր անգամ չունին արտաքին աշխարհէն. և թերև չգիտեն թէ իրենցմէ դուրս հայութիւն մնացե՞ր է»:<sup>207</sup> «Ամայի և գերի հայրենիքը» խմբագրականում «Ճակատամարտը» տպագրել է բաղեջի թուրք զինվորականի կողմից իրենց տրամադրված տեղեկությունները բնօրրանի մասին: Ըստ այդմ՝ քանդված և անբնակ էին Վանը, Մուշը, Սասունը, Բաղեշը և հարյուրավոր հայկական գյուղեր: Եթե 1914 թ. մարդահամարի տվյալներով Վանի նահանգում հայերի թիվը հասնում էր 185000-ի, իսկ Բաղեշում՝ 180000-ի, ապա 1922 թ. հայերը նշված վայրերում «զանցառելի քանակութիւն մը կը կազմէին»:<sup>208</sup> Բաղեշում և շրջակա Թախտալու, Խարդկող ու Մորխ գյուղերում բնակություն էին հաստատել Իզմիրի և Գոնիայի շրջաններից այդտեղ աքսորված 12000 հույն ընտանիք: Բաղեշում հույներից բացի ապրում էին տեղաբնակ թրքախոս քրդեր և կրոնավորիս հայկանայք, երեխաներ ու արհեստավոր տղամարդիկ՝ թվով 200 հոգի: Բաղեշի պետական հիմնարկները տեղակայված էին նախկինում հայերին պատկանող մեծ շենքերում: Քաղաքում գործում էին մի քանի դպրոց ու շուկան: Քանդված էր պետական տպարանը, և լույս չէր տեսնում որևէ թերթ: Անմարդաբնակ էին Բաղեշի շրջանի հայկական գյուղերը, բացառությամբ Փարխանդ և Ղութլիկ գյուղերի, որոնցում բնակվում էին քրդական ընտանիքներ: Խիզանի շրջանը գտնվում էր շեյխ Սեիդ Ալիի՝ ավագակությամբ զբաղվող տղամարդկանց խմբի իշխանության ներքո: Գյուզալգատեի և Տատիկի հայկական գյուղերը դարձել էին արոտատեղի քրդերի անասունների համար: Անմարդաբնակ էին անգամ Ռահվայի և Ախլաթի շրջանների հայկական մեծ գյուղերը՝ Ջրխոցը, Շամիրամը, Ուրդափը, Կծվակը, Ծղակը, Փրխուսը և Թեղուտը: 1500 հայեր էին մնացել Մուտկանում՝ դեռևս պահպանելով իրենց կրոնն ու ազգային դիմագիծը: Ավերակ էին դարձել Մուշ քաղաքի հայկական ու թուրքական թաղերի մեծ մասը: Մուշում անվնաս էին մնացել Բերդի թաղը և քաղաքի դաշտային մասը: Մուշում ապրում էին 250 թուրքական ընտանիք: Մշո դաշտի գրեթե բոլոր գյուղերը ամայի էին, թեև դրանցից շատերում քրդերի հետ ապրում էին հայեր՝ յուրաքանչյուր գյուղում 4-5 հոգուց մինչև 30-40 հոգի: Նրանք գործածում էին արաղչի և դեռևս դավանում էին իրենց կրոնը: Սասունը համարյա անբնակ էր, իսկ Բուլանուխում, Մանազկերտում և

<sup>207</sup> «Ճակատամարտ», 1922, թիվ 1141:

<sup>208</sup> Նույն տեղում:

Տուֆաղի, Բաղնոցի, Ալաշկերտի, Տիացինի, Բայազետի, Ապաղայի, Բերկրիի, Արճեշի շրջաններում բնակվում էին քրդեր ու թուրքեր:<sup>209</sup> Վան քաղաքի և Այգեստանի ազգաբնակչության մեծամասնությունը թուրքեր էին՝ մոտ 450 ընտանիք: Այնտեղ ապրում էին 1500 հայ, հիմնականում՝ կանայք ու երեխաներ: Տղամարդիկ թվաքանակով քիչ էին: Նրանք հայտնի արհեստավորներ էին և հենց այդ պատճառով փրկվել էին Եղեռնից: Վանում ևս չէր հրատարակվում պետական որևէ լրագիր: Այնտեղ գործում էին պետական հաստատությունները, բայց «ժողովուրդ չկար, գործ չկար»:<sup>210</sup> Այրված էր Վարազա վանքը: Բանդված ու ամայի էին Լին ու Կտուց անապատները, Աղթամարի վանքը: Կիսավեր էին Բերկրիի և Սարայի շրջանները: Նորդուզում և Շատախում հաստատվել էին քրդական աշիրեթներ: Այրված և կիսավեր էին Արտամետն ու Ոստանը: Գավաշում և Կարճկանում բնակվում էին քրդեր: Հայազուրկ էին Սոկսի և Կառկառի հայկական գյուղերը:<sup>211</sup>

«Արդարամարտը» իր «Հայաջինջ սարսափները» կամ «Վերապրողները» խորագրերի ներքո 1918 թ. առաջին համարներից սկսած տպագրել է ականատեսների վկայությունները իրենց բնակավայրում կատարված ջարդերի մասին: 1919 թ. այդ պատմություններին զուգահեռ ներկայացվել են հայերի հերոսական ինքնապաշտպանության դրվագները և անվանի ֆիդայիների քաջագործությունները: Չկա «Ճակատամարտի» որևէ համար, որտեղ տպագրված չլինեն նշված անձանց կամ հայ կամավորական ջոկատների ու խմբերի լուսանկարները: Այս կերպ օրաթերթը կարծես փորձել է ընթերցողներին և թուրքական կառավարող շրջանակներին հասկացնել, թե անկարելի է ոչնչացնել կամ կոտրել հայ ժողովրդի ազատատենչ ոգին: Մեծ է այս կարգի հողվածների ու լուսանկարների պատմական արժեքը: Դրանք այսօր կարելի է օգտագործել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում: Բերենք օրինակներ: «Ատաբազարի հայերը» թղթակցության մեջ «Ճակատամարտի» սեփական թղթակիցը պատմել է տեղի հայկական համայնքի մասին:<sup>212</sup> Նա գրում էր. «Ատափազար՝ Պոլիսի մօտ ամենէն հոծ հայ

<sup>209</sup> «Ճակատամարտ», 1922, թիվ 1139:

<sup>210</sup> Նույն տեղում, 1922, թիվ 1140:

<sup>211</sup> Նույն տեղում:

<sup>212</sup> «Արդարամարտ», 1918, թիվ 10:

բնակչութիւն ունեցող քաղաքն էր: 3500-էն աւելի հայ ընտանիքներ կային հոս, մօտաւորապէս 20.000-ի հասնող հայութիւն մը, տեղահանութենէն քիչ առաջ առաջնորդարանին կողմէ կատարուած վիճակագրութեան մը համաձայն: Այժմ, ամէն կողմէ քաղուած ճշգրիտ տեղեկատուութիւններ կը հաստատեն թէ տարագրուած երեք հազար հինգ հարիւրէ աւելի Ատափագարցի հայ ընտանիքներէն հազիւ 800-ի չափ միայն կրած է ճողոպրիլ... այս հայաջինջ ընդհանուր կոտորածէն, ու մնալ՝ ընդհանրապէս էսկիշէհիբէն Գոնիա ու շրջակայքը զանազան տեղեր... եթէ ասոնց վրայ աւելցնենք հրաշքով ողջ մնացած ընտանիքի բեկոր անհատները, ընդհանրապէս կիներ ու աղջիկներ՝ արաբներէ զոջուած կամ 10-20 դրուշի փոխարէն ծախու առնուած, ինչպէս նաև զինուորագրութենէ վերադարձող ու վերադառնալիք երիտասարդները- որոնց շատ շատերուն ընտանիքները՝ հայր, մայր, քոյր, եղբայր, կին ու զաւակներ, անխնայ ջարդուած են կամ Արաբիոյ անապատներուն մէջ սովամահ եղած մեռած- ընդամէնը կ'ունենանք Ատափարգարէն տարագրուած 20000 հայութենէն՝ 5000 միայն, այսինքն գրեթէ մէկ չորրորդը»:<sup>213</sup> Թղթակցութիւնից տեղեկանում ենք Ատաբագարի հայության տեղահանության մանրամասների մասին. «Հրացանի բուններուն, սօփաներու և խարազաններու հարուածներուն տակ, ասկէ երկուք ու կէս տարի առաջ, Ատափագարէն 3500 տուներ 3 օրուան մէջ պարպեցին ու քշեցին դէպի անստուգութիւն, դէպի մահ, դէպի զոլում» (նույն տեղում):<sup>214</sup>

«Արիամարտի» 1918 թ. դեկտեմբերի 13-ի համարում Պողոս Հաճյանը ականատեսի պատմածի հիման վրա ՚ գրել իր նյութը: Այն վերնագրված է՝ «Մուշի հայությունը տեղահան չեղավ, այլ ամբողջովին ջարդվեցավ»:<sup>215</sup> Այստեղ ասվում է, որ պատերազմի 1-ին տարում Մուշի գրեթէ բոլոր երիտասարդները զինվորագրվել էին: Կառավարությունը ժողովրդին ճնշում էր ծանր տուրքերով՝ առգրավելով գյուղացիների ու տեղիքի և սերմնացուի պաշարները: Դեպքերի վկան պատմում էր, որ 1915 թ. ամռանը Վարդավառի կիրակի օրը «յանկարծ անօրէն խուժանը, այր ու կին, մեծ ու պզտիկ մինչև զլուխնին զինուած մեր գիւղը լեցուեցան, ինչպէս շրջակայ մեր գիւղերը: Գիւղը ալան-թալանի տրուած կ'այ-

<sup>213</sup> «Արդարամարտ», 1918, թիվ 10:

<sup>214</sup> Նույն տեղում:

<sup>215</sup> «Արիամարտ», 1918, թիվ 19:

րի, գնտակը կարկուտի պէս կը տեղայ: Սպանուած սիրելիներուդ վրայ  
լալ անգամ չես ուզեր, սոսկումը մեծ է, ամէն մարդ իր հոգին ազատելով  
կը գբաղի: Գիւղին մէջ գտնուող այրերէն ոչ մէկն այլեւս ողջ չտեսայ»:<sup>216</sup>  
Նույն ականատեսի վկայությամբ ամբողջ քաղաքի Ձորի թաղը «որ Հայ  
կեդրոն կրնար համարուիլ», 3 օր շարունակ ռմբակոծվել է, և «տուն մը  
անգամ» կանգուն չի մնացել: Այս դեպքերից 10 օր հիւտո թուրքերը նո-  
րից հարձակվել էին Մուշի վրա: Ոստիկանների հսկողության տակ հա-  
վաքել էին քաղաքի բոլոր կանանց և աղջիկներին Ստեփան Սարգսյանի  
տան մեջ: «Հոն կը սկսի տռամին ամէնէն քստմնելին... Շատ փոքրիկ  
աղջնակներ այս տանջանքին տակ աւանդեցին իրենց մաքուր հոգին.  
քանի~ պառաւ կիներ մեռան զարհուրելի չարչարանքի տակ»: Հետո  
երկու խմբի էին բաժանել այս կանանց ու աղջիկներին: Գեղեցիկներին և  
երիտասարդներին ընտրում էին իրենց համար որպէս կին, իսկ մնա-  
ցածներին այրում էին Վառուկի Շահնագարի տանը: Ըստ որում նույն  
մահվանն էին արժանացել նաև առաջին խմբից նրանք, ովքեր հրաժար-  
վել էին ամուսնանալ թուրքերի հետ: Նրանց այրել էին Մուշի մոտ  
գտնվող Կառնեն գյուղում: Այդտեղ այրել են նաև Մուշ քաղաքի երևելի-  
ներից շատերի կանանց ու աղջիկներին՝ թվով 2000-ից ավելի: Սողոմ և  
Հունան գյուղերից բերված 100-ավոր կանանց էլ թուրքերը այրել են  
Կառնեն գյուղում գտնվող Պողոս Խաչատրյանի մարագում: Հողվածա-  
գիրը փաստում էր. «Ծառը արմատէն խլելու և աղբիւրը ակէն չորցնելու  
իթթիհատեան ծրագիրը բառ առ բառ գործադրուեցաւ Մուշի վրայ: Այս  
մեծ ջարդին ռահվիրան և ոգին կրնայ համարուիլ քաղաքիս փոխկառա-  
վարիչ, ժանտարմայի հազարապետ Վասիթ պէյ, Մուսա պէյ, Տէ վրիչ պէյ,  
Ֆալամագ, Հագզը Մուսա եւ այլն»: Վասիթ բեյի հրամանով սոսկալի  
տանջանքներով նահատակվում են «Վարդան վրդ. Յակոբեան ու Թօ-  
փալեան գերապայծառը: Ան էր որ հաւաքեց քաղաքին բարեկեցիկ դա-  
սակարգը՝ վեց հարիւրի չափ ու Պիթլիս դրկելու պատրուակով Հաւատ-  
տորիկ ձորին մէջ նահատակեց... Մուշը աւերակ մըն է այլեւս... Բայց Մուշ  
չի պիտի մեռնի. ժամանակ մը պիտի ապրի իր սգաւոր օրերուն մէջ մին-  
չեւ զան իր դարիպ տղաքները»:<sup>217</sup>

<sup>216</sup> «Արխամարտ», 1918, թիվ 19:

<sup>217</sup> Նույն տեղում:

1919 թ. հունվարի 3-ին «Հայաջինջ սարսափները» խորագրի ներքո «10000 հայութենեն հազիվ 800 ծեր և կին կմնան» վերնագրով նյութում «Ճակատամարտը» ներկայացրել է Կիլիկիայի շրջանի ջարդն ու աքսորը: Նշվում էր, թե որոշված էր սկզբում ոչնչացնել Ձեյթունը: Իթթիհատը հարվածը «հայուն սրտին տալ կուզէր: Ձէյթոն...Իթթիհատի կառավարութեան աչքի փուշը»:<sup>218</sup> Երկար դիմադրությունից հետո Ձեյթունն ընկնում է: Թուրքերը կրակի էին տվել քաղաքի վանքը, որի փլատակների տակ գոհվել էին այնտեղ ապաստանած կանայք, երեխաներն ու ծերերը: Ձերբակալել և Մարաշ էին տեղափոխել տեղի 60 հարուստ ու անվանի մարդկանց: «Քաղաքի մնացած ժողովուրդը ցրուեցին, և Ձէյթունի անունը Սիլվէյմանիյէ դրին: Ձէյթունի և ամբողջ Տարոսեան լեռնաշղթայի վրայ ոսկիի պէս շարուած 30-ի չափ հայ գիւղերու բնակչութիւնը մէկիկ-մէկիկ տեղահան ընել է բոլոր այր մարդիկը ճամբան, Մարաշի զօրանոցի ետեւի կողմը սպաննել է տք, մնացածները մերկ ու անօթի, ծեծի ու լլկումի տակ Մարաշ բերին և ասկից անորոշ ուղղութեամբ մը ճամբայ հանեցին: Ասոնցմէ ոչ մէկուն մասին այսօր լուր չունինք. միայն այսբանը լսեցինք որ Ձէյթունցիներէն մնացածները ճամբան ողջ-ողջ թաղեր են», - պատմում էր ականատեսը՝ Կիլիկյացին:<sup>219</sup> Նրա վկայությամբ, հետո հերթը հասնում է Մարաշին և մոտակա հայկական գյուղերին: Սկզբում Հալեպ էին քշել Մարաշի 7 երևելի հայ ընտանիքներին և տվել էին Ֆնտճագ, Քեշիֆլի և Թնկրլը հայկական գյուղերի տեղահանության հրամանը: Քեշիֆլեցիներն ու թնկրլեցիները ապաստանել էին Ֆնտճագում և մեծահարուստ Մինաս Քյահյանին ուղարկել էին Մարաշ՝ տեղահանությունը չեղյալ համարելու խնդրանքով կառավարությանը դիմելու համար: Երբ բանագնացը հասկացել էր իթթիհատականների բուն մտադրությունը, ասել էր. «Եթէ կառավարութեան նպատակն է անպատճառ մեզ սպաննել, թող զայ և մեր տուներու մէջ բռնի մեզ սպաննէ, մենք մեր օճախէն դուրս չենք ելլեր»: Այդպես էլ վարվել էին: Նրանք կես ժամ օրհասական դիմադրություն են ցույց տվել «ահագին թուով ոստիկան գինուորներին, շրջակայ թուրք հազարաւոր գիւղացիներէ կազմուած արաբառու խուժանին» և մի քանի վաշտ թուրքերին, ապա նահատակվել էին: Թուրքերը «կացինով, բիրով, դաշոյնով» սպանել էին շրջակա ան-

<sup>218</sup> «Ճակատամարտ», 1919, քիվ 40:

<sup>219</sup> Նույն տեղում:

տառներում պետության համար աշխատող 500 ֆնտճագցի գինվորներին և կախաղան էին հանել մի քանի հարյուր մարաշցի երիտասարդների: Այս դեպքերին հաջորդել էր մարաշցիների զանգվածային աքսորը: Իրարից առանձնացրել էին կանանց ու տղամարդկանց: Նրանց մի մասին ուղարկել էին « Տէր Ջօր, միս մասին՝ Սեդիա: Տէր Ջօր զացողներէն մեծ մասը ճամբան ապանուօեցան կամ գետը նետուօեցան: Իսկ Սուրիոյ անապատները հասնող քանի մը բեկորներ անոթութեան ու ահռելի թիֆիսին մանգաղովը հնծուօեցան»: Սպանվել էին նաև Ադանայի «երկաթուղիին վրայ, Իյենբիլի մէջ» աշխատող 7000 հայ երիտասարդներ: 100000 հայ բնակչություն ունեցող Կիլիկիայի շրջանից կենդանի էին մնացել 800 կանայք ու ծերեր, որոնք կարող էին լինել «արդար վկաները այդ մեծ եղեռնի իսկական պատասխանատուներուն»: Հողվածագիրը ցավով ավելացնում էր, որ նրանք դժվար թե կհամարձակվեին վկայություն տալ իրենց դահիճների դեմ: Չէ՞ որ Մարաշի ջարդերի կազմակերպիչներից մեկը՝ թնօք երեսփոխան Գատեր էֆենդին (Ճին Գատիրը), «տակալին այսօր Բերայի մայթերուն վրայ արծակ-համարծակ կպտտի»: Կիլիկիայի շրջանի հայության կոտորածների մյուս կազմակերպիչներն ու ղեկավարները նույնպես 1919 թ. դրությամբ պաշտոններ էին զբաղեցնում և հոխորտանքով էին խոսում ու սպառնում էին կենդանի մնացած հայերին:<sup>220</sup>

Ամեն դեպքում, ականատեսները հայոց Եղեռնի պատասխանատուներին պատժված և իրենց դատը պաշտպանված տեսնելու հույսը չէին կորցնում, իսկ նրանցից շատերը «Ճակատամարտում» պատմում էին հայաջինջ սարսափների մասին: Օրինակ՝ Մարիամ Գոզմանյանը ներկայացնում էր իր բնօրրանի՝ Կիրասոնի կոտորածը: Այդ պատմությունը նա ավարտում էր ջարդից փրկվածներին ուղղված կոչով. «Թէ ինչեր տեսան միս խումբերէ ողջ մնացողները, թող պատմեն ամբողջ մարդկութեան»:<sup>221</sup> Հատկանշական է այն հանգամանքը, որ բոլոր ականատեսները տվել են իրենց շրջանի, քաղաքի կամ գյուղի ջարդերի կազմակերպիչների ու ղեկավարների անունները՝ կարծես հավատալով, որ այդ հավաստի տվյալների հիման վրա վերջինները օրերից մի օր պիտի պատրժվեն, որքան էլ որ նրանք անպատիժ էին մնացել, ասենք՝ մինչև

<sup>220</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 40:

<sup>221</sup> Նույն տեղում, 1919, թիվ 54:

1920-ական թվականների կեսերը: Բացի այդ, անուններ տալով, նրանք ուզում էին ապացուցել, որ իրենց վկայությունները կեղծ ու հնարված չէին: Օրինակ՝ կիրասոնցի տարագրյալ կանանց խմբերից մեկին (ըստ վերոհիշյալ Մարիամ Գոզմանյանի վկայության) Ածպտերից Աղվանիս ընկած ճանապարհին գտնվող Խավախլխ կոչվող քարայրում թալանել, բռնաբարել ու շատերին սպանել էին կիրասոնցի թուրքերը: Նրանցից նշանավորներն էին Սարը Մահմուդզադե էշրեֆը և նրա եղբայր Հասանը, ովքեր «հայերուն ինչքերովը հարստացած, Պոլսոյ մէջ վաճառակա-նութեամբ կը զբաղէին», Բյաթիպ Ահմեդը, ոստիկանության հրամանա-տար Քեմալը, հազարապետ Ֆայիդը, հարյուրապետ Օսմանն ու նրա եղ-բայր Ջեմիլը: Նրանք «ճիւղաղային գաղափարը յղացան շատ մը կիներու արգանդը բանալով դրամ և գոհարեղէն փնտռել»:<sup>222</sup> Իսկ ըստ «Ճակա-տամարտի» հրապարակումների՝ Բաղեշի տեղահանության և կոտորա-ծի ղեկավարներն էին Ջևդեթ և կուսակալ Աբդուլ Խալիք բեյերը: Նրանց գլխավորությամբ սկզբում Բաղեշի թուրքաբնակ թաղերում ապրող հայե-րի տներն էին կողոպտել և առևանգել էին կանանց ու աղջիկներին: Հետո 10 օրվա ընթացքում հավաքել էին 15 տարեկանից բարձր բոլոր տղա-մարդկանց: Նրանց միջից առանձնացրել էին առավել հայտնի դեմքերին և տարել կենտրոնական բանտ, իսկ մնացածներին կապկպել ու 8-10 հո-գիանոց խմբերով հանել էին քաղաքից դուրս և սպանել էին: «Ռճիրները կատարուեցան մեծ մասամբ Արաբայ կամուրջ կոչուած տեղը; Ընդհան-րապէս կը սպաննէին պաղ գէնքերով, կացիներով...Դիակները կը լեց-նէին փոսերու մէջ: Թուրքերու վկայութեան նայելով, թուրքերուն բարե-կամ նկատուած Հայերը միայն բաղդ ունեցած են գնդակով մեռնելու», - պատմում էր բաղեշցի ականատես-վկա Վահրիճ Քենտերյանը:<sup>223</sup> Նա օրաթերթում նկարագրել է դեպքերի հետագա ընթացքը. «Այր մարդոց գործը լմնցնելէ յետոյ, սկսան տուները կողոպտել...Շուտով սկսաւ կիներ-րու աքսորը թաղ-թաղ: Խուժանը հրապարակաւ կ'առեանգէր գեղեցիկ կիներն ու աղջիկները: Կառավարութիւնը պաշտօնապէս արգիլած ըլլա-լով Հայ պահել, Հայ կիներն ու աղջիկները, բարբարոսներուն կիրքերուն զոհուելէ յետոյ, փողոց կը նետուէին: Իրարու դրամական պարտք ունե-ցող թուրքեր ալ գտնուեցան, որոնք Հայ աղջիկներ տուին իրարու իրենց

<sup>222</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 40:

<sup>223</sup> Նույն տեղում, 1919, թիվ 45:

պարտքին փոխարեն: Շատ մը աղջիկներ անձնասպան եղան...»:<sup>224</sup>

Բերված օրինակներից բացի նմանաբնույթ բազմաթիվ վավերագրային արժեքով թղթակցություն-հոդվածներ են մշտապես տպագրվել «Ճակատամարտում»: Այստեղ «Դեպի մահ» խորագրի ներքո ականատեսների վկայություններ կան անվանի հայ մտավորականներից շատերի նահատակության մասին: Ասենք՝ 1918 թ. 21 և 25 համարներում ներկայացվել են Գրիգոր Զոհրապի և Վարդգես Սերենկյուլյանի ձերբակալությունը, աքսորի և սպանության պատմություններն՝ ըստ օրաթերթի աշխատակցի կողմից հայթայթված վկայությունների: Շարքի պատասխանատուն Եղեռնից հրաշքով փրկված Երվանդ Օտյանն էր: Նա կոնկրետ «Զոհրապ և Վարդգես» նյութում առաջին անգամ մեզանում ներկայացրել է Զոհրապի ձերբակալության մանրամասները:<sup>225</sup> Այդ նյութում կարդում ենք. «Ձերբակալման գիշերը Զոհրապ, Սէրքլը տ'Օրիանի մէջ մինչև կէս գիշեր թուղթ խաղացեր է թալէաթ փաշայի և Խալիլ պէյի հետ: Յետոյ ոտքի կ'ելլէ մեկնելու համար: Թալէաթ ինքն ալ ոտքի կ'ելլէ ու մօտենալով Զոհրապի՝ անոր երեսը կը համբուրէ: Համակրանքի այս անսովոր ցոյցը կը շփոթեցնէ Զոհրապը.

- Ինչու՞ համար այս համբոյրը, կը հարցնէ:

- Սրտէս բխաւ, կը պատասխանէ միւսը:

Զոհրապ դուրս կ'ելլէ սրահէն չափազանց յուզուած: Նախագագոււնը կ'ունենայ թէ այդ համբոյրը աղետաւոր նշան մըն է ...Կ'որոշէ հետիոտն երթալ մինչև իր Այազ Փաշայի բնակարանը: Հագիւ ճամփայ ելած՝ կը նշմարէ որ մէկը կը հետապնդէ զինքը... Զոհրապ անհամբեր ետին դը դառնայ և կ'ըսէ.

- Արդեօք զի՞ս կը հետապնդէ ք:

- Այո՛, կը պատասխանէ միւսը, որ ոստիկանութեան քոմիսէր մըն է եղեր...

Զոհրապ, ճարահատ, ճամբան կը շարունակէ ու կը հասնի բնակարանը, որուն դրան առջեւ ոստիկան մը կը սպասէր:

- Ի՞նչ է ձեզի տրուած հրամանը, կը հարցնէ Զոհրապ:

- Ձեզ ոստիկանատուն տանել:

- Եւ եթէ երթալ չուզիմ:

<sup>224</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 40:

<sup>225</sup> «Արխամարտ», 1918, թիվ 21:

- Այն ատեն բռնի պիտի տանինք:

- Չէ՞ք գիտեր որ ես մէպուս եմ:

- Գիտենք, բայց մեզի տրուած հրամանը բացարձակ է:

Քօմիսէրը կը յայտնէ նաև որ հետևեալ առտու իսկ, այսինքն քանի մը ժամէն, ճամբայ պիտի ելլէ, հետեւաբար անհրաժեշտ գոյքերը կրնայ հետը առնել...»:<sup>226</sup>

«Ճակատամարտը» ներկայացրել է նաև Վարդգես Սերենկյուլյանի ձերբակալության հանգամանքները. «Վարդգէս Ոստիկանութեան Տնօրէն Պէտրիի գացած էր, իր Այալի ընկերներուն համար ձեռնարկներ ընելու և վերստանալու համար «Ազատամարտի» սնտուկէն յափշտակուած 450 օսմ. ոսկին գոր նոյն օրը պիտի յանձնէին, իբրև խմբագիրներուն իրաւունքը: Շաբաթներով անուշ լեզու կտրած հրէշը հագիւ Վարդգէսի բարեն առած, կը պօռայ երեսին.

- Մենք ալ քեզ կը փնտռէինք:

Եւ բրտօրէն կ'առաջնորդէ բանտ»:<sup>227</sup>

Ձերբակալության հաջորդ օրը վաղ առավոտյան Ջոհրապին ու Վարդգեսին Կ.Պոլսի Հայդար փաշայի կայարանից գնացքով ուղարկել էին Դիարբեքիր: Ճանապարհին նրանց տեսնողների վրա «խորին տպաւորութիւն թողած էր Ջոհրապի ընկճուած վիճակը. մինչ Վարդգէս զուարթ անտարբերութեամբ և ծիծաղկոտ դէմքով մը կը շատախօսէր իրենց մօտեցողներուն՝ Ջոհրապ հագիւ լռութիւնը կը խզէր քանի մը խօսք արտասանելու համար: Ամբողջ ժամեր անընդհատ կը ծխէր, մտածմունքի մէջ ընկղմած:

- Մեզի մեռցնել կը տանին, կը կրկնէ եղեր Ջոհրապ»:<sup>228</sup>

Երբ Ադանայում նրանց էր մոտեցել վաճառական Միհրան Պոյաջյանը և առաջարկել դրամական օգնություն, նրանք հրաժարվել էին: Հալեպում տեղաբնակ մի խումբ հայեր Ջոհրապին ու Վարդգեսին խնդրել էին համաձայնվել, որ իրենց փախցնեին: «Յանդուզն ծրագիր մը թէ և, բայց ո՛չ անգործադրելի: Վարդգէս հաւանութիւն կը յայտնէ, սակայն Ջոհրապ կ'ընդդիմանայ, առարկելով թէ իր առողջութիւնը չի ներեր»: Վարդգեսը ընկերոջը մենակ չի թողել: Ջոհրապը հավանաբար վերջին հույսը

<sup>226</sup> «Արիամարտ», 1918, թիվ 21:

<sup>227</sup> Նույն տեղում, 1918, թիվ 25:

<sup>228</sup> Նույն տեղում:

չէր կորցրել իր թուրք գործընկերներից: Նա նամակ էր ուղարկել Ջենալ փաշային՝ խնդրելով օգնություն: «Ջօհրապի այդ վերջին գրութիւնը, պերճախօս թուրքերէնով մը գրուած... անպատասխան և ապարդիւն կը մնայ»: Հալեպից երկու քաղաքականներին տարել է ին Ռուֆա: Մեկ-երկու օրից այդտեղից նրանց կառքով ուղարկել է ին Դիարբեքիր: «Ահռելի եղեռնը տեղի կ'ունենայ Ռուֆայէն քանի մը ժամ անդին: Թուրք չէթներու խումբ մը կը պաշարէ կառքը: Չէթներու պետը խալիլ պէյը եղած է, էն-վերի մէկ ազգականը...»: Ոճրագործության մասին Ե. Օտյանին հալեպահայ համայնքում պատմել է Ջոհրապին և Վարդգեսին Դիարբեքիր տանող կառքի՝ իրեն թուրքի տեղ դրած կառապանը:<sup>229</sup>

«Ճակատամարտում» ներկայացված են նաև Ա. Վռամյանի մասին վերջին հիշողությունները «Հերոսներ և նահատակներ» խորագրի ներքո: 1915 թ. ապրիլի 5-ի առավոտյան լուր էր տարածվել, որ ապրիլի 4-ին 50 ոստիկանի ուղեկցությամբ Ավանց գյուղի նավահանգիստ էին բերել «միջահասակ, նիհարակազմ, կարմրայտ, ճաղատ, անզէն և ձեռնակապուած» Ա. Վռամյանին:<sup>230</sup> Նրան նավ էին նստեցրել ու տարել անհայտ ուղղությամբ: «Վռամեանը տարին յայտնի չէ թէ ուր: Բայց մենք գիտենք թէ ուր է ան: Անոր խրոխտ ու անյողդողդ ոգին, պատուոյ դաշտին վրայ է, իրաւունքի անունով կռուող լէզոնին մէջն է, ամէն մէկ անձնագրի հերոսի հետն է: Եւ լէզոնը տարաւ յաղթանակը: Որովհետեւ հերոսները կը յաղթեն կեանքով, նահատակները կը յաղթեն մահուամբ: Եւ որովհետեւ իրաւունք ըսելը, յաղթանակ ըսել է», - գրում էր հոդվածագիրը՝ Հովհաննես Ասպետը:<sup>231</sup>

Հայ նահատակ հերոսների ու մտավորականների մասին հուշեր և վերլուծական նյութեր են տպագրված 1919 թ. թիվ 95-ից «Ճակատամարտում» բացված «Անոնք, որ գացին ու չեկան» խորագրի ներքո յուրաքանչյուր կիրակի լույս տեսնող «Ծերուկին հիշատակները (1915-1918)» հոդվածաշարում:<sup>232</sup> Հոդվածաշարի հեղինակ Սարգիս Գլզճյանը եղել է Կ.Պոլսի «Ազատամարտ» օրաթերթի պատասխանատու խմբագիրներից մեկը: Նա իր հուշերում շարադրել է արևմտահայ մտավորա-

<sup>229</sup> «Արիւամարտ», 1918, թիւ 21:

<sup>230</sup> «Ճակատամարտ», 1919, թիւ 44:

<sup>231</sup> Նույն տեղում:

<sup>232</sup> Նույն տեղում, 1919, թիւ 95-1919, թիւ 210:

կան սերուցքի և մասնավորապես «Ազատամարտի» աշխատակիցների ու ղեկավար կազմի ձերբակալության, աքսորի, նահատակության և նրանցից մի քանիսի հրաշքով փրկության պատմությունն իբրև ականատես-վկա: Հուշագրության մեջ պահպանված է դեպքերի ժամանակագրությունը, ներկայացված են ձերբակալված և մահվանն ընդառաջ գնացող հայ մտավորականների առօրյան, խոհերը, վերջին ցանկությունները, նաև՝ պահվածքը իրենց բանտապահների ու միմյանց նկատմամբ: Սարգիս Գլզյանը կարողացել է փոքր ծավալի մեջ ստեղծել նրանցից շատերի կերպարները թե՛ որպես անհատ, թե՛ որպես մտավորական: Նրանք ձերբակալությունից որոշ ժամանակ անց հասկացել են թուրքերի բուն նպատակը, նաև՝ այն, որ շուտով սպանվելու են, սակայն հոգեպես մնացել են անկոտրում: Չանկրի աքսորավայրում նրանք նույնիսկ տներ են վարձել, ճաշարան են բացել իրենց համար, կազմակերպել են գրական երեկոներ, հիմնել են փոքրիկ երգչախումբ և հնարավորինս ապրել են քաղաքակրթ մարդուն վայել հոգևոր կյանքով՝ մնալով հավատարիմ իրենց դավանած սկզբունքներին ու գաղափարներին և մմանօրինակ պահվածքով զարմացնելով թուրք հսկիչներին: «Ցախի և մտահոգութեան շատ պատճառներ ունինք, բայց հակառակ ասոր, աքսորականներու ամբողջ գաղթականութիւնը կը պահէ ուրախ տրամադրութիւն: Քաղաքին ճիշդ մօտիկէն անցնող գետակին հովանուտ եզերքին վրայ կ'անցնենք օրերը պտոյտով, նարդով և տամայով...Երբեմն կը հեռանանք քաղաքէն, դաշտային պտոյտներ կ'ընենք գետակն ի վեր՝ ուր կան շատ սիրուն տեսարաններ: Մեր բնակարանը ժամադրավայրն է երիտասարդ մտաւորականներու, քաղաքէն հեռու, մեկուսի դիրքէն կրնանք լայնօրէն օգտուիլ, թափ կուտանք վիճաբանութիւններու, ընդմիջուած կատակներով ու երգերով», - պատմում էր Ս. Գլզյանը:<sup>233</sup> Ըստ Ծերուկի հուշերի՝ ձերբակալված հայ մտավորականների մի մասը դեռևս 1915 թ. գարնանը գիտեր, որ սպասվում են մեծ ձերբակալություններ, նույնիսկ՝ ջարդեր:<sup>234</sup> Թալեաթը Վ. Սերենկյուպանին ասել էր. «Պալքանեան պատերազմի միջոցին մենք տկար էինք, և Հայերը մեզի դէմ ելան, հիմա մենք ուժով ենք և Հայոց անանկ հարուած մը պիտի տանք որ 50 տարի խելքերնին գլուխնին չպիտի գայ: Թեւերնիդ շատ երերցնելով կը քալէք, եթէ կը կար-

<sup>233</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 134:

<sup>234</sup> Նույն տեղում. 1919, թիվ 101:

ծէք որ ձեր երեսփոխան ըլլալու հանգամանքովը ինքզինքնիդ ապահով կը գգաք, կը սխալիք»:<sup>235</sup> Ծերուկը գրում էր, որ 1915 թ. մարտին «ստոյգ լուր կ'առնենք թէ՛ Ղաշնակցականներու ցանկը պատրաստուած է և ի մօտոյ պիտի սկսին ձերբակալութիւնները»:<sup>236</sup> Երիտասարդ կուսակցականները ղեկավար կազմին «ի գուր թախանծեցին արտասահման մեկնիլ: Փախուստի կարգադրութիւնները եղան, ամէն ապահովութիւններով: Սակայն վճռեցին մնալ: «Մեր արիւնը պէտք է խառնուի հայ նահատակներու արեան հետ», - ըսին մեր ընկերները ու չփախան»:<sup>237</sup> Նրանք ապրիլի 24-ին համոզվում են, որ ձերբակալությունը և ջարդը վերաբերում էին ոչ միայն դաշնակցականներին, այլ՝ ողջ հայ ժողովրդին: Ծերուկը հատկապէս իբրև անհատ և քաղաքական գործիչ առանձնացրել էր Հայկ Թիրյաքյանին (Հրաչին), ով Չանկրում խղճի խայթ էր ունեցել այն պատճառով, որ անուն-ազգանվան շփոթության պատճառով Այաշի աքսորավայր էր ուղարկվել Կ. Պոլսի նպարավաճառներից մեկը՝ Հայկ Թիրյաքյանը: Հրաչը շարունակ բողոքում էր, խնդրում, որ ուղղեն սխալը և իրեն ուղարկեն իր ընկերների մոտ՝ նրանց հետ կիսելու նահատակի ձակատագիրը: Ծերուկն այսպէս էր գնահատում Հրաչի անցած ուղին. «Ան քալեց իր փառքի ճամբան, առանց դեղևումի, միշտ անվարան. իր յեղափոխականի կեանքը եղաւ խրոխտ և հպարտ և ամուր իր քայլուածքին պէս: Երանի անոնց որ գացին անոր պէս, և երանի անոնց որ պիտի գիտնան երթալ անոնց պէս»:<sup>238</sup> Ահա այդ նահատակ-մտավորականների անմահ հիշատակն միշտ վառ է պահվել «Ճակատամարտ» օրաթերթում: Նրանց գործունեության մասին հուշեր ու հոդվածներ են տպագրվել համապատասխան բաժիններում:

«Ճակատամարտի» 1919 թ. ապրիլի 25-ի ողջ համարը նվիրված է նրանց, ովքեր գնացին 1915 թվականին ու չէկան: Այդ օրվա խմբագրականում Շավարշ Միսաքյանը Երրորդություն էր համարու է. Ակնունուն, Ռ. Զարդարյանին և Հ. Շահրիկյանին: Նրանցից յուրաքանչյուրը անհատականություն էր և «ուժ մը ինքն իր մէջ: Եւ իւրաքանչիւրն իր հմայքն ունէր ու իր առանձին ճամբան, որ կ'անջատուէր, կը ճիւղաւորուէր, տար-

<sup>235</sup> «Ճակատամարտ», 1919, քիվ 95:

<sup>236</sup> Նույն տեղում, 1919, քիվ 101:

<sup>237</sup> Նույն տեղում, 1919, քիվ 95:

<sup>238</sup> Նույն տեղում, 1919, քիվ 138:

բեր կածաններով, բիրապտոյտ բաւիղներով երթալ յանգելու համար միեւնոյն ծայրակէտին,- Գաղափարի խաչակրութեան»:<sup>239</sup> Շ. Մխաթյանի համար է. Ակնուհին համերաշխության քարոզիչ էր: Նա կոչ էր անում ամենքին գնալ «ղեպի Երկիր», քանզի հավատում էր, թե հայ ժողովուրդն ունէր «հայրենիք մը որ ազատութիւն և յոյս պիտի տեսնէր, հոգ չէ թէ խաւարած ըլլար իրենց արեւը»: Իսկ Ռ. Ջարդարյանը կարկառուն դեմք էր «Ազատամարտի» խմբագրականներով, որոնք ոչ միայն հարազատ արտահայտությունն էին մեր ժողովրդի վշտերի, տագնապների ու երազանքների, այլև բացառիկ արժեք ունեին իբրև գրվածք և ստեղծագործություն: Մեզմ խառնվածքով վաղամեռիկ վարպետի հոգում թաքուն ուժ կար: Նրբագագաց այդ հերոսը «խսկապէս որ պայքարի մարդ էր, գործիչ մըն էր ինքնուրոյն հասկացողութեամբ մը, և իբր այդ մնաց մինչեւ այն պահը որ Այաշէն Միռպոյի «Գողգոթան» կը խնդրէր, կարդալու և կազդուուելու համար»:<sup>240</sup>

Արամ Սաֆրաստյանի հուշագրության մեջ, ի թիվս այլ նահատակների, ներկայացված է Սարգիս Բարսեղյանը (Շամիլ): Շամիլը կամ Վանա Սարգիսը 1915 թ. ապրիլի 25-ին Ֆերի գյուղում գտնվող իր բնակարանից ձերբակալվել և աքսորվել էր Այաշ, ապա՝ սպանվել մյուսների հետ: Նա, որպես հեղափոխական գործիչ ու ղեկավար, Վասպուրական էր եկել 1905 թ. ծնունդը: Տեղի երիտասարդությունը «հմայուած էր իրմէ. կը սիրէինք զինքը և կը սիրէինք մանաւանդ իր գաղափարները: Ան դաստիարակեց ամբողջ սերունդ մը, պատրաստեց իր գաղափարներով մարգուած երիտասարդութիւն մը: Շատ անգամ լսած եմ իր բերնէն սա յատկանշական խօսքը. «Երբ Հայաստան ազատուի, ես մեծ պատիւ~ կը համարիմ ինծի, եթէ Հայաստանի խորհրդարանին ղռնապան ըլլամ»: Տարբեր պայմաններու մէջ, իր կեանքը շատ թանկ ծախելու կարող Շամիլը, յանուն իր և իր ընկերներու գաղափարներին, գիտակցաբար և կամովին զոհեց ինքզինքը՝ ապահովելու համար Հայ ժողովուրդին Ազատագրութիւնը: Յարգա~նք իր անմոռաց յիշատակին», - գրել է Ա. Սաֆրաստյանը:<sup>241</sup>

<sup>239</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 138:

<sup>240</sup> Նույն տեղում:

<sup>241</sup> Նույն տեղում:

Ե. Օտյանն «Անոնք, որ գացին ու չեկան» խորագրի ներքո ներկայացրել է Բարսեղ Շահբազի բուռն ու «կրակոտ» հասարակական-քաղաքական գործունեությունը: Նա Բ. Շահբազի կորուստը «կրկնապէս կսկծալի» է համարել, որովհետև Բարսեղը «տակաւին իր լիութեան մէջ չէր փայլած: Անիկա դեռ նոր պիտի տար իր կարողութիւնը: Շահապ թերևս կոչուած էր ըլլալու իր ցեղին մեծագոյն պարծանքներէն մէկը»:<sup>242</sup>

Այս հուշագրությունների պատմական արժեքը մեծ էր այնքանով, որ նորովի և յուրօրինակ էին երևում մեր նահատակ-մտավորականներն իրենց ընկերների պատումներում ու գնահատականներում: Բացի այդ, նրանց գործունեության ներկայացումը դաստիարակչական նշանակություն է ունեցել աճող սերնդի համար: Չէ՞ որ նմանների շնորհիվ է բնորոշվել հայ ժողովրդի դիմագիծը: Ընդ որում, «Ճակատամարտ» օրաթերթում հենց այդ միտումով են անդրադարձել նրանց կյանքին, գործերին ու մահվանը: Օրաթերթը նաև հասկացել է, որ թեև իրենք գրել են անվանի մարդկանց մասին հուշեր, բայց ընթերցողները ներողամիտ պիտի լինեն, որ «Ճակատամարտը» մոռացել է հիշել անուններ, որոնց տաղանդը դեռ «արևուն չէր բացած»:<sup>243</sup> Մերուժան Պարսամյանն այս առիթով նշել է. «Բոլորը, բոլորն ալ միտքիս առջևէն կ'անցնին, ամէնքն ալ, երազներու պէս լուսապսակուած և եղերական յաջորդականութիւնով մը: Ու ամէն օր բոյր մը աւելի կը ծխես հոգիիս մէջ կառուցուած Հայ Աստուածուիիին՝ Նենեսիսի բազինին»:<sup>244</sup>

Օրաթերթն իր նյութերով փաստել է հայ մարտիրոսագրությունը և թուրքական իշխանություններից ու միջազգային կառույցներից պահանջել է դատապարտել մեղավորներին: «Ճակատամարտի» հրապարակումներից երևում է, որ Մուղղոսի զինադադարից հետո հայ ժողովրդին դեռ շարունակել են սպառնալ ջարդերն ու կոտորածները: Թուրքիայում հայաահալած քաղաքականությունը չէր փոխվել: Խոսքը մասնավորապես վերաբերում էր իթթիհատականների նկատմամբ հարուցված կեղծ դատավարությանը և իթթիհատական կենտրոններում անցկացվող անարդյունք խուզարկություններին, հայ որբերի ու իրենց տները վերադարձող տարագրյալների իրավունքների ոտնահարմանը: Ստորև կանդրադառ-

<sup>242</sup> «Ճակատամարտ», 19119, քիվ 129:

<sup>243</sup> Նույն տեղում:

<sup>244</sup> Նույն տեղում:

նանք այդ խնդիրներից յուրաքանչյուրի վերհանմանը «Ճակատամարտ» օրաթերթում :

1918 թ. նոյեմբեր 30-ի «Դահիճները կցնծան» խմբագրականում նշված է, թե հիմնարկություն էր արդարություն հուսալ թուրքիայում: Չէ որ վարչապետ Թեֆիկ փաշայի գլխավորած կառավարությունը պահանջել էր ընդհանուր ներման ցանկում ներում չնորիել նաև հայ մարտիրոսագրության հեղինակներին ու մեղսակիցներին՝ նրանց դասելով քաղաքական հանցագործների շարքը: «Ճակատամարտը» գրում էր. «Մենք չզարմացանք... Դուք, ո՛վ մեծաշուք վե՛զիր, դուք կարո՞ղ էք զանոնք մէկ զծի վրայ դնելու ներման արժանի քաղաքական յանցաւորներուն հետ, առանց, լա՛ւ իմացէք, անոնց մեղսակից նկատուելու... Լա՛ւ, իմացէք, անոնց ներման տակ դուք ձեր դատապարտութեան վճի՛ռն է որ պիտի ստորագրէք»:<sup>245</sup> Արամ Սաֆրաստյանը «Դահլիճը և Թեճետոյությունը» վերլուծականում քաղաքական անտաղանդ դերասաններ էր համարում Թեֆիկ փաշային և իթթիհատականներին, որոնք միմյանց էին մեղադրում երկիրը կործանելու համար: Ա. Սաֆրաստյանը դիմում էր նրանց. «Պարոն դերասաններ, ի զուր մի՛ ջանաք խաբել հասարակութեանը... Դուք բոլորդ առանց բացառութեան, բոլորդ ալ դատապարտուած էք արդարութեան և իրաւունքի առջեւ»:<sup>246</sup>

Իթթիհատական պարագլուխների ձերբակալությունը շարունակվում էր 1919 թ. սկզբներին՝ թուրքիայի նախարարների խորհրդի որոշման համաձայն: Ներքին գործերի նախարարի փոխանորդը մամուլի ասուլիսում հայտարարում էր, թե ձերբակալվածների ամբաստանությունները բացարձակ էին. «Արդարութիւնը ամէն պարագայի պիտի գործադրուի: Արդէն հասարակաց կարծիքը և համաձայնական շրջանակները կը պահանջէին ոճրագործներու պատժուիլը»:<sup>247</sup> «Մեր խոսքը» խմբագրականում, սակայն, «Ճակատամարտը» կարծիք էր հայտնում, թե ժայռահեղ լավատեսություն էր թուրքական կառավարությունից սպասել բացարձակ արդարություն հայկական կոտորածների պատասխանատուների դատավարությունից: Կառավարությունն իր որոշումներն իրականացնելու համար չունէր ուժ և ազդեցություն, քանի որ ամենուրեք Իթ-

<sup>245</sup> «Արդարամարտ», 1918, թիվ 10:

<sup>246</sup> Նույն տեղում, 1918, թիվ 12:

<sup>247</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 68:

թիհատի ոգին էր, որ «կը տիրապետէր և մութին մէջէն ժողովուրդը կ'առաջնորդէր իր ուզած ճամփան»:<sup>248</sup> Ուստի հայ ժողովրդի աչքերը ուղղված էին մեկ այլ ուժի՝ դաշնակից պետություններին, որոնք իթթիհատական կառավարությանը պատասխանատու ճանաչելով հայկական կոտորածների համար, ազդարարում էին, թե պատերազմից հետո այդ կառավարության անդամները պիտի դատվեին ու պատժվեին: «Ճակատամարտը» խորհուրդ էր տալիս դաշնակիցներին, որ չընկնեին անհատ ոճրագործներին դատելու հետևից ու ժամանակ չձգձգեին, քանզի ոճրագործների մի մասը անհատապես չէր մասնակցել սպանություններին և կոտորածներին, այլ եղել էր կազմակերպիչ և իբրև այդպիսին ավելի պատասխանատու էր, քան «իսկական կոտորիչները: Այս դասին կը պատկանէին կեդրոնի կառավարութեան և Իթթիհատի Կէդր.Կօմիտէին անդամները, նահանգային գաւառական պաշտօնեաները և Իթթիհատի ներկայացուցիչները, երեսփոխանները ևլն, որոնք տեղահանութիւնը և կոտորածները կազմակերպելու ժամանակ շատ անգամ գրաւոր հրահանգներ չէին գործածած, այլ բանաւոր՝ յատուկ գործակալներու միջոցաւ: Հետեւաբար ի՞նչպէս կարելի էր վկաներ ներկայացնել այսպիսիներու դէմ»: Բացի այդ, հայկական կոտորածները մասնավոր և պատահական բնույթ կրող սովորական ոճիրներ չէին, այլ՝ իթթիհատական, կառավարության հատուկ ծրագրով, քաղաքական որոշ նպատակով կազմակերպված բնաջնջում: Հաշվի առնելով այս ամենը՝ «Ճակատամարտի» խմբագրակազմը առաջարկում էր անմիջապէս պատասխանատվության կանչել այն անձանց, ովքեր «հանրածանօթ էին իբր՛ց պատասխանատուներ»:<sup>249</sup> Սկսված դատավարությունը բացահայտում է բազմաթիվ ոճրագործություններ, դրանց կազմակերպիչներին, իրականացնողներին: Օրինակ՝ 1919 թ. ապրիլի 28-ի համարի «Եփրատ գետը կհորդի հայոց դիակներով» նյութում տպագրված է քննիչ մարմնի կողմից պատրաստված և դատարանում ընդունված ամբաստանագիրը: Այն «Ճակատամարտը» համարում էր պատմական կարևոր վավերաթուղթ և «հերքմնագիր մը բոլոր Սիվէյման Նագիֆներու և անոնց դէմ, որ յանդգնութիւնն ունեցան մասնակի քանի մը սպանութիւններ անուանելու հայկական

<sup>248</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 68.:

<sup>249</sup> Նույն տեղում:

աղէտը»:<sup>250</sup> Թերթում տպագրված են այդ ամբաստանագրի կարևոր կետերը: Փաստվում էր, որ տարագրության ընթացքում զանազան վայրերում և տարբեր ժամանակներում կատարված խժոժությունները երբեք չէին ունեցել տեղական ու առանձնակի հանգամանք, այլ կազմակերպվել և իրագործվել էին «բերանացի և գաղտնի հրամաններով»: Ամբաստանագրում ասվում էր («8-րդ սերի, վէ սիքա 1»), որ Տրապիզոնի ջարդը կատարվել էր Թալեաթի դրոմամբ: Ներքին գործերի մասնավոր դիվանի պետ Իսսան բեյը հայտնում էր, թե երբ ինքը Քիլիսի գայմագամն էր, Պուսից Հալեպ ուղարկված Աբդուրահման Նուրի բեյը հետևյալն էր ասել իրեն. «Տարագրութիւնը՝ Հայերը բնաջնջելու նպատակով եղած է, ես շփման մէջ մտայ Թալեաթ պէյի հետ և անծամբ իրմէն առի բնաջնջման հրամանները»:<sup>251</sup> Խարբերդի կուսակալ Սապիթ բեյը Նազըմ բեյին էր հղել մի հեռագիր, որի լուսանկար-պատճենը 9-րդ «սէրիին մէջն էր»: Այնտեղ հարցում էր արվում. «Դրկուած Հայերուն գործը լմնցուցի՞ք. տարագրութիւնները տեղեկացուցէ՞ք. վնասակար անձերը կ'ոչնչացուի՞ն, թէ՛ ո՛չ, միայն կ'աքսորուին»: Մեկ այլ ժածկագիր-հեռագրում Պուլիի Մյուֆիտ բեյը գրում էր, որ տեղի իթթիհատական կառույցի քարտուղար «Միտհաթ Չանկըրիէն իրեն հեռագրել է որ էնկիւրիէն 61000 Հայեր տարագրած են»: Նա խորհուրդ էր տալիս Մյուֆիտ բեյին, որ Պուլիի ապագա երջանկությունն ապահովելու համար անհրաժեշտ էր տարագրել տեղի հայերին: «Ճակատամարտը» վերլուծելով այս փաստը՝ եզրակացնում էր, թե Պուլիի նման պատերազմական գոտուց հեռու գտնվող վայրում հայերի տարագրությունն իրականացնելը ամենևին ռազմական անհրաժեշտությունից չէր բխում: Ամբաստանագրում մեջբերված էր Թալեաթին ուղարկված Խարբերդի կուսակալ Սապիթ բեյի մեկ այլ հեռագիրը, որը գտնվում էր երեսփոխանական ժողովի 5-րդ ճյուղի թղթածրարներում: Հեռագրում արձանագրված էր, որ բոլոր ճանապարհները լցված էին «կիներու և տղաներու դիակներով»: Թալեաթը Հայոց եղեռնի հետքերը վերացնելու նպատակով Խարբերդի, Դիարբեքիի, Ուրֆայի և Դեր-Չորի կառավարիչներին էր ուղարկել ժածկագիր-հեռագրեր: Դրանցում նա նրանց հրամայում էր այրել ճանապարհներին մնացած հայերին պատկանող առար-

<sup>250</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 141:

<sup>251</sup> Նույն տեղում:

կաները, իսկ նրանց դիակները՝ թաղել և ոչ թե նետել գետերը, լճերն ու ձորերը:<sup>252</sup>

«Ճակատամարտում» վավերագիր-փաստաթղթեր բազմիցս են տպագրվել 1918-1919 թթ., երբ դեռևս հույս էր փայփայում հասնել Հայ դատի պաշտպանությանը: Բերենք ևս մեկ օրինակ: 1919 թ. մարտի 15-ին թերթում կարդում ենք Թուրքիայի ներքին գործերի նախարար Զեմալ բեյի հայտարարությունը այն մասին, որ Իթթիհատը «ջարդել տուաւ 800000 Հայեր և տարագրեց 400000 Յոյներ»:<sup>253</sup> «Ճակատամարտը» հասկացնում էր, որ իթթիհատականների ձեռքակալությունները և դատավարությունը քաղաքական ֆարս էին, որ դաշնակից պետությունները չէին պատրաստվում ձեռնարկել հայանպաստ քայլեր: Հայոց եղեռնի կազմակերպիչների դատավարությունը «Ճակատամարտը» համարում էր «աչքկապուկ մը», իսկ «ջարդարարներու դէմ յարուցուած դատը...նահատակուած Մարկոսին, Կիրակոսին անծնական դատը չէ, Հայ ազգին դատն է ան»:<sup>254</sup> Մեծ հիմնարկություն էր հայ ժողովրդի համար «ելլել պահանջել թուրք դատարաններու ներկայ կազմէն՝ իր արդար դատին գոհացումը»:<sup>255</sup> Հողվածագիրը՝ փաստաբան Հրայր Պյուքյուջյանը, գտնում էր, որ նախ՝ Թուրքիայում պետք է ընդունվեր հայ ժողովրդի ջարդարարների դատավարության մասին մասնավոր օրինագիծ, ապա՝ հայ ժողովրդի ձեռքի տակ եղած փաստերը անհրաժեշտ էր ներկայացնել դատական հատուկ ատյանին, որի կազմում թուրք դատավորների հետ պիտի ընդգրկված լինեին չեզոք տերությունները ներկայացնող երդվյալ դատավորները: «Առանց այս պայմաններու գոյութեան դատական ներկայ կազմով և դատավարական արդի ձեւերով ջարդարարներու դատավարութեանց մեր մասնակցութիւնը կը նկատեմ և՛ անտեղի, և վտանգաւոր ու ապարդիւն», - գրում էր Հ. Պյուքյուջյանը:<sup>256</sup> Եվ քանի որ դատավարությունն ընթանում էր կեղծիքներով, ապա շարունակում էին իթթիհատականների դավերը: Կիլիկիայում Իթթիհատի գործունեությանը նվիրված հողվածում ասվում էր՝ «Իթթիհատի գործիչները տակաւին չեն դադրած գործել, և հոս ամէն իրիկուն գաղտնի ժողովներ ալ կ'ունեն-

<sup>252</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 141:

<sup>253</sup> Նույն տեղում, 1919, թիվ 106:

<sup>254</sup> Նույն տեղում, 1919, թիվ 92:

<sup>255</sup> Նույն տեղում:

<sup>256</sup> Նույն տեղում:

նան»:<sup>257</sup> «Խոսիլը բւսվական չ» խմբագրականում գրված է, որ Թուրքիայում ամեն բան «կը մնայ Թալէաթի կարգադրության համաձայն: Օրը օրին գաւառներէն մեզի հասնող վատաւիշի տեղեկութիւնները կ'ապացուցանեն այդ ճշմարտութիւնը»:<sup>258</sup> Հ. Ամատունին հուլիսի 18-ին «Ճակատամարտում» վկայում էր, որ շարունակվում էին իթիհատական դավերը:<sup>259</sup> Եթէ 1918-1919 թթ. իթիհատականները հայերին բացեիբաց կոտորել, տեղահանել ու արքորել էին և որևէ մեկին հաշվետու լինելու կարիք չէին զգացել, ապա զինադարձից հետո նրանք հարկադրված էր այդ ոճիրները շարունակել ուրիշ պիտակով: «Թուրք ժողովուրդին խելօք առաջնորդները» պնդում էին անգամ, որ «Հայաստանի՝ թրքական տիրապետութեան տակ գտնուած նահանգներու ազգաբնակչութիւնը գուտ Թուրքեր են, հետեւաբար պէտք է հարգուի նրանց ինքնորոշման իրաւունքը, և պէտք է այդ նահանգները թողուին Թուրքիոյ»:<sup>260</sup> Հ. Ամատունին ընդդիմանում էր ասվածին մի շարք փաստարկներով: Առաջին փաստարկը վերոհիշյալ նահանգների հայ և թուրք ժողովուրդների վիճակագրական տվյալներն էին Առաջին համաշխարհային պատերազմից առաջ, որոնք հակառակի մասին էին խոսում: Երկրորդ փաստարկն այն էր, որ պատմական Հայաստանի այդ նահանգների ազգաբնակչությունը կոտորված ու արքորված էր իր հայրենիքից. «Միայն չորս-հինգ հարիւր հազար խոյս տուած են մեծ սպանդէն, ապաստանելով Անդրկովկաս ու Ռուսաստան: Նոյնքան թիւով բեկորներ իրենց հայրենիքէն դուրս՝ Արաբիոյ կամ Սուրիոյ անապատներուն մէջ են»:<sup>261</sup> Ժամանակն ուշացումով հասել էր, որ այդ մարդիկ վերադառնային իրենց օջախները: Հողվածագրի կարծիքով, թուրքերը դեմ էին դրան երկու նպատակով. նրանք ցանկանում էին նախ՝ ցույց տալ աշխարհին, թէ այդ նահանգներում հայեր չկային, ապա՝ անել այնպէս, որ տարագրյալ ու փախստական հայերը, մնալով հայրենիքից դուրս, կոտորվեին և ոչնչանային: Հ. Ամատունին եզրակացնում էր, որ այսպիսով՝ Թուրքիան շարունակում էր նախկին քաղաքականությունը նոր ձևերով ու ծրագրերով: Ընդ որում, թուրքերն օգտագործում էին զինվորներին՝ արգելելու համար փախստական դար-

<sup>257</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 92:

<sup>258</sup> Նոյն տեղում:

<sup>259</sup> Նոյն տեղում, 1919, թիվ 209:

<sup>260</sup> Նոյն տեղում:

<sup>261</sup> Նոյն տեղում:

ծած հայերին վերադառնալ սեփական տները: Միևնույն ժամանակ նրանք դատարկված Արևմտյան Հայաստանը թուրք ազգաբնակչությանը լցնելու համար աշխարհի բոլոր անկյուններից այնտեղ էին տեղափոխում թուրք գաղթականներին: Թուրքերը մտածում էին, որ Հայաստանը այսպիսի հրաշքով կդառնար Թուրքիա: Իրականում այդպես էլ ելավ: Իսկ այն օրերին Հ. Ամատունին քեր հավատում, որ կիրակունանար Թուրքիայի այդ նպատակը: Նա կարծում էր, որ հայ ժողովուրդը, հակառակ թուրքական կամ իթթիհատական դավերին, պիտի վերադառնար հայրենիք ու տեր պիտի կանգներ իր դարավոր սրբություններին և հիշատակարաններին:<sup>262</sup> Եվ առ այսօր շարունակվում է մեր ժողովրդի պայքարը հանուն պատմական արդարության վերականգնման:

### *ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ» ԷՋԵՐՈՒՄ*

Մուղլոսի գինադադարից անմիջապես հետո թուրքական իշխանություններն ընդունել էին մի շարք հիշատակագրեր ու որոշումներ, որոնց համաձայն պիտի վերջ տրվեին հայերի հալածանքներին, բռնի իսլամացված հայերը նորից պիտի քրիստոնյա դառնային, թուրքերի մոտ ստրուկի կարգավիճակում պահվող հայ որբերը և առևանգված աղջիկներն ու կանայք պիտի վերադարձվեին Թուրքիայի հայկական համայնքին, տարագիր հայերը պիտի վերադառնային իրենց բնակավայրերը, հայերից համալսակված ու խլված կալվածքները, հողերը և ունեցվածքը պիտի հանձնվեին ուղջ մնացած դրանց նախկին տերերին: «Ճակատամարտը» շարունակ ահագանգել է, որ կառավարության այդ կարգադրությունները «խօսքի սահմանէն անդին չանցան»:<sup>263</sup> Բերվել են օրինակներ: Ասենք՝ Մարզվանից առևանգված օրիորդ Փառանձեն՝ Երեմյանը, քաջալերվելով կառավարության հրամաններից, փախել էր իրեն առևանգողի տնից: Նա, սակայն, «նոյն կառավարութեան կողմէ՛ գաղտնի խիստ հետապնդման մը ենթակայ էր»:<sup>264</sup> Բացի այն, որ բռնի թրջացված հայ

<sup>262</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 209:

<sup>263</sup> Նոյն տեղում, 1919, թիվ 106:

<sup>264</sup> Նոյն տեղում:

կանայք չէին կարող վերադառնալ նախկին կրոնին, նրանք չէին կարող լինել նախկինում իրենց հայ ամուսինների ունեցվածքի ժառանգորդը, քանի որ արդեն համարվում էին թրքուհի: Այսպիսով՝ «կալուածներու խնդիրը գրեթէ անլուծելի էր»:<sup>265</sup> «Ճակատամարտը» չի մանրամասնել ձեռքի տակ եղած նմանատիպ բոլոր փաստերը՝ նշելով, թե մեկ-երկու օրինակը բավական է իրավիճակը հասկանալու համար, քանզի պատկերը Թուրքիայում ամենուրեք նույնն էր ու նույնն էլ մնալու էր: «Ա...էն կը գրեն մեզի, թէ կառավարութիւնը խստիւ արգիլած է բռնութեամբ իսլամացած Հայերու իրենց նախկին կրօնքին վերադարձը: Բ...էն կը գրեն, թէ Հայ ժողովուրդին չեն վերադարձներ իր տունը և կալուածները. վերադարձողները փողոցները կը թափառին: Գ...էն կ'իմացնեն, թէ նախկին ջարդարարները դեռ կը մնան իրենց պաշտօններուն վրայ և կը սպառնան Հայ ժողովուրդի վերջին մնացորդներն ալ կոտորել: Ասոնք և նման բազմաթիւ փաստեր կուզան անմիջապէս ապացուցանելու, թէ Հայ ժողովուրդին մնացորդները կը մնան միշտ օրէնքէ դուրս. ուրիշ խօսքով, կոտորուելու վտանգին տակ», - այս մտահոգություններն են պարբերաբար հնչել «Ճակատամարտում»:<sup>266</sup>

Օրաթերթն առաջարկել է արմատական 3 միջոց հայ ժողովրդի վաղվա կյանքն ապահովելու համար: Դրանք էին.

1. հայ ժողովրդի կենսապահովության հարցը չհանձնել թուրքական կառավարությանը և շուտափոյթ հայկական նահանգներ ուղարկել դաշնակից պետությունների ներկայացուցիչներին իրենց գինուժով, ինչն ապահովելու դեպքում միայն հնարավոր կլիներ պաշտպանել վերադարձող տարագիրների գոյությունն ու աշխատանքը,
2. իրենց բնակավայրերը վերադարձնել տարագիր հայերին՝ վերահաստատելով նրանց քաղաքացիական բոլոր իրավունքները,
3. արդեն վերադարձած հայ տարագիրներին սերմացու տալ գարնանացանի համար, ինչի արդյունքում նրանք կկարողանային որոշակի պաշար կուտակել առաջիկա ծմեռվա համար:<sup>267</sup>

«Ճակատամարտի» կարծիքով՝ թվարկված միջոցառումները պիտի իրագործվեին՝ չսպասելով Հայկական հարցի լուծմանը. «Ինչ ձեռով

<sup>265</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 106:

<sup>266</sup> Նույն տեղում, 1919, թիվ 97:

<sup>267</sup> Նույն տեղում:

ալ լուծուի այդ հարցը, Հայ ժողովուրդը պիտի ապրի և անոր ապրուստը կ'ապահովուի միայն մեր ծրագրած եղանակով»:<sup>268</sup> Այնինչ, թուրքական իշխանություններն ամեն ինչ անում էին, որ Եղեռնից մազապուրծ հայերը չվերադառնային իրենց բնակավայրերը: Իսկ եթե վերադառնային, ապա չկարողանային ապրել իրենց նախկին տներում, որոնք բռնազավթվել կամ շատ էժան գներով վաճառվել էին թուրքերին: Հայ տարագրյալներին չէին տալիս օրենքով հասանելիք դեպի նրանց ծննդավայր փոխադրման ծախսի գումարը, նաև՝ նպաստը: Նրանց չէին ապահովում զախիք ձմեռվա համար անհրաժեշտ վառելիքով ու զարնանային սերմացուով:

«Վերապրողները» խորագրի ներքո տպագրված «Ատաբազարի հայերը» թղթակցության մեջ ներկայացվում էին տարագիրներին հուզող խնդիրները:<sup>269</sup> Նշվում էր, որ վերջին մեկ ամսում հազիվ 100 ընտանիք էր կարողացել վերադառնալ Ատաբազար: Էսկիշեհիր, Քյոթահիա, Պոլովատին, Գոնիա և Էրեյլի երկաթուղային կայարաններում էին գտնվում ատաբազարցի տարագրված 400-500 հայաբնակ ընտանիք: Նրանց շոգեկառքեր չէին տրամադրում: 20 օրից ավել էր, ինչ այդ մարդիկ բաց երկնքի տակ ցուրտ եղանակին, հաճախ մի քանի օր տևող անձրևի տակ, ցուրտ եղանակին մնացել էին անպատսպար, հացակարոտ վիճակում: «Պատերազմի էն տաք շրջանին էր տեղահանութիւնը, այնպէս որ կառավարութիւնը երկաթուղիի գիծերուն վրայ, ահագին զինուորական առաքումներով ու փոխադրութիւններով զբաղուած էր, բայց այն ատեն Հայ ժողովուրդը Սուրիոյ անապատները քշելու չափ իր դահիճներուն ձեռքը ձգելու համար ոչ միայն վակօն չը պակսեցաւ, այլ մէկը միւսին յաջորդող ամբողջ կառաշարներ յատկացուեցան և անոնց վրայ հսկողութիւն կատարելու, այսինքն զանոնք խոշտանգելու և հալածելու համար ոստիկաններու և ոստիկան-զինուորներու վոհմակներ տրամադրելի եղան: Իսկ այսօր, երբ պատերազմը դադրած է, և ա՛լ զինուորական առաքումներ չկան, ափ մը Հայերու վերադարձին համար ոչ փոխադրութեան միջոց կայ, ոչ վակօն, ոչ ալ այդ գործին վրայ մտածող պաշտօնեայ»,- այսպիսի վերլուծական վերջաբանով էր ավարտվում թղթակ-

<sup>268</sup> «Մակառամարտ», 1919, թիվ 97:

<sup>269</sup> «Արդարամարտ», 1918, թիվ 10:

ցությունը «Ճակատամարտը»:<sup>270</sup> Մեկ այլ թղթակցությունից պարզ էր դառնում Կեյվեի էջմե գյուղ սեփական օջախները վերադարձող հայերի վիճակը. «Կեյվեի էջմե գիւղը, որ 180 տուն զուտ հայութիւն ունէր, այսօր բոլորովին աւերակի կերպարանք ունի, մինչեւ այսօր հազիւ 15-20 տուն վերադարձողներ եղած են, անոնք ալ բոլորովին անպատասպար են անօքնական վիճակի մէջ, իրենց տուները թութք մուհաճիրներու կողմէ գրաւուած են, որոնք իրենց բուն տէրերուն չեն ուզեր յանձնել»:<sup>271</sup> Վերադարձող հայերի կյանքն էր վտանգված. «Հաստատապէս կրնանք ըսել թէ տեղւոյն գայմագամին կողմէ գէնքեր բաժնուած են թութքերուն: Արդեօք մնացա՞ծն ալ ջարդելու համար»:<sup>272</sup> Նմանաբնույթ էր իրավիճակն ամենուրեք: 1918 թ. դեկտեմբեր 2-ի՝ «Ինչպես կվերադառնան տարագիրները» նյութում «Ճակատամարտը» հանգում էր հետևյալ եզրակացության. «Տարագրուած հայերու վերադարձը աւելի քան նոր աքսոր մըն է»:<sup>273</sup> Տեղեկացվում էր, որ Գոնիայի կայարանում մոտ մեկ շաբաթ էր, ինչ 2000-ի չափ հայեր սպասում էին կառավարության կողմից տրամադրվող շոգեքարշերին, որ վերադառնային իրենց ծննդավայրերը. «Շաբաթներով կը սպասեին բացը, ցուրտին, անձրեւին տակ, բայց տրամադրուելիք ձրի վակօսն և ածուխ չկայ կ'ըսուի: Ամբողջ օրը անօթի անցնող շատեր կային մէջերնին: Վերջին 15 օրուան միջոցին 25 հոգի մեռած էին որոնցմէ 3-ը յղի կիներ»:<sup>274</sup> Վերադարձողների տեղափոխությունը ձրի էր, բայց ու՞մ էր դա պետք, եթե վագոնները դժվարությամբ էին տրամադրվում, իսկ շոգեքարշի համար տրվող ածուխը այնքան քիչ էր, որ 2 օրվա ճանապարհը տևում էր 10-15 օր, այն էլ՝ բացօթյա բեռնափոխադրող վագոններով: Օրինակ էր բերվում Կոնիայից 3 օրում 13 բեռնատար բաց վագոններում տեղատարափ անձրևի տակ էսկիշեհիր ուղարկված 500 տարագիրների քաշած չարչարանքը: «Ըսուեցաւ թէ մինչեւ հող 3 հոգի արդէն պակսած էր անոնցմէ, և ո՛վ գիտէ տակաւին քանիներ ալ պիտի մեռնին մինչեւ որ տեղերնին հասնին»: Իսկ Սուլթանյե կայարանում

<sup>270</sup> «Արդարամարտ», 1918, թիվ 10:

<sup>271</sup> Նույն տեղում, 1918, թիվ 12:

<sup>272</sup> Նույն տեղում:

<sup>273</sup> Նույն տեղում:

<sup>274</sup> Նույն տեղում:

2000-3000 տարագիրներ (հիմնականում՝ կանայք ու աղջիկներ) «ցուրտէն և քաղցէն հիւանդանալու և մեռնելու դատապարտուած էին»:<sup>275</sup>

Ատաբազար վերադարձող հայերի մասին թղթակցություն կա՝ «Ահա եկեր են, բայց ի՞նչ կգտնեն» վերնագրով:<sup>276</sup> Վերադարձող ազատաբազարցիները տեսել էին, որ հայկական թաղերը ավերակների էին վերածվել, իսկ «թուրք բարեկամներու քով ի պահ ձգուած իրենց գոյքերը, ապրանքները, բոլորը, բոլորը թալանուած, կորսուած... Հրէշային ծրագիրով մը սպանդանոց քշեցին ամբողջ հայութիւնը, բայց ի՞նչ կուզէին անոնց թողած տուներէն, դպրոցներէն, եկեղեցիներէն, ի՞նչ կուզէին պարտէզներէն, եկեղեցիներէն ու գերեզմանատուններէն որ քանդեր են ու ւտերեր անխնայ: Ատաբազարի մէջ 3500-է աւելի հայու տուներ կային: Ասոնցմէ կէսէն աւելին հիմնայատակ կործանուեր էին և անոնց հետքերն անգամ չկային, իսկ մնացածին մեծ մասն ալ կիսաքանդ ու անբնակելի վիճակի մէջ ձգեր էին»:<sup>277</sup> Տեղահանության օրերին տեղացի թուրքերը 100 ոսկեդրամ արժեցող ապրանքները հայերից 100 փարայով էին գնել, հաճախ էլ սպառնալով նրանց՝ ձրի վերցրել: Հայերը դեռ կայարանում էին, երբ թուրքերը մտել էին հայկական ամայացած թողեր և տարել էին բոլոր տների պատուհանների ապակիները, դռները, կողպեքները, մի խոսքով՝ այն ամենը, ինչն արժեքավոր էր և «դիրատար ... մինչեւ իսկ քակեր էին սանդուղները, տախտակամածները, առաստաղները՝ պահուած կահկարասիներ գտնելու յոյսով»: Թուրք բնակչության կողպուտից հետո թուրքական կառավարությունը հայերի տներում էր տեղավորել «Պալքանեան պատերազմէն եկուր իսլամ գաղթականները, ինչպէս նաեւ այս վերջին պատերազմի միջոցին թշնամիէն գրաւուած նահանգներու միւլթէճիները, անշուշտ իսլամ»: Իսլամ գաղթականները քանդել ու վառել էին դեռևս անբնակ հայկական տները : Այդ կիսավեր 1500-ից ավել տները կառավարությունը «փլչելու վտանգին մէջ կը գտնուին» պատրվակով չնչին գներով վաճառել էր Իթթիհատի պարագլուխներին: Ասենք՝ 150-200 ոսկի արժեցող տունը վաճառվել էր 8-10 ոսկիով: Թուրքերը որպէս ձրի վառելափայտ էին օգտագործել հայերի պարտեզների ծառերը: Նրանք հիմնահատակ ոչնչացրել էին հայկական

<sup>275</sup> «Արդարամարտ», 1918, թիվ 12:

<sup>276</sup> «Արիամարտ», 1918, թիվ 31:

<sup>277</sup> Նույն տեղում:

4 թաղերի երկսեռ վարժարանների շենքերը՝ առգրավելով և թուրքական վարժարաններին հանձնելով դրանցում եղած գրքերը: Վարժարաններից «ս. Հրեշտակապետիները միայն կը մնային կանգուն: Քանդեր էին ս. Ստեփաննոս եկեղեցին, ախոռի վերածեր էին ս. Լուսավորիչը, իսլամ գաղթականներու խան շիներ ս. Կարապետը և արմտիքի շտեմարան՝ ս. Հրեշտակապետը»: Յուրացրել և աճուրդով վաճառել էին Ատաբազարի հայկական 4 եկեղեցիների գույքը: Քրքրել էին հայկական գերեզմանոցի շիրիմները: Տարել էին մարմարե բոլոր կոթողները և մահարձանները: Ըստ հողվածագրի՝ Ատաբազար վերադարձած տարագիր հայերը կարծես այլևս չէին ուզում ապրել երբեմնի իրենց ծննդավայրում, որն այլևս իրենցը չէր:<sup>278</sup> Ատաբազարցի հայերի ձակատագիրն էին կիսում նաև մյուս բնակավայրերի վերապրողները: «Գավառի ծայներ» բաժնում մշտապես լուրեր էին տպագրվում տարբեր գյուղերում ու քաղաքներում հայ տարագիրների վիճակի մասին: Օրինակ՝ նշվում էր. «Եալովա-Մէր-տիկէօզ հասած էին 180 անձ, որ 83 տուն կը կազմեին: 269 տուներէն 121-ը հազիւ բնակելի էին, 54-ը բացարձակապէս անբնակելի, 94-ին հետքն անգամ չէր մնացած: Նոր 300 հողի գալուն կը սպասուեր: Ասոնցմով դեռ մէկ երրորդն ալ դարձած չլլար: Եալովա- Եալաք Տէրէ հասած էին 39 ընտանիք, ընդամենը 74 հողի: 239 տուներէն 146-ը հազիւ բնակելի էին, 37-ը՝ կիսակործան ու 56-ը՝ հիմնայատակ փլցուած»:<sup>279</sup> Իսկ 1918 թ. դեկտեմբերի 14-ին «Վերջին ժամ» խորագիրը տեղեկացնում էր, որ Ադանայում իթթիհատականները տեղական իշխանությունների լուռ աջակցությամբ պատրաստվում էին կոտորել տեղի հայ բնակչությանը և վերադարձող տարագիրներին, որ չվերադարձնեին նրանցից 4 տարի առաջ գողացված իրերը, բնակարանները, հողերը: Իթթիհատի տեղական կենտրոնի անդամ Մուխթար բեյը արդեն աճուրդի էր հանել «տարագրեալ հայերուն հարիւր հազարներով ոսկի արժող ինչքերը, հազարներով գորգեր ու կապերտներ (որոնց նմանը Պոլսոյ և ոչ մէկ գորգավաճառին քովը կարելի էր գտնել), կարասիներ, թանկարժէք իրեղէններ, եւն, եւն: Ու դեռ ասոնք անելորդ մէկ մասն էին միայն այն անպատմելի հարստութեանը և ինչքերուն, որոնցով բերնէբերան լեցուած էին բոլոր

<sup>278</sup> «Արիամարտ», 1918, թիվ 31:

<sup>279</sup> Նույն տեղում, 1918, թիվ 32:

իթթիհատականներու տուները»:<sup>280</sup> Տարագրյալների կալվածքները իթթիհատական կառավարության կողմից ժամանակին հռչակվել էին «Էմլաքը մէթրուքիէ» և վարձով էին տրվել պատահական անձանց: Վերջինները քարուքանդ էին արել շեն և պտղաբեր այգիները, նարնջի, լիմոնի ծառաստանները: Նրանք հողին էին հավասարեցրել դոյակների նմանվող հայկական տները, որոնց վերջին տախտակն անգամ ծախել ու վառել էին: Կիսավեր վիճակում էր քաղաքի հայկական եկեղեցին, որի մի մասը վերածել էին թուրք աղջիկների վարժարանի: Հայերը զրկված էին ամենատարրական ազատություններից. «Երկու հայ քչին կրնար քով քովի գալ և խորհրդակցել: Ահաւոր սարսափի մը տակ, գիշերը ինչպէս լուսնելնին չգիտեին»:<sup>281</sup>

«Ճակատամարտը» իր խմբագրականներում մշտապես բարձրացրել է տարագրյալների կալվածքների կամ անշարժ գույքի և նրանցից գանձվող հարկերի ու տուրքերի խնդիրները: Օրաթերթը փաստերի հիման վրա ցույց է տվել, որ թուրքական կառավարությունը, որը չեղյալ էր հայտարարել հայերին վերաբերող իթթիհատական կառավարության ընդունած բացառիկ օրենքները, այդ հարցերին քչր տալիս արդար լուծում: Օրինակ՝ «Տարագիրներուն կալվածները» խմբագրականում նշվում էր, որ մի կողմից՝ թուրքական նոր կառավարության կարգադրության համաձայն տարագիր հայերի անշարժ գույքը պիտի վերադարձվեր նրանց, մյուս կողմից՝ ներքին գործերի նախարարի հրահանգով այդ կարգադրությունը սրբագրվել էր: Ըստ այդմ, «տարագրեալներէն անոնք որ կը վերադառնային և անձնապէս իրենց կալուածները կը պահանջեին, անմիջապէս պիտի ստանային, իսկ անոնք որ անձնապէս քչին ներկայանար (մեռած, կորսուած, կոտորուած), անոնց մօտաւոր կամ հեռաւոր ժառանգորդներուն չպիտի յանձնուէին կալուածները»:<sup>282</sup> «Ճակատամարտը» կառավարությունից պահանջում էր լինել ազնիվ և չեղյալ հայտարարել ներքին գործերի նախարարության հրահանգը: Զէ՞ որ հայերի կալվածքներն անտեր քչին մնա, եթե նրանք իրենց կամքին հակառակ չտարագրվեին ու չդատապարտվեին բնաջնջման: Զոհերը մեղավոր քչին: Կառավարությունը իրավունք չուներ նրանց անշարժ գույ-

<sup>280</sup> «Արիամարտ», 1918, թիվ 20:

<sup>281</sup> Նույն տեղում:

<sup>282</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 90:

քը հափշտակել կամ հանձնել դրան ապօրինի տիրացած անձանց: «Բարոյական և իրաւաբանական ոչ մէկ հիմ կայ ասոր հակառակը շարժելու: Այդ կալուածները ժամանակաւորապէս պէտք է յանձնել ուղղակի տէրերուն, իսկ անոնց չգոյութեան պարագային, անոնց ազգականներուն այն օրէնքով որ գոյութիւն ունի», - այս եզրահանգմանն էր գալիս «Ճակատամարտը».<sup>283</sup> Իհարկէ, քննարկվող բոլոր հարցերի վերաբերյալ օրաթերթի առաջարկները, ինչպէս նաև Եղեռնից մազապուրծ եղած տարազըրյալների իրավունքներն այդպէս էլ մնացել են մերժված և ոտնահարված թուրքական իշխանությունների կողմից: Բայց «Ճակատամարտը» շարունակել է ահագանգել և բացահայտել թուրքական կառավարության խոսքի ու գործի հակասությունը տարագրյալների առիթով: Օրաթերթը մի շարք կեղծիքներ է մատնանշել տարագրյալների տեղավորման, խնամքի և պարենավորման կազմակերպման գործում: Կառավարությունը որոշում էր ընդունել Թուրքիայի արևելյան նահանգների աղետյալներին ուղարկել մնացած նահանգների տասանորդներից գոյացած հացահատիկը: Իրականում աղետյալներից կամ տարագիր հայերից էին գավառային իշխանությունները պահանջում տասանորդ: «Որքան գիտենք, պետութիւնը ունի օրէնք մը, որու հիման վրայ գաղթականութիւնը մինչև եօթը տարի տուրքերէ ազատ կ'ըլլայ. մեզ կը թուի թէ այս օրէնքին մէջ պիտի մտնէ և տասանորդի տուրքը վերադարձող տարագրեալներէն, այն ատէն ներկայ կառավարութիւնն ալ կը շարունակէ ունենալ երկու չափ և երկու կշիռ իր պետութեան սահմաններուն մէջ գտնուող ժողովուրդներու համար: Մեր կարծիքով կառավարութիւնը երկար ժամանակ պետական միջոցներով պիտի հոգար այդ ժողովուրդը, մինչև որ անոր մնացորդները հնարաւորութիւն ունենային վերակազմուելու: Անգամ մը եւս կուգանք այն հանգման, որ թուրք կառավարութիւնը չի կրնար արդարութեամբ կառավարել», - գրված է «Վերադարձող տարագիրները և տասանորդի տուրքը» խմբագրականում.<sup>284</sup>

«Ճակատամարտը» ոչ միայն պաշտպանել է տարագրյալ հայերի շահերն ու իրավունքները, այլև ռեպորտաժների ու թղթակցությունների միջոցով պատկերացում է տվել նրանց կյանքի և կենցաղի մասին: Բերենք մեկ օրինակ: «Ղեգերումներ ավերակներուն մեջ» թղթակցություն-

<sup>283</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 90:

<sup>284</sup> Նույն տեղում, 1919, թիվ 232:

նում Գ. Ութուջյանը ներկայացրել է Նիկոմեդիայի շրջանի հայերի կենսա-  
 պայմանները: «Գացի և տեսայ աւերակներ, համատարած թշուառութիւն  
 ու մեռելութիւն: Տեսայ քանդուած հայ օճախները, սրբապղծուած ու թա-  
 լանուած եկեղեցիները: Աւերակ էին Իգմիտի երբեմնի շէն ու զուարթ հայ  
 թաղերը, որոնց տուներուն պատերը միայն կանգուն էին մնացեր», - նկա-  
 րագրում է հողվածագիրը:<sup>285</sup> 650 տնից բաղկացած զուտ հայաբնակ այդ  
 թաղերը 6 տեղից կրակի էին տրվել և այրվել, մոխրացել էին 48 ժամվա  
 ընթացքում: Տարագրությունից առաջ Իգմիտն ուներ 6800 հայ բնակիչ:  
 Այնտեղ հաշվվում էր 1100 հայկական տուն: «Հոն առետրական ամբողջ  
 կեանքը և հրապարակը, շուկան և արհեստը հայերուն ձեռքն էին: Այսօր  
 հագիւ 410 տուն մնացած է բնակելի, իսկ ժողովուրդէն 1130 անձ միայն  
 վերադարձած են: Եթէ հաշուենք 630-ի չափ շրջակայ գիւղերէ եկած հաս-  
 տատուածներն ալ, կունենանք 1760 հայրենակիցներ», - վիճակագրա-  
 կան տվյալներով իր խոսքը հավաստի էր դարձնում Գ. Ութուջյանը:<sup>286</sup>  
 Նա շարունակում է նկարագրել հայկական թաղերի վիճակը 1919 թ.  
 մարտի 5-ի դրությամբ: Հայկական թաղերի ավերակույտի վերջում  
 կանգնած էր սուրբ Աստվածածին եկեղեցին, որի դռան վրայի խոշոր  
 մարմարյա խաչերը հանել-տարել էին և փորձել էին ջնջել մարմարյա  
 տախտակի վրա փորագրված հայերեն արձանագրությունը: Թալանել և  
 աճուրդով վաճառել էին տարագրության օրերին եկեղեցում պահված  
 հայերի կահ-կարասին, նաև՝ եկեղեցու զարդերն ու հարստությունը:  
 Ջարդ ու փշուր էին արել եկեղեցու մոտ գտնվող քարաշեն մանկապար-  
 տեզի ապակիները ու դռները, իսկ շենքը վերածել էին բանտի: Քանզել  
 էին եկեղեցու դիմաց գտնվող հայոց ազգային խորհրդի շենքը և դրա  
 միայն 4 պատերն էին կանգուն թողել: Խնամքով հանել և Կ.Պոլսի հրա-  
 պարակում վաճառել էին հայերի տների մեծ մասի ապակիները: Ազգա-  
 յին շերամատունը վերածել էին նախ՝ հիվանդանոցի, ապա՝ զորանոցի  
 անգլիացի զինվորների համար: Առաջնորդարանն այդ շենքում էր տեղա-  
 վորել այն հայ տարագիրներին, որոնց բնակարանները թուրքերը հողին  
 էին հավասարեցրել: Այդ տարագիրները հիմնականում որբեր և այրիներ  
 էին: Կառավարությունը որևէ կերպ չէր աջակցում նրանց, ուստի նրանք  
 փորձում էին սեփական ուժերով աշխատանք գտնել ու հոգալ իրենց

<sup>285</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 97:

<sup>286</sup> Նույն տեղում:

ապրուատը: «Կ'իջնեն Իզմիտի նշանավոր հայ Պալըզ-Փազարը, մերինները դարձեալ վերաշիներ էին իրենց քանդուած խանութները: Նախկին հայ կառապանները դարձեալ եկած էին իրենց ասպարէզին զլուխը: Երէկուան թալանուած վաճառականը մտեր էր ծակի մը մէջ, տասնեակ մը նիւթերու նմոյշներով յարդարած խանութը: Հայ նաւավարը դարձեալ անցեր էր գործին զլուխը, չես գիտեր ինչպէս տէր դառնալով այս անգամ նոր նաւակներու: Քանակով խիստ կոտորակուած հայութիւնը իր որակին գերազանցութիւնը դարձեալ ի յայտ բերած էր», - գրում էր Գ. Ութուջանը:<sup>287</sup> Նա Իզմիտ վերադարձած հայերի մեջ առանձնացնում էր կարիքավոր կամ կարոտյալ տարագրյալներին, որոնց մի մասը տեղավորվել էր ազգային շերամանոցում, իսկ շատերը անօթևան էին, անգամ՝ զրկված հաց ու ջրից: Եվ իզուր էր Առաջնորդարանը այդ խնդրով պարբերաբար դիմում թուրքական կառավարությանը, որովհետև վերջինը ոչ մի աջակցություն չէր ցուցաբերում վերադարձող հայերին: «Պաշտօնեաները մնացած են հին պաթուրքա մտայնութեան մէջ», - այս շեշտադրմամբ էր հողվածն ամփոփում Գ. Ութուջանը:<sup>288</sup>

Հայրենիք վերադարձած տարագիրների խնդիրները լուսաբանող նյութերում «Ճակատամարտը» մերթնդմերթ այն միտքն էր արտահայտում, որ հայ ժողովուրդը, ի հեճուկս իրեն կոտորողների և ոչնչացնել ցանկացողների, ունի ապրելու անկոտրում կամք: Օրինակ՝ «Միշտ դեպի լույսը» թղթակցության մեջ նշվում էր, որ Պալըզների վերադարձած տարագիրները վերաբացել էին մանկապարտեզը և հայտարարության միջոցով աշխատակցուի էին փնտրում: «Պալըզսէրի ջարդուկտոր հայութիւնը միակը չէր այս մասին: Բոլոր այն քաղաքներէն և ասաններէն՝ ուր շնչելու արգելքը վերցած էր, նոյն լուրերը կը յաջորդէին իրարու: Դպրոցը բացուեցաւ, վարժարանները բացուելու վրայ են, ուսուցիչ և ուսուցչուի կը փնտռեն: Հայ ժողովուրդը՝ թիով պակսեցաւ, բայց չպակսեցուց իր ազգային առաքինութիւնները, կորսնցուց իր հարստութիւնը, բայց անվթար պահեց իր ազգային բարոյական ժառանգութիւնը», - գրում էր Ծերուկը:<sup>289</sup>

<sup>287</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 97:

<sup>288</sup> Նույն տեղում:

<sup>289</sup> Նույն տեղում:

Ձինադադարից հետո հայրենիք վերադարձող հայերի առջև ծառայած խնդիրները ներկայացնելուն զուգահեռ «Ճակատամարտն» անդրադարձել է դրանց լուծմանը կոչված պետական ու ազգային կառույցների աշխատանքներին՝ հանդես գալով արդյունավետ առաջարկներով: Այս բնույթի նյութերում երևում էին և՛ արևմտահայության զանազան միությունների ու կազմակերպությունների ազգանպաստ գործելակերպի մղումը, և՛ լիարժեք ազգային գործունեություն ծավալելու համար թուրքիայում տիրող աննպաստ պայմանները, և՛ այդուհանդերձ, նման իրավիճակում դժվարությամբ արվածն ու չարվածը: Օրինակ՝ «Գործունեության մը հաշիվը» հոդվածում վերլուծում էր Տարագրելոց կենտրոնական հանձնախմբի աշխատանքը:<sup>290</sup> Հանձնախումբը հիմնվել էր 1918 թ. դեկտեմբերի 19-ին: Գործունեության շրջանակը փոքր էր: Այն քր անցնում Տավրոսյան լեռնաշղթայի հյուսիս-արևելյան սահմանները և հիմնականում Կ.Պոլսի շրջակա գավառների տարագրելոց հանձնախումբն էր: Տարագրելոց կենտրոնական հանձնախումբը կազմվել էր Ազգային վարչության խառը ժողովի որոշմամբ և ուներ 32 անդամ ու 4 հանձնախումբ (նպաստահավաք, ելևմտոց և մատակարարական, տեղավորման և առաքման, առողջապահական): Հոդվածագիրն անդրադարձել է հանձնախմբերի մեկամսյա գործունեությանը և մնացել չափազանց հուսախաբ, քանի որ անչափ քիչ գումար էր հանգանակվել՝ նրանց աշխատանքը կազմակերպելու համար: Տարագրելոց կենտրոնական հանձնախումբը ծրագրեր էր իրականացրել այն տարագրյալների շրջանում, ովքեր եկել էին Գոնիայից և շրջակայքից: Հանձնախումբը Կ.Պոլսում հաստատել էր տարագրյալների ընդունման և առաքման 6 կայան: «Տարագրելոցի գործունեութիւնը խեղճուկ տպատրութիւն կը թողու մեր վրայ և անգամ մը եւս կը հաստատուիմք այն կարծիքին մէջ թէ Պոլսոյ ափերուն վրայ գեղեցիկ մտքերն ու գործերը նպաստաւոր հող չեն գտներ», - այս եզրակացությամբ էր հոդվածն ավարտում Մ. Վերածինը:<sup>291</sup> Ի տարբերություն այս մտահոգիչ փաստերի, Ա. Սաֆրաստյանը «Ազգային խորհուրդը» հոդվածում դրական էր համարում այն ոգևորությունը, որը զգացվում էր պոլսահայ համայնքում Մուդրոսի զինադադարից հետո: «Ձանազան ակումբներու կազմակերպութեան հետ համընթաց, թաղերու

<sup>290</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 66:

<sup>291</sup> Նույն տեղում:

մէջ կազմուեցան որբերու և տարագիրներու համար օժանդակ մարմինները: Հայ Կարմիր Խաչը կարճ ժամանակի մը մէջ սկսած է իր ճիւղերը տարածել ամէն կողմ: Հայ մտաւորականները, իրաւաբանները, բժիշկներն ու ուսուցիչները, իրենց կարգին գործելու, շարժելու համար ասպարէզ իջած են: Հասարակութեան բոլոր կենսունակ տարրերը, գրեթէ առանց բացառութեան, շարժման մէջ են, գործելու պատրաստ: Այս իրողութիւնը մխիթարական է և սրտապնդող», - գրում էր Ա. Սաֆրաստյանը:<sup>292</sup> Նա առաջարկում էր ստեղծել հանրային ուժերի գործունեությունը ղեկավարող մարմին՝ Ազգային խորհուրդ: Այն պիտի ներկայացնէր Մեծ եղեռնից մազապուրծ եղած հայ ժողովրդի բոլոր միություններն ու կազմակերպությունները:<sup>293</sup> Ա. Սաֆրաստյանի տեսակետն ընդհանուր առմամբ կիսում էր նաև Մ. Պետրոսյանը՝ միայն առաջարկելով կազմվելիք Ազգային խորհուրդը կոչել Ազգային միություն և պնդելով, որ այդ ազգային մարմնում պատրիարքարանները չունենային ներկայացուցիչ: «Պատրիարքարանները եղած են պահպանողական հիմնարկութիւններ և երբեք չհնարար աշխատանքի ընդունակութիւն ցոյց չեն տուած», - այս կարծիքն էր հայտնում Մ. Պետրոսյանը:<sup>294</sup> Նա հիշեցնում էր, որ պատրիարքարանները խանգարում էին պոլսահայերի կողմից Ազգային խորհուրդ ձևավորելու փորձերը:<sup>295</sup> Իր առաջարկներով ավելի ծայրահեղ էր Կարոն: Նա դեմ չէր վերոհիշյալ կարծիքներին: Պարզապես այդ գործընթացի արագացման համար առաջարկում էր հրապարակավ ամոթանք տալ կեղծ ազգասերներին, ովքեր խնջույքներում բաժակաճառեր էին արտասանում Մայր Հայաստանի համար, ովքեր իրենց օրերն անցկացնում էին իբրև թէ ազգանպաստ ծրագրերի իրականացման նպատակով հանդեսներ կազմակերպելով կամ այդ ծրագրերի շուրջ տաքուկ սենյակներում օրերով անպտուղ բանավեճեր մղելով, բայց զլանում էին նյութական ու ֆինանսական աջակցություն ցույց տալ կարոտյալ տարագիրներին: Այս կերպ էր Կարոն փորձում ազգային ղեկավար մարմնի ձևավորման աշխատանքներին մասնակից դարձնել ունևոր պոլսահայերին:<sup>296</sup> Գրիգոր Ճուլոյանն այդ գործում մեծ դեր էր հատկացնում երիտասար-

<sup>292</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 38:

<sup>293</sup> Նույն տեղում:

<sup>294</sup> Նույն տեղում, 1919, թիվ 237:

<sup>295</sup> Նույն տեղում:

<sup>296</sup> Նույն տեղում, 1919, թիվ 110:

դությանը: «Սերունդ պէտք է մեզ, սերունդ մը՝ դիմագրաւելու ու պայքարելու ամէն պատահականութեանց, սերունդ մը՝ մտաւորական ու բարոյական ամէն առաւելութիւններով օժտուած, սերունդ մը՝ մանաւանդ ֆիզիքապէս կրթուած, առողջ ու կայտաւ: Այդ պարտականութիւնը կ'իյնայ մեզի՝ Հայութեան յոյսը կազմող երիտասարդներու: Հաւաքուինք մենք և ցոյց տանք թէ Հայը ընդունակ է վերապրելու, յառաջդիմելու», - գրում էր նա:<sup>297</sup>

Օրաթերթը հոգատարութեամբ է մոտեցել նաև հայ որբերին գտնելու, հավաքելու և ուծացումից փրկելու հիմնահարցերին: «Ճակատամարտը» համոզված էր, որ թուրքական պետությունը շահագրգիռ չէր նշված խնդիրների հայանպաստ լուծմամբ: Ընդհակառակը, իշխանություններն ամեն ինչ անում էին, որ խոչընդոտեին, ասեմք՝ որբերին հայտնաբերելուն կամ նրանց հայ համայնքին վերադարձնելուն: «Շողերը փրկելու համար» հոդվածի հեղինակ Սարգիս Սարունու կարծիքով՝ «անոնք որ 2 տարեկանէն վար ըլլալով հաւաքուած էին թուրքերու կողմէ, կարելի էր կորսուած նկատել»: <sup>298</sup> Որբերի հավաքման գործը նախաձեռնել էին մի խումբ երիտասարդներ, սակայն դա արել էին առանց մշակված ծրագրի: Իրենց հապճեպ քայլերով նրանք կարծես նպաստում էին, որ «մեր արիւնժուտ դահիճները նոր միջոցներ մտածեին թաքցնելու համար մատաղ որբուկները»: <sup>299</sup> Այդ երիտասարդները պիտի իմանային, որ չափազանց «քիչ թիւ մը կը կազմեին քրիստոնէայ թաղերուն մէջ բնակող թուրքերու պահած որբերը, մինչդեռ անդին աշխարհ մը կար թրքաբնակ, ուր կալանուած մեր քոյրերուն և եղբայրներուն շունչն անգամ դժուար թէ մեզի հասներ»: <sup>300</sup> Թուրքական իշխանությունները հայերի հիմնած Որբահավաք և Որբախնամ մարմիններին խանգարելու նպատակով թրթարարությանը մեծ դեր էին հատկացրել: Բացի այդ, նրանք հայ որբերին գտնելու գործը հանձնարարել էին հայոց կոտորածներում աչքի ընկած անձանց՝ ոստիկաններին : «Ճակատամարտն» առաջարկում էր ստեղծել թուրքական թաղերում փակի տակ պահվող հայ որբերին փնտրող և ցուցակագրող մարմին: Այն կառավարությանը պիտի ներկայացներ հայտ-

<sup>297</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 44:

<sup>298</sup> «Արիամարտ», 1918, թիվ 16:

<sup>299</sup> Նույն տեղում:

<sup>300</sup> Նույն տեղում:

նաբերված որբերի և նրանց գտնվելու վայրերի ցուցակը: Կառավարությունը պիտի պարտադրեր հայ որբեր թաքցնող թուրքերին՝ երեխաներին հանձնել հայոց Պատրիարքարանին: Իսկ որբերին չվերադարձնողներին պիտի ամենածանր պատժին ենթարկեին:<sup>301</sup> «Ճակատամարտը» դժգոհ էր նաև այս ոլորտներում Պատրիարքարանի ծավալած գործունեությունից: «Որոշումը չի բավեր» խմբագրականում նշվում էր, որ վերապրողների և որբերի նկատմամբ իրագործվող սպիտակ ջարդի համար պատասխանատվության բաժինն ուներ Պատրիարքարանը:<sup>302</sup> Սամվել Ռշտունին «խոսքը առանց գործի մեռյալ է» հողվածում հանդես էր գալիս իրադրության շտկման մի շարք առաջարկներով:<sup>303</sup> Թվարկենք դրանք.

\* «Սէվքիաթի պէս պաշտօնէ ութին մը կազմենք՝ իր հատուկ պաշտօնեաներով և անմիջապէս դրկենք» երկաթուղային գլխավոր կայարանները,

\* յուրաքանչյուր վաճառատուն, պանդոկ, ճաշարան, սրճարան, արհեստանոց և այլն թող հայտնեին թերթերի միջոցով, թե այսքան գումար կամ որևէ օրվա հասույթը նվիրում էին Որբախնամին կամ Տարեգրելոց մարմնին,

\* յուրաքանչյուր աշխատող հայ թող իր մեկ կամ մի քանի օրվա վարձատրությունը հատկացներ վերը նշված մարմիններին,

\* յուրաքանչյուր դպրոց, հասարակական հաստատություն կամ տուն թող իր ամսվա մեկ կիրակի օրվա մսի կամ նուշեղենի գնման համար նախատեսված գումարը նվիրեր Որբախնամ և Տարագրելոց մարմիններին,

\* Կարմիր խաչի հանձնախմբերում թող ցուցակագրվեին այն հայ կանայք, ովքեր ցանկանում էին որբերի համար հագուստներ կարել, ճաշ եփել, հիվանդներին խնամել:

Այս ազգապահպան գործին քիչ կարող չմասնակցել բոլոր նրանք, ովքեր «Ազգին Սէրը ունին կամ կը կարծեն ունենալ իրենց սիրտերուն մէջը,- ոչ ոք բացառութիւն չկրնար կազմել»:<sup>304</sup> Նմանաբնույթ կոչերով «Ճակատամարտի» էջերում պարբերաբար հանդես էին գալիս

<sup>301</sup> «Արիամարտ», 1918, թիվ 16:

<sup>302</sup> Նույն տեղում:

<sup>303</sup> «Արդարամարտ», 1918, թիվ 12:

<sup>304</sup> Նույն տեղում:

Տարագրելոց և Որբախնամ մարմինները, որոնք միայն սեփական ուժերով անկարող էին հոգալ բոլոր կարիքները: Օրինակ՝ Որբախնամը հիմնվել էր մինչև 14 տարեկան «բոլորովին աննեցուկ ու անտէր մնացած որբ մանուկներու սնուցման ու պատասպարման նախնական պէտքերը հայթայթելու» համար:<sup>305</sup> Կոչերից մեկում Որբախնամի վարչությանը «կը ծանուցանէ 14 տարեկանէ վեր որբերուն որ չդիմեն իրեն կան չգան Պոլիս այն յոյսով թէ Որբախնամը զիրենք դպրոց պիտի դնէ: Միևնոյն ժամանակ կը խնդրէր այն անէն բարեսէր հայերէ որոնք մինչէւ ցարդ գաւառի մէջ որբերու հոգածութիւնը ստանձնած էին՝ որ չաճապարեն Պոլիս դրկել իրենց քով գտնուած որբերը, որովհետէ: Որբախնամը միջոցներ ձեռք առած էր կարելի եղած չափով գաւառի կեդրոններուն մէջ խնամելու համար այդ որբերը:<sup>306</sup>

«Ճակատամարտը» համոզված էր, որ որբերի իրավունքները պիտի պաշտպանվեին համազգային ջանքերով, քանզի նրանք վերջին վկաներն էին Հայոց ցեղասպանության: «Անոնք պիտի գործադրեին վաղը ինչ որ իրենց ըսուեցաւ չարչարանքի ծորերուն մէջ, իրենց մօրն ու քրոջը վերջին նայուածքովը, իրենց հայրիկին անծէքովը: Անոնք պիտի երթան օր մը, գերագոյն հրճուանքի օր մը, ըսելու իրենց սիրելի մօրը անյայտ գերեզմանին վրայ. «Մայր, հանդարտ քնացիր գերեզմանիդ մէջ, կատարեցի ա՛ն գոր գիշեր մը, արիւնշաղախ կոկորդո՛ բռնած, վերջին անգամ փսփսացիր ինձի», - գրում էր «Ճակատամարտը»:<sup>307</sup>

*ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ  
«ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ*

Օրաթերթում մեծ ուշադրության են արժանացել նաև աճող սերունդի կրթական գործը և ուսուցիչներին մտահոգող հիմնահարցերը՝ հատկապես 1920-1922 թթ.: «Փրկենք սերունդը» հոդվածում Մ. Ասլանյանը գրում էր, որ վերջին տարիներին կրթական մակարդակն ու հայկական

<sup>305</sup> «Արդարամարտ», 1918, թիվ 32:

<sup>306</sup> Նույն տեղում:

<sup>307</sup> Նույն տեղում, 1918, թիվ 10:

դպրոցները անկում էին ապրում:<sup>308</sup> Դրա հետևանքով հայկական կրթօջախներում պատրաստվում էին սրտով և մտքով ամուլ երիտասարդներ, իսկ օտար վարժարաններ հաճախող հայ մանուկներն ստանում էին ոչ հայեցի կրթություն և դաստիարակություն: Այդ իրավիճակի գլխավոր ու հիմնական պատճառը ուսուցչությունն էր կամ ավելի ճիշտ՝ հայ ուսուցիչների «նիւթական և բարոյական ողորմելի վիճակը»:<sup>309</sup> Ուսուցչի աշխատավարձը չնչին էր և «կօշկակարներու քով իբրև աշակերտ ծառայող դպրոցական տղաքն անգամ իրենց ուսուցիչներէն ասելի դրամ կը ստանային»: Աշխատավարձի պատճառով եվրոպական համալսարանների շրջանավարտ ուսուցիչներից շատերը գիտությամբ կամ ստացած մասնագիտությամբ զբաղվելու փոխարեն դարձել էին առևտրական: Տուժում էին թե՛ նրանք, թե՛ մատաղ սերունդը, որի դաստիարակության և կրթության հոգսը դպրոցներում հոգում էին այն մարդիկ, ովքեր «կեանքի ամէն մէկ ասպարէզին մէջ ծախողելէ յետոյ, ուսուցչութեան մէջ գտած էին իրենց հանգիստը»: Մ. Ասլանյանի կարծիքով՝ ժամանակը եկել էր փրկելու նորահաս սերնդին՝ լուծելով ուսուցիչներին մտահոգող բոլոր հարցերը:<sup>310</sup>

«Ճակատամարտի» էջերում երկխոսություն է ծավալվել կրթական խնդիրների շուրջ: Հողվածներով հանդես են եկել անվանի մանկավարժներ ու մտավորականներ: Նրանք համակարծիք էին մի շարք հարցերում և գտնում էին, որ, օրինակ՝ ուսուցիչները պետք է լինեին արհեստավարժ, պետք է ունենային մասնագիտական կրթություն, պետք է աշխատեին ըստ մասնագիտական որակավորման, պետք է ստանային իրենց գիտելիքներին, աշխատանքային փորձին ու կրթության մակարդակին համապատասխանող՝ տարբերակված աշխատավարձ: Թվարկված հարցերի կարգավորմամբ պիտի զբաղվեր կենտրոնական ուսումնական խորհուրդը, որին պիտի օգներ ուսուցչական միությունը: «Ուսուցչական թոշակները» հողվածում Գ. Շահլամյանը հանդես է եկել ոլորտի կարգավորման կոնկրետ առաջարկներով: Նա մասնավորապես ցանկացել է, որ կրթօջախներում մտցվի ուսուցիչների աշխատավարձե-

<sup>308</sup> «Ճակատամարտ», 1920, թիվ 503:

<sup>309</sup> Նույն տեղում:

<sup>310</sup> Նույն տեղում:

րի եռաստիճան համակարգ: <sup>311</sup> Դպրոցական բյուջեի ձևավորման արդյունավետ առաջարկներ կան Ե. Արմենի՝ «Կրթական վերքը և փրկության ճամփան» հոդվածում: <sup>312</sup> Գ. Շահլամյանը մեկ այլ հոդվածում անդրադարձել է կրթական ընդհանուր ծրագրի կազմման խնդրին՝ այն դիտարկելով արևմտահայ ու արևելահայ դպրոցներում: <sup>313</sup> «Ճակատամարտն» արդեն 1921 թ. ներկայացրել է հասարակական այն քննարկումները, որոնք առնչվում էին ուսումնական խորհրդի և ուսուցչական միության ջանքերով մշակվող կրթական նոր ծրագրին: <sup>314</sup> Բնորոշ են Գ. Շահլամյանի՝ «Կրթական ծրագրի պատրաստութենն առաջ» <sup>315</sup> և Գ. Մեսրոպի՝ «Ուսուցիչներու ինկածությունը և ուսումնական խորհուրդը» <sup>316</sup> հոդվածաշարերը: Դրանց քննադատությունների թիրախը ուսումնական խորհուրդն էր, որը մեղքի մեծ բաժին ուներ կրթական թնջուկի չլուծման խնդրում:

Կրթական թեմայի շրջանակում քննարկվող հարցերից էր այն, թե արևմտահայ իրականության մեջ ո՞ր տիպի դպրոցներին կամ վարժարաններին պիտի նախապատվություն տրվեր: Գ. Շահլամյանը բավական հիմնավոր փաստերի թվարկմամբ և ներկայացմամբ հանգում էր այն եզրակացությանը, որ «ազգային միջավայրի, ընդհանուր քաղաքակրթական, նիւթական թէ դաստիարակչական և այլ տեսակէտներով նպատակայարմար էին միջնակարգ վարժարանները, առանց մասնագիտական բաժանումներու»: <sup>317</sup> Գ. Շահլամյանի հետ համաձայն էր «Ի՞նչ պիտի դպրոցներու պետք ունինք» հոդվածի հեղինակը՝ Վ. Հապեշյանը: Նա նույնպես գտնում էր, որ իրենց անհրաժեշտ էին իննամյա կրթությամբ ազգային միջնակարգ վարժարաններ կամ «արդի ռեալական դպրոցներ»: <sup>318</sup> Վ. Հապեշյանը մեկ այլ հոդվածում խորհուրդներ էր տալիս, թե այդ կարգի դպրոցների համար ինչպես կարելի էր կազմել նոր կրթական ծրագրեր: <sup>319</sup> Գ. Շահլամյանը «Նույն ծախքով լավագույն արդ-

<sup>311</sup> «Ճակատամարտ», 1920, թիվ 506:

<sup>312</sup> Նույն տեղում, 1920, թիվ 520:

<sup>313</sup> Նույն տեղում, 1920, թիվ 575:

<sup>314</sup> Նույն տեղում, թիվ 803, 810:

<sup>315</sup> Նույն տեղում, 1921, թիվ 839, 841:

<sup>316</sup> Նույն տեղում, 1921, թիվ 835, 836:

<sup>317</sup> Նույն տեղում, 1922, թիվ 1132:

<sup>318</sup> Նույն տեղում, 1922, թիվ 1155:

<sup>319</sup> Նույն տեղում, 1923, թիվ 1469:

յունք» հողվածում թվարկում էր մի շարք արդյունավետ միջոցներ՝ կրթօջախների ֆինանսական ու նյութական խնդիրները լուծելու համար, ինչը կխթաներ դրանց կրթական մակարդակի բարձրացմանը:<sup>320</sup> Բարեփոխիչ առաջարկների հիմքում հողվածագիրը դնում էր այն գաղափարը, թե «նորահաս սերունդի կրթական գործը, ամեն կողմնակի մտայնութենէն վեր պիտի ըլլար. թաղական, հոգաբարձու, խնամակալ, տնօրէն-ուսուցիչ բոլորն ալ եղած են միայն դպրոցի համար, և ոչ թէ՝ դպրոցը իրենց համար»:<sup>321</sup> Գ. Շահլամյանը կրթական գործի պատասխանատուներին էր մեղավոր համարում կրթության բարձիթողի վիճակի համար: Նա «Կրթական կյանքը» հողվածում հանգամանորեն վերլուծել է կրթական համակարգում առկա թերությունները և կոչ էր անում՝ վերացնել դրանք կամ գտնել դրանց լուծման ուղիները:<sup>322</sup> Կրթական կյանքի հիմնահարցերից Գ. Շահլամյանն առանձնացնում էր կրթական մնայուն դիվանի, կրթական այցելու տեսուչների, ուսումնական ծրագրերի և դասագրքերի բարելավման խնդիրները: Այս բնագավառում գործը հիմնականում պիտի ընկած լիներ ուսուցչական միության և ուսումնական խորհրդի ուսերին, բայց իրականում այդ մարմինները գրեթե ոչինչ չէին անում: «Ուսուցչական միութիւնը - ինչպէս կ'ըսէ ժողովրդական առածը - անունը կայ, ամանունը չկայ: Մենք չի տեսանք անոր գործունէութեան շօշափելի մէկ ապացոյցը, ուսուցիչներու մտաւոր, բարոյական զարգացման համար ոչ մէկ բան ըրաւ Միութիւնը», - գրում էր:<sup>323</sup>

Կրթական ոլորտում գոյություն ունեցող հիմնահարցերի քննարկումը «Ճակատամարտը» շարունակել է գրեթե մինչև իր վերջին համարը: Արդեն 1924 թ. օրաթերթն այլևս չի բարձրացրել նախկինում հնչեցրած խնդիրները, այլ ավելի շատ մտահոգվել է թուրքիայում ընդունված այն օրենքներով կամ կառավարության որոշումներով, որոնք մեծապես սահմանափակում էին ազգային փոքրամասնությունների (մասնավորապես հայերի)՝ մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքը: Օրինակ՝ «Նոր տագնապը» խմբագրականում նշվում էր. «Չկայ, կամ մենք չենք գիտեր միջոց մը, որով կարելի ըլլայ բացատրել մութ կէտերը և

<sup>320</sup> «Ճակատամարտ», 1922, թիվ 1157:

<sup>321</sup> Նույն տեղում:

<sup>322</sup> Նույն տեղում, 1922, թիվ 964:

<sup>323</sup> Նույն տեղում:

վերջնական ձեւաւորում տալ առկախ խնդիրներու»:<sup>324</sup> Մեկ ուրիշ խմբագրականում ներկայացվում էին Թուրքիայում հայկական դպրոցների խնդիրները՝ անելով հետևյալ եզրակացությունը. «Լուրջ վտանգի տակ են հայկական դպրոցները, գանազան վայրերու մեջ»:<sup>325</sup> «Ճակատամարտը» գտնում էր, որ «բոլոր գաղութներուն մէջ ալ ամէնէն կենսական հարցը դպրոցն է, սակայն չունինք ո՞ր և է կազմակերպութիւն յատկապէս այդ հոգին համար, և հազարաւոր մանուկներ դատապարտուած են աղձատման»:<sup>326</sup>

Վերը քննարկված համազգային բնույթի խնդիրները «Ճակատամարտ» օրաթերթում առավել հաճախակի են լուսաբանվել հատկապէս 1920-1924 թթ., երբ այդ ազգապահպան կառույցների աշխատանքն արդեն կարգավորվել և հունի մեջ էր ընկել: Արևմտահայերին մտահոգող հիմնահարցերը օրաթերթում դիտարկվել են իրենց ընթացքի ու զարգացման մեջ: Առանձնանում են «Հայկական կյանք», «Պոլիս և իր թաղերը», «Գաղութներ», «Ընթացիկ կյանք» բաժինները:

Հասարակական-քաղաքական խնդիրներից բացի «Ճակատամարտ» օրաթերթում լուսաբանվել է նաև ժամանակի հայկական և միջազգային մշակութային անցուդարձը: 1920-1924 թթ. օրաթերթում առավել հաճախակի են դարձել բնույթով մշակութային նյութերը (վերլուծական հոդվածներ, թղթակցություններ, լուրեր): «Ճակատամարտը» դրանցով կարծես ցանկացել է ցույց տալ, թե անկախ ամեն ինչից հայ ազգը կենսունակ է և հաջողությունների կարող է հասնել աշխարհի լավագույն բեմերում ու ցուցասրահներում: Մշակութային կյանքն արտացոլված է, օրինակ՝ «Թատրոն», «Գավառի մոռցված տիտանները», «Մշակութային սուրհանդակ», «Գրքեր», «Հոբելյան մը» և այլ բաժինների ու խորագրերի ներքո: Ասեց՝ «Թատրոն» բաժնում գրեթե ամեն օր վերլուծվում էին ոլորտի խնդիրները և ներկայացվում էին ձեռքբերումները: Բուշադրության կենտրոնում էին հիմնականում Կ.Պոլսի Հայ դրամատիկական ընկերության կողմից բեմադրվող ներկայացումները: Նշվում էր, որ այդ ընկերության դերասանները «Անուշ» թատերախաղում «երեսան բերին այնպիսի

<sup>324</sup> «Ճակատամարտ», 1924, թիվ 1684:

<sup>325</sup> Նույն տեղում, 1924, թիվ 1705:

<sup>326</sup> Նույն տեղում, 1924, թիվ 1566:

յատկութիւններ, որոնք իրական տաղանդ կ'արտայայտէին»:<sup>327</sup> Կամ ասվում էր, որ «Թշվառները» ներկայացման մեջ բոլոր դերասանները իրենց համապատասխան «դերերուն մէջ էին»:<sup>328</sup> Կ.Պոլսի Հայ դրամատիկական ընկերության ծավալած գործունեությունը գնահատելու առումով կարևոր է 1919 թ. սեպտեմբերին աշխատանքային այցով Կ.Պոլսում գտնված Ալ.Շիրվանզադեի կարծիքը Հայ դրամատիկական ընկերության մասին. «Տրամաթիքը անգամ մըն ալ ապացուցեց որ շնորհիւ իր կենսունակ և ընդունակ ուժերուն ան կոչուած է կարևոր դեր մը կատարելու Պոլսահայ թատերական կեանքին մէջ: Ազգ մը կ'ապրի իր թատրոնովը, գրականութեամբը և դպրոցովը: Թատրոնը գեղարուեստի թագուհին է: Սիրեցէք ձեր թատրոնը»:<sup>329</sup>

Վերլուծական ընդհանրացումների տեսանկյունից ուշագրավ է Հ. Սիրունու «Պոլսահայ բեմը» հոդվածաշարը:<sup>330</sup> Հեղինակն ընդհանուր գծերով դրական էր գնահատում Կ. Պոլսի Հայ դրամատիկական ընկերության դերասանների խաղը՝ դա պայմանավորելով նոր ռեժիսորի՝ Պ. Սևունյանի ջանքերով: «Թող այս դրամատիկական ընկերութեան նշանաբանը լինի. Հայ բեմ՝ Հայ խաղացանկով», - այս առաջարկով էր հոդվածաշարն ավարտում Հ. Սիրունին:<sup>331</sup>

Պիեսների բեմականացմանը վերաբերող դիտողություններով ու առաջարկներով «Ճակատամարտում» մշտապես հանդես էր գալիս «Թատրոն» շարքի պատասխանատու Գուրգեն Մխիթարյանը: Նրա գրած վերլուծականներից առանձնապես աչքի էին ընկնում Կ. Պոլսի Հայ դրամատիկական ընկերության 2-րդ տարեդարձին նվիրված հոդվածը<sup>332</sup> և «Դերասան Քին» ներկայացման մասին գրախոսականը<sup>333</sup>:

Օրաթերթը ոչ միայն հոդվածներով, այլև առաջնորդող խմբագրականներով պարբերաբար կոչ է արել հայ հասարակությանը՝ տեր կանգնել հայ թատրոնին և աջակցել Կ. Պոլսի Հայ դրամատիկական ընկե-

<sup>327</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 84:

<sup>328</sup> Նույն տեղում, 1919, թիվ 116:

<sup>329</sup> Նույն տեղում, 1919, թիվ 265:

<sup>330</sup> Նույն տեղում, 1919, թիվ 301, 305, 313, 317-319:

<sup>331</sup> Նույն տեղում, 1919, թիվ 319:

<sup>332</sup> Նույն տեղում, 1920, թիվ 625:

<sup>333</sup> Նույն տեղում, 1921, թիվ 663:

րությանը: Այս առումով հիշատակենք «Հայ թատրոնը մեր մեջ»<sup>334</sup>, «Որպեսզի չմեռնի հայ թատրոնը»<sup>335</sup>, «Զթողունք, որ հայ բեմը մեռնի»<sup>336</sup>, «Հայ թատրոնը Պոլսո մեջ»<sup>337</sup>, «Վերջին ներկայացումները»<sup>338</sup> և այլ խմբագրականները: «Կանգուն պահենք թատրոնը, որովհետև ան ցեղին վերածնութեան ամէնէն զօրաւոր ազդակներէն մէկն է, ու առանց մտքի ծաղկումին՝ չկայ ազատագրութիւն», - գրում էր «Օրաթերթը»<sup>339</sup>:

«Ճակատամարտը» ջանք չի խնայել՝ լուսաբանելու համար ոչ միայն պոլսահայ, այլև հայաշատ համայնքների կայացած ու նաև օտար հանդիսատեսի կողմից ծափահարությունների արժանացած հայկական թատրոնների և ընդհանրապես հայ արվեստագետների գործունեությունը: Նշենք այս կարգի մի քանի հոդված. «Աբեյանի Օթելլոն և գերման մամուլը»<sup>340</sup>, «Հայ երաժշտությունը Պելճիքայի մեջ»<sup>341</sup>, «Հայ արվեստը օտար հորիզոններու տակ»<sup>342</sup>, «Հայ թատրոնը Փարիզի մեջ»<sup>343</sup> և այլն:

«Ճակատամարտ» օրաթերթը տպագրել է ժամանակի անվանի հայ և օտարազգի գրողների ստեղծագործությունները և դրանցից շատերի մասին գրված գրախոսականները: Հայ գրողների կյանքի և ստեղծագործության վերաբերյալ գրված գրախոսականներից հիշատակենք Վահե Հայկի հոդվածը Հովի. Թլկուրանցու (Հովհաննես Հարությունյան) մասին, որտեղ Թլկուրանցին բնութագրված է այս տողերով. «Գաւառի գրականութեան ծերունի վարպետը՝ Թլկուրանցին, իր անձնական ու գրական նկարագրով միանգամայն՝ մեր ազգային հարստութեան մեծագոյն արժէքներէն մէկը կը մնայ»: <sup>344</sup> Հոդվածներից կարելի է առանձնացնել Արտաշես Հարությունյանի (Կարո) մասին Հակոբ Օշականի <sup>345</sup> և Հակոբ Մնձուրու <sup>346</sup> գրախոսականները, Միքայել Շամտանճյանի «Հայ մտքին

<sup>334</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 300:

<sup>335</sup> Նույն տեղում, 1919, թիվ 310:

<sup>336</sup> Նույն տեղում, 1921, թիվ 713:

<sup>337</sup> Նույն տեղում, 1922, թիվ 1121:

<sup>338</sup> Նույն տեղում, 1924, թիվ 1809:

<sup>339</sup> Նույն տեղում, 1921, թիվ 713:

<sup>340</sup> Նույն տեղում, 1923, թիվ 1294:

<sup>341</sup> Նույն տեղում, 1923, թիվ 1296:

<sup>342</sup> Նույն տեղում, 1923, թիվ 1505:

<sup>343</sup> Նույն տեղում, 1924, թիվ 1791:

<sup>344</sup> Նույն տեղում, 1919, թիվ 158:

<sup>345</sup> Նույն տեղում, 1919, թիվ 181:

<sup>346</sup> Նույն տեղում, 1919, թիվ 146:

հարկը Եղեռնին» գրքի մասին Էդվարդ Գուլանձյանի գրախոսականը<sup>347</sup>, Հովհ.Թումանյանի ստեղծագործությունների վերաբերյալ Հ. Օշականի «Նիշեր» վերլուծական հոդվածը<sup>348</sup> և «Հովհ. Թումանյան» հոդվածաշարը<sup>349</sup>, Հ. Օշականի գրախոսականները Թեոդիկի «Ամենուն տարեցույցը, 1921 թ.»<sup>350</sup> և Ռուբեն Որբերյանի «Ովասիա»<sup>351</sup> գրքերի մասին և այլն:

Օրաթերթում բանավեճեր են ծավալվել հայ գրականության անցած ուղու և հարևան ժողովուրդների գրականությունների հետ վերջինիս ունեցած առնչությունների շուրջ: Այդպիսի նյութերից են՝ «Թուրք գրականության ազդեցությունը հայ գրականության վրա»<sup>352</sup>, «Թերքական ազդեցություն կա՞ հայ աշուղական գրականության վրա»<sup>353</sup>, «Գրական շրջան մը (1918-1922)»<sup>354</sup> հոդվածաշարերը, «Հայ և թուրք գրականությանց բաղդատության հարմարագույն եզրերը»<sup>355</sup>, «Հայ գրագետը և հայ գրականության ապագան»<sup>356</sup>, «Արևմտահայ գրականության վերածնունդի ճիգերը արտասահմանի մեջ»<sup>357</sup> հոդվածները և այլն:

1922 թվականից «Ճակատամարտում» գրականագիտական հոդվածներով թարգմանաբար հանդես է եկել Արմին Վեգները (Armin Vegner): Նրա լավագույն գրախոսականներից են գերմանացի բանաստեղծ Հերման Հեսեի<sup>358</sup>, դանիացի քնարերգու Հերման Բանզի<sup>359</sup> և շվեդ բանաստեղծ ու թատերագիր Ավգուստ Շտրինտերգի<sup>360</sup> ստեղծագործությունների մասին գրված վերլուծականները:

1920 թ. թիվ 517-ից մինչև 1924 թ. թիվ 1815-ը «Ճակատամարտը» վերջին էջում ունեցել է «Գրական թերթոն» բաժին: Այստեղ հատվածաբար տպագրել են հայ և օտարազգի լավագույն գրողների ստեղծագոր-

<sup>347</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 264:

<sup>348</sup> Նույն տեղում, 1921, թիվ 923:

<sup>349</sup> Նույն տեղում, 1921, թիվ 925-927:

<sup>350</sup> Նույն տեղում, 1921, թիվ 648:

<sup>351</sup> Նույն տեղում, 1921, թիվ 905, 911:

<sup>352</sup> Նույն տեղում, 1922, թիվ 1063, 1066, 1072, 1073:

<sup>353</sup> Նույն տեղում, 1922, թիվ 1105, 1107, 1115:

<sup>354</sup> Նույն տեղում, 1924, թիվ 1786-1797:

<sup>355</sup> Նույն տեղում, 1922, թիվ 1131:

<sup>356</sup> Նույն տեղում, 1921, թիվ 685:

<sup>357</sup> Նույն տեղում, 1921, թիվ 947:

<sup>358</sup> Նույն տեղում, 1922, թիվ 1105:

<sup>359</sup> Նույն տեղում, 1923, թիվ 1301:

<sup>360</sup> Նույն տեղում, 1923, թիվ 1314:

ծությունները: Թվարկենք դրանցից մի քանիսը. Ֆ. Դոստոևսկու «Ռճիր և պատիժ» վեպը <sup>361</sup>, Ավ. Իսահակյանի «Լիլիթը» գրոյցը <sup>362</sup>, Հ. Մնձուրու «Կինը» գրոյցը <sup>363</sup>, Մ. Տվենի «Գողցված ճերմակ փիղը» վիպակը <sup>364</sup>, Ա. Ֆրանսի «Բալթագար» վիպակը <sup>365</sup>, Ա. Կուպրինի «Սուլամիթ» վիպակը <sup>366</sup> և «Տեսիլքը» պատմվածքը <sup>367</sup>, Մ. Գորկու «Ֆոնա Գորդիև» վեպը <sup>368</sup>, Ջ. Եսայանի «Լուսածին» պատմվածքը <sup>369</sup>, Բ. Նուրիի «Ցախսարիկը» վեպը <sup>370</sup> և այլն:

### ՀԱՅ ԴԱՏԸ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ» ԷԶԵՐՈՒՄ

«Ճակատամարտը» լուսաբանել է Հայաստանի թե՛ 1-ին, թե՛ 2-րդ հանրապետությունների կյանքը: Օրինակ՝ 1919-1920 թթ. օրաթերթը վերլուծական հոդվածների, թղթակցությունների և հարցազրույցների միջոցով պատկերացում է տվել 1-ին հանրապետության սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային առօրյայի մասին: «Արարատյան սուրհանդակ» բաժնուն սեփական թղթակիցների լուրերը արևմտահայ ընթերցողներին հավաստի տեղեկատվություն են հաղորդել հայոց պետականության առաջին քայլերի, առկա խնդիրների ու կատարվող աշխատանքների մասին: 1920 թ. մայիսի 22-ին «Ճակատամարտը» տպագրել է Հայաստանի վարչապետ Ա. Խատիսյանի վերջին զեկույցը ՀՀ խորհրդարանի առջև, որտեղ ամփոփված էին ՀՀ կառավարության գործունեության արդյունքները: «Կառավարութեան ուշադրութեան գլխատր առարկայ են կազմում երեքական խնդիրներ - Հայաստանի անկախու-

<sup>361</sup> «Ճակատամարտ», 1921, քիվ 517-1921, քիվ 770:

<sup>362</sup> Նույն տեղում, 1921, քիվ 818-826:

<sup>363</sup> Նույն տեղում, 1921, քիվ 836-840:

<sup>364</sup> Նույն տեղում, 1922, քիվ 920-930:

<sup>365</sup> Նույն տեղում, 1922, քիվ 968-972:

<sup>366</sup> Նույն տեղում, 1922, քիվ 1007-1029:

<sup>367</sup> Նույն տեղում, 1923, քիվ 1284-1287:

<sup>368</sup> Նույն տեղում, 1922, քիվ 1030-1147:

<sup>369</sup> Նույն տեղում, 1922, քիվ 1161-1168:

<sup>370</sup> Նույն տեղում, 1924, քիվ 1770-1815:

թեան ճանաչումը, սահմանների լայնացումը և ներգաղթի կազմակերպումը»,- ասված էր գեկույցում:<sup>371</sup>

«Հ պետական կյանքում նկատվող թերություններին «Ճակատամարտը» ներողամտորեն է վերաբերվել և մշտապես Հայաստանին աջակցողի դերում է եղել: Ասենք՝ հայոց բանակի կայացմանը օժանդակելու նպատակով գործնական քայլ է կատարել. սկսել է դրամահավաք՝ պարբերաբար տպագրելով նվիրատուների անունները և նվիրատվությունների չափը: «Պէտք է ոյժ տալ, քաջալերել բանակը՝ անոր միջոցաւ պահպանել կարենալու համար արհնով ձեռք բերուած ազատութիւնը: Հայ բանակը մերն է, հայ գինուորը ամէնուս է և որովհետև չկայ կուսակցական հաշի մը, չկայ գաղափարի և համոզումի տարբերութիւն մը, չկայ պատճառ մը կամ պատրուակ մը, որ կարենայ անոր օգնելու պարտականութենէն մեզ անջատել»,- նշված է «Մեր պարտքը հայ բանակին» նյութում:<sup>372</sup> Ազգային բանակի հզորացումը և հաղթանակները ուրախությամբ ու հպարտությամբ էին համակում «Ճակատամարտի» աշխատակիցներին, ովքեր ապրում և շնչում էին Հայաստանի հոգսերով, ձեռքբերումներով ու կորուստներով: Թերթի 1918-1921 թթ. համարներում բազմաթիվ են այդ կարգի հոդվածները, լուր-թղթակցությունները, ռեպորտաժները: Պատմաբանները դրանցից օգտվելով՝ անգամ կարող են շատ հարցերում ճշգրտումներ կատարել այդ վիճահարույց ժամանակաշրջանի դեպքերի և իրադարձությունների մասին: «Ճակատամարտը» վերլուծել ու ընթերցողների դատին է ներկայացրել մեր ժողովրդի և պետականության համար ճակատագրական ու կարևոր իրադարձություններ, համաժողովներ և Հայ դատի լուծման համար ընթացող բանակցություններ և քննարկումներ, մի խոսքով՝ 1918-1921 թթ. Հայաստանի կենսագրության մանրամասները: Բնորոշ է այն հանգամանքը, որ ռուս և հայ բուլճարիկներին այս շրջանում օրաթերթը քաղաքական լուրջ գործոն չի համարել: «Չորս հովերեն տարուբեր» խմբագրականում պատկերավոր ներկայացված է Հայաստանի խորհրդայնացումից հետո հայ ժողովրդի հոգեվիճակը. «Մեծ մասը- մեր խօսքը Պոլսոյ և նման գաղութներու մասին է- շուարման մատնուած է, և գլուխ կը քերէ, չմոռնալով ողբուկոծի կամ պարսավանքի բառեր ալ թոթովել. «Եթէ այսպէս ընէինք, այն-

<sup>371</sup> «Ճակատամարտ», 1920, թիվ 460:

<sup>372</sup> Նույն տեղում, 1920, թիվ 348:

պէս կ'ըլլար»: Ուրիշ մաս մը, արդէն իսկ վերջացած համարելով ամէն բան, հում վճիռներ կ'արձակէ և վարդագեղ երազներ կը հիւսէ: Անտարբերներն ալ առանձին դաս մը կը կազմեն: Դժբախտաբար իրականութիւնը իրատունք չի տար ոչ մէկուն և ոչ միւսին: Կացութիւնը այնպիսի երեսներ և ծալքեր ունի, որ ոչ մէկը կրնայ այժմէն վճռել թէ բարի՞ք պիտի ծնի, թէ՛ չարիք... Մեր բոլոր ճիգերը պիտի ձգտին առաւիտովէ գոյութիւնը հայկական անկախ պետութեան մը»: <sup>373</sup>

«Հալածանք նախորդ կառավարության անդամներուն և հակաբոլշևիկ տարրերու դեմ» վերնագրով հարցազրույցում Հայաստանից Կ. Պոլիս ժամանած «իրագեկ ճամփորդ մը» պատմում էր 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների դեպքերի մասին. «Ժողովուրդը ընդհանրապէս ոչ մէկ հաատք ունի որ իր ազատութիւնն ու անկախութիւնը կարելի պիտի ըլլայ երաշխաւորել ներկայ իշխանութեան միջոցով և դաւաճանութիւն կը նկատէ այս վերջինին կողմէ սկսուած շարժումը՝ որ հայ և թուրք կռիւին մէջ քայքայեց հայ բանակին դիմադրական կորովը ու նպաստեց թրքական յառաջխաղացման դէպի Հայաստան»: <sup>374</sup> 1920 թ. ռազմաքաղաքական դեպքերի վերլուծությամբ արժեքավոր է Խորհրդային Հայաստանից Կ. Պոլիս փախած «Հառաջ» թերթի խմբագիր Արսէն Միքայելյանի «Վերջին անցքերը Հայաստանի մեջ» հոդվածաշարը: <sup>375</sup> Իսկ «Հուսախաբության տարին» խմբագրականում ընդհանուր գծերով բնութագրված է 1920 թվականը: <sup>376</sup> «Ճակատամարտը» գրում էր, որ 1920 թ. սկզբին թեև չկար Մուրդուսի գինադադարին հաջորդող ոգևորությունը, բայց հայ ժողովուրդը դեռ հույսեր էր տածում, որ Հայաստանը իբրև պետություն ամբողջական կդառնա արտաքին ուժերի աջակցությամբ, որ կսկսվի ներգաղթ, և հայրենիքը կվերածվի երկիր դրախտավայրի: Բայց իրականությունն այլ բան էր նախատեսել: «Տարին կը փակուի: Դարձեալ կը խօսին խորհրդածողովի մը մասին, որ միջոցներ պիտի ծրագրէ թէ՛ թուրքիան գոհացնելու և թէ՛ Սէվրի դաշնագիրը իր ուժին մէջ պահելու համար: Արևելքը խաղաղեցնելու, ստորագրուած յանձնառութիւնները կատարելու նոր փորձ մը, որ ապահովաբար վերջինը պիտի ըլլայ: Ար-

<sup>373</sup> «Ճակատամարտ», 1920, թիվ 636:

<sup>374</sup> Նույն տեղում, 1920, թիվ 640:

<sup>375</sup> Նույն տեղում, 1920, թիվ 644-646, 1920, թիվ 647-650:

<sup>376</sup> Նույն տեղում, 1920, թիվ 646:

դեօք մեր յուսախաբութիւններն ալ չունի՞ն վախճան մը»,- այս հարցադրումով էր «Ճակատամարտն» անփոփում տարեվերջյան իր վերլուծականը:<sup>377</sup> 1921 թ. հոկտեմբերի 30-ին «Տարեդարձ մը» խմբագրականում ասվում էր հետևյալը. «Զինադադարէն ի վեր սահող-անցնող երեք տարիները ոչ խաղաղութիւն բերին հայ ժողովրդին, ոչ ալ պասկումը իր յոյսերուն, իրեն շռայլուած խոստումներուն: Ու չորրորդ տարին ան կը թևակոխէ յուսախաբ, ի զուր ձգնելով խեղդել իր հոգիին մէջ թև առնող յոռետեսութիւնը»:<sup>378</sup> 1922 թ. «Ճակատագրական տարին» տարեվերջյան խմբագրականում օրաթերթը փաստում էր, որ զինադադարից հետո անցել էր 4 տարի, և Թուրքիան արդէն ինքն էր պայմաններ առաջադրում բանակցություններում, իսկ Խորհրդային Ռուսաստանը շարունակում էր Հայկական հարցում իր անհաշտ ընթացքը:<sup>379</sup> «Այլ ևս ոչ մէկ խօսք՝ գանազան որոշումներու մասին, որոնց կարգին՝ և Հայաստանի հողային պահանջներու մասին», - գրում էր «Ճակատամարտը»:<sup>380</sup> Այս մտահոգություններով լի վերլուծական հոդվածներ ու խմբագրականներ «Ճակատամարտը» շարունակում էր տպագրել նաև 1923-1924 թթ.: Դրանցում օրաթերթն անդրադառնում էր մասնավորապես՝ Հայկական միացյալ պատվիրակության գործունեությանը, Հայ ազգային տան խնդրին և լուզանյան բանակցային գործընթացին: «Անցնող տարին» խմբագրականում «Ճակատամարտը» Լոզանում Հայկական հարցի ձախողումը պայմանավորում էր բանակցություններին մասնակցող պետությունների շահերի չարաշահմամբ:<sup>381</sup> «Կ'արժէ՞ արդեօք փակագիծ մը բանալ փոքրամասնութիւններու և դժբախտ Հայկական հարցին համար: Լօզանի մէջ այս ուղղութեամբ կատարուած փորձերը այնքան զաւեշտական էին, որ մարդ չի կրնար յիշել զանոնք, առանց խոր վրդովում մը ունենալու: Ցեղի մը մարտիրոսագրութիւնը երբեք այսքան գռեհիկ շահագործումի ենթարկուած չէր, շուկայիկ հաշիւներ կարգադրելու մտահոգութեամբ», - գրում էր օրաթերթը:<sup>382</sup> Վերլուծելով իրադարձությունները՝ «Ճակատամարտն»

<sup>377</sup> «Ճակատամարտ», 1920, թիվ 646:

<sup>378</sup> Նույն տեղում, 1921, թիվ 900:

<sup>379</sup> Նույն տեղում, 1922, թիվ 1260:

<sup>380</sup> Նույն տեղում, 1922, թիվ 1217:

<sup>381</sup> Նույն տեղում, 1923, թիվ 1272:

<sup>382</sup> Նույն տեղում:

արձանագրում էր, որ Լոզանը տրամաբանական «եւթն էր Դաշնակիցներու քաղաքական սնանկութեան»:<sup>383</sup>

1924 թ. «Ճակատամարտն» արդեն արձանագրում էր. «Այլևս «մարդասիրական» խնդիր էր դարձել հայկական դատը: Ի բր այդ քննեց Ազգերու Դաշնակցութիւնն ալ, մասնախումբէ մասնախումբ գլորելով գայն»:<sup>384</sup> «Ճակատամարտը» գտնում էր, որ «մեր ծեռքն էր՝ բարելաւել կամ աւելի մթազնել մեր Ճակատագիրը: Մեր ամբողջ կորովը նուիրենք մեր ծեռքը եղածը պահելու: Մեր Ճակատագիրը վարելու լայն ասպարէզ ունինք այսօր գաղութներու մէջ: Մեզի կ'իյնայ ամէն ճիգ փորձել և ստեղծել կենսունակ, մշակուած, ինքնաբաւ գաղութներ, որոնք թանկագին աղբիւրներ պիտի ըլլան վաղուան համար»:<sup>385</sup> Այնուհանդերձ, «Ճակատամարտը» չի հավատացել, որ վերանալու էր այդքան դժվարությամբ ծեռք բերված Հայաստանի անկախ պետականութիւնը, որ Սևրի դաշնագիրը մնալու էր չվավերացված, ու կյանքի քին կոչվելու դրա դրոյթները, որ այդպես էլ չլուծված էր մնալու Հայկական հարցը, որ քին պատժվելու Հայոց եղեռնի կազմակերպիչները և իրականացնողները...Այս համատեքստում հասկանալի է «Ճակատամարտի» ցանկությունը՝ օբյեկտիվորեն պատկերել հայաստանյան իրադարձությունները: Այս կարգի վերլուծական նյութերից կարելի է առանձնացնել «Հայաստանի Հանրապետությունը և իր մեկ տարվան կյանքն ու գործերը» հոդվածը<sup>386</sup>, «Պետական տարին» հոդվածաշարը<sup>387</sup>, «ՀՀ և մեծամասնականները»<sup>388</sup>, «Ճակատագրական ժամեր»<sup>389</sup>, «Գործակցություն կա՞ թուրանականներու և պոլշեիկներու միջև»<sup>390</sup>, «Պաշտոնական զեկույց Կարսի դեպքերու մասին»<sup>391</sup>, «Արեւելյան նահանգները քնն տար Հայաստանին»<sup>392</sup>, «Հայաս-

<sup>383</sup> «Ճակատամարտ», 1923, թիվ 1425:

<sup>384</sup> Նույն տեղում, 1924, թիվ 1798:

<sup>385</sup> Նույն տեղում, 1924, թիվ 1663:

<sup>386</sup> Նույն տեղում, 1920, թիվ 346:

<sup>387</sup> Նույն տեղում, 1920, թիվ 345, 346, 354:

<sup>388</sup> Նույն տեղում, 1920, թիվ 448:

<sup>389</sup> Նույն տեղում, 1920, թիվ 451:

<sup>390</sup> Նույն տեղում, 1920, թիվ 470:

<sup>391</sup> Նույն տեղում, 1920, թիվ 472:

<sup>392</sup> Նույն տեղում, 1920, թիվ 506:

տան և իր դրացիները»<sup>393</sup>, «Հայ և թուրք պատերազմը»<sup>394</sup>, «Մեծամասնական վերջնագիրը»<sup>395</sup>, «Խորհրդային Հայաստան»<sup>396</sup>, «Դիկտատորություն»<sup>397</sup>, «Ի՞նչ կանցնի, կդառնա Հայաստանի մեջ»<sup>398</sup>, «Կացությունը Հայաստանի մեջ»<sup>399</sup>, «Արյունոտ կռվախնձորը-Դարաբաղ-Զանգեզուր»<sup>400</sup>, «Հայկական Հանրապետության կրթական վիճակը 1919-1920 թթ.»<sup>401</sup>, «Ազգային կյանքը 1920-ին»<sup>402</sup>, «Հայաստանը կանճիտեն»<sup>403</sup>, «Չարաշուք վիճակ Հայաստանի մեջ»<sup>404</sup>, «Շեղափոխություն Հայաստանի մեջ»<sup>405</sup>, «Կարմիր Հայաստանի կարմիր օրերը»<sup>406</sup>, «Անխուսափելի պոռթկումը»<sup>407</sup>, «Դիակները կհանեն բանտեն»<sup>408</sup>, «Ինչպե՞ս տեղի ունեցավ հակապոլշկիկ ապստամբությունը Հայաստանի մեջ»<sup>409</sup>, «ՀՀ-ն գաղութներուն առջև»<sup>410</sup>, «Քաղաքական և տնտեսական կացությունը Հայաստանի մեջ»<sup>411</sup>, «Հագուստի ամիս Հայաստանի մերկ ժողովուրդին համար»<sup>412</sup>, «Ո՞ր է պատասխանատվությունը»<sup>413</sup> հողվածներն ու խմբագրականները և այլն: Դրանցում հիշատակված փաստերը ներկայացված են ըստ ականատեսների պատմածների ու վկայությունների:

«Ճակատամարտի» հրապարակումների հիման վրա կարելի է ևս մեկ անգամ հանդգնել, թե որքան բարդ ու հակասական է եղել տվյալ ժամանակաշրջանը հայ ժողովրդի և Հայաստանի 1-ին հանրապետության

<sup>393</sup> «Ճակատամարտ», 1920, թիվ 547:

<sup>394</sup> Նույն տեղում, 1920, թիվ 583:

<sup>395</sup> Նույն տեղում, 1920, թիվ 589:

<sup>396</sup> Նույն տեղում, 1920, թիվ 627:

<sup>397</sup> Նույն տեղում, 1920, թիվ 630:

<sup>398</sup> Նույն տեղում, 1920, թիվ 640:

<sup>399</sup> Նույն տեղում, 1920, թիվ 643:

<sup>400</sup> Նույն տեղում, 1920, թիվ 658:

<sup>401</sup> Նույն տեղում:

<sup>402</sup> Նույն տեղում:

<sup>403</sup> Նույն տեղում, 1921, թիվ 677:

<sup>404</sup> Նույն տեղում, 1921, թիվ 678:

<sup>405</sup> Նույն տեղում, 1921, թիվ 688:

<sup>406</sup> Նույն տեղում, 1921, թիվ 695-թիվ 702:

<sup>407</sup> Նույն տեղում:

<sup>408</sup> Նույն տեղում, 1921, թիվ 698:

<sup>409</sup> Նույն տեղում, 1921, թիվ 758-թիվ 761:

<sup>410</sup> Նույն տեղում, 1921, թիվ 813, 831:

<sup>411</sup> Նույն տեղում, 1921, թիվ 870:

<sup>412</sup> Նույն տեղում, 1921, թիվ 899:

<sup>413</sup> Նույն տեղում, 1921, թիվ 902:

յան համար: Պատճառափետևանքային կապերի քննական վերլուծության տեսանկյունից ուշագրավ է «Ինչո՞ւ, ինչպես մուտք գործեց Հայաստան բուլճարի հիշխանությունը, ինչպես կառավարեց երկիրը և ինչո՞ւ տապալվեց փետրվարի 18-ին» հոդվածաշարը:<sup>414</sup> Հայաստանում բուլճարի հիշխանության առաջին շրջանի կարճատևության (երկուս ու կես ամիս) և 1921թ. փետրվարյան ապստամբության հիմնական պատճառը հոդվածագիրը՝ Ռ. Ի.-ին, համարում էր բուլճարի վարած հակահայ քաղաքականությունը: Հեղինակի կարծիքով՝ բուլճարցիները ոչինչ չէին տվել Հայաստանին, ընդհակառակը, ավերել էին եղածը՝ գործադրելով այնպիսի դաժան բռնություն, որի նմանը չէր տեսել հայ ժողովուրդը «ոչ մի ցարի իշխանութեան տակ»:<sup>415</sup> Ըստ «Ընդվզումի տարեդարձը» խմբագրականի՝ կատարված բարբարոսություններն ու ավերումները ցնցել էին բոլորին:<sup>416</sup> «Այն օրէն ի վեր, որ Հայաստանը բռնի անցաւ «խորհրդային» տարրերու ձեռքը, առանց երկրին մէջ իրական գետին և զանգուած ունենալու, ռուսական սուլիններու հովանաւորութեամբ Հայաստան մտած հայ Պօլշէկները, հակառակ բոլոր շլացուցիչ յայտարարութիւններուն, չէին կրցած կացութեան տէր դառնալ մինչև այսօր, և իրենց աչքերը յառած կը պահէին դէպի Պաքու և Մոսկուա», - գրում էր «Ճակատամարտը»:<sup>417</sup> «Կարմիր Հայաստանի կարմիր օրերը» հոդվածաշար-տեղեկագրում Հայաստանի խորհրդային վարչաձևն անվանվում էր «Սարսափի և աների ռեժիմ մը», որը քանդում էր երկուս ու կես տարվա աշխատանքը: Այդ տեղեկությունները նոր լույս էին սփռում «այն ժիծաղելի ռեժիմին շուրջ, զոր խումբ մը հայեր ռուս Պօլշէկներուն ուժին կրթնած երեք ամիսէ ի վեր կը կիրարկէին Հայաստանի մէջ, և այն սարսափներուն մասին, որոնք սկսան աների և սրածութեան մատնել երկուքուկէս տարուան զոհողութեան պտուղը»:<sup>418</sup> Կեղեքում, բռնագրավում, հալածանք, 1500 հայ սպաների աքսոր ու ջարդ, հայկական անկախության ոչնչացում. այս գծերն էին բնորոշ Հայաստանի խորհրդային վարչախմբին: Դրանք նպաստեցին 1921 թ. փետրվարյան ապստամբությանը, որն անխուսափելի պոռթկում էր համարում «Ճակատամարտն» իր

<sup>414</sup> «Ճակատամարտ», 1922, թիվ 964-թիվ 967:

<sup>415</sup> Նույն տեղում, 1922, թիվ 966:

<sup>416</sup> Նույն տեղում, 1922, թիվ 994:

<sup>417</sup> Նույն տեղում, 1921, թիվ 665:

<sup>418</sup> Նույն տեղում, 1921, թիվ 695:

համանուն խմբագրականում:<sup>419</sup> Հայաստանի նախկին վարչապետ Սիմոն Կրացյանի «Ինչպե՞ս տեղի ունեցան փետրվարյան դեպքերը» ծավալուն հոդվածում<sup>420</sup>, «Ինչպե՞ս տեղի ունեցավ հակապոլշևիկ ապստամբությունը Հայաստանի մեջ» հոդվածաշարում<sup>421</sup> և «Ինչպե՞ս վերջ գտավ հակապոլշևիկ ապստամբությունը Հայաստանի մեջ» հոդվածում<sup>422</sup> վերհանված են այդ իրադարձությունների պատճառները, ներկայացված են դրանց ընթացքն ու ավարտը: «Ազգաբնակչությունը, ինչպես մի մարդ, ապստամբուել էր այն ճնշողների դեմ, որոնք ծածկուած էին սոցիալական դիմակի՝ պոլշևիկեան անուան տակ: Ամբողջ Հայաստանը հրճուանքի և ընդհանուր ուրախութեան մէջ էր: Իշխանութիւնը անցաւ ժողովուրդի ձեռքը: Ժողովուրդի խանդավառութիւնը և ոգևորութիւնը աննկարագրելի էր»,- գրված է «Ինչպես տապալեցավ Հայաստանի խորհրդային վարչությունը» վերլուծական հոդվածում:<sup>423</sup>

1921-1924 թթ. «Ճակատամարտը» հասկացնում է, որ խորհրդային Հայաստանը այլևս պատմական իրողություն է, որ Հայ դատը առաջիկայում դժվար թե պաշտպանվեր և ստանար արդար լուծում: Խորհրդային Հայաստանը աստիճանաբար սփյուռքահայության մեծամասնության համար (որոշակի վերապահումներով) սկսում է ընկալվել որպես հայ ժողովրդի պետականության նոր դրսևորում, որին նրանք պիտի փարեին ու պիտի փորձեին օգնել ու աջակցել Հայաստանին՝ խորհրդային իշխանության ընծեռած նույնիսկ չնչին համագործակցության հնարավորության սահմաններում: Այս առումով «Ճակատամարտը» բացառություն չէր: Եվ հասկանալի են օրաթերթի ջանքերը՝ իր էջերում թեկուզ արտատպելով հոդվածներ հայաստանյան մամուլից, պատկերացում տալ ընթերցողներին հայրենիքի առօրյայի և հաջողությունների մասին: Արդեն 1921թ. խստաշունչ ծմռանն ընդառաջ՝ հոկտեմբերի վերջից Հայաստանի օգնության մարմինը (ՀՕՍ) նույնքերը հայտարարել էր «հագուատի ամիս՝ Հայաստանի մերկ ժողովուրդին համար»:<sup>424</sup> ՀՕՍ-ի Կենտրոնական վարչության կազմում ընդգրկված էին 4 քաղաքական կուսակցութ-

<sup>419</sup> «Ճակատամարտ», 1922, թիվ 964-թիվ 967:

<sup>420</sup> Նույն տեղում, 1921, թիվ 892:

<sup>421</sup> Նույն տեղում, 1921, թիվ 758-թիվ 760:

<sup>422</sup> Նույն տեղում, 1921, թիվ 761:

<sup>423</sup> Նույն տեղում, 1921, թիվ 698:

<sup>424</sup> Նույն տեղում, 1921, թիվ 899:

յուն և 6 հասարակական կազմակերպություն: Նրանք «Ճակատամարտի» էջերում հայաստանցիների համար 200000 կտոր ձմեռային հագուստ հայթայթելու կոչով դիմում էին օրաթերթի ընթերցողներին՝ հավատալով, որ ցանկացած հայ ուրախ էր ունենալ «հայրենի հեռուոր հորիզոններու տակ, ցուրտ հիւղակներու մէջ լքուած հայ մանուկը, հայ կոյսը մխիթարելու պատեհութիւնը»:<sup>425</sup>

Հայաստանի հոգսերի հանդեպ անտարբեր չէին գաղութները: «Ի՞նչ փոյթ ռէժիմը որ կը տիրէ Հայաստանի մէջ, ու կարգերը, որոնք կը կառավարեն հայ ժողովուրդը: Քաղաքական նկրտումները տեղ չեն կրնար ունենալ հիւանդի մը սնարին մօտ: Հայ ժողովուրդը կը հիւծի, պէ տք է դարման հասցնել», - գրում էր «Ճակատամարտը»:<sup>426</sup> «Հայրենիքը մերն է հակառակ բոլոր տառապանքներուն, ու այդ տառապանքներուն հետ: Հետևաբար, ան չի կրնար զրկուիլ ոչ մեր գուգուրանքէն, ոչ ալ մեր աջակցութենէն», - համոզված էր օրաթերթը:<sup>427</sup> Միևնույն ժամանակ, թերթի կարծիքով, անհրաժեշտ էր միջազգային մարդասիրական կամ բարեգործական կազմակերպությունների միջոցով իրականացնել հայրենիքի համար հավաքված հագուստի և սննդամթերքի բաշխումը, այլապես հայկական գաղութները կմտածեին, որ դրանք խորհրդային իշխանությունների կողմից ուղարկվում էին Ադրբեջան կամ Ռուսաստան և չէին հասնում բուն հասցեատերերին: Այս կարևոր խնդիրը բազմիցս արծարծվել է «Ճակատամարտի» էջերում: Կոնկրետ 1921 թ. այն քննարկվել է, օրինակ՝ «Առաքելության մը առթիվ»<sup>428</sup>, «Ո՞ր է պատասխանատվությունը»<sup>429</sup>, «Գաղութներուն պահանջը»<sup>430</sup> և այլ հոդվածներում: Խմբագրականներից մեկում քննարկելով հայրենիք-սփյուռք կապերը՝ «Ճակատամարտը» գտնում էր, որ Հայաստանի դժները պիտի բաց լինեին բոլոր հայերի առաջ՝ անկախ նրանց մեծամասնական լինել-չլինելու հանգամանքից: «Պէ տք է դադրեցնել այն պայքարը, որ անընդհատ կ'արծարծուի թերթերու մէջ և բեմերու վրայ, սևացնելու համար ոչ-պուլչկիկ տարրերը... Հայ պուլչկիկները Հայաստանը կը նկատեն ոչ թէ ընդհանրա-

<sup>425</sup> «Ճակատամարտ», 1921, թիվ 899:

<sup>426</sup> Նույն տեղում:

<sup>427</sup> Նույն տեղում, 1921, թիվ 901:

<sup>428</sup> Նույն տեղում:

<sup>429</sup> Նույն տեղում, 1921, թիվ 902:

<sup>430</sup> Նույն տեղում, 1921, թիվ 903:

կան հայրենիք, այլ ուղղափառ լսարան մը, ուր մուտք չունին հերետիկոսներն ու հեթանոսները».- գրում էր օրաթերթը:<sup>431</sup> Այս պայմաններում սփյուռքահայ համայնքները կամ բարերարներն անհրաժեշտության դեպքում գրեթե զրկվում էին հայրենի երկրի շենացման գործընթացին մասնակցելուց:<sup>432</sup>

Խորհրդային Հայաստանի և հայ գաղթօջախների միջև փոխհարաբերությունների լուսաբանման և ընդհանրապես «Ճակատամարտի» քաղաքական ուղեգծի պատճառով այնքան են սրվում հարաբերությունները, որ, ինչպես տեղեկացնում էր «Ճակատամարտը», 1923 թ. հուլիսի 12-ին «Խորհրդային Հայաստան» օրաթերթը հայ համայնքներին կոչ էր անում՝ չաջակցել «Ճակատամարտ» օրաթերթի և «Հայրենիք» ամսագրի շուրջ համախմբված անձանց նախաձեռնած անգամ համահայկական բնույթի ծեռնարկներին, քանզի «զանազան սուտ ու պրովոկացիոն տեղեկություններով դրանք գրգռում էին ժողովրդի միամիտ տարրերը Խորհրդային Հայաստանի դեմ»:<sup>433</sup> «Ճակատամարտը», չնայած Խորհրդրդային Հայաստանի մամուլում իր հասցեին հնչեցված կարծիքներին, շարունակում էր իր առօրյա հրապարակումները՝ անհրաժեշտության դեպքում կրկին մատնանշելով հայրենիքում առկա խնդիրները: Ընդ որում, թերթը պարբերաբար հիշեցնում էր. «Արտասահմանի մէջ, հանրութիւնը լուր չունի Խորհրդային Հայաստանի ներքին կեանքէն: Ինչ որ գիտէ, թերթերու կցկտուր տեղեկութիւններն են, քաղուած խորհրդային թերթերէ:»:<sup>434</sup> Այսինքն՝ «Ճակատամարտը» գիտակցում էր, որ միայն այդ պարտադրված ճանապարհով (Խորհրդային Հայաստանից հայ գաղթօջախներ ուղարկված թերթերի միջոցով) ստացված տեղեկատվությունը կարող էին տպագրել հայրենիքի անցուղարձի մասին: Հնարավորության դեպքում օրաթերթը տպագրում էր տարբեր առիթներով Հայաստան այցելած կամ Հայաստանից Թուրքիա ժամանած այն անձանց կողմից տրամադրված տեղեկատվությունը, որոնց վստահում էր իբրև հավաստի լրատվության աղբյուր: Ստեղծված իրավիճակում «Ճակատամարտը» մամուլի պարտքն էր համարում՝ «ըսել ճշմարտութիւնը առանց վե-

<sup>431</sup> «Ճակատամարտ», 1922, թիվ 1101:

<sup>432</sup> Նույն տեղում:

<sup>433</sup> Նույն տեղում, 1923, թիվ 1488:

<sup>434</sup> Նույն տեղում, 1923, թիվ 1538:

րապահութեան, և շարժում ստեղծել թէ՛ հայրենիքին օգնելու, թէ՛ գաղթական բազմութիւնները ոտքի կանգնեցնելու»:<sup>435</sup>

Անփոփելով՝ կարող ենք ասել, որ «Ճակատամարտը» Հանրապետական Թուրքիայի հռչակումից հետո թեև անհրաժեշտության դեպքում ընթերցողներին տեղեկացնում էր շարունակվող հակահայ քաղաքականության, հայ ժողովրդի իրավունքները ոտնահարող նոր օրենքների ու կառավարական որոշումների մասին, բայց օրաթերթում այլևս չկային դրանց դեմ ուղղված քննադատական կամ վերլուծական հոդվածներ: «Ճակատամարտի» այս դիմափոխությունը պայմանավորված էր ոչ թե գաղափարական-քաղաքական ուղղվածության փոփոխությամբ, այլ մի կողմից՝ Թուրքիայի շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական հանգամանքներով, մյուս կողմից՝ այդ հանգամանքների և Խորհրդային Ռուսաստանի վարած ներքին ու արտաքին քաղաքականության հետևանքով «Ճակատամարտի» խմբագրակազմում Հայ դատի լուծման հետ կապված հույսերի մարմամբ:

### *«ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ» ԱՄՍՕՐՅԱ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ*

1919-1920 թթ. Կ.Պոլսում հրատարակվել են «Ճակատամարտ» օրաթերթի համանուն գյուղատնտեսական և մանկավարժական ամսօրյա հավելվածները: Մեզ են հասել այդ պարբերականների ընդամենը մի քանի համար: Դրանցում ընդգրկված նյութերը հնարավորություն են տալիս պատկերացում կազմել այդ հանդեսների ուղղվածության ու նպատակների մասին:

«Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հավելվածը Հայ գյուղատնտեսական միության (այսուհետև՝ ՀԳՄ) պարբերական մամուլի օրգանն էր: Հանդեսի հիմնական բաժիններն էին՝ «Տնտեսական-ընկերային», «Տեղեկատվական-գիտական», «Գյուղական կյանք», «Օգտակար բոյսեր», «Բնության գրկին մեջ», «Անասունների համաճարակներ», «Նամականի» և այլն: «Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հավելվածի խմբագրական մարմինը և աշխատակիցները հիմնականում

<sup>435</sup> «Ճակատամարտ», 1924, քիվ 1747:

հիշյալ միության անդամներն էին: Նրանք իրենց գործին քաջատեղյակ և փորձառու մասնագետներ էին: Հանդեսի խմբագրական մարմնում ընդգրկված էին Գեղամ Գավաֆյանը, Պողոս Գևորգյանը, Հովհաննես Հինդյանը, Շահան Պերպերյանը, Գևորգ Մեսրոպը: Հովվածաշարերով և վերլուծություններով հանդես էին գալիս ՀԳՄ վարչական խորհրդի անդամներ Կարապետ Նուրյանը, Հայկ Սերենկյուլյանը, Սեպուհ Ստեփանյանը, Նշան Անդրեասյանը: «Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյայի աշխատակազմը ձգտում էր նպաստել Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում գյուղատնտեսության զարգացմանը, հայ ժողովրդի կենսակերպի բարելավմանը: Նրանց նշանաբանն էր՝ «Միութիւն, համերաշխութիւն և գիտութիւն»<sup>436</sup>

«Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հավելվածի «Մեր նպատակը» խմբագրականում թվարկվում էին աշխատակազմի առջև դրված հիմնական խնդիրները: Դրանք էին.

- վերականգնել քանդված ու ոչնչացված հայկական գյուղերն ու քաղաքները,
- վերաշինել հայկական եկեղեցիներն ու դպրոցները,
- ավելացնել հայ ժողովրդի թվաքանակը՝ նոր ընտանիքների հիմնումով,
- բարեկեցիկ դարձնել աղքատացած հայ ժողովրդի կյանքը երկրագործությունը և անասնապահությունը զարգացնելու, գիտության նոր նվաճումները գյուղատնտեսության մեջ կիրառելու ձանապարհով:<sup>437</sup>

Թվարկված խնդիրների վերաբերյալ նյութերից կարելի է առանձնացնել «Հայ ազգը պետք է դիմե դեպի բնություն»<sup>438</sup> խմբագրականը, «Գյուղական կյանք»<sup>439</sup> և «Հայեր, ամուսնացե՛ք»<sup>440</sup> հոդվածները: Դրանցից վերջինում Սեպուհ Ստեփանյանը հետևյալ միտքն էր շեշտում. «Որքան տնտեսական, նյութական և աւելի քաղաքական պահանջ մըն է նաև, որ հայերը կարելի եղածին չափ շուտ և շատ բազմաճանա: Ամուսնութիւնը,

<sup>436</sup> «Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հավելված, 1919, թիվ 1, էջ 3-4. 1919, թիվ 2, էջ 24:

<sup>437</sup> Նույն տեղում, 1919, թիվ 1, էջ 3-4:

<sup>438</sup> Նույն տեղում:

<sup>439</sup> Նույն տեղում, 1919, թիվ 2, էջ 3-4:

<sup>440</sup> Նույն տեղում, 1919, թիվ 3, էջ 11-14:

բազմամարդությունը թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական առումով առաւելապէս հայկական հարց մըն է»<sup>441</sup>

Մի կարևոր դիտարկում անենք: ՀԳՄ «Ճակատամարտ» ամսօրյա հանդեսը «Հայաստան և իր երկրագործական հարցերը» խմբագրականում նշում էր, որ իրենց ուսումնասիրությունների շրջանակը պիտի ընդգրկէր Փարիզի Խաղաղության համաժողովից հայ Ազգային պատվիրակության կողմից պահանջատ «ամբողջական Հայաստանի սահմանները»:<sup>442</sup>

Որքանով տեղեկանում ենք «Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հավելվածի նյութերից ՀԳՄ-ն իր առջև դրված վերոհիշյալ նպատակներին հասնելու համար ոչ միայն կատարում էր գիտական ուսումնասիրություններ, այլև Արմաշ գյուղում բացել էր գյուղատնտեսական վարժարան: Այնտեղ սովորելու էին 200 որբ, որոնցից 50-ը 1919 թ. սեպտեմբերին արդեն վարժարանում էին: Վարժարանը գործելու էր հատուկ այդ նպատակով կազմված երկամյա ուսումնական ծրագրով, հաշվարկված և հայթայթված բյուջեով, գնված գույքով ու գործիքներով: Արմաշի գյուղատնտեսական վարժարանի ուսումնական մարմնում ընդգրկված էին հողագետներ Հայկ Սերենկյույանը, Ռաֆայել Աբդուլլահյանը, Կոպեռնիկ Թանտրոջյանը և դաստիարակ-ուսուցիչներ Վարդգես Քաջունին ու Արտաշես Սարգսյանը: Հիշյալ վարժարանը տեղակայված էր եռահարկ շենքում: Այն ուներ բաղնիք, 200 փայտե մահճակալ, 50 գրասեղան, գրատախտակներ, ջրամբար, աղորիք, բանջարանոց, բալի, կեռասի, թզի ծառեր: Վարժարանն ուներ նաև ամերիկյան արտադրության տրակտոր: Ամսօրյա հավելվածի նյութերում նշվում էր, որ Արմաշը գյուղատնտեսական վարժարան բացելու համար ճիշտ ընտրված բնակավայր էր:<sup>443</sup>

Հայրենիքի վերածնունդը «Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հանդեսը կապում էր երկրագործության զարգացման հետ՝ գտնելով, որ «Հայաստանը եղած է և պիտի մնայ գերազանցօրէն երկրագործական երկիր մը»:<sup>444</sup> Այդ նպատակի իրագործմանն էին նպաստելու

<sup>441</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 3, էջ 11-14:

<sup>442</sup> Նույն տեղում, 1919, թիվ 3, էջ 3-5:

<sup>443</sup> Նույն տեղում, 1919, թիվ 3, էջ 28-29:

<sup>444</sup> Նույն տեղում, 1919, թիվ 2, էջ 3:

«Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հավելվածում տպագրվող ծրագրային հոդվածաշարերը, օրինակ՝ Հրանտ Գարագյոզյանի «Հայաստանի ջրաբաշխությունը», Կարապետ Նուրյանի «Հայաստանը և իր երկրագործական հարցերը», Հայկ Սերենկյուլյանի «Կաթնատնտեսությունը Հայաստանում մեջ» շարքերը:

«Ճակատամարտ» մանկավարժական ամսօրյա հավելվածը հայ ուսուցչական միության (այսուհետև՝ ՀՈՒՄ) պարբերական մամուլի օրգանն էր: Հանդեսի խմբագրական մարմնում ընդգրկված էին Գեղամ Գավաֆյանը, Պողոս Գևորգյանը, Հովհաննես Հինդլյանը, Գևորգ Մեսրոպյանը, Շահան Պերպերյանը: Նրանք և աշխատակիցների մեծ մասը ՀՈՒՄ-ի անդամներն էին և հարկ եղած դեպքում աշխատանքը համատեղում էին «Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հավելվածում: «Ճակատամարտ» մանկավարժական ամսօրյա հանդեսն ուներ «Էական հարցեր», «Կրթական վիճակագրություն», «Հարցումներ և պատասխաններ՝ աշակերտների դաստիարակության վերաբերյալ», «Կրթական քրոնիկ», «Հայ դաստիարակներ», «Տեղեկատվություն ՀՈՒՄ գործունեության», «ՀՈՒՄ քրոնիկ», «Նոր գրքեր» բաժինները:

ՀՈՒՄ-ը և նրա պաշտոնաթերթը հետապնդում էին մի շարք նպատակներ.

- ՀՈՒՄ-ի Կ.Պոլսի մասնաճյուղերի վերաբացում,
- մանկավարժների վերապատրաստման եռամսյա դասընթացների կազմակերպում,
- ուսուցիչների նյութական վիճակի բարվոքում,
- չափահաս որբերի հայեցի դաստիարակություն և այլն:<sup>445</sup>

«Ճակատամարտ» մանկավարժական ամսօրյա հավելվածի «Առաջին խոսք» խմբագրականում հայ ժողովրդի վերածնության և Հայաստանի վերաշինության գործում հայ ուսուցչին էր վերագրվում ամենակարևոր դերը. «Վաղուան Հայաստանը ամէն բանէ աւելի պէտք ունի Հայ Ոգիով և Առաքինութեամբ սնած քաղաքացիին: Ուսուցչութիւնն է, որ պիտի կազմէ այդ սերունդը՝ զայն դուրս բերելով թշուառութենէ, օտարութենէ մասամբ վատուծացած և մասամբ այլասերած 100000-աւոր խեղճ որբութենէ... : Հայ Ուսուցչութեան գերազանց գործն է՝ անոնցմէ յառաջ

<sup>445</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 1, էջ 14-22:

բերել վաղուան Ազատ Հայաստանին Ազատ Հայ Տիպարը»:<sup>446</sup> «Ճակատամարտ» մանկավարժական ամսօրյա հանդեսը համապատասխան բաժիններում տպագրում էր իրեն հուզող հիմնահարցերին մվիրված հոդվածներ, վերլուծություններ և առաջարկներ այդ խնդիրների լուծման համար: Հիշատակության են արժանի հայկական դպրոցների ուսումնական ծրագրերի, դասավանդման մեթոդների վերլուծությանը և հայեցի դաստիարակությանն առնչվող հոդվածները, ի թիվս որոնց՝ «Վիճակագրություն» խորագրի տակ տպագրված Գ. Մեսրոպի հոդվածաշարերը Կ. Պոլսի և Գավառի վարժարանների ու որբանոցների անցյալ և ներկա վիճակների մասին: Օրինակ՝ «Հայ դպրոցներու վիճակը 1908-ին» վերլուծական հոդվածում Գ. Մեսրոպը ներկայացնում էր թվային տվյալներ 1915 թ. և 1918 թ. կտրվածքով:<sup>447</sup> Դրանք նույնպես վկայում էին հայկական մշակույթի նկատմամբ թուրքիայում իրականացված եղեռնի մասին: «Մոտաւորաբար թուրքիոյ Հայ լուսաւորչական ազգային և անհատական դպրոցներու .թիվը կհասնէր 1914-ին՝ 2626-ի: Այս դպրոցներէն 99%-ը կողոպտուեցան 1915-1918 թթ. շրջանին: Իսկ այրուած և քանդուած դպրոցական շէնքերուն թիվը եղած է 42%: Դրանց 50%-ը կիսաւեր են: Կանգուն են մնացել 8%-ը մեր ստացած վերջին տեղեկութիւններուն համեմատ», - գրում էր հոդվածագիրը:<sup>448</sup> Մեկ այլ հոդվածում նա տալիս էր Կ. Պոլսի ազգային վարժարանների ընդհանուր թիվը: 1919 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կ. Պոլսում գործում էր 24 ազգային վարժարան 6000 աշակերտով և 7 մասնավոր վարժարան 1500 սաներով, իսկ ընդհանուր թվով Կ. Պոլսի հայկական վարժարաններում սովորում էին 100000 աշակերտ: Նույն ժամանակահատվածում այնտեղ կային 337 որբանոց 3008 որբով, երբ Գավառում գործում էր 19 որբանոց 5750 որբով:<sup>449</sup> Գ. Մեսրոպն իր ուսումնասիրություններում այն միտքն էր հայտնում, որ Մուղոսի զինադադարից հետո հայկական կրթօջախները և որբանոցները սկսում էին մտնել աշխատանքի բնականոն ռիթմի մեջ:

<sup>446</sup> «Ճակատամարտ», 1919, թիվ 1, էջ 1-2:

<sup>447</sup> Նույն տեղում, 1919, թիվ 1, էջ 10-12:

<sup>448</sup> Նույն տեղում:

<sup>449</sup> Նույն տեղում, 1919, թիվ 4-5, էջ 23-30:

«Շանթ» հանդեսը լույս է տեսել Կ.Պոլսում 1911-1915 թթ. և 1918-1919 թթ.: Խմբագիրը Մերուժան Պարսամյանն էր: Աշխատակազմում ընդգրկված էին ժամանակի անվանի գրողներն ու հրապարակախոսները. Երվանդ Օտյան, Երուխան (Երվանդ Սրմաքեշխանյան), Օննիկ Չիֆթե Սարաֆ, Եղիա Տեմիրճիբաշյան, Ջարուհի Գալեմքերյան, Միքայել Շամտանձյան, Մկրտիչ Պարսամյան (Կայծակ), ժակ Սայապալյան (Փայլակ), Արամ Չարգ (Վտարանդի), Հակոբ Անտոնյան, Շավարշ Միսաքյան, Հակոբ Սիրունի, Ենովք Արմեն, Արշակ Ալպոյաձյան, Գևորգ Մեսրոպ, Հովհաննես Ասպետ և այլք: «Շանթը» թղթակիցներ է ունեցել Արևմտյան Եվրոպայի երկրներում, Կովկասում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում: Նրանց նյութերը հանդեսին հաղորդում էին «տեղի գրական և գեղարուեստական շարժումը՝ մասնաւորապէս հայէն բոլոր և հայութիւնը շահագրգռող»:<sup>450</sup> «Շանթ» հանդեսը հիմնվել էր հայ գրականության զարգացմանը նպաստելու նպատակով: «Հանգրվանը» կոչվող խմբագրականում նշված է. «Ժամանակն հասած է, որ դիմենք գեղարուեստի հանգրուանին, ստեղծենք նոր միջավայր մը, ուր արուեստին գաղտնիքները քողամերկուին, և ուր քաղաքական և ազգային մոլեգնոտ կռիվներէն յոգնած մեր ուղեղները անդորրին պահ մը: Այդ հանգրուանը ժամադրավայրը պիտի ըլլայ բոլոր ինքնգինքնին հարգող գրագէտներուն. հոն կուսակցական ոգին տեղի պիտի տայ զուտ գեղարուեստական մակընթացութեան, ամէն գրագէտ՝ այդ նոր գետնին վրայ ծռք պիտի երկարէ իր սկզբունքի ախոյեանին՝ գործակցելու համար գրականութեան պանծացումին: Ահաւասիկ այդ նպատակին համար կը հիմնենք «Շանթ» հանդէսը»:<sup>451</sup> Այդ ծրագրային խմբագրականում նշվում էր ամսագրի հիմնական նպատակը, այն, որ «Շանթի» էջերում պիտի արտացոլվեին հայ արվեստն ու գրական միտքը, իսկ «գրական և գեղարուեստական շարժումին մէջ պիտի խօսուէր ամէն հրատարակութիւններու վրայ՝ տարուան գրականութեան և գեղարուեստին ամփոփ ու ճշգրիտ պատմութիւնը տուած ըլլալու համար»:<sup>452</sup>

<sup>450</sup> «Շանթ» հանդես, 1911, թիվ 1, էջ 1:

<sup>451</sup> Նույն տեղում:

<sup>452</sup> Նույն տեղում:

Հրատարակության առաջին շրջանում «Շանթ» հանդեսն ունեցել է գրական-գեղարվեստական և գիտական ուղղվածություն: Հանդեսի հիմնական բաժիններն ու խորագրերն էին՝ «Գրական-գեղարվեստական շարժում և մոտեցումներ», «Գրքեր», «Թրքահայ գրականություն», «Մամուլ», «Թարգմանություններ», «Հայ աշխարհ», «Հայ հորիզոններ», «Նամականեր», «Լրափոխ»: Կային թեմաներ, որոնց անդրադառնում էին «Շանթի» գրեթե յուրաքանչյուր համարում: Օրինակ՝ «Թրքահայ գրական շարժումը» խորագրի ներքո մշտապես քննարկվում էին արևմտահայ գրականության անցած ուղին, թերություններն ու ձեռքբերումները: Հոդվածներում հաճախ մոտեցումները տարբերվում էին, իսկ երբեմն էլ ծայրահեղորեն հակադիր էին միմյանց: Ենովք Արմենը իր «Թրքահայ գրական շարժումը» և «Կարճատեսությունը քննադատության մեջ» հոդվածներում կարծում էր, որ արևմտահայ գրականությունը նեխում էր լճացման և «անյոյզ անշարժութեանը մէջ» և նույնիսկ 1909-1911 թթ. «բռնած էր փտումի ու այլասերումի հիւժախտէն»:<sup>453</sup> Պատճառը հասարակության անտարբեր վերաբերմունքն էր գիր ու գրականության նկատմամբ. «Հասարակութիւնն է որ կը վրիպի մտաւորական աշխարհով ապրելու մարդկային վայելքէն: Այդ հասարակութիւնը կրնար տնտեսական աշխարհի բարձունքներու վրայ գտնուիլ, բայց մտաւորապէս կործանուած էր: Չի կայ գրական սնունդի պէտքը, որպէսզի ըլլայ նաև մատուցումը: Յոյս չի կայ գրականութեան ծաղկումին, որովհետև անոր կեանք տալու կոչուած արեւը՝ հասարակութիւնը, անդարմանելի կերպով այլասերած է»:<sup>454</sup> Ե. Արմենը սնանկ էր համարում արևմտահայ գրական շարժումը և այն բնութագրում էր իբրև «բաբելոնեան թոհուփոհի, գեհե-նային խաժամուժի պատկեր մը: Հոն, չի կայ ծրագրուած նպատակ, չի կայ ազնիւ իտէալ, չի կայ խոհական ձգտում, չի կայ արուեստի ճանաչողութիւն, չի կայ կոչումի գիտակցութիւն»:<sup>455</sup> Այս պայմաններում անգամ տաղանդավոր գրողները պիտի խամրեին՝ իրենց ձակատները «ջախջախելով հասարակութեան...անտարբերութեան բիրտ պատնէշներուն դէմ»:<sup>456</sup> Ե. Արմենի հետ համամիտ էր Ատրուշանը, ով ավելի

<sup>453</sup> «Շանթ» հանդես, 1911, քիվ 2, էջ 17-19, 1911, քիվ 4, էջ 63:

<sup>454</sup> Նույն տեղում:

<sup>455</sup> Նույն տեղում:

<sup>456</sup> Նույն տեղում:

խիստ էր բնորոշում իրավիճակը՝ գրելով, թե գրականություն չունեինք, իսկ ժամանակակից գրողները «ընդօրինակողներ էին, ոչ թե յուացողներ»:<sup>457</sup> Սուրեն Պարթևյանը արևմտահայ մտավորականությանն անվանում էր «Վրիպած սերունդ», որը «Օսմանեան Սահմանադրութենէն գրեթէ չորս տարի վերջը դեռ չի կրնար ինքզինքը գտնել ու համասեռ, ներդաշնակ ու տեական գործունէութեամբ մը իր կենդանութիւնն ապացուցանել»:<sup>458</sup> Հակոբ Բուֆեճյանն ասվածին ավելացնում էր, թե ոչ միայն արևմտահայ, այլև արևելահայ ժամանակակից գրականության թերությունը հռետորությունն էր, ինչը «անիմաստ ու թերեւս վնասակար հայարտութեան մը կրկին հանգամանքներովը բաւական ուշագրաւ երեւոյթ մըն էր, արժանի՝ լուրջ ուսումնասիրութեան»:<sup>459</sup>

Արևմտահայ գրականության մասին վերը նշված անտեղի գնահատականները մերժել, չեն ընդունել և «Շանթ» հանդեսում իրենց մոտեցումներն են արտահայտել մի շարք մտավորականներ, գրողներ ու հրապարակախոսներ: Երվանդ Սրմաքեշխանյանը «Հռետեսությունը քննադատության մեջ» խմբագրականում փաստերով ապացուցում էր, որ «հայկական ոսկեդարէն (Ե դար) ասդին, ազգային մատենագրութիւնը ոչ մէկ ատեն հասաւ այն ժողկման որպիսին վերջին քսան տարուան մէջ: Ես չեմ ճանչնար ազգային աւելի կենդանի, հզօր, առողջ, գունագեղ, արուեստագիտական գրականութիւն մը ինչպէս ան որ յայտնուեցաւ ուստունական թուականներէն ասդին Թուրքիա թէ արտասահման»:<sup>460</sup> Երուխանը գրականությունը համարում էր անթափանց գրահ, որին բախվելով՝ բթացել էին մեր թշնամիների սրերը, իսկ համիյան ջարդերից հետո «ճղակտոր ելլող հայութենէն նոր և տարօրինապէս հզօր գրականութիւն մը կը յառնէր»:<sup>461</sup> Իր վերլուծությունն Երուխանն ավարտում է այն եզրակացությամբ, թե հռետես էին ու սխալվում էին այն գրաքննադատները, ովքեր «կ'ողբերգեին հայ գրականութեան անկունին վրայ՝ օսմանեան սահմանադրութենէն առաջ թէ ետքը»:<sup>462</sup> Երուժան Պարսամյանը «Դըժգոհները՝ գրականության մեջ» խմբագրականում համոզված էր, թե «մեր

<sup>457</sup> «Շանթ» հանդես, 1911, թիվ 2, էջ 19:

<sup>458</sup> Նույն տեղում, 1911, թիվ 10, էջ 149-151:

<sup>459</sup> Նույն տեղում, 1912, թիվ 26, էջ 18:

<sup>460</sup> Նույն տեղում, 1911, թիվ 3, էջ 33-34:

<sup>461</sup> Նույն տեղում:

<sup>462</sup> Նույն տեղում:

դժգոհները ո՞ր գրական դպրոցին այլ որ պատկանէին, չպիտի դադրէին երբեք միջակ ըլլալէ, իրենց իմաստակութիւնով և փքացած այլամերժութիւնով»:<sup>463</sup> Այդպիսիներին Պարսամյանը հիշեցնում էր, որ աշխարհում անթերի ոչինչ չկա և միշտ պետք է «աւելիին բաղձալ՝ առանց արհամարհելու անցեալ ու ներկայ տաղանդներու գործը»:<sup>464</sup>

Այս կարգի բանավիճային հողվածների շնորհիվ «Շանթը» կարողացել է վերոհիշյալ խնդիրներով մտահոգ մարդկանց համար ստեղծել արտահայտվելու հնարավորություն և դրանով նպաստել գրականության զարգացմանը: Գնահատելի է, որ տարբեր կարծիքների տեր անծինք հանդեսի էջերում պահպանել են կոռեկտությունը և հազվադեպ են մըտել անծնական վեճ ու կռիվների մեջ: «Շանթի» ընթերցողներին հենց սա է գրավել: Նրանցից մեկը՝ պարսկահայ բանաստեղծ Տիգրան Աճեմյանը, «Նամակներ» բաժնում մաղթում էր, որ հանդեսում «երեսցող հայ գրական վարպետները շարունակեին մնալ կողք կողքի հետզհետէ աւելցնելով իրենց շարքի մէջ ուրիշներ, բոլորովին հեռու կուսակցական արդէն իր համն ու հոտը կորսնցնող վէճերէ և գործածեին իրենց գրիչները ոչ թէ իրարու միսը ծակծկելու, այլ մշակելու և գեղեցկացնելու հայ գեղարուեստի անդաստանը»:<sup>465</sup>

«Շանթի» «Գրական-գեղարվեստական շարժում» բաժինն իրապես ծառայել է այդ նպատակին: Հատկապես արժեքավոր են բաժնի «Գրքեր» և «Մամուլ» խորագրերը, որոնցում ներկայացվել, գրախոսվել կամ վերլուծվել են ժամանակի մամուլի օրգանները և նոր հրատարակված գրքերը: Այստեղ նույնպես ապահովվել է բազմակարծություն: Նույնիսկ նույն էջում կամ հաջորդական համարներում տպագրել են կողմ և դեմ տեսակետներ որևէ գրքի կամ թերթում տպագրված գրական կարևոր հարցեր շոշափող հողվածի մասին: «Շանթի» գրախոսականները աչքի են ընկնում անկեղծությամբ և օբեկտիվությամբ: Դրանցում մատնանշվում էին տվյալ գրական երկի արժանիքները և թերությունները: «Շանթի» քննադատությունը սրտացավ և բարեկամական էր իրական գրական արժեքների, և, ընդհակառակը, խարազանող ու ոչնչացնող՝ նորելուկ անտաղանդների հրատարակած գրքերի նկատմամբ: Մե-

<sup>463</sup> «Շանթ» հանդես, 1911, թիվ 7, էջ 97-98:

<sup>464</sup> Նույն տեղում:

<sup>465</sup> Նույն տեղում, 1911, թիվ 6, էջ 95:

րուժան Պարսամյանը գրում էր. «Այս միջոցիս սկսնակները գործի վրայ են. անոնք անելի գործունէութիւն ցոյց կուտան, քան հինները»:<sup>466</sup> Նա պարբերաբար անդրադառնում էր «անխոստմնալից, շատախօս սկսնակներու կարաւանէն» ընտրած բանաստեղծների ստեղծագործություններին: Օրինակ՝ ըստ Պարսամյանի՝ ՂԳունտուրաձյանի «Բոցեր ու խոցեր» գրքում արտահայտված գաղափարները տափակ ու սովորական էին. «Իր սէրը փոթորիկ չի ճանչնար. ո՛չ պայքար կայ հոն, ոչ մեղանչում, ո՛չ ըմբոստացում կայ, ո՛չ արհամարհանք»:<sup>467</sup> «Շանթի» լոնդոնյան թղթակից Խոսրով Գարապաճագյանի «Մտքիս խառնարանեն» գրքույկը Մ. Պարսամյանը բնորոշում էր որպէս «արծակ և ոտանավոր գրուածքներու միջակօրէն անյաջող հաւաքածոյ մը, անկապակից, անտեղի, տղայական, դպրոցականի շարադրութիւններ, որոնց մէջ դատողութիւնը, իմաստութիւնը իր գոյութիւնը չէ պտտցուցած... Չեմ կրնար ըմբռնել որ ինչպէս մարդ գիրք կը հրատարակէ, ինքզինքնին բացարձակապէս ծաղրելի դարձնելով»:<sup>468</sup> Մ. Պարսամյանը գտնում էր նաև, որ Լևոն Էսաճանյանի բանաստեղծությունների «Փանդիռ» ժողովածուն գրված էր բառախաղերով և բաղկացած էր միմյանց հետ կապ չունեցող կտորներից: Գրքի հեղինակն էլ ոչ թե բանաստեղծ էր, այլ՝ «վատառողջ խառնուածքով և անհաւասարակչիռ միտքով» աշուղ:<sup>469</sup> Քննադատական նույն վերաբերմունքին է Պարսամյանը արժանացրել Հովհան Հայկազնի (< Սոսկոֆյանի) «Վերածնունդի երգեր» ժողովածուն:<sup>470</sup> «Ու կ'երկարի շարքը նորափետուր վառեակներուն: Կ'արտադրեն, շարունակ կ'արտադրեն. չեն յոգնիր, իրենց ռամիկ, տափակ ներշնչումները այնքան արգահատելի են, որքան զայրոյթ գրգռող... Գրականութեան անունով կատարուած այս տխուր ապօրինութիւնները պէտք է վերջ գտնեն բացարձակապէս», - գրում էր Մերուժան Պարսամյանը:<sup>471</sup> «Շանթի» խմբագրի հետ համաձայն էր գրաքննադատ Արտաշես Հարությունյանը: Այդ մասին նա գրել է Ենովք Արմենի՝ «Հայ նոր բանաստեղծները.

<sup>466</sup> «Շանթ» հանդես, 1911, թիվ 1, էջ 14:

<sup>467</sup> Նույն տեղում:

<sup>468</sup> Նույն տեղում:

<sup>469</sup> Նույն տեղում, 1911, թիվ 2, էջ 29:

<sup>470</sup> Նույն տեղում:

<sup>471</sup> Նույն տեղում, էջ 30:

Հրանտ Նազարյանց» գրքի առիթով:<sup>472</sup> Հրանտ Նազարյանցի բանաստեղծությունները թեև սահուն ու երաժշտական էին, բայց զուրկ էին անհատական դրոշմից. «Նազարեանց կը պատկանի մեր նորեկ բանաստեղծներու այն խումբին՝ որուն բազմաթիւ ներկայացուցիչները բուսան նախասահմանադրական վերջին քանի մը տարիներու գրական երաժշտութեան եղանակին: Ապահովաբար՝ տաղանդաւորներ չեն պակսիր անոնց մէջ: Եւ սակայն, բացի մէկ կամ երկուքէ, բացառաբար ուշադրութեան արժանի դիմագծութիւններու ծնունդ չտուաւ այդ անարին գրագիտութեան աղբատիկ շրջանը»:<sup>473</sup> Փայլակի «Անպետ սուները» վերլուծականից պարզվում էր, որ Հրանտ Նազարյանցի պես տաղանդագուրկ բանաստեղծները սնկերի պես աճում էին ու բազմանում:<sup>474</sup> Նմաններից մեկի՝ Կ. Մեծարենցի ուսանավորները նա ոչնչություն կամ ոչինչ էր համարում: Կ. Մեծարենցի հրատարակած 29 էջից բաղկացած գրքուկը գրվել էր 1907-1910 թթ.: «Երեք տարուան տաժանելի երկունք մը՝ այդ... մուկը ծնելու համար», - այն այսպես էր գնահատում Փայլակը:<sup>475</sup> Նա հողվածն ավարտում էր հետևյալ ամաչարկով. «ժամանակ է որ վերջ տրուի այս վտանգատուր կատակերգութեան... Այս անպետ սուները գրականութեան թաուտըին գեղեցկութիւնն ալ կը խանգարեն: Մեղք է, անոնց ալ մեղք է, անոնցմէ խէր սպասող ցեղին ալ: Տարբեր հողի մը վրայ անոնցմէ ամէն մէկը, փոխանակ անպետ սունկ մը ըլլալու, կրնայ շատ օգտակար բոյս մը դառնալ ու ցեղին պարտէզը շէնցնել»:<sup>476</sup> Այս կենսական խնդրով լավ կլինէր, Փայլակի կարծիքով, որ զբաղվելն ուսուցիչները կամ Կ. Պոլսի նորակազմ ուսուցչական միությունը: Բանաստեղծ դառնալու մոլուցքով բռնված աշակերտին ուսուցիչը պիտի կարողանար ասել. «Տղան, դուն բանաստեղծ չես կրնար ըլլալ, այս գրուածքները արժէք չունին, հետեւաբար ուրիշ կողմ դարձուր աչքերդ»:<sup>477</sup>

«Շանթը» հիմնադրման օրվանից ջանացել է քաջալերել այն սկսնակներին, ովքեր պատրաստվում էին դառնալ վաղվա բանաստեղծ-

<sup>472</sup> «Շանթ» հանդես, 1911, թիվ 11, էջ 177:

<sup>473</sup> Նույն տեղում:

<sup>474</sup> Նույն տեղում, 1912, թիվ 33, էջ 145-146:

<sup>475</sup> Նույն տեղում:

<sup>476</sup> Նույն տեղում:

<sup>477</sup> Նույն տեղում:

ներ: «Հրատարակած ենք բոլոր այն գրուածքները, որոնց մէջ գրական արժէք մը...նշմարած ենք: Անոր համար է որ մեր ընթերցողները յաճախ կը հանդիպին Շանթի մէջ նոր գրողներու, որոնք թէև քանի մը անգամներ միայն երեւցած, բայց տաղանդի կայծով բռնկած են ու կը խոստանան վաղը ըլլալ անոնք, որոնց անունը այսօր ծանօթ է ամէնուս», - գրված է «Վաղվան բանաստեղծները» նյութում:<sup>478</sup>

«Գրական-գեղարվեստական շարժում» բաժնում գրախոսվել և գրասեր հասարակայնությանն են ներկայացվել նաև արևմտահայ ու արևելահայ ճանաչված և անվանի գրողների գրքերն ու ստեղծագործությունները: 1911 թ. Կ.Պոլսում հրատարակված Մաննիկ Պերպերյանի «Արծակ երգերը» Մերուժան Պարսամյանը համարում էր ինքնատիպ և մեկ շնչով կարդացվող գիրք: Այնտեղ ամփոփված որոշ արծակ բանաստեղծություններ (Հովանոցս», «Երեկ», «Խոշոր ծառերուն տակ», «Ըսին ինծի», «Երկտող», «Կասկած» և այլն) քննադատի կարծիքով՝ հոսում էին վճիտ աղբյուրի ջրի պես:<sup>479</sup> Դրանք կյանքի՝ կանացի հոգեբանական զննողության արդյունք էին: Մ. Պերպերյանը «նորօրինակ երգ մը կը թրթռացնէ իր կանացի ու համարծակ քնարին վրայ: Նուրբ, անշոշափելի, երազային երգ մը, որ ոչ Սիպիլի բառերու երաժշտութիւնը փոխ առած է, ոչ Շուշանիկ Կուրդինեանի ըմբոստ հոգին կը յիշեցնէ և ոչ ալ Հերանոյշ Արշակեանի ռօմանթիքօրէն անկեղծ խառնուածքը»:<sup>480</sup> Տեղին է մեջբերել 1913 թ. մայիսի 4-ին Կ. Պոլսում տեղի ունեցած Մ. Պերպերյանի համերգի առիթով «Գրական-գեղարվեստական շարժում» բաժնում Զարուհի Գալեմբերյանի թղթակցությունում արվեստասեր հասարակության կողմից դրսևորած վերաբերմունքը բանաստեղծուհի և երգչուհի Մ. Պերպերյանի նկատմամբ. «Հայ ազգին համար շնորհաւորելի ու պատուաբեր յայտնութիւն մըն էր Օր. Պէրպէրեան. արդէն ասկէ առաջ ալ գրական հրապարակի վրայ ծանօթ դէմք մըն էր ան իր արծակ բանաստեղծութիւններով ու պզտիկ սիրային արծակ երգերով : Օր. Պէրպէրեան իրեն յատուկ անկեղծ ու համարծակ եղանակով մը կը գրէր, թուղթին վրայ

<sup>478</sup> «Շանթ» հանդես, 1914, թիվ 55, էջ 112:

<sup>479</sup> Նույն տեղում, 1911, թիվ 2, էջ 30:

<sup>480</sup> Նույն տեղում:

թրթռացնելով իր սրտին բաբախումները և հոգին ալեկոծող յուզումները»:<sup>481</sup>

«Գրական-գեղարվեստական շարժում» բաժնում հետաքրքիր ու հանգամանալից վերլուծականներ են Փայլակի ծավալուն գրախոսականը Տիգրան Չոկյուրյանի «Վանքը» վիպակի մասին<sup>482</sup>, Հ. Զորթյանի գրախոսականը Փայլակի «Հայերը Նիկոմիդիո գավառին մեջ» գրքի առիթով<sup>483</sup>, Մկրտիչ Պարսամյանի «Ով որ սուլթան մը ունի իր հոգիին մեջ» վերնագրով անդրադարձը Ռուբեն Զարդարյանի ստեղծագործություններին<sup>484</sup> և այլն: Դրանք բոլորը գետեղված են «Գրքեր» խորագրի ներքո: Հիշատակենք դրանցից ևս մեկը՝ նվիրված Հ. Երեմյանի «Պատկերներ» գրքին:<sup>485</sup> Գրախոսականի հեղինակը Մերուժան Պարսամյանն էր: Նա նշում էր, թե բանասեր «Հ. Ս. Երեմեան բանաստեղծի իսկական ձիրքեր ցոյց կուտայ այս հատորով...Պատկերները նոր թուական մը կը բանայ իր Գործին և կ'ստիպէ մեզ անդրադառնալու իր խորհրդապաշտ բանաստեղծի հոգիին»:<sup>486</sup> Մ.Պարսամյանը մեջբերել է նաև մի շարք գրողների կարծիքները Հ. Երեմյանի այս գրքի մասին: Ասենք՝ Ավ. Իսահակյանը գրել է. «Այնտեղ կան իսկական բանաստեղծություններ, քնարական կտորներ, ոմանք փոքրիկ պատկերներ են՝ պատկերներ.- յամենայն դէպս մեր գրականութեան մէջ նորոյթներ են»: Դ. Վարուժանն էլ գտնում էր, որ «Պատկերներ»-ում կան շատ սիրուն և գունագեղ էջեր, որ գրքի տպագրությունը գուցե «վանքը սնանկացնէ, բայց գրականութիւնը կը հարստացնէ»:<sup>487</sup>

Մերուժան Պարսամյանը «Մամուլ» բաժնում անդրադարձել է Կ. Պոլսի «Ազատամարտի» 1911 թ. թիվ 48-ում Արտաշես Հարությունյանի արտահայտած այն տեսակետին, թե հայ ժողովրդի կրած տառապանքի երգիչներ էին արևելահայ պոեզիայում Ավետիս Ահարոնյանը, իսկ արևելահայ պոեզիայում՝ Սիամանթոն: «Շանթի» խմբագրի կարծիքով. «Ա. Յարութիւնեան Ազատութեան ճանապարհին վրայ, Հայորդիներու ցալի

<sup>481</sup> «Շանթ» հանդես, 1913, թիվ 41-42, էջ 281:

<sup>482</sup> Նույն տեղում, 1914, թիվ 55, էջ 110-111, թիվ 56, էջ 127-128:

<sup>483</sup> Նույն տեղում, 1914, թիվ 58, էջ 157-158:

<sup>484</sup> Նույն տեղում, 1914, թիվ 54, էջ 94:

<sup>485</sup> Նույն տեղում, 1914, թիվ 57, էջ 139:

<sup>486</sup> Նույն տեղում:

<sup>487</sup> Նույն տեղում:

աղաղակնար. Էն, Հոգեարքի և Յոյսի ջահերուն բոցերանգ լոյսէն ու Կարմիր արիւն ոտ լուրերէն միտքը յոգնած, պահ մը մոռցած է ան միւս հոյակապ բանաւտեղծը, որ կը կոչուի Դանիէլ Վարուժան»:<sup>488</sup> Պարսամյանը ամփոփ ձեռնով վերլուծել է Սիամանթոյի և Վարուժանի քնարերգութիւնը՝ նշելով, թէ «Դանիէլ Վարուժան, Սիամանթոյին հետ ու Սիամանթոյին անկախաբար, ա՛յնք է նկատել հայուն տառապանքը վսեմորէն եղերերգողներէն մէկը»:<sup>489</sup>

1912 թ. թիվ 27-ի «Մամուլ» բաժնում Մերուժան Պարսամյանը գրական բանավեճ է սկսել Ալ. Շիրվանզադեի հետ «Հորիզոնում» տպագրված նրա այն հոդվածի առիթով, որտեղ Շիրվանզադեն պոռնկագիր էր համարում Դ. Վարուժանին:<sup>490</sup> Պարսամյանը ցավում էր, որ նշանավոր թատերագիրը այդպես էր արտահայտվել Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր»-ի մասին. «Բաական է որ Շիրվանզատէ խիղճը ունենար կարդալու անոր Սարսուռները, Ցեղին Սիրտը և պարբերականներու մէջ հրատարակած շարք մը քերթուածները, այն ատեն վստահ ենք որ ան իր մէջ ուժը պիտի չզգար դատաւորի վերաբոլուով մօտենալու Վարուժանի տաղանդին»:<sup>491</sup> 1913 թ. «Շանթի» «Գրքեր» բաժնում Փայլակը, ներկայացնելով Դ. Վարուժանի նոր հրատարակված «Հեթանոս երգեր» ժողովածուն, նրան այսպես էր բնութագրում. «Վարուժանի նախորդ հատորին.- Ցեղին Սիրտը,- վրայ խօսած պահուս, ըսած էի. «Այս երիտասարդ բանաստեղծը այն քերթողներէն է, որոնց ազգային երգիչ մակդիրը կուտար հին սերունդը»: Այսօր կրնամ նոյնը կրկնել, աւելցնելով թէ այդ ազգային երգիչը ժամանակին ոգիին համապատասխան լարեր ունի իր քնարին վրայ»:<sup>492</sup> Կյանքն է բաբախում «Հեթանոս երգեր» -ում: Այնտեղ կան սեր, կիրք, խանդ, զայրույթ, հուսահատություն: «Այդ բոլորը կան կեանքին մէջ և բանաստեղծին մատները բոլոր խազերը կը հնչեցնեն»,- իր վերլուծականն այսպես էր ավարտում Ժ. Սայապայանը:<sup>493</sup>

«Մամուլ» բաժնի հերթական անդրադարձում Մերուժան Պարսամյանը չափազանց միակողմանի էր համարում Կ.Պոլսի «Ազատամար-

<sup>488</sup> «Շանթ» հանդես, 1911, թիվ 2, էջ 30:

<sup>489</sup> Նույն տեղում:

<sup>490</sup> Նույն տեղում, 1912, թիվ 27, էջ 51:

<sup>491</sup> Նույն տեղում:

<sup>492</sup> Նույն տեղում, 1913, թիվ 41-42, էջ 279-281:

<sup>493</sup> Նույն տեղում:

տում»<sup>494</sup> Վահան Մալեգյանի «Կերոններ» գրքին զրաքննադատ Ռուբեն Դարբինյանի տված գնահատականը:<sup>495</sup> Եթե Դարբինյանը բանաստեղծություններն ուսումնասիրել է իրենց հասարակագիտական արժեքի տեսանկյունից, ապա «Մալեգյանին հետ պէ տք է թրքահայ բանաստեղծներու մեծամասնութիւնն ալ պիտակուի նոյն հոգիով աղքատ, քաղքենիօրէն չոր, դատարկ բառերով»:<sup>496</sup> Իսկ «Գրքեր» բաժնում Սահակ-Մեսրոպը նշում էր, թե բանաստեղծ Մալեգյանի գիրքը դեռևս որևէ լուրջ ուսումնասիրության առարկա չի դարձել, թեև գրվել են մի շարք գրախոսականներ: Եթե դրանց մի մասում Մալեգյանը բարձրացվել է անպերից վեր, ապա մյուսներում բոլորովին ժխտվել է նրա «քերթողական կարողութիւնը»:<sup>497</sup> Այնինչ, «Կերոններ» գիրքը Վ. Մալեգյանի կյանքի պատմությունն է: Այստեղ խտացված ձևով իրենց արտահայտությունն են գտել բանաստեղծի սերը, վիշտը, տառապանքը և ընդհանրապես բոլոր ապրումները: «Ինչ որ կը պակսի իրեն՝ սոսկ թռչչքն է ու գունագեղ պատկերացումը... Բայց մենք ասոնց պակասն ալ կարևոր թերութիւններ չպիտի նկատէինք, որովհետև սիրոյ ցաւը և ունայնութեան տառապանքը խեղդած, ընկճած ու ճմլած է իր սիրտը, թեև ան ապրելու տենչանքով կը բաբախէ դեռ», - գրում էր Սահակ-Մեսրոպը:<sup>498</sup> Նա վերլուծությունն ավարտում էր այն համոզմունքով, որ Վ. Մալեգյանը կյանքի տառապանքը ներանձնորեն ու տխուր կերպով երգող բանաստեղծ էր: Չպետք է անտարբերությամբ խորտակել նրան:<sup>499</sup>

«Գրական-գեղարվեստական շարժում» բաժնում հատուկ ուշադրության են արժանացել Լ. Շանթի ստեղծագործությունները: Մատնանըշվում էին այս գրողի մոտ նկատվող թեմատիկ նորությունները և դրանցում առկա թերությունները: Օրինակ՝ Փայլակը գտնում էր, որ Լ. Շանթի «Կերժին» վեպի որոշ փոփոխություններով վերահրատարակումը թեմատիկ առումով ողջունելի էր:<sup>500</sup> Չէ՞ որ վեպում բարձրացվում էին հայտնիների հանրային գործունեությամբ զբաղվելու խնդիրը և հասարակա-

<sup>494</sup> «Ազատամարտ» օրաթերթ, 1912, թիվ 934:

<sup>495</sup> «Շանթ» հանդես, 1912, թիվ 27, էջ 51-52:

<sup>496</sup> Նույն տեղում:

<sup>497</sup> Նույն տեղում, 1913, թիվ 36, էջ 194-195:

<sup>498</sup> Նույն տեղում:

<sup>499</sup> Նույն տեղում:

<sup>500</sup> Նույն տեղում, 1911, թիվ 1, էջ 13-14:

կան հնչեղություն ունեցող նմանաբնույթ մի շարք այլ հարցեր, թեև «պոլ-սահայ կեանքը շատ խորունկ ճշտութեամբ մը չէ ներկայանար «Վեր-ժին»-ին մէջ»:<sup>501</sup> Փայլակը թվարկում էր նաև վեպում եղած քերականա-կան սխալները և մերժելի էր համարում մեզանում չկիրառվող դարձ-վածքների օգտագործումը: Փայլակը գնահատել է Լ. Շանթի գրելաոճը. «Հոգեբանական նուրբ ու վճիտ վերլուծականներու մէջ շատ յաջող է Շանթ... Խոշոր բառեր չի գործածեր Շանթ, մէջէն չելլուելիք նախադասու-թիւններու լաբիրինդոսին մէջ չի քաշքշեր ընթերցողին միտքը (ինչպէս մեր հոգեբան կոչուած գրագէտներուն շատերը կ'ընեն), այլ իր պարզու-թեան մէջ գերազանցապէս գրաւիչ, դիրամարսելի նախադասութիւննե-րով կ'ըսէ ըսելիքը»:<sup>502</sup> Իսկ «Հին աստվածներ» դրամայի գրախոսակա-նում Փայլակը ծավալուն ու խորը վերլուծություն է կատարել՝ նշելով, թե հեղինակի ոճը հարուստ է բառամթերքով և «արտայայտութեան սիրուն յղացումներով, սակայն լեզուական ու քերականական այն նորութիւննե-րը, որոնց կ'ենթարկուի ինքը միայն, չափազանց կը նսեմացնեն ամբողջ կառուցուածքը»:<sup>503</sup> Այս առիթով դիտողություններ էին արվել մամուլում «Վերժին» վեպի հրատարակությունից հետո: Լ. Շանթը դրանք հաշվի չէր առել: Չնայած սրան՝ «Հին աստվածներ» դրաման «ամբողջութեա-նը մէջ գեղեցիկ է և խորհրդածութեան առատ նիւթ կը մատակարարէ»:<sup>504</sup>

Լ. Շանթի ստեղծագործությունների և հատկապես «Հին աստված-ներ» դրամայի շուրջ քննարկումները եղել են տևական արևմտահայ գրական շրջանակներում: Հնչած կարծիքները փորձել են ամփոփել 1913 թ. մարտի 3-ի գրական ասուլիսում, «գոր կազմակերպած էր Էսսեան Սանուց Միութիւնը»:<sup>505</sup> Ժյուրիի նախագահին էր Դուրյան արքե-պիսկոպոսը, անդամներն էին՝ Կոմիտաս վարդապետը, Ռ. Ջարդարյա-նը, Գ. Ջոհրապը, Դ. Վարուժանը, Սիմանթոն, Ս. Կյուրճյանը, Ս. Շամ-տանճյանը, Ս. Մինասյանը և Թեոդիկը: Նրանց կարծիքով՝ «Հին աստ-վածներ»-ը հայ թատերգության մեջ «սէ մաօլիք առաջին գեղեցիկ փորձն է: Դրաման իր էութեամբ կը կրէ համաշխարհային բնոյթ՝ հայկական գոյնով և հայկական միջավայրի մէջ պատկերացուած: Ոճը ըստ էութեան

<sup>501</sup> «Շանթ» համդես, 1911, թիվ 1, էջ 13-14:

<sup>502</sup> Նույն տեղում:

<sup>503</sup> Նույն տեղում, 1912, թիվ 28, էջ 66-67:

<sup>504</sup> Նույն տեղում:

<sup>505</sup> Նույն տեղում, 1913, թիվ 37, էջ 212:

քննադատելի չէ, իսկ լեզուն ունի քննադատելի կողմեր: Հին աստվածները հայ տաղանդի գեղեցիկ մէկ արտայայտութիւնն է»: <sup>506</sup> «Շանթը» ողջունելի է համարել նշված միության ջանքերով 1913 թ. անցկացված գրական այն ասուլիսները, որոնք նվիրված էին Լ. Շանթի, Գ. Զոհրապի և Ղ. Վարուժանի ստեղծագործությունների քննարկումներին: Հանդեսը այդ միջոցառումների կազմակերպիչներին խորհուրդ է տվել հեղինակների ընտրության հարցում չլինել կողմնապահ, որովհետև «գրականութիւնը պէ տք է ձերբազատել կողմնակցութեան նեղ ու փցուն հաշիւներէն... և ան պէ տք է զերծ պահել կուսակցական շունչէ»: <sup>507</sup> Այս սկզբունքին է հետևել նաև «Շանթը»՝ հրատարակության առաջին օրվանից դեպի իր էջերը հրավիրելով «բոլոր հոսանքներու գրագէտները որպէսզի միեւնոյն հանգրուանին դիմեն»: <sup>508</sup>

Գրական անցուդարձի, նոր հրատարակված գրքերի, գրական մամուլի օրգանների և ընդհանրապես մշակույթի և արվեստի ոլորտների նորությունների մասին լուրեր, թղթակցություններ և թարգմանական նյութեր կան «Շանթ» հանդեսի «Հայ հորիզոնեն» բաժնում: Օրինակ՝ 1911 թ. հուլիսի մեկի համարում ներկայացված են անվանի երգիչ Արմենակ Շահմուրադյանի՝ Փարիզում ունեցած հաջողությունը և ֆրանսիական մամուլի անդրադարձը այդ կապակցությամբ, նաև՝ Թիֆլիսում կայացած Ալ. Շիրվանզադեի գրական գործունեության 30-ամյա հորելյանին նվիրված միջոցառման մանրամասները, Ղ. Աղայանի մահվան գույժը և այլն: Մասնավորապես Ա. Շահմուրադյանի մասին ահա թե ինչ էր գրում ֆրանսիական «Լը կոլուա» թերթը. «Առաջին անգամն էր որ Բարիզի Օբերային պէ ս տիեզերահռչակ երաժշտական բեմի մը վրայ, Ֆաուսթի կարեւոր դերին մէջ հայ արուեստագէտ մը կ'երեւար: Շահ-Մուրատեան յուսախաբ չըրաւ իր համակիրները... Այս առաջին փորձը՝ իրեն պատուաբեր եղաւ»: <sup>509</sup> «Պարի-ժումնալ»-ն էլ արծանագրում էր, որ Շահմուրադյանի հաջողությունը կատարյալ էր եղել: <sup>510</sup>

«Հայ հորիզոնեն» բաժնում տպագրված լուրերը հաճախ ծառայում էին վերլուծականներ ու գրախոսականներ գրելուն: Օրինակ՝ փոք-

<sup>506</sup> «Շանթ» հանդես, 1913, թիվ 37, էջ 212:

<sup>507</sup> Նույն տեղում, 1913, թիվ 40, էջ 258:

<sup>508</sup> Նույն տեղում:

<sup>509</sup> Նույն տեղում, էջ 31:

<sup>510</sup> Նույն տեղում:

րիկ գրախոսականի էր վերածվել Բաքվում տոնված Հովհ.Հովհաննիսյանի գրական գործունեության 30-ամյակի մասին լուրը: «Երեսուն տարի շարունակ հաւատարիմ մնաց բանաստեղծը իր քնարին: Ան ունեցաւ մարդկային հոգիին բոլոր լարերու ամէն տեսակ թրթռումները, և այդ ամէնը պրտայայտեց գեղարուեստօրէն: Անոր շատ քերթուածները դարձած են Կովկասի համայն հայութեան սեփականությունը, կ'երգուին ամէն տեղ, նոյնիսկ գաւառի խուլ անկիւններու մէջ», - գրում էր «Հայ հորիզոնէն» բաժնի պատասխանատու Շանթարգելը:<sup>511</sup> Բերենք ևս մեկ լուր-գրախոսականի օրինակ: Խոսքը վերաբերում է Վենետիկի Մխիթարյան միաբանության անգամ և միաժամանակ Ատրուշան կեղծանունով «Շանթ» հանդեսի աշխատակից Հ. Երեմյանի «Գրագետ հայեր» ութհատորյակին: Այս շարքի գրքերում ընդգրկված էին հեղինակի պատմվածքներն ու հայ գրողների մասին ուսումնասիրությունները:<sup>512</sup> 1913 թ. Մերուժան Պարսամյանը փոքրիկ լուր-գրախոսականով անդրադառնում է «Գրագետ հայեր» շարքի արդէն հրատարակված 1-ին գրքին:<sup>513</sup> Այն տպագրվել էր Վենետիկում: Այստեղ ամփոփված էին Հ. Երեմյանի գիտական հոդվածներն ու աշխատությունները Ղ. Աղայանի, Մ. Մամուրյանի, Ա. Բագրատունու, Գ. Սրվանձտյանցի, Խ. Հայրիկի, Ռ.Պերպերյանի, Խ. Միսաքյանի, Էդ. Հյուրմյուզյանի, Ս. Տեր-Սարգսյանցի ստեղծագործությունների և գրական ուղու մաշին: Գրքի առաջաբանում Հ. Երեմյանը պարզաբանում էր հեղինակների նւտրոյթյան իր սկզբունքները. «Ընդհանրապէս սահմանափակուած են այն գրագէտ ողմքերուն մէջ, որոնք մտքի և գրականութեան որոշ գործովութիւն մը ունեցեր են մեր անցեալ յիսունական թականէն մինչև մեր օրերը»:<sup>514</sup>

«Հայ հորիզոնէն» բաժնի «Նոյ. գրքեր» ենթաբաժնում փոքրիկ գրախոսականներից բացի տպագրում էին նաև լուր-գնահատականներ նորահրատարակ գրքերի մասին: Օրինակ՝ «Շանթը» տեղեկացնում էր, որ լույս էր տեսնելու Վահան Թեքեյանի «Հրաշալի հարություն» բանաստեղծությունների ժողովածուն: Նաև փորձում էր գնահատել այդ գիրքը. «Թէ քէ եան իր վերջին քերթուածներուն մէ՛ւ, նոր լարեր թրթռացուց: Անթե-

<sup>511</sup> «Շանթ» հանդես, 1913, թիվ 40, էջ 257:

<sup>512</sup> Նույն տեղում, 1911, թիվ 4, էջ 62:

<sup>513</sup> Նույն տեղում, 1913, թիվ 36, էջ 193-194:

<sup>514</sup> Նույն տեղում:

րի և կախարդական բանաստեղծություններ են Սպիտակ Ձեռքը, Անունդ և դեռ այնքան ուրիշներ, որոնք մեծ գնահատության արժանացան Շանթի բժախնդիր ընթերցողներուն կողմէ: Հրաշալի Յարութիւնը իսկապէս հրաշալի ըլլալ կը խոստանայ»:<sup>515</sup> Նույն խորագրի մեկ այլ փոքրիկ լուրից հայտնի էր դառնում, որ հրատարակվելու էին Իսկուհի Մինասյանի երկու նոր գրքերը: Ասվում էր, որ նա մեր կին «բանաստեղծներուն մէջ ամէնէն բանաստեղծական խառնուածքը ունեցողներէն է: Իր արձակ քերթուածները, երաժշտական ներդաշնակութիւնով օծուած են. բառերու, գեղեցիկ պարբերութիւններու քանդակագործ մըն է Տիկ.Մինասեան»:<sup>516</sup> Ի դեպ, «Նոր գրքեր» ենթաբաժնի նման լուր-գնահատականներ կան նաև «Մամուլ» ենթաբաժնում այն գրքերի հրատարակման մասին, որոնց վերաբերյալ նյութեր կային ժամանակի արևմտահայ և արևելահայ մամուլի հայտնի օրգաններում, հիմնականում՝ «Ազատամարտում», «Մշակում», «Ղաշինքում» և այլուր: «Մամուլ» ենթաբաժնում լուր-գնահատականներ կան գրական աշխարհի նորությունների առիթով: Բերենք մեկ-երկու օրինակ: Ասենք՝ անդրադառնում էին «Ղաշինքի» թիվ 1401-ում տպագրված այն հոդվածին, որում նշվում էր, թե «Հայ գրականություն» հանդեսի խմբագիր Զարեհ Գազազյանի ջանքերով Իզմիրում հիմնվել էր գրական միություն: «Շանթը» ողջունում էր իզմիրցիներին այդ նախաձեռնության համար՝ քննադատելով Կ.Պոլսի գրողների անմիաբանությունը. «Պոլսոյ մէջ կարելի չէ երկու գրող քով քովի բերել: Պոլիսը, հակառակ անոր որ կեդրոնն է բոլոր գրչի վարպետներուն. դեռ կը մնայ այլամերձ ու ինքնագոհ: Պոլսահայերս թուղթի վրայ սքանչելի ծրագիրներ պատրաստել գիտենք միայն»:<sup>517</sup>

«Հայ հորիզոնեն» բաժնի լուրերը հաճախ նպաստում էին դրանցում ներկայացվող տեղեկատվությանը համահունչ միջոցառումների կազմակերպմանն ու անցկացմանը: Ասենք՝ այն մասին լուրերի շնորհիվ, ըստ որոնց 1911 թ. մեծ շուքով հայաբնակ տարբեր վայրերում նշվելու էր Ալ. Շիրվանզադեի գրական գործունեության 30-ամյակը, արևմտահայ գրական շրջանակում նույնպես պատրաստվում էին անդրադառնալ այդ իրադարձությանը: Արդեն տպագրվել և Կ.Պոլսի գրախանութներում վա-

<sup>515</sup> «Շանթ» հանդես, 1914, թիվ 55, էջ 112:

<sup>516</sup> Նույն տեղում, 1914, թիվ 52-53, էջ 80:

<sup>517</sup> Նույն տեղում, 1914, թիվ 55, էջ 111:

ճառվում էր Ա. Անտոնյանի «Շիրվանզադե» գրքույկը: Տ. Կամսարականի նախաձեռնությամբ հրատարակության էր պատրաստվում գրողի ստեղծագործությունների մասին գրված վերլուծական հոդվածներն անվիտիոզ ժողովածուն, նաև ընթերցողի դատին էր հանձնվելու Գր. Մալխասի «Շիրվանզադե և իր երկը» աշխատությունը:<sup>518</sup>

«Շանթ» հանդեսի նախաձեռնությամբ սկսել էին նշել նաև արևմտահայ գրողների հոբեյանները: Դրանցից առաջինը Կահիրեում տոնված բանաստեղծ Հովհաննես Սեթյանի գրական գործունեության 30-ամյա հոբեյանն էր: «Սէթեան մեր գրական աշխարհին մէջ դուրգուրայի դէմք մը եղած է, իր շուրջը ստեղծելով միշտ յարգանքի անուշ մթնոլորտ մը. իսկ իբրև ուսուցիչ, անիկա զարգացած սերունդ մը ձգած է իր եղին», - գրում էր Շանթարզելը:<sup>519</sup> «Շանթ» հանդեսի համոզմամբ. «Ժամանակ է որ ազգը ճանչնայ ու պատուէ իր արժանաւոր գաւակները՝ որոնցմէ անվիճելիօրէն մին է մեր մեծայարգ բարեկամը՝ Պ. Յովհ. Սէթեան»:<sup>520</sup>

Գրողների և արվեստագետների հոբեյանների վերաբերյալ լուրերին զուգահեռ «Շանթ» հանդեսն ընթերցողներին տեղեկացնում էր այլ կարևոր միջոցառումների, շնորհանդեսների ու հոբեյանների մասին: Օրինակ՝ 1911 թ. «Շանթը» տեղեկացնում էր, որ նշվելու էր «Հանդես ամսօրյայի» 25-ամյակը: Մինչ այդ տոնական օրը, հրատարակվելու էր «Հանդես ամսօրյայի» անցած ուղուն նվիրված «Գրական ժողովածուն»: «Հանդես ամսօրյան» ջանացել էր «ցոլացնել Ազգային Միտքը և Եւրոպայի ներկայացնել Հայուն հին ու նոր առաքինութիւնները, յատկութիւնները, քննելով, բանասիրելով, քննադատելով զանոնք»:<sup>521</sup> «Շանթի» կարծիքով, պետք է ամեն հայ սիրեր ու զնահատեր «Վիեննական Մխիթարեաններու այս սքանչելի Հանդէսը»:<sup>522</sup> Արդեն 1914թ. կրկին գրելով «Հանդես ամսօրյայի» մասին՝ «Շանթն» արժանագրում էր. «Հանդէս Ամսօրեայ, հոյակապ Ազգագրական հանդէսին հետ, Հայուն թերթն է: Եթէ կ'ուզէ Հայը ինքզինքը ճանչնալ, իր անցեալին ու ներկային ծանօթանալ,

<sup>518</sup> «Շանթ» հանդես, 1911, թիվ 2, էջ 31-32:

<sup>519</sup> Նույն տեղում, 1913, թիվ 41-42, էջ 283:

<sup>520</sup> Նույն տեղում, 1911, թիվ 3, էջ 45:

<sup>521</sup> Նույն տեղում:

<sup>522</sup> Նույն տեղում:

պէ տք է հետեւի Վիեննական Մխիթարեաններու ու Եր. Լալաեանի խմբագրած այս կարեւոր հանդէսներուն»:<sup>523</sup>

«Հայ հորիզոնէն» բաժնի միջոցով «Շանթ» հանդէսն ընթերցողներին տեղյակ էր պահում հայրենիքում և արտերկրում հայ արվեստագետների ու մտավորականների ունեցած նվաճումների և հաջողությունների մասին: 1911 թ. հուլիսի 15-ի համարում այդ կարգի երեք լուր կար: Դրանցից մեկում, հղում անելով արաբական «էլ-վաթան» օրաթերթին, «Շանթը» հայտնում էր, որ Կոմիտաս վարդապետը Եգիպտոսում իր համերգային հյուրախաղերի ժամանակ «մեծ ընդունելութիւն գտած է, որչափ հայ, նոյն քան օտար գեղարուեստասէրներու կողմէ»:<sup>524</sup> «Շանթը» հայտնում էր նաև, որ վերոնշյալ օրաթերթում տպագրվել էր Կոմիտասի կենդանագիրը՝ նրան համարելով «հանճար մը եկեղեցական երաժշտութեան մէջ»:<sup>525</sup> Կ.Պոլսում 1914 թ. փետրվարի 9-ին «Հայ գուսան» երգչախմբի համերգի առիթով «Հայ հորիզոնէն» բաժնում այսպես էին արտահայտվում Կոմիտասի մասին. «Կոմիտաս վարդապետ անխոնջ արուեստագէտ մըն է և երոպական լաւագոյն վարպետներու հետ կրնայ մրցիլ իր զմայլելի orchestographie-ներով: Միշտ պիտի փափաքէ ինք լսել զինքը ու իր յոգնաջան երգչախումբը»:<sup>526</sup> «Հայ հորիզոնէն» բաժնի մեկ այլ լուրով ներկայացվում էին Հռոմի գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, մալաթիացի երիտասարդ, բայց արդեն Եվրոպայի արվեստասեր հասարակությանը հայտնի նկարիչ Սարգիս Խաչատրյանի ձեռքբերումները: Ըստ այդմ՝ «երիտասարդ հայ նկարիչը ունի բաւական պատուաբեր աշխատութիւններ, որոնք Իտալիայի և Գերմանիայի մէջ ալ մասնագէտներու գովեստներուն արժանացած են»:<sup>527</sup> «Շանթի» լուրերի համաձայն, հաջողությունների էր հասել պոլսահայ պարուհի տիկին Արմեն Օհանյանը Լոնդոնի «ծանօթ թատրոններէն մէկուն»՝ Հիքսթրօմի մէջ՝ ուր այնքան ծափեր կը խլէ անգլիական հասարակութենէն: Լոնտոնի Մամուլը կը փառաբանէ հայ պարուհին»:<sup>528</sup> Արծաթե մեդալ էր ստացել Փարիզի բժշկական համալսարանի դոկտոր Միսքձյանը: Նա մասնակցել էր այդ

<sup>523</sup> «Շանթ» հանդէս, 1914, թիվ 55, էջ 112:

<sup>524</sup> Նույն տեղում, 1911, թիվ 3, էջ 44:

<sup>525</sup> Նույն տեղում:

<sup>526</sup> Նույն տեղում, 1914, թիվ 54, էջ 96:

<sup>527</sup> Նույն տեղում, 1911, թիվ 4, էջ 63:

<sup>528</sup> Նույն տեղում, 1911, թիվ 6, էջ 95:

համալսարանի ամենամյա մրցանակաբաշխությանը: Ներկայացված 500 թեզից նրա՝ «606-ի պատճառած մահերը» վերնագրով թեզն էր շահել երկրորդ մրցանակը: «Շանթը» շնորհավորում էր հայազգի դոկտորին հաղթանակի կապակցությամբ և նշում, որ անվանի բժիշկը վերադարձել ու աշխատում էր Կ.Պոլսում. «Ուրախ ենք որ Տօթթ. Միսքճեանի պէս հայութեան անունը բարձր պահողներ կան նոր սերունդին մէջ: Կը շնորհաւորենք զինքը և կը մաղթենք որ ժողովուրդը զիտնայ գնահատել իր արժանիքը»:<sup>529</sup>

«Շանթ» հանդեսում երևում է մշակույթի և արվեստի հայ և օտարազգի ներկայացուցիչների ընտրանին: Տպագրվել են ոչ միայն նրանց ստեղծագործությունները, այլև նրանց մասին հոդվածներ ու վերլուծականներ գրեթե յուրաքանչյուր համարում: Այդ նյութերը գետեղված են «Հայ նկարիչներ», «Գերմանացի բանաստեղծներ», «Իտալացի բանաստեղծներ», «Անգլիական գրականություն», «Պարսկական բանաստեղծություն», «Հնդկական բանաստեղծություն», «Օտար հորիզոնեն», «Ճանչվոր դեմքեր» բաժիններում: Օրինակ՝ «Հայ նկարիչներ» բաժնում տպագրված Հրանտ Նազարյանցի հոդվածը ուշագրավ անդրադարձ է Փանոս Թերլեմեզյանի ստեղծագործություններին և ոճին: Հոդվածն ավարտվում էր հետևյալ մաղթալից գնահատականով. «Կը մաղթենք որ Թէրլէ մէզեան հասարակութեան մէջ լայնօրէն արտայայտուելու և գնահատուելու համար նախածեռնութիւնը ունենար անձնապէս կազմակերպելու ցուցահանդէս մը իր ամբողջական գործերուն ուր երևան պիտի գար իր բովանդակ կարողութեամբը իբր արուեստագէտ մը որ արժանի է գնահատումի և ամէն քաջալերութեան»:<sup>530</sup> Որոշ ժամանակ անց «Շանթը» տեղեկացնում էր Մյունխենի գեղարվեստների միջազգային ցուցահանդեսում Փ. Թերլեմեզյանի հաղթանակի և ստացած արծաթե մեդալի մասին, որը նկարչին շնորհվել էր «Սանահինի եկեղեցու գավիթը», «Հայ գյուղացի քահանան» և «Բոսֆորյան տեսարան» նկարների համար: «Երկրորդ մէտայլ ստանալ կը նշանակէ արդէն յաղթանակը տանիլ: Որովհետեւ երկրորդ մէտայլ ընդունողներն են միայն որ առաջին մէտայլի կարող են արժանանալ»,- գրում էր «Շանթ» հանդեսը:<sup>531</sup>

<sup>529</sup> «Շանթ» հանդես, 1914, թիվ 52-53, էջ 80:

<sup>530</sup> Նույն տեղում, 1911, թիվ 2, էջ 20-21:

<sup>531</sup> Նույն տեղում, 1913, թիվ 41-42, էջ 284:

«Հայ նկարիչներ» բաժնի հետաքրքիր նյութերից է Ա.Պառավյանի ռեպորտաժը բեռլինաբնակ ծովանկարիչ Վարդան Մախոխյանի արվեստանոցից:<sup>532</sup> Ծնունդով տրապիզոնցի Մախոխյանը 20 տարեկանից տեղափոխվել էր նախ՝ սովորելու, ապա՝ ապրելու Եվրոպայում և ի վերջո՝ հաստատվել էր Բեռլինում: Նրա նկարների ցուցահանդեսները ջերմ ընդունելության էին արժանացել Գերմանիայում, Իտալիայում, Եգիպտոսում և այլուր: Վ. Մախոխյանը Բեռլինում «իբր նկարիչ եզակյան դիրքի մը տիրացած է և ամբողջ Եվրոպայի մէջ գեղարուեստի յայտնի հեղինակութիւն մը ճանչուած է... Իր նկարները գրեթէ ամբողջ Գերմանիոյ և օտար երկիրներու մէջ բազմաթիւ գեղարուեստական հանդէսներու և պատկերազարդ թերթերու մէջ արտատպուած են քանի-քանի անգամներ», - գրում էր Ա. Պառավյանը: Ի դեպ, «Շանթում» թարգմանաբար տպագրել են նաև Լայպցիկի «Reclam» հրատարակչ-գրատան «Reclams Universum» շաբաթաթերթում հրատարակված արվեստագետ Ֆիլիպ Պերկեսի՝ «Վանդան Մախոխյան» հոդվածը: Նա հայ նկարչի մասին գրում էր. «Ան կը պատկանի այն արուեստագէտներու շարքին, որոնք ամէն դարաշրջանի մէջ արդիական են»:<sup>533</sup>

Հրատարակչության երկրորդ շրջանում (1918-1919 թթ.) «Շանթ» հանդեսի նախկին բաժինները հարստանում են նորերով՝ «Հայ պանթեոնը», «Վերապրողները», «Մեր մեծ աքսորականները», «Մեր ազգային վերջին մեծ մարտիրոսները», «Դեպի կյանք» և այլն: 1918-1919 թթ. «Շանթը» դառնում է գրական-քաղաքական և առավելապես հայապահպանության ու ազգի վերածնության խնդիրներ արժարժող հանդես: Պապատահական չէր և թելադրված էր Թուրքիայի հասարակական-քաղաքական իրավիճակով: Դեռևս 1911թ. իր անդրանիկ խմբագրականում «Շանթը» գրում էր. «Ո՛չ մէկ երկրի քաղաքական կեանք այնքան զօրատուր կերպով ազդած է գրականութեան եւ արուեստի վրայ, որքան մեր մէջ...»:<sup>534</sup> Իսկ 1918 թ. հրատարակչության նոր շրջանի առաջին խմբագրականում գրված է, թե հանդեսի արժեքավոր աշխատակիցների մեծ մասը նահատակվել էր, և «մեր ազգին ապրած զարհուրելի օրերէն վերջը, պարզապէս ծիծաղելի պիտի երեւար, գէթ հիմա, զուտ գրական-գե-

<sup>532</sup> «Շանթ» հանդես, 1912, քիվ 22, էջ 345-350:

<sup>533</sup> Նույն տեղում, 1912, քիվ 22, էջ 350-352:

<sup>534</sup> Նույն տեղում, 1911, քիվ 1, էջ 1:

դարուեստական օռկանի մը գոյութիւնը, ինչպէս էր այն ատենուան Շանթը»:<sup>535</sup> Պահպանելով գրական-գեղարվեստական ուղղվածությունը՝ «Շանթը» հետապնդել է նաև Մեծ եղեռնը վերապրողների կողմից «մեր արիւնոտ պատմութիւնը գրելու, ապրելով՝ մահուանը յաղթելու և քանդուած երկիրը վերանորոգելու նպատակները»:<sup>536</sup> «Շանթի» աշխատակիցներն առաջնորդվել են նշված սկզբունքներով՝ հիշելով, թե իրենք զավակներն էին այն սերնդի, որ «մեռաւ՝ մեզի ապրեցնելու համար, որ կռուեցաւ ու յաղթանակեց»:<sup>537</sup>

Առաջին համարներից սկսած՝ հանդեսում տպագրվել է Մ. Շանտանձյանի «Իթփիհատի հայաջինջ նոպան» հուշագրությունը, որտեղ նա հոգեբանական վերլուծության է ենթարկել հայ մտավորականների մարտիրոսագրությունը և իբրև ականատես վկա ներկայացրել է նրանց աքսորի շրջանն իր զրկանքներով, տառապանքներով և ապրելու անկուտրում կամքով: «Հայ հորիզոնեն» բաժնում այս շարքը գնահատված է որպէս «Շանթի» «ներկայացուցած ամէէնէն աշխատուած ու արժէքաւոր գործը»:<sup>538</sup>

Հայ մտավորականների զրկանքների և 1915 -1918 թթ. նրանց կյանքի ու գործունեության մասին որոշակի պատկերացում էին տալիս «Վերապրողները» և «Մեր տեսակցությունները» բաժիններում տպագրված նյութերը: Դրանցից մեկում՝ Արտաշես Վանարյանին տված հարցազրույցում Հակոբ Սիրունին պատմում էր, թե իրեն որք է զգացել ընկերների կորստից հետո՝ վարելով փախստականի ընդհատակյա կյանք: Սիրունին նշում էր, որ վերջին 4 տարվա ընթացքում Հայոց եղեռնի ցավն ու սուզը չզգալու համար զբաղվել էր մտավոր աշխատանքով՝ գրելով բանաստեղծություններ և թատերգություններ: <sup>539</sup> Ավ. Ահարոնյանը նրա հոգեվիճակն այսպէս էր ներկայացնում մի նամակում. «Սիրունի հալուժաճ ու անձանաշէլի դարձած՝ նմանուում է պատմական Աբրահամ Խոստովանողին, որ միակը լինելով՝ Պարսկաստան գնացած հայ նախարարներից՝ ողջ պահուելով Հայաստան դրկուեց, մի միայն նրա համար, որ

<sup>535</sup> «Շանթ» հանդես, 1918, քիվ 1, էջ 2-3:

<sup>536</sup> Նույն տեղում, 1919, քիվ 13, էջ 148:

<sup>537</sup> Նույն տեղում:

<sup>538</sup> Նույն տեղում, 1919, քիվ 18, էջ 216:

<sup>539</sup> Նույն տեղում, 1919, քիվ 20, էջ 236-237:

յայտնի թէ ջադուել են իր ընկերները»<sup>540</sup>։ Գրեթե նույն հոգեվիճակում էին եղել Եղեռնը վերապրած մտավորականներից շատերը։ Մերուժան Պարսամյանը, ով սկզբնապես մտածում էր, թե իրավունք ունի՞ ապրելու, երբ ընկերների մեծ մասը նահատակվել էր, հետագայում (մինչև 1918 թվականը) հրատարակության է պատրաստում բանաստեղծությունների 2 ժողովածու, 1 վեպ «Հոգիիս մեջ տռամ մը» վերնագրով և «էջեր հիվանդանոցի կյանքես» հուշագրությունը։<sup>541</sup> «Ապրին իրենք, մեծ ցեղին մեծ գաւակները... Տառապսնքէն փոսացած անոնց աչքերուն խորը, վերածնող կեանքին բոցաշուրթ ցուքն է որ կը փայլատակէ... Ու հազիւ ճողպարած ոճրաշախն մագիլներէ, ստեղծագործ աշխատանքի սուրբ Սեղանին կը սուրան անոնք։ Դուն, ափ մը վերապրողը անհատնում ցեղին, մաճը ափիդ մէջ, ցեղին կեանքը պիտի երկնես մեր հողին սիրասուն ծոցը», - գրում էր Սարգիս Սարունին «Վերապրողներուն հետ» վերլուծական հոդվածում։<sup>542</sup>

«Շանթ» հանդեսը, 1918 թ. «ունենալով չորս տարուան շրջանի գնահատուած անցեալ մը», որոշում է նվիրվել ազգային մի նոր ծրագրի իրագործմանը. «Ան հայուն թերթը պիտի ըլլայ այլ ևս, ո՛չ թէ միայն հայ մտաւորականին թերթը։ Պիտի ջանանք անկարելին փորձել՝ ցուացնելու համար հայուն տածանքոտ կեանքը։ Պիտի հրավիրենք մեր գրողները, որպէսզի վերջին դարու հայ ազգային պատմութիւնը գրեն իրենց անծնական պատմութիւններովը։ Անէն հայ վիշտ մը, արցունք մը ունի իր աչքերուն մէջ։ Ուրեմն տառապողները թող այս էջերուն դիմեն, որ մեր արիւնոտ պատմութիւնը գրուի։ Չի կարծուի, թէ շարունակ պիտի լանք այս էջերուն մէջ։ Այլ ևս չպիտի լայ հայը։ Այլ ևս մենք պիտի մէկ նպատակ հետապնդենք. քանդուած երկիրը վերանորոգել»։<sup>543</sup> Եվ ոչ միայն դա. «Պէտք է որ մէկ կուսակցութիւն գոյութիւն ունենայ այլ ևս մեր մէջ։ Անէն հայ պէտք է անոր զինուորագրուի, մեր բոլոր ճիգերը, միշտ ու ամէն պարագայի մէջ, պէտք է անոր ուղղուին։ Մէկ կուսակցութիւն. Հայութիւնը»։<sup>544</sup> «Շանթը» համոզված էր, որ անհրաժեշտ էր մոռանալ նախկին ատելությունները, հաշիվները և նվիրվել հայրենիքի վերաշինության գոր-

<sup>540</sup> «Շանթ» հանդես, 1919, թիվ 20, էջ 236-237:

<sup>541</sup> Նույն տեղում, 1919, թիվ 34, էջ 395-396:

<sup>542</sup> Նույն տեղում, 1919, թիվ 18, էջ 215:

<sup>543</sup> Նույն տեղում, 1918, թիվ 1, էջ 3:

<sup>544</sup> Նույն տեղում, 1918, թիվ 2, էջ 24:

ծին: Այս կարևոր առաքելության մեջ ոգևորիչ դերակատարություն ունեին անգամ հայ ժողովրդի վերջին մեծ մարտիրոսները, որոնցից շատերի (Ռ. Զարդարյանի, Դ. Վարուժանի, Ռ. Սևակի, Մ. Կյուրճյանի և այլոց) գրական և ազգային-հասարակական գործունեությունը հավուր պատշաճին ներկայացված է հանդեսի «Մեր պանթեոնը» բաժնում: «Շանթի» խմբագիր Մերուժան Պարսամյանն այդ առիթով գրում էր. «Մեռցուցին Հայերը, մեռցուցին մեր լաւագոյն մտաւորականները... Ահաւասիկ կը տեսնենք զանոնք, ամէնքն ալ: Կը խնդան... Անոնք գոհ են, որովհետեւ կ'զգան, որ թէ և իրենցմէ բան մը պակսած է, բայց կատարեալ, մեծ, տեւական գործ մը հիմնուած է. Հայրենիքը»:<sup>545</sup>

«Շանթի» 1919 թ. ապրիլի 11-ի թիվ 25-26 միացյալ համարն ամբողջությամբ նվիրված է արևմտահայ գրականության նահատակված սերունդին: Հանդեսի թե այդ, թե ուրիշ համարներում զետեղված հոդվածներում և հուշերում նրանցից յուրաքանչյուրն երևում էր յուրովի, երևում է խաղացած անփոխարինելի դերով ու տեղով հայ ազգային ու գրական կյանքում: Օրինակ՝ Արշակ Ալպոյաճյանը Մ. Կյուրճյանին համարում էր մեր ցեղի պատիվն ու փառքը հանդիսացող 1915 թ. մարտիրոսված անձանցից մեկը, ով 1880-ական թվականների վերջերին հայ հասարակության համար հայտնություն էր եղել պանդուխտների կենցաղը, տառապանքներն ու երազանքները պատկերող իր ստեղծագործություններով:<sup>546</sup> Դրանցով նա տարիներ շարունակ հանրության ուշադրությունը փորձել էր սևեռել պանդուխտների խնդիրների վրա, որոնց լուծման գործում Մ. Կյուրճյանի կարծիքով պատրիարքը և քահանաներն իրենց բաժինն ունեին, ունևորներն՝ իրենց պարտավորությունը, երեսփոխանները, ազգային մարմինները՝ իրենց պարտքը. «Պանդխտութիւնն, եթէ այսպէս շարունակուի, մեր գաւառներն անմարդի կ'ընէ այսօր կամ վաղը. այս համոզումն ունեցէ՛ք, ահաւոր ճշմարտութիւն է», - գրում էր Մ. Կյուրճյանը:<sup>547</sup> Արփիար Արփիարյանը բարձր էր գնահատում 1880-1890 թթ. գրական շարժման մեջ Հրանտի կատարած դերը՝ հիշատակելով «Մասիս» շաբաթաթերթում հրատարակված նրա «Պանդուխտներու կյանքեն» շարքը որպէս 19-րդ դարի վերջի արևմտահայ գրական և հասարակա-

<sup>545</sup> «Շանթ» հանդես, 1918, թիվ 2, էջ 13-14:

<sup>546</sup> Նույն տեղում, 1919, թիվ 12, էջ 133-136:

<sup>547</sup> Նույն տեղում:

կան կյանքի կարևոր հիշատակարաններից.<sup>548</sup> Բերենք ևս մեկ օրինակ: 1915 թ. նահատակված ազգային գործիչ Ա. Վռամյանը Սամվել Ռշտունու կողմից «Շանթ» հանդեսում բնութագրվում էր որպես «գերմարդ», ով «ո՛չ ոքի հետ չկապուեցաւ շահու կամ նիւթի հաշիւներով», ով երբեք չգբաղվեց եսասիրական կամ շահադիտական որևէ գործով:<sup>549</sup> Նա լույսի ճամփորդ էր: Եվ ոչ միայն՝ նա, այլև՝ Եղեռնին զոհ գնացած մեր մյուս մտավորականները: Այդ աստվածային կանթեղները խավարի ճիրաններով ջախջախվեցին՝ «տակաւին զենիթին չհասած»:<sup>550</sup>

«Շանթը» հրատարակել է 1915 թ. նահատակված մտավորականներից մի քանիսի պատգամներն աճող սերնդին: Խ. Մալումյանը երիտասարդներին խորհուրդ էր տալիս հավատալ իրենց երազանքներին նույնիսկ հուսաբեկության օրերում. «Եղեք քաջ վտանգի դիմաց, եւ անվհատ զինուոր՝ մեր դրօշին»:<sup>551</sup> Ս. Բարսեղյանը համոզված էր, որ յուրաքանչյուր ազգ հզոր կարող էր լինել սեփական հայրենիքում: Եվ եթե երիտասարդները ցանկանում էին նվիրվել հայ ժողովրդի ազատագրման ու առաջընթացի գործին, ապա նրանք «պարտաւոր էին դառնալ այնտեղ, ուր մեր պատմութիւնն էր կերտուել»՝ իրենց համար ունենալով հետևյալ բնաբանը՝ «Հայ երկրի մէջ, Հայ ժողովուրդի միջոցով, Հայ ժողովուրդի համար»:<sup>552</sup> Առանձնահատուկ մեծարանքով էր ներկայացվում Ռ. Ջարդարյանը, ում գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցումը մեծ հաճույք էր «նույնիսկ իր գաղափարական ու դաւանական հակաբանակրողներուն համար»:<sup>553</sup> Հուշագրություն-հոդվածներից մեկում Ջոհրապ-Կարոն նրան համարում էր հայ գրական շքեղ փաղանգի ամենակարկառուն դեմքերից, ով դարձավ Մեծ եղեռնի զոհերից՝ «իր ընկերներուն հետ թողնելով պարապ մը որ ո՛չ մէկ կերպով կարելի է լեցնել: Բարոյական կորուստներու մեծագոյնը պէ տք է ողբալ Ջարդարեանի անծին մէջ, նկատի ունենալով անոր երեսկ հանգամանքը, իբրև գրագէտ՝ իր անզուգական շնորհներուն մէջ, իբրև բանաստեղծ՝ իր խորքին մէջ և

<sup>548</sup> «Շանթ» հանդես, 1919, թիվ 12, էջ 133-136:

<sup>549</sup> Նույն տեղում, 1919, թիվ 25-26, էջ 296-297:

<sup>550</sup> Նույն տեղում:

<sup>551</sup> Նույն տեղում, 1919, թիվ 25-26, էջ 292:

<sup>552</sup> Նույն տեղում:

<sup>553</sup> Նույն տեղում, 1919, թիվ 8, էջ 92:

իբրև հրապարակագիր՝ իր յեղափոխականի հրաշունչ խօսքերովը»:<sup>554</sup> «Շանթի» խմբագրակազմի կարծիքով՝ հատկապես Ռ. Ջարդարյանի գրական ստեղծագործություններով էին ժամանակին պոլսահայ մտավորականները իրապես ճանաչել հայկական Գավառը կամ «Հայ բնագաւառը իր տառապանքներով ու խաչելութեամբ, իր ուրախութիւններով ու վիշտերով, աշխարհ մը, որուն ամէն մէկ ծաղիկն ու վարդը, խոտն ու մամուռը, լեռն ու ծորը, երկինքն ու արեւը, վերջապէս բովանդակ Հայ Աշխարհը, եկան մեր ականջին բաներ մը փսփսալ, ա՛յնքան ցաւագին ու ա՛յնքան հրապուրիչ միեւնոյն ատեն»:<sup>555</sup> «Շանթում» տպագրված է նաև Կոմիտաս վարդապետի կարծիքը Ռ. Ջարդարյանի մասին. «Երբ Ցայգալոյսը կարդացի, Ջարդարեանը չպատկերացուցի բնաւ աչքերուս առջեւ, այլ ամբողջ ազգ մը, ամբողջ ժողովուրդ մը՝ իր գեղեցկութեամբ ու շքեղութեամբ: Այդ մատեանը գրքի մը տպատրուքիւնը չէր որ թողուց վրաս, այլ կեանքի մը, իր բաբախումներովն ու իր զգայնութեամբը»: Ռ. Ջարդարյանը դեռ ասելիք ու անելիք ունէր: Նա դեռ չէր ավարտել իր գործը: Նա ծնվել, ապրել և սպանվել էր «աւա՛ղ Ցեղին համար»:<sup>556</sup>

Կար մի ընդհանուր արժանիք, որը միավորել էր Ռ. Ջարդարյանին ու մեր մյուս նահատակ մտավորականներին. անդավաճան և անծնուրաց ազգասիրությունն ու հայրենապաշտությունը: Ականատեսի պատմածների հիման վրա Գ. Ս.-ի գրած «Հայ մտավորականությունը աքսորանքի ճամբուն» նյութում կա այդ ընդհանրությունն ամփոփող հատված:<sup>557</sup> Խոսքը վերաբերում է նրան, որ երբ տարսոնահայերը հանդիպում են իրենց քաղաքով անցնող աքսորյալ 80 հայ մտավորականների հետ (Գ. Չոհրապ, Վ. Սերենկյուլյան, Ռ. Ջարդարյան, Է. Ակնունի և այլք), նրանք են սկսում մխիթարել ժողովրդին՝ «ժպտելով, խնդալով և խոսելով: Բոլորին ըսածը գրեթէ միեւնոյն խօսքերն էին, տարբեր շեշտով, տարբեր հմայքով. «Մենք նման տառապանքներ ու աքսորներ շատ ենք տեսել: Դուք եղէք գործի, սկզբունքի մարդ և ոչ թէ խօսքի: Մի վիատիք արգելքներու առջեւ, ասպարէզը ձերն է. հետեւեցէք մեզ և մեր

<sup>554</sup> «Շանթ» հանդես, 1919, թիվ 25-26, էջ 293:

<sup>555</sup> Նույն տեղում, 1919, թիվ 8, էջ 90:

<sup>556</sup> Նույն տեղում:

<sup>557</sup> Նույն տեղում, 1919, թիվ 25-26, էջ 303:

ճամբուն: Որքան ատեն որ լոյս կայ, լոյսին ճառագայթը կայ, որքան ատեն դուք ապրիք, ձեր լոյսովը Հայաստան մը պիտի լուսաւորուի»:<sup>558</sup>

Հայաստանի վերաշինության և հզորացման գաղափարը արծարծվել է «Շանթ» հանդեսի 1918-1919 թթ. գրեթե բոլոր համարներում: Իսկ 1919 թ. թիվ 32-ի խմբագրականում փաստվել է հետևյալ իրողությունը. «Հայ Հանրապետութիւնը, որուն առաջին սարեղարծը տօնեցինք մեծ հպարտութիւնով, անհուն և անպարտելի զոհողութիւններու արդիւնքն է»:<sup>559</sup> Դա գիտակցում էր հատկապէս մտավորականությունը, «որ վաղը, հայրենի աներակներու վերաշինութեան ստեղծագործ աշխատանքին մէջ, պարտ մը ունի կատարելիք, հոն թրթռացնելու համար Հայ Բազուկին Երգը, Աշխատանքի Տաճարին Դրան առջեւ ծունկի եկած՝ Հայ Ազատագրութեան առաջին տօնը յուշերգելու՝ ապրող սերունդներուն»:<sup>560</sup> «Շանթի» կարծիքով՝ Հայաստանի 1-ին հանրապետության հիմնումը դարագլուխ էր բացում հայոց պետականության պատմության մեջ: «Բարենորոգումի բոլոր ծրագիրները այլ ևս մեզի չեն վերաբերիր. քաղաքակիրթ աշխարհը մեզ կը դնէ մեր ճակատագիրը ու մեր ապագան ինքնորոշելու սկզբունքին հետ դէմ առ դէմ: Դադրած ենք ստրուկ ազգ մը ըլլալէ, եւ մենք, անհատաբար ու հաւաքօրէն, կը պատկանինք Մեր Հայրենիքին, Հայ Հայրենիքին... Ամէն հայ միտքով ու սիրտով միացած ու անբաժան. ահա՛ մեր ապագայ յաջողութեան ուղեգիծը»,- գրում էր «Շանթը» «Հայ դարագլուխը» խմբագրականում:<sup>561</sup> Մայիսի 28-ը «Շանթը» համարում էր «Միացեալ եւ Անկախ Հայաստանի պաշտօնական արտայայտութիւնը... Ռուսահայ և Թրքահայ գոյութիւն չունին այլ ևս, բայց Անկախ եւ Միացեալ Հայաստանի ազատ քաղաքացիներ, որոնք վաղը պիտի միանան Հայրենի աներակներուն վրայ, հայրենի կապոյտ երկինքին տակ»:<sup>562</sup> Հանդեսի աշխատակազմը համոզված էր, որ արդեն ժամանակն էր լրջորեն նաև հաշվարկելու հայ ժողովրդի կրած մարդկային, հոգևոր ու բարոյական կորուստները: Բնորոշ է Գևորգ Մեսրոպի «Հայ քաղաքակրթության կորուստները (1914-1918)» ուսումնասիրությունը:<sup>563</sup>

<sup>558</sup> «Շանթ» հանդես, 1919, թիվ 25-26, էջ 303:

<sup>559</sup> Նույն տեղում, 1919, թիվ 32, էջ 361:

<sup>560</sup> Նույն տեղում:

<sup>561</sup> Նույն տեղում, 1919, թիվ 9-10, էջ 101:

<sup>562</sup> Նույն տեղում, 1919, թիվ 37, էջ 425:

<sup>563</sup> Նույն տեղում, 1919, թիվ 11, էջ 128-129:

Այստեղ ներկայացվող թվերն ու փաստերն առավել քան խոսում էին: Ըստ այդմ, մինչև 1914 թ. Թուրքիայում (բացի Կ. Պոլսից) ազգային Պատրիարքարանի հսկողության տակ էին գտնվում 803 նախակրթարան 59513 աշակերտներով և 21713 աշակերտուհիներով, 2088 ուսուցիչ-ուսուցչուհիներով: Սրանց էին գումարվում «1908-էն յետոյ Միացեալ Ընկերութեանց, Ազգանուէր Հայուհեացի բացած 140 դպրոցները հազարաւոր երկսեռ աշակերտներով, հարիւր հազարաւոր ոսկիի պիւտժներով»:<sup>564</sup> 1908 թ. տեղական միջոցներով ու թաղային բյուջեներով գործում էին նաև 15 դպրոց Վանում, 20-ը՝ Էրզրումում, 15-ը՝ Բիթլիսի, նույնքան էլ՝ Խարբերդի վիլայեթներում, 50-ից ավելի դպրոց էլ Թուրքիայի զանազան վայրերում իրենց աշակերտներով: «Աւելցնել հարկ է նոյնպէս Սանասարեան վարժարանի, Վանայ Երամեան վարժարանի նման երկրորդական և անհատական նախաձեռնութեամբ բացուած բազմաթիւ դպրոցները, որոնք իրենց ծաղկումի մէջ էին Պատերազմէն անմիջապէս առաջ: Պէտք է աւելցնել նմանապէս Հայ Բողոքական կամ Աւետարանական հասարակութեան և Հայ Կաթոլիկներու բացած ու մատակարարած դպրոցները գաւառներու մէջ, մասնաւորաբար Կիլիկիոյ, Գոնիայի, Էնկիւրիի վիլայեթներուն, Իզմիթի սանձագին մէջ, Խարբերդի մէջ և այլուր», - գրում էր «Շանթը»:<sup>565</sup> Այս դպրոցները 1919 թ. արդեն չկային: Քանզիվել էին հիմնահատակ թուրքերի կողմից: Սպանվել էին դրանց գրեթե բոլոր ուսուցիչները և ուսուցչուհիները, հոգաբարձուներն ու խնամակալները, աշակերտներն ու աշակերտուհիները: Դպրոցների ու կրթօջախների հետ զուգահեռ ոչնչացվել էին նաև Թուրքիայում գտնվող հարյուր-հազարավոր վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, սրբատներ, որոնց մի մասը վերածվել էր ախոռների ու մառանների: Այրվել ու փոշի էին դարձել վանքերում պահվող հայ գրականության արժեքավոր նմուշները: «Այդ ձեռագիրներուն հետ իսպառ կորան հայ գրչութեան, հայ մանրանկարչութեան թանկագին գոհարները, հայ արուեստի մեծագոյն տոգիւմանները: Այդ ձեռագիրներուն հետ անհետացան հայ ոսկերչութեան գեղեցիկ նմոշներն ալ», - արձանագրում էր «Շանթը»:<sup>566</sup> Հայ ժերուհիների կորուստը ուրույն տեղ էր գրավում հոգևոր կորուստների շարքում, քանզի «այդ

<sup>564</sup> «Շանթ» համդես, 1919, թիվ 11, էջ 128-129:

<sup>565</sup> Նույն տեղում:

<sup>566</sup> Նույն տեղում:

ծերունիները, այդ հայ տատիկները ու մամիկները որ կորան, իրենց հետ մէկտեղ տարին Հայ ժողովրդագիտութեան բոլոր տուփքները: Հայ հեքեաթներն ու առասպելները, հայ առածներն ու առակները, հայ գրոյցներն ու հանելուկները, մէկ խօսքով հայ ցեղին բոլոր թաքուն գանձերը որ տակաւին ուսումնասիրութեան նիւթ դարձած չէին, գացին անոնց հետ մոռացութեան խաւարին ծոցը»:<sup>567</sup> Հոգւածագիրն իր վերլուծությունն ամփոփում էր այն եզրակացությամբ, որ հայ ժողովրդի այս հոգևոր կորուստները նաև ողջ քաղաքակիրթ մարդկության կորուստներն էին:

Ազգային վերածննդի և հայապահպանության խնդիրների արծարծումը «Շանթի» էջերում թեև հրատարակության 2-րդ շրջանում դարձել էր առաջնահերթ, բայց, միևնույն է, հանդեսն իր բնույթով շարունակում էր մնալ գրական-գեղարվեստական՝ հավատարիմ լինելով բուն առաքելությանը. արտացոլել ու վերլուծել հայ և համաշխարհային գրական կյանքը, գեղարվեստի տարբեր ճյուղերի անցուդարձը՝ բերելով սեփական նպաստը դրանց զարգացման ու առաջընթացի գործում: Օրինակ՝ «Հայ հորիզոններ» բաժնում տպագրված տեղեկատվությունը նորակազմ հայ գեղարվեստական միության գործունեության մասին էր: Այդ միության հիմնական նպատակներից էր՝ ծանոթացնել քաղաքակիրթ աշխարհին հայ արվեստի դրսևորումներին: «Թող չսույի թէ քաղաքական փոխանցումի այս յուզումնալից շրջանին երկրորդական կը մնան գեղարուեստական հետապնդումները: Հայ գեղարուեստի ուսումնասիրութիւնը կարեւոր է, հաստատելու սա ճշմարտութիւնը թէ, հայը ոչ միայն ռազմիկ մըն է, այլ նաև ունի արուեստագիտական ամենանուրբ ճաշակ և ըմբռնում, շատ հին դարերէ ի վեր: Հայ գեղարուեստական միութիւնը երեսան պիտի բերէ գեղարուեստական նոր փաստեր, ապացուցանելու համար թէ հայը քաղաքակրթութեան ընտանիքներու մէկ անդամն է ու պիտի մնայ, քանի որ ունեցած է ինքնատիպ ու զուտ ազգային արուեստի նախանձելի հրաշակերտներ», - գրում էր «Շանթ» հանդեսը:<sup>568</sup>

«Նվագահանդեսներ» բաժնում մշտապես լուսաբանվում էին համերգները և մասնավորապես՝ մենահամերգներն ու Սկյուտարի հայ երաժշտական միության 120 հոգուց բաղկացած երկսեռ երգչախմբի ելույթները: Ընդ որում, այդ միության և երգչախմբի հիմնադիր-ղեկավարը

<sup>567</sup> «Շանթ» հանդես, 1919, թիվ 11, էջ 128-129:

<sup>568</sup> Նույն տեղում, 1919, թիվ 18, էջ 215:

Կոմիտաս վարդապետի աշակերտ Վարդան Սարգսյանն էր: «Շանթի» կարծիքով, Վ. Սարգսյանն ու իր սաները «ամէն գնահատութեան արժանի են: Անոնք կը շարունակեն Մեծ Վարդապետին գործը, և իրենց սկզբնական քայլերն իսկ բաւական զօրաւոր են ապագայ մեծ յաջողութիւններու համար»:<sup>569</sup>

«Թատրոն» բաժնում վերլուծվում և ներկայացվում էր Կ.Պոլսի թատերական անցուդարձը, բայց հանդեսի ուշադրության կենտրոնում էին գտնվում Հայ դրամատիկական ընկերության ներկայացումները՝ թերութուններով և արժանիքներով հանդերձ: «Շանթը» կարծում էր, որ երիտասարդ դերասաններից կազմված այս թատերախումբը կարող էր վերստեղծել հայ թատերական կյանքը:<sup>570</sup> «Խումբը երթալով կը սրբագրէ իր պակասները: Գեղարուեստի ըմբռնումներու հանդէպ առանց երբեք ներողամիտ ըլլալու, եւ բեմական թերութիւնները նկատի ունենալով, պէտք է խոստովանիլ, որ երիտասարդներու այս խումբը, հայ բեմին ճաշակը վառ պահելու տեսակէտով ամէն քաջալերութեան արժանի է: Հասարակութեան կը մնայ աւելի տաք վերաբերում մը ցոյց տալ Հայ թատրոնին հանդէպ, որ քաղաքական մեր սպասումներուն մէջ գեղարուեստական վայելք մը կուտայ մեզի», - գրում էր «Շանթը»:<sup>571</sup> Հասարակությանը թատրոնին կապելու համար հանդեսը Հայ դրամատիկական ընկերությանը մի շարք խորհուրդներ էր տալիս, ի թիվս որոնց՝ թատերախմբերում ընդգրկել արհեստավարժ դերասանների, ուշադրություն դարձնել բեմական հագուկապին, պարբերաբար թարմացնել ներկայացումների մեջ ընդգրկված երգերն ու պարերը, կապեր հաստատել և շփվել արտերկրի լավագույն թատերախմբերի ու դերասանների հետ, հայ բեմական արվեստը ներկայացնել օտար հանդիսատեսին և այլն:<sup>572</sup> «Շանթի» խորհուրդներից շատերը հընթացս հաշվի են առվել և իրագործվել են: Դրանում համոզվում ենք՝ ընթերցելով «Թատրոն» բաժնի վերլուծականները և լուրերը:

Անաչառ ու անկողմնակալ էին «Շանթի» վերլուծություններն ու գնահատականները ժամանակակից արվեստագետների ստեղծագոր-

<sup>569</sup> «Շանթ» հանդես, 1919, թիվ 32, էջ 376:

<sup>570</sup> Նույն տեղում, 1919, թիվ 23, էջ 276:

<sup>571</sup> Նույն տեղում, 1919, թիվ 22, էջ 261:

<sup>572</sup> Նույն տեղում:

ծությունների վերաբերյալ: Հանդեսի արժանիքներից մեկն այն էր, որ այստեղ, ինչպես հրատարակության առաջին շրջանում, քննարկվող հարցերի վերաբերյալ ապահովվում էր բազմակարծություն և ծավալվում էր երկխոսություն, երբ մասնավորապես խոսքը վերաբերվում էր արևմտահայ գրականությանը, թատրոնին և արվեստին ընդհանրապես: Գրական բանավեճի առումով բնորոշ են, օրինակ՝ արևմտահայ գրական շարժմանը նվիրված հոդվածները:<sup>573</sup>

Հանդեսի խմբագիր Մերուժան Պարսամյանի մոտեցումը միանշանակ էր գրողների ստեղծագործություններն ընդունելու և հրատարակելու հարցում: «Գրական կյանքը» խմբագրականում նա պարզորոշ արտահայտել է իր դիրքորոշումը. «Շանթ կը հիւրընկալէ նորերու յաջող գրուածքները և կը քաջալերէ արժէքաւորները: Այս օրուան նորը, վաղուան հինը դառնալու կոչուած է, եթէ անոր չի պակսիր Աստուածային հոտը... Պէտք է խիստ ըլլանք անտաղանդներուն հանդէպ, և քաջալերենք այն ամէն նորերը, որոնք վաղուան հայ գրականութեան աստղերը ըլլալու կոչուած են»:<sup>574</sup> «Շանթը» խրախուսում էր մասնավորապես կին գրողներին, ասենք՝ երիտասարդ բանաստեղծուհիներ Արաքսիային, Գոհարին և Սիրվարդ Մկրտչանին: «Գոհարի քերթուածներու մեջ կը շեշտուի անխառն ու վիպական զգացութեան մը անկեղծութիւնը: Կին գրողներու շրջան մը կը բուրբենք. ո՞վ է որ յուզումով չի կարդար Ֆլօրա Անահիտի, Տիկ. Զարուհի 3. Պահրիի ցնցող և ցաւագինօրէն տպաւորիչ գրուածքները... Մեր աշխարհիկ մտահոգութիւնները կը խոնարհին անոնց տառապանքին վսեմութեան առջեւ», - նշվում էր հանդեսում:<sup>575</sup> Տեղեկանում ենք նաև, որ գրասեր հասարակության կողմից բարձր գնահատականի էին արժանացել «Շանթի» աշխատակցուհի Նարդիկ Հակոբյանի «այնքան նուրբ և զեղեցիկ քերթուածները»:<sup>576</sup>

«Շանթի» էջերում հանդես էին գալիս ոչ միայն արևմտահայ, այլև արևելահայ և օտարազգի գրողներն իրենց ստեղծագործություններով: Հանդեսն անդրադառնում էր նաև Եղեռնից հետո օտար ավերում ապաստանած արևմտահայ գրողների գործերին: Օրինակ՝ էղվարդ Զո-

<sup>573</sup> «Շանթ» հանդես, 1919, քիվ 2, էջ 17-19, 1919, քիվ 3, էջ 33-34, 1919, քիվ 7, էջ 97-98, 1919, քիվ 29, էջ 337:

<sup>574</sup> Նույն տեղում, 1919, քիվ 30, էջ 342:

<sup>575</sup> Նույն տեղում, 1919, քիվ 19, էջ 228:

<sup>576</sup> Նույն տեղում:

բուրյանի «Թրքահայ գրականությունը Կովկասի մեջ գաղթեն ետքը» վերլուծական հոդվածում ամփոփ պատկերացում էր տրվում հայրենիքից տեղահանված գրողների գրական ուղու մասին: «Հագիւ հրդեհներու բոցը մարած, հայ մտաւորականը գրիչը ձեռք առաւ օտար հորիզոններու տակ պատմելու Հայ Ցաւը, Հայ Տառապանքը, խորհելու դարմաններու մասին...»,- գրում էր Է.Չոբուրյանը:<sup>577</sup> Հեղինակը թվարկում էր նաև նոր դեմքերին պոեզիայի և վիպասանության բնագավառում. Վարդան Պապիկյան, Լևոն Թյությունճյան, Վահան Թոթովենց, Ռաֆայել Չարդարյան, Արաքսի Մովսիսյան, Ծերուն Թորգոմյան: Է. Չոբուրյանի կարծիքով, «Լեռ-Կամսար՝ վանեցի երիտասարդ մը, իբրեւ երգիծաբան, առանց վարանելու կարելի է անուանել Յ. Պարոնեանի և Ե. Օտեանի յաջողողը»: Հոգվածագիրը ասելիքն ամփոփելով՝ եզրակացնում էր, որ հայ ժողովուրդն ընդունակ էր ամենածանր հարվածներից դուրս գալ անդամահատված, բայց՝ միշտ կենսունակ: Գրական հունձքը քիչ էր. «Մեծ չէր այդ արդիւնքը, բայց արժանի՝ արձանագրուելու. որովհետեւ նոր բան մը ավելցուց մեր գրականութեան վրայ»:<sup>578</sup>

«Շանթը» մրցանակներով խրախուսում և իր էջերում տեղ էր տալիս երիտասարդ ու տաղանդավոր գրողներին: Հանդեսը փորձում էր աջակցել արևմտահայ նահատակ գրողների անտիպ կամ կորած գրական երկերի հայթայթման գործընթացին: «Հայ հորիզոնեն» բաժնի պատասխանատու Շանթարզելն էր բարձրացնում այդ կարևոր հարցը. «Ու՞ր մնացին հայ գրագէտներուն անտիպ երկասիրութիւնները, ամբողջացած կամ կէս վիճակի մէջ: Յայտնի է որ ասիական վանտալականութիւնը չի խնայեց նաև անոնց, հեղինակներն ու մտաւորականները կոտորել է վերջ... Բազմաթիւ ձեռագիրներ ոստիկանութեան սնտուկներուն մէջ կը հանգչին, և կամ ոչնչացուեցան»:<sup>579</sup> «Շանթը» տեղեկացնում էր, որ հայ գրականության կորուստը ճշտելու նպատակով բանասերներից մեկը ուսումնասիրություն էր պատրաստում: Նրան օգնել ցանկացողները պետք է «Շանթի» խմբագրությանն ուղարկեին հետևյալ հարցերի պատասխանները.

- «Ի՞նչ ձեռագիրներ տարուեցան,

<sup>577</sup> «Շանթ» հանդես, 1919, թիվ 9-10, էջ 116-117:

<sup>578</sup> Նույն տեղում:

<sup>579</sup> Նույն տեղում, 1919, թիվ 18, էջ 216:

- ի՞նչ ձեռագիրներ խուզարկութեան վախի հետևանքով այրուեցան,
- գիտե՞ք դրանց անունները և ամփոփ բովանդակութիւնը»:<sup>580</sup>

Հրատարակության տարիներին իր բաժիններով ու խորագրերով, իր արժարժած թեմաներով ու խնդիրներով «Շանթը» կարողացել էր դառնալ իրապես ժամանակի գրական-գեղարվեստական չափանիշներին համապատասխանող հանդես, կարողացել էր դառնալ մի պարբերական, որի համարները հրատարակվելուն պես սպառվում էին, և որը բավարարում էր ընթերցող հասարկայնության գեղագիտական պահանջները:

### «ՀԱՅ ՍԿԱՈՒՏ» ՀԱՆԴԵՍԸ

«Հայ սկաուտ» հանդեսը հրատարակվել է Կ.Պոլսում (1919-1922 թթ.) և Փարիզում (1929-1935 թթ): Այն եղել է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության (ՎՋՄ) օրգանը: Ամսագրի խմբագիրը Կարո Ուշագյանն էր, պատասխանատու տնօրենը՝ Հրաչյա Տեր-Ներսիսյանը, արտոնատերը՝ Գառլո Շահինյանը: Աշխատակազմում ընդգրկված էին ՎՋՄ-ի անդամներ, անվանի մարզիկներ, մարզական վերլուծաբաններ Հակոբ Քիսյանը, Վահրամ Ս. Փափազյանը, Սիսակ Նալբանդյանը և այլք: «Հայ սկաուտը» Կ. Պոլսում հրատարակվել է Օ. Արզումանյանի, «Ք. Քեշիշյան որդի», «Մասիս», «Պահլի եղբայր» տպարաններում: Ամսագրի «Մեր գործը (1 նոյ. 1918-1 հոկտ. 1919)» հաշվետվության մեջ ներկայացվում էին, թե ինչպես են հիմնադրվել ՎՋՄ-ն ու «Հայ սկաուտը». «Զինադարի առաջին օրերուն, երբ հայութիւնը արիւնի մկրտութենէն տակաւին նոր դուրս էր եկեր... խումբ մը երրտասարդներ հավաքուեցանք Գրիգոր Յակոբեանի կոչին վրայ՝ կազմելու համար ՎՋՄ-ն: Առաջին նիստը գումարուեցաւ 1 նոյեմբեր 1918 ինը հոգիի ներկայութիւնով, որոնք հրաշքով մը աւերի ձիրաններէն դուրս մնացած էին և որ նախկին սիրահարներ ու մասնագէտներ էին մարզանքի և սբօրի կեանքին»:<sup>581</sup> Ժողովում նորակազմ կենտրոնական վարչության ատենապետ է ընտրվում

<sup>580</sup> «Շանթ» հանդես, 1919, թիվ 18, էջ 216:

<sup>581</sup> «Հայ սկաուտ» հանդես, 1919, թիվ 1, էջ 13-14:

Գրիգոր Հակոբյանը: Այդ ժողովում որոշում են ընդունում «լայն և պարզ ծրագրով մը սկսիլ մարմնակրթականի գործը և զայն մտցնել դպրոցներէ և հիմնելի որբանոցներէ և ներս»: <sup>582</sup> Այդ մասին վկայել է նաև ՎՄԸՄ-ի նախագահ-հիմնադիրներից Հակոբ Սիրունին. «Առաջին հաւաքումին կային Գրիգոր Յակոբեանէ և ինծմէ գատ՝ Լևոն Յակոբեանը, Հայկ Ճիզմէճեանը, Գառլօ Շահինեանը և Տիգրան Խոյեանը, որոնց շուտով պիտի գային աւելնալ քանի մը ուրիշներ ալ, ինչպէս Յովհաննէս Հինդլեան, Ժիրայր Խօրասանճեան, Վահրամ Փափազեան և Գրիգոր Մերձանօֆ: Այդ առաջին հաւաքման մէջ իսկ հիմը դրուեցաւ ՎՄԸՄ-ին: ՎՄԸՄ-ն... ծնունդն էր իրական պահանջի մը, և կրցեր էր առինքնել ամբողջ հայ երիտասարդութիւնը Պոլսոյ և գաղութներու մէջ»: <sup>583</sup> 1918 թ. դեկտեմբերին Կ. Պոլսում գործող Ազգային ժողովը վավերացնում է ՎՄԸՄ-ի հիմնադրումը: 1921թ. հունիսին Կ. Պոլսում տեղի ունեցած ՎՄԸՄ 4-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը հրատարակում է միութեան 1-ին ամբողջական ծրագիր: Ըստ այդմ ՎՄԸՄ-ն անկուսակցական կազմակերպություն էր, թեև վայելում էր ՀՅԴ հովանավորությունը: <sup>584</sup>

ՎՄԸՄ-ի հիմնական նպատակն էր՝ կազմակերպել սկաուտական խմբեր, որոնցում ընդգրկված հայ պատանիները մարզվելու էին մարմնով և հոգով: «Մեր գաղափարականը» խմբագրականում թվարկված են ՎՄԸՄ-ի հետապնդած խնդիրները. «Մենք կուզենք... պատրաստել անհատներ, որոնք կարող ըլլան ապագայ քաղաքակիրթ աշխարհի հարուածներուն դիմագրաւելու: Մենք կուզենք պատրաստել օրինապահ, բայց ոչ ստրուկ մարդը, տալ անոր առողջ և կորովի մարմին և ուղղադատ միտք: Մեր գաղափարականն է՝ պատրաստել առողջ սերունդ մը նոր հայրենիքին համար»: <sup>585</sup> Հայ սկաուտը պետք է լինել լավատես, հուսադրող, վստահելի և կարգապահ անհատ, որին «կարենայ յանձնուիլ և յանձնել հայրենիքի շահերը»: <sup>586</sup> Հայ սկաուտի նշանաբան էր՝ «Բարձ-

<sup>582</sup> «Շանթ» հանդես, 1919, թիվ 1, էջ 13-14:

<sup>583</sup> Յ. Սիրունի, նշվ. աշխ., էջ 208-209:

<sup>584</sup> Հայ սփյուռք համրագիտարան, Երևան, 2003, էջ 680-681: Տես նաև Բ. Թորիկեան, «Պատմութիւն ՎՄԸՄ», Պէյրոս, 1995, 1999, հ. 1, հ. 2:

<sup>585</sup> «Հայ սկաուտ» հանդես, 1919, թիվ 1, էջ 3-9:

<sup>586</sup> Նույն տեղում:

րացի'ր, բարձրացու'ր», իսկ նպատակը՝ «բարձրանալ հոգիով, միտքով և մարմնով»:<sup>587</sup>

Հակոբ Քիսյանի կոչում՝ ուղղված հայ սկաուտներին մատնանը-վում էին նրանց առջև դրված խնդիրները. «Ուշադրութեամբ դիտե՛, հայ սկաուտ, ճակատդ զարդարող միտալը՝ վրան Արարատի յուշարձանը: Ան կը խորհրդանշէ հայը, հայը, որ կանգուն մնացած է միշտ, հակառակ թշնամիներու տեսական հալածանքին ու ջարդին: Յարգանքով ու երկիւղածութեամբ կանգնէ այս մեծ յուշարձանին առաջ և միտքդ դիր կատարել անոր արձակած պատգամը: Քու իտէ՛ալդ պէտք է ըլլայ ո՛չ միայն բարձրանալ, այլ նաեւ բարձրացնել»:<sup>588</sup>

Հայ սկաուտներն ու հայ արիները պիտի կարողանային դիմակա-յել փորձություններով, Ցեղասպանության սարսափներով, դեռևս շարու-նակվող կռիվներով լեցուն ժամանակաշրջանի մարտահրավերներին: Թեև 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում գինադադար էր կնքվել Ան-տանտի երկրների և Առաջին համաշխարհային պատերազմում պարտ-վող կողմ ձանաչված Թուրքիայի միջև՝ վերջինիս առջև որոշակի պար-տավորություններ դնելով Հայաստանի Հանրապետության հետ պատե-րազմական գործողությունների մեջ չմտնելու առումով, բայց գինադա-դարը ժամանակավոր ու խաբուսիկ էր: Կրկին վտանգված էր հայ ժո-ղովրդի խաղաղ գոյակցությունը: Նման քաղաքական հանգամանքներում լիովին տեղին էին Եղեռնից մազապուրծ եղած հայ երիտասարդների հայրենասիրական մղումները ՀՍԸՄ-ի ստեղծման, աճող սերնդին մար-տունակ դարձնելու և հայեցի դաստիարակություն տալու ուղղությամբ: Բնութագրական է Ս. Չիթունու՝ «Վերցու'ր ձեռնոցդ, հա՛յ արի» արձակ բանաստեղծությունը, որ տպագրված է «Հայ սկաուտ» հանդեսում: Այն-տեղ կոչ էր արվում պաշտպանել Հայաստանի պատիվը այնպես, ինչ-պես վայել էր Գայլ Վահանների ու Դավիթ Բեկերի ժառանգորդներին. «Հայ արի, վերցու'ր երեսիդ նետուած կարմիր ձեռնոցը. բարձրացի'ր Արարատեան վէտութիւնով, բարձրացու'ր կոխոտ պատիւը Մայր Հայրե-նիքիդ: Ցուցու'ր թէ դուն սերունդն ես Տրդատներու՝ որք Հռոմի կրկնները պակուցի'ն, Արշակներու որ Շապուիները դողացուցին: Ճշդէ՛ որ դուն ես հայրն ու նոր ծնունդը Գայլ Վահաններու, Դաւիթ-Միէրներու, Սասունցի

<sup>587</sup> «Հայ սկաուտ» հանդես, 1919, թիվ 4, էջ 51-52:

<sup>588</sup> Նույն տեղում:

Յովնաններու և նոր Դաւիթ-Բէկերու, Անդրանիկ-Մուրատներու: Վերցու՛ր ձեռնոցը, բարձրացու՛ր դրօշը հայ անկախութեան, տնկէ՛ նոր Եռագոյնը աճիւնազարդ հայ դրախտին մէջ»:<sup>589</sup>

ՎՄԸՄ-ն «Հայ սկաուտ» հանդեսում տպագրված մի շարք հոդվածներում անդրադարձել է հայ ընտանիքներին հետաքրքրող այն հարցին, թե որքանով էր նպատակահարմար մեզանում հիմնել նաև աղջիկ սկաուտների կազմակերպություններ: Օրինակ՝ «Աղջիկ սկաուտ» վերնագրով նյութում կար նույնիսկ ՎՄԸՄ-ի պաշտոնական պատասխանը. «Երբ կը կազմենք մարդը, բնական է, որ պիտի պատրաստենք անոր համար կինը: Պէտք է աշխատինք, որ... ծնողքներ պատիւ համարին իրենց աղջիկները այդ կազմակերպություններու անդամագրելը»:<sup>590</sup> Ըստ հանդեսի՝ պատվաբեր էր անդամակցել ՎՄԸՄ-ին, քանի որ այն, ելնելով ժամանակաշրջանի հրամայականից և հայապահպանության, հայրենիքը հզորացնելու նպատակից՝ փորձելու էր դառնալ հայ ժողովրդի տարբեր հատվածները միմյանց միացնող գոտի: Այս գաղափարն արտացոլված էր «Հայ սկաուտի»՝ 1919 թ. դեկտեմբերի 16-ի «ՎՄԸՄ-ն իբր միության գոտի» խմբագրականում: Այնտեղ նշվում էր. «ՎՄԸՄ-ն՝ ըլլալով զուտ առողջապահական, ցեղին ֆիզիքականին հետ առնչութիւն ունեցող և միեւնոյն ատեն միջազգային կապ ստեղծող միութիւն մը, հակառակորդները կամ տարակարծիքները իրարու պիտի միացնէ խաղաղաշտին, մարգարանին կամ մրցումներու մէջ, տարբեր հոսանքի պատկանող անծեր, հոն, կողք-կողքի պիտի պաշտպանեն իրենց մրցանիշը և ցեղին ֆիզիքական ազնուացման գաղափարը»:<sup>591</sup>

Կարևորելով իր առջև դրած նպատակները՝ ՎՄԸՄ-ն որդեգրել էր բնութեամբ համազգային ծրագիր, որը «վաւերացուած էր Ազգային կեդրոնական վարչութենէն և կը վայելէր ազգին ուժերուն հովանաւորութիւնը և Ազգային ու Անհատական վարժարաններու վարչութիւններու համակրանքը»:<sup>592</sup> «Հայ սկաուտի» կարծիքով՝ պատճառն այն էր, որ իրենք «կեցած էին անխտրական հողի վրայ, անկախ կուսակցական նկրտումներէ: Մեզի համար արժէք ունի ամէն անհատ ինչ յարանուանութեան և ինչ

<sup>589</sup> «Հայ սկաուտ» հանդես, 1919, թիվ 1, էջ 14:

<sup>590</sup> Նույն տեղում, 1919, թիվ 1, էջ 9:

<sup>591</sup> Նույն տեղում, 1919, թիվ 4, էջ 2:

<sup>592</sup> Նույն տեղում, 1919, թիվ 1, էջ 3:

կուսակցութեան ալ պատկանի»:<sup>593</sup> Հանդեսը ճշմարիտ հայրենասիրութ-  
յուն էր համարում ՎՍՐՄ-ին սատարելը և օգնելը, քանի որ այդ համահայ-  
կական կառույցը ցանկանում էր պատրաստել «առողջ ու տոկուն երի-  
տասարդութիւն մը, պատրաստ նուիրուելու հայրենիքի վերաշինութեան  
մեծ գործին, պատրաստ՝ հայրենիքի պաշտպանութեան, նախանձախըն-  
դիի՝ անոր բարձրացման ու զօրացման»:<sup>594</sup> Ավերված հայրենիքի վերա-  
կանգնման համար անհրաժեշտ էին հուժկու բազուկներ, հզոր կամք և  
անխոնջ աշխատանք: «Մարմնակրթանքն ու սբօրներն են, որ պիտի կա-  
րենան այս բարեմասնութիւններով օժտուած անհատներ պատրաս-  
տել»:<sup>595</sup> Այստեղից արվում էր այն հետևությունը, թէ «ամէն հային համար  
հայրենասիրական պարտք մըն է քաջալերել մարմնակրթական շարժու-  
մը»:<sup>596</sup> 1920 թ. ընթացքում լույս տեսած հոդվածներում այս միտումը  
առաջնային էր դարձել: Այդ շրջանում շարունակ մատնանշվում էր, թէ  
հայրենիքը հայ սկաուտի կարիքն ուներ, թէ հայ սկաուտները պիտի ոչ  
միայն երկիրը վերակառուցեին, այլև պիտի լինեին հայրենիքը պաշտ-  
պանող բազուկներ: Հայը պատասխանատվություն էր ստանձնել՝ կազ-  
մել «հայրենիք մը և բարգաւաճեցնել զայն: Այսօր իսկ կը լսենք հայրե-  
նահրաւէր փողը... Աւերակ է այդ երկիրը, դուն քու բազուկներովդ պիտի  
կերտես անոր ւերակ գիւղերն ու քաղաքները, հա՛յ սկաուտ: Ամլացած  
են դաշտերն ու պարտէզները, դուն արգասաբեր պիտի դարձնես անոնք  
քու քրտինքովդ: Քեզի կ'սպասեն Հայն ու Հայաստանը»:<sup>597</sup> Սակայն ոչինչ  
չարժեք անգամ բարգավաճ հայրենիքը, եթէ չունեն «զինք պաշտպանող  
բազուկներ... Եթէ չենք ուզէր տնտեսապէս և քաղաքականապէս գերուիլ  
ուրիշներէ, զիտակից քաղաքացիութեան ոգի ներարկենք մեր պատանի-  
ներուն, զրահապատ ֆիզիքականով օժտենք զանոնք: Անոնց բազուկ-  
ներով ցանկապատ հիւսենք հայրենիքին շուրջ»:<sup>598</sup>

ՎՍՐՄ-ն իր նպատակներն ու կատարած աշխատանքները ժո-  
ղովրդին ներկայացնելու համար որոշում է Կ.Պոլսում 1919 թ. հոկտեմբե-

<sup>593</sup> «Հայ սկաուտ» հանդես, 1919, քիվ 1, էջ 3:

<sup>594</sup> Նույն տեղում, 1919, քիվ 3, էջ 41-42:

<sup>595</sup> Նույն տեղում:

<sup>596</sup> Նույն տեղում:

<sup>597</sup> Նույն տեղում, 1920, քիվ 15, էջ 234:

<sup>598</sup> Նույն տեղում, 1920, քիվ 5, էջ 65:

րի 25-ից հրատարակել «Հայ սկաուտ» պաշտոնական հանդեսը:<sup>599</sup> «Հայ սկաուտն» ուներ «Սկաուտական կյանք», «Սկաուտական և մարզական շարժումը Հայաստանի մեջ», «Սկաուտական գիտելիք», «Սկաուտական խաղեր», «Սկաուտի նամակներ», «Սկաուտական լուրեր», «Թղթակցություններ զավառներից», «Մարզական կյանք», «Խորհուրդներ սկաուտներին», «Նախնական ծանոթությունների», «Անմիջական ծանոթությունների» և ՎՋՄ-ի գործունեության լուսաբանմանը նվիրված բաժինները:

Առավել արժեքավոր են հանդեսում տպագրված՝ ՎՋՄ-ի գործունեությանը վերաբերող լուրերը և հոդվածները: Վերջիններից հիշատակության են արժանի Ս. Ուզունյանի «Մարմնակրթության բնախոսությունը», Վ. Փափազյանի «Ատլետիզմ» և Ս. Նալբանդյանի «Անցյալ հուշերես» հոդվածաշարերը:

«Սկաուտական կյանք» և «Սկաուտական գիտելիք» բաժիններում պարբերաբար ու հանրամատչելի ձևով «Հայ սկաուտը» պատկերացում էր տալիս սկաուտական շարժման, սկաուտի վարքագծի կանոնների և պարտականությունների մասին: «Սկաուտիզմը մասնաւորաբար 11-15 տարեկան տղոց համար է: Այսօր, հաստատուած է թէ քաղաքներում 11-15 տարեկան պատանիները կը սիրեն կանոնաւորուած ազատութիւնը որ կը կազմէ սկաուտիզմի հիմը», - գրում էր «Սկաուտիզմի մասին» թարգմանական նյութում Պ. Շապոյանը:<sup>600</sup> Նա մեկ այլ՝ «Սկաուտի կյանք. սկաուտիզմ» հոդվածում նա ընթերցողներին տեղեկացնում էր, որ սկաուտական խմբեր գործում էին աշխարհի քաղաքակիրթ բոլոր երկրներում, քանի որ սկաուտությունը պատանիների համար անհրաժեշտ ու հիմնական դաստիարակություն էր համարվում: Հեղինակի համոզմամբ սկաուտիզմը ջանում էր «երիտասարդին տալ բարոյական, մտաւորական և ֆիզիքական գործնական դաստիարակութիւն մը: Ընտանեկան և դպրոցական դաստիարակութիւնները կը միանային անոր և կը պատրաստեին ապագայի իտէալ մարդը»:<sup>601</sup> Սկաուտական շարժումը բնութագրելու տեսանկյունից ուշագրավ է Հ. Հինդլյանի «Ի՞նչ է սկաուտությունը իր հիման մեջ» հոդվածաշարը: Այստեղ նա փորձել է տալ այդ և հարակից հարցերի պատասխանները՝ օգտվելով օտար աղբ-

<sup>599</sup> «Հայ սկաուտ» հանդես, 1919, թիվ 1, էջ 14:

<sup>600</sup> Նույն տեղում, 1920, թիվ 15, էջ 235-238:

<sup>601</sup> Նույն տեղում, 1919, թիվ 3, էջ 34:

յուրներից: Հեղինակը պարզաբանում էր, որ սկաուտը (scout) անգլերեն բառ էր և նշանակում էր սահմանագլուխը պաշտպանող զինվոր ու մշտարթուն, զգայարանները լավ մարզած կտրիճ:<sup>602</sup> Սկաուտությունը մանկավարժական նոր ուղղություն էր, որի հիմնադիրը անգլիացի զորավար Ռոբերտ Բաուելն էր: Կարևորելով դաստիարակության դերը մարդու կյանքում և դժգոհ լինելով վերջինիս ավանդական մեթոդներից՝ Ռ. Բաուելը դրանք արմատական բարեփոխումների էր ենթարկել: Սկաուտությունն ուներ որոշակի սկզբունքներ և դրանց հիման վրա մշակված միջոցներ, որոնցով հասնում էր իր առջև դրված նպատակներին, այսինքն՝ մի կողմից՝ նորահաս սերունդը «ազնուացնել և քաղաքակրթութան արդի պահանջներուն համեմատ շինել ֆիզիքական և բարոյական կարգ մը բարեմասնութիւններով օժտելով զայն», մյուս կողմից՝ տղաների դաստիարակության գործը պետք էր հիմնել՝ ելնելով նրանց բնախոսական-հոգեբանական պահանջմունքներից: Պետք էր «տղան դաստիարակել՝ զայն հրապուրող միջոցներով»: <sup>603</sup> Ընդ որում, սկաուտական շարժումն, ունենալով ընդհանուր սկզբունքներ և մեթոդներ, պիտի յուրահատուկ գծերով առանձնանար ամեն ազգի համար. «Սկաուտիզմը կը ջանայ լաւ զինուորներ կազմել. նամանաւանդ ան կը կազմէ վստահելի և լաւ քաղաքացիներ»: <sup>604</sup> Հայրենիքի վերաշինության գործում ՎՍԸՄ-ի հույսը երիտասարդության վրա էր. «Ջանանք առողջ ու զուարթ, ձեռներեց և կորովի երիտասարդութիւն մը պատրաստել»: <sup>605</sup>

Սկաուտական շարժումը մեզանում հիմնելու ՎՍԸՄ-ի ջանքերը կարճ ժամանակում տվել են գոհացուցիչ արդյունքներ: Մեկ տարվա ընթացքում ՎՍԸՄ-ն 25 մասնաճյուղ է բացում Կ.Պոլսում և շրջակա մի շարք գավառներում, հայկական որոշ գաղթօջախներում և իր մարզիչներից չորսին ուղարկում է Հայաստան, որտեղ նույնպես պետական հոգածության ներքո ցանկանում էին հիմնել ու զարգացնել սկաուտական շարժումը՝ ոգևորվելով ՎՍԸՄ-ի հաջողություններով և ձեռքբերումներով: «Հայ սկաուտ» հանդեսը անընդմեջ լուսաբանում էր այս գործընթացները Թուրքիայում, Հայաստանում և հայկական գաղթօջախներում՝ փորձելով

<sup>602</sup> «Հայ սկաուտ» հանդես, 1919, քիվ 2, էջ 20-22:

<sup>603</sup> Նույն տեղում:

<sup>604</sup> Նույն տեղում, 1919, քիվ 3, էջ 42:

<sup>605</sup> Նույն տեղում:

իրար կապել ՎՄԸՄ-ի մասնաճյուղերը: Այդ կարգի նյութերը կարելի է համարել ժամանակագրային բնույթի: Դրանցով հնարավոր է կազմել, օրինակ՝ Հայաստանի 1-ին հանրապետությունում սկաուտական կազմակերպության հիմնադրման ու գործունեության ժամանակագրությունը:<sup>606</sup> Ըստ այդմ, 1919 թ. դեկտեմբերի 1-ի համարում լուր է տպագրված այն մասին, որ Երևանում կազմվել էր հայ արիների առաջին խումբը, և Հայաստանի վարչապետ Ա. Խատիսյանին առաջարկվել էր գլխավորել այն, իսկ սկաուտապետ Հ. Նազարյանի ցանկության հիման վրա հարաբերություններ էին հաստատվել ՎՄԸՄ-ի հետ:<sup>607</sup> Հայաստանի կրթության և արվեստի մինիստրության բժշկա-առողջապահական բաժնի պետ Հ. Արծրունու դիմում-խնդրանքին ի պատասխան՝ ՎՄԸՄ-ն Երևան էր ուղարկել երեք մարզիչ (Վահան Զերագ, Տիգրան Խոյյան, Օննիկ Յազմաճյան), որոնք միացել էին այնտեղ արդեն աշխատող իրենց մյուս մարզիչ ընկերոջը՝ Եզնիկ Քաջունուն: Հայաստանի լուսավորության նախարարությունը և խորհրդարանը աջակցում էին սկաուտական շարժմանը՝ համակարծիք լինելով ՎՄԸՄ-ի հետ ռազմավարական նշանակության այն հարցում, որ սկաուտիզմը նպաստում էր հայոց նորաստեղծ բանակի հզորացմանը: Իսկ բանակը «ազգի մը զրահն էր... Ան էր, որ կը պարտադրէր ազգերուն յարգել ուրիշ ազգերը, ճանչնալ անոնց իրաւունքը: Արդար իրաւունք մը բանակով մը կարելի էր պաշտպանել: Հայ քաղաքացի, վճարէ՛ բանակին քու պարտքդ, որ չլսես քու զաւակներուդ ստրկութեան ծայնը և քու աղջիկներուդ բռնաբարումի աղտը»:<sup>608</sup> Բանակի կայացմանը և սկաուտական շարժման զարգացմանը նպաստում էին ՎՄԸՄ-ի Կ. Պոլսի Կենտրոնական վարչության և Հայաստանի համապատասխան կառույցների ջանքերով անցկացվող համահայկական մրցումներն ու օլիմպիական խաղերը: Որոշվել էր համատեղ ուժերով սկիզբ դնել Մասյաց խաղերին, որոնք հայկական եռագույնի ներքո պիտի անցկացվեին կամ Արարատյան, կամ Ավարայրի դաշտավայրերում: Դրանց ընթացքում հայ սկաուտները պիտի մրցեին ոչ միայն օլիմպիական, այլև՝ ազգային խաղերում: Մրցումներում հաղթողները պիտի պարգևատրու-

<sup>606</sup> «Հայ սկաուտ» հանդես, 1919, քիվ 3, էջ 33, էջ 41, 1920, քիվ 5, էջ 75, 1920, քիվ 9, էջ 137, 1920, քիվ 16, էջ 249, 1920, քիվ 19, էջ 289, էջ 304-306 և այլն:

<sup>607</sup> Նույն տեղում, 1920, քիվ 8, էջ 121:

<sup>608</sup> Նույն տեղում:

